# ԷՋՄԻԱԾԻՆ



Զ-Է
2002

ԾԸ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

**Յունիս - Յուլիս**
**2002**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ԱՐԹՈՒՐ ՄՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ** - Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական այցը Բուլղարիա և Բուլղարահայոց թեմ . . . 3

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը Գագիկ Ծառուկյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . . 18

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը փեր և փիկին Արսլանյաններին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . . 20

Հայրապետական գնահատություն . . . 22

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա առիթով . . . 24

Մայր Աթոռ՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարքության կալվածքների խնդրի առնչությամբ . . . 25

## ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում Գրիգոր Լուսավորչի Վիրապից ելնելու տոնին . . . 26

Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում Ս. Էջմիածնի տոնին . . . 30

Տ. Պարթև վարդապետ Գյուլումյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում «Գիւտ փտոյ Սրբուհւոյ Աստուածածնի» տոնին . . . 34

Տ. Սերովբե վարդապետ Իսախանյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում . . . 38

Տ. Գնել աբեղա Սողոմոնյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Երևանի Ս. Զորավոր եկեղեցում . . . 41

Տ. Ջոհրապ աբեղա Կոստանյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Երևանի Ս. Սարգիս եկեղեցում . . . 44

## ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**ՌԱՖԱՅԵԼ ՊԱՊԱՅԱՆ** - Եկեղեցի և պետություն . . . 46

**ՎԱԼԵՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ** - Պետության և Եկեղեցու հարաբերությունների սահմանադրական կարգավորումը . . . 53

## ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ


**ՎՐԵԺ ՄԿՐՏՉԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - 571 թվականի հայ-բյուզանդական դավանական միության հանգամանքները . . . . . . . . . . . . . . 59
**ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ** - Աստվածատուր Ա Համադանցի Կաթողիկոսը (կթղ. 1715-1725 թթ.) և հայ ազատագրական շարժումը . . . . . . . 68
**Պ. Ա. ՉՈԲԱՆՅԱՆ** - Մի դրվագ արևմտյան Վրաստանի հայոց պատմությունից . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 77
**ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** - Հայոց պատմության քննական տեսության առաջին փորձերից մեկը Ռուսաստանում . . . . . . . 85
**ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ** - Հաղարծնի վանքին վերաբերող 1885 թ. մի վավերագրի մասին . . . . . . . . . . . . . . . . . 96
**ՄԱՆԻԿ ԲԱԲԱՅԱՆ** - Հովհաննես Թումանյան և Մեսրոպ Տեր-Մովսիսյան . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 100
**ԲԱԿՈՒՐ ԳԱԼՍՏՅԱՆ** - Գոյափիլիսոփայությունը Վիլյամ Սարոյանի խոստնական թվականների դրամաներում . . . 111


## Հայագիտությունը Եվրոպայում


**ԲԵՌՆԱՐ ՈՒՏԻԵ** - Հայկական ձեռագրերի հետքերով . . . . . . . . 118


## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ


**Ս. Ա. ՋԱՔԱՐՅԱՆ** - Հայագիտական արժեքավոր հետազոտություն . 122


## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ


**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՊԻՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ** - «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշանի հանձնում տեր և տիկին Հարություն և Մարի Արսլանյաններին . . . . . . . . . . . . . . . . 128
Օծվեց Առինջի Ս. Աստվածածին եկեղեցին . . . . . . . . . . . . . 131
Գարեգին Բ Կաթողիկոսին հանձնվեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանը բարձրագույն կրթական հաստատություն ճանաչելու մասին կառավարական որոշումը . . 132
**ՀԵՂԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ** -Եղիշե ավագ քահանա Սարգսյան. «Գևորգյան Ճեմարանի պետականորեն ճանաչումը երկրորդ շնչառությունն է հաղորդում պատմական կրթօջախին» . 133
**ՎԱՉԻԿ ՍՐԿ. ՋԱՐԳԱՐՅԱՆ** - Տարեվերջյան հանդիսություն Մնանի Վազգենյան Դպրանոցում . . . . . . . . . . . . . . . . 137
**ԾԵՐՈՒՆ ՍՐԿ. ՄԿՐՏՉՅԱՆ** - Ավարտաճառերի պաշտպանություն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 140
Վանաձորում սկսեց գործել «Ծիծեռնակ» թեմատիկ մանկական ճամբարը . . . . . . . . . . . . . . . 142

ԴԵՐԵՆԻԿ ՄԻՐԵԿԱՆՅԱՆ - Ուխտագնացություն . . . . . . . . . . . 143
ԱՐՏՅՈՄ ԴՊԻՐ ԱՆԱՆՅԱՆ - Ուխտագնացություն Ջավախք . . . 144

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի դեսպանին . . . . 145
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Չինաստանի խորհրդարանական պատվիրակությանը . . . . . . . . . . . . . . . 146
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց կարդինալ Թեոդոր Մաք Քարիկին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 146
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց ԱՊՀ երկրների առողջապահական խորհրդի պատվիրակությանը . . . . . . . . 147
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Վալտեր Շվիմերին . . . . . . . 147
Եկեղեցական բեմ. լուրեր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 149
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . . 152
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin . . . . . . . . . . . . . 155
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine . . . . . . . 158

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ԲՈՒԼՂԱՐԻԱ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅՈՑ ԹԵՄ

*«Սիրեցեք Բուլղարիան այնպես,*
*ինչպես Հայաստանն եք սիրում...»*

*Գարեգին Երկրորդի*
*բուլղարահայությանն ուղղված պատգամից*

Հունիսի 25-29-ը տեղի ունեցավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական այցը Բուլղարիա՝ Բուլղար Ուղղափառ Եկեղեցու գահակալ և Սոֆիայի մետրոպոլիտ Նորին Ամենապատվություն Մաքսիմ Պատրիարքի և Բուլղար Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Սինոդի հրավերով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեկնելուց առաջ, վաղ առավոտյան, Ամենայն Հայոց Հայրապետը Մայրավանքի միաբանության անդամներից կազմված թափորի ուղեկցությամբ մուտք գործեց Միածնաէջ Մայր Տաճար՝ ճանապարհից առաջ առ Խնամակալն Աստված ուղղելով. «Տէր, ուղղեա զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան. Տէր, ուղղեա եւ առաջնորդեա հոգւոյ մերոց եւ ամենայն հաւատացելոց զնալ յարդարութեան ճանապարհն եւ ի կեանս յաւիտենից» աղոթքը:

Հրաժեշտի ավանդական արարողությունից հետո, Նորին Սրբությունը, ընկերակցությամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի, Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Գերաշնորհ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի, Վեհափառ Հայրապետի փնտեսական գծով օգնական Հոգեշնորհ Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանի և գավազանակիր Հոգեշնորհ Տ. Գեղարդ աբեղա Վախունու, ճանապարհվեց «Զվարթնոց» օդանավակայան, որտեղից մեկնեց Վիեննա, այնտեղից էլ՝ Սոֆիա:

Վիեննա-Սոֆիա չվերթով Նորին Սրբությունը Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիա ժամանեց հունիսի 25-ին:

Վեհափառ Հայրապետին ուղեկցողների թվում էին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ փիար Ռոբերտ Համբարձումյանը, որպես գավազանակիր՝ Վեհափառ Հայրապետի գործավար-քարտուղար Բարեշնորհ Արթուր սարկավագ Կարապետյանը, ինչպես նաև «Շողակաթ» հեռուստաընկերության օպերատորներից Մկրտիչ Մալխասյանը:

Ամենայն Հայոց Հայրապետին հյուրընկալ կողմն ընդունեց պաշտոնական այցելությունների համար նախատեսված բոլոր արարողակարգերով. Սոֆիայի օդանա-

վակայանում Նորին Սրբության աջեամբույրով դիմավորեցին Բուլղարիայի Նախարարների խորհրդի Կրոնից գործերի փոխփոխնօրեն փիար Էմիլ Վելինովը. Բուլղարիայի Ազգային ժողովի պատգամավոր, Բուլղարահայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ փիար Ռուբեն Գրիգորյանը. Բուլղարիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիկին Սեդա Մեանը: Այնուհետև. օդանավակայանի ընդունելության սրահում Վեհափառ Հայրապետին ողջունեցին և բարի գալուստ մաղթեցին Բուլղարիո Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Սինոդի անդամները. Բուլղարիայի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ, Նախարարների խորհրդի Կրոնից գործերի տնօրեն փիար Իվան Ժելեֆը, Ռումինիո և Բուլղարիո հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը, պաշտոնատար այլ անձինք:

Օդանավակայանից Հայոց Հայրապետի գլխավորած պատվիրակությունն առաջնորդվեց Սոֆիայի Ս. Ալեքսանդր Նևսկու Մայր տաճար, որտեղ Նորին Սրբությանը սպասում էր ծերունազարդ Մաքսիմ Պատրիարքը, եկեղեցականաց դասը. բազմաթիվ հավատացյալներ, որոնց թվում նաև հավատավոր հայորդիներ, ովքեր իրենց եռանդուն հովիվների առաջնորդությամբ եկել էին բարի գալուստ մաղթելու Ամենայն Հայոց Հայրապետին և օրհնություն ստանալու իրենց խոհեմազարդ Հովվապետից:

Բուլղար Եկեղեցում ընդունված պաշտոնական արարողակարգի համաձայն. տեղի ունեցավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և համայն Բուլղարիո Պատրիարքի հանդիպումը. Սոֆիայի Մայր տաճարի զանգերի ու զանգակների հոգեզմայլ ղողանջների ներքո Ամենայն Հայոց Հայրապետը մուտք գործեց Ս. Ալեքսանդր Նևսկու տաճար: Տաճարում խռնված բազմաթիվ հավատացյալները, և՛ բուլղարները, և՛ հայերը, չորս կողմից շրջապատեցին Նորին Սրբությանը և ողջույնի շարականի քաղցրալուր հնչյունների ներքո ուղեկցեցին դեպի խորան, որտեղ Վեհափառ Հայրապետին սպասում էր Մաքսիմ Պատրիարքը:

Աթոռանիստ տաճարում երկու գահակալները ողջույնի և բարեմաղթանքի խոսքեր փոխանակեցին: Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց Մաքսիմ Պատրիարքին Բուլղարիա այցելելու հրավերի համար, այնուհետև ուրախությամբ փաստեց հայ և բուլղար ժողովուրդների և Եկեղեցիների դարավոր ու ջերմ կապերը նշելով. «Մենք հավատում ենք, որ այս այցը պիտի զորացնի մեզ, որպեսզի մեկտեղումով մեր ջանքերի՝ զորացնենք նաև մեր Եկեղեցիները»: Ողջույնի և բարեմաղթանքի խոսքերից հետո, Ամենայն Հայոց Հայրապետը, ի վկայություն եղբայրական սիրո, ծերունազարդ Մաքսիմ Պատրիարքին նվիրեց գեղեցկազարդ պանակե և մեկ լանջախաչ:



ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՄԱՔՍԻՄ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ
ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ՌԻԼԱՅԻ ՎԱՆՔՈՒՄ

## ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄԱՔՍԻՄԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՍՈՖԻԱՅԻ Ս. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԵՎՍԿԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(25 հունիսի 2002 թ.)

*Ձերդ Սրբություն,*

*Բուլղարական Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Սինոդի և իմ անունից հյուրասիրաբար «բարի գալուստով» եմ ողջունում Ձեզ ու Ձեր բարձրաստիճան ուղեկիցներին՝ որպես մեր հյուրերի, գեղեցիկ ու բարեկամական մեր երկրում՝ մաղթելով Ձեզ քաջառողջություն ու բարի այցելություն:*

*Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակը, իբրև նշանակալի պատմական-եկեղեցական առիթ, հնարավորություն ընձեռեց մեր եկեղեցական պատվիրակությանը մասնակցելու Սուրբ Էջմիածնում կատարվող տոնակատարություններին, իսկ այժմ Ձեզ՝ ներկայանալի պատվիրակությամբ մեր հյուրը լինելու:*

*Դարեր են բաժանում մեզ այն սրբազան առաքելական ժամանակներից, երբ, ըստ ավանդության, Քրիստոսի խոսքը լսելի է եղել Հայոց հողում, երբ Թադեոս և Բարդուղիմեոս սուրբ առաքյալները քարոզել են Քրիստոս, և նրանց հետնորդները տարածել են Աստծո փրկարար խոսքը, մինչև որ երկիրը ամբողջովին քրիստոնեություն է ընդունել, ու Հայաստանը դարձել է առաջին քրիստոնեական պետությունը: Նրա առաքելապատիվ քարոզիչն է Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, ով, հավատքի դարձնելով Տրդատ Գ թագավորին, հայ ժողովրդի պատմական նոր ընթացքի ու կյանքի սկիզբն է դրել: Նա 303 թ. հիմնել է Սուրբ Էջմիածինը՝ հայոց Հայրապետական աթոռանիստը, որտեղից երջանկահիշատակ Վազգեն Հայրապետը բազմիցս վկայել է իր հարգանքը մեր Եկեղեցու հանդեպ:*

*Բուլղարիան 9-րդ դարից նույնպես քրիստոնյա պետություն է: Հաստատված քրիստոնեական Եկեղեցին տասնմեկ դար մեր ժողովրդի հոգևոր սնողատու մայրն է, լուսավորիչն ու մեր ազգային գիտակցության պահապանը՝ մանավանդ հինգ դարերի թուրքական լծի ընթացքում: Աշխարհագրական առումով մեծ տարածություն է բաժանում մեզ միմյանցից, սակայն պատմական ճակատագրով մենք շատ մոտ ենք հայ ժողովրդի հետ: Ճակատագիրը հայությանը սփռել է աշխարհով մեկ: Մեր երկրում բազում հայեր են ապրում բուլղարների հետ համերաշխորեն: Մեր երկու ժողովուրդների պատմական ընդհանրությունները և տարագիր հայերի հանդեպ բուլղարների կարեկից վերաբերմունքը մերձեցնում են մեզ: Լայն ճանաչում ունի և հուզիչ է բուլղար մեծ բանաստեղծ Յավորովի «Հայեր» բանաստեղծությունը, ուր արտացոլված է հայի տխուր ճակատագիրը: Մենք երախտագիտորեն ենք հիշում նաև հայ մարդկանց բարի գործերը բուլղար-*

*ների հանդեպ: Մեր երկրում հայերն ապրում են բուլղարների հետ ամենայն բարյացակամությամբ և լիիրավ քաղաքացիներն են մեր երկրի:*

*Դուք գալիս եք բիբլիական այն երկրից, որի զարդն է Արարատ լեռը: Գտնվելով ուղղափառ Բուլղարիայում, դուք բարձրանալու եք Ռիլա բարձր լեռը, որի շնորհազարդն է Ռիլայի վանքը՝ մեր հոգևոր Սիոնը: Այնտեղ են գտնվում այդ սուրբ մենաստանի հիմնադիր, մեր ժողովրդի հովանավոր, հրաշագործ Սուրբ Իվան Ռիլսկու անապական, հրաշագործող մասունքները: Դուք կայցելեք և այլ եկեղեցական ու ազգային, մշակութային արժան հուշարձաններ ու վայրեր:*

*Վստահ ենք, որ Ձեր այցելությունը հաճելի և օգտակար պիտի լինի և բարի ներդրում պիտի դառնա մեր ժողովուրդների ջերմ հարաբերությունների և պիտի նպաստի դրանց զորացմանը, ինչին ձգտում են և մեր երկու Եկեղեցիները: Թեև առկա են որոշ տարբերություններ մեր Եկեղեցիների դավանաբանության ու ծեսի միջև, սակայն, առաջնորդվելով Քրիստոսի սիրո ոգով, հարկ է, որ մենք հայրենասիրությամբ գործենք հանուն մեր ժողովուրդների բարիքի, գործենք հանուն աշխարհի խաղաղության ու մարդկանց միջև բարի կամքի հաստատման, հանուն ավետարանական առաքինությունների սերմանման, ընդդեմ ոճրագործության ու չարիքի, հանուն մարդկության բարօրության:*

*Սուրբ Սինոդի և իմ անունից կրկին ողջունելով Ձերդ Սրբությանն ու Ձեր բարձրաստիճան ուղեկիցներին, հաճելի ու բարի ժամանակ ենք մաղթում մեր երկրում: Բարի գալուստ:*

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄԱՔՍԻՄ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՍՈՖԻԱՅԻ Ս. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԵՎՍԿԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(25 հունիսի 2002թ.)

*Հոգու մեծ ուրախությամբ ենք ողջունում Ձեզ, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, ուխտապահ Ձեր եկեղեցականաց և հավատավոր Ձեր ժողովրդին:*

*Մենք, իբրև համայն հայության հոգևոր առաջնորդ, քրիստոնեական սիրո ու եղբայրության մեծագույն զգացումն ենք ապրում այս պահին՝ գտնվելով Ձերդ Սրբության կողքին և հյուրընկալվելով Բուլղարիո աստվածասեր պետության կողմից: Հովվապետերիս հանդիպումը և աղոթակցությունը Մեզ համար հարազատ ու թանկ պատկերն է Տիրոջ առաքյալների համակամության ու փոխադարձ սիրո: Առաքյալները ժամանակին բաժանվեցին միմյանցից՝ Տիրոջ Հարության ավետիսը տանելու աշխարհե-աշխարհ, երկրե-երկիր, «աշակերտելու զամենայն հեթանոսս»: Այսօր Մենք, իբրև առաք-*

*յալների հաջորդներ, կոչված ենք կիսելու Քրիստոսավանդ ճշմարտության հաղթանակի ուրախությունը, որ սփռվեց Տիրոջ սուրբ աշակերտների կողմից, կոչված ենք խորհրդածելու այն ճանապարհների ու եղանակների մասին, որով պիտի կարողանանք այդ հաղթանակը զարգացնել ներկա կյանքի պայմանների մեջ:*

*Մենք ծանոթ ենք բուլղար ժողովրդի պատմությանը և գիտենք, որ այն անցնում է բազում փորձությունների ու զոհողությունների միջով: Այս առումով նման են մեր երկու՝ բուլղար և հայ ժողովուրդների պատմությունները: Նման են նաև խորհրդային բռնատիրության անմխիթար հետևանքներով: Փառք Բարձրյալին, որ պատմության են անցել աստվածմերժության ժամանակները, և մեր ժողովուրդները նորոգ հավատով կառուցում են իրենց նոր կյանքը:*

*Արդարև, դարավոր բարեկամներ են մեր ժողովուրդները: Հայ-բուլղար առնչությունները սկսվում են վաղ միջնադարից, և թերևս ամենահին հիշատակությունը բուլղարների մասին պահպանել է հայոց պատմահայր Մովսես Խորենացին՝ հիշատակելով նրանց Հայաստանում հաստատվելու մասին: Սակայն մեր ժողովուրդների բարեկամությունը ամուր արմատներ է ձգել հատկապես Բալկանյան հողում, երբ ազգային պետականության կորստից հետո տարբեր ժամանակներում բազմաթիվ հայորդիներ հաստատվել են նաև Բուլղարիայում ու գտել իրենց նոր Հայրենիքը, որին ծառայել են հավատարմությամբ: Բազմաթիվ ընդհանուր էջեր ունեցող մեր պատմության մեջ մեր ժողովուրդների բարեկամությունը թրծվել է նաև ազատագրական հերոսական մարտերում: Մենք ուրախ ենք, որ այսօր Բուլղարիայի հայ համայնքը իր ներդրումն է բերում մեր պետությունների բարի հարաբերություններում:*

*Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, մեր հանդիպումը վկայությունն է մեր ժողովուրդների ու Եկեղեցիների ավանդական ջերմ ու բարեկամական հարաբերությունների, որոնք, վստահ ենք, նորովի պիտի արդյունավորվեն ու իմաստավորվեն՝ հանուն մեր ժողովուրդների կյանքում քրիստոնեական արժեքների ամրագրման ու հավատի զորացման:*

*Գոհունակ սրտով, ուրախություն Ձեզ և բոլոր հավատացելոց, կուզենք վկայություն բերել Ձեր առջև, որ այսօր Հայաստանի անկախ պետականության հովանու ներքո նոր շունչ ու ոգի է առել Հայ Եկեղեցու առաքելությունը մեր ժողովրդի կյանքում: Վերաբացվում են վանքեր ու եկեղեցիներ, նորոգվում սրբավայրեր, պատրաստվում է եկեղեցական նոր սերունդ, իրականացվում քրիստոնեական կրթության ու դաստիարակության օրհնյալ մի գործընթաց, որը զորացնելու և ընդլայնելու մեծ անհրաժեշտությունը կա դեռևս:*

*Հավատում ենք, որ Մեր այս այցելությունը ևս մեկ քայլ է լինելու ավանդական մեր Եկեղեցիների եղբայրության ամրապնդման ու սերտ գործակ-*

*ցության ճանապարհին՝ ի խնդիր ներկա ժամանակների մարտահրավերները հաղթահարելու մեր ջանքերի հաջողության, մեր փորձառությունը միմյանց փոխանցելու, մասնավորապես՝ եկեղեցականների, հոգևոր կրթական մեր հաստատությունների դասախոսների և ուսանողների փոխայցելությունների կազմակերպման ուղղությամբ:*

*Սուրբ ու նվիրական այս տաճարի կամարների ներքո Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված՝ հայցելով Ամենախնամ Տիրոջ հանապազ օրհնությունն ու զորակցությունը Բուլղարիայի օրհնյալ հողին ու բարեպաշտ ժողովրդին: Թող Տերը քաղցրատոչ կյանքի երկար տարիներ պարգևի Ձեզ և արգասավոր գահակալություն՝ ի փառս Աստծո, ի պայծառություն Բուլղարական Ուղղափառ և Քրիստոսի Ընդհանրական Սուրբ Եկեղեցու:*

Բուլղար Ուղղափառ Եկեղեցու «Многолетия» կոչվող մաղթերգի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն ու Նորին Ամենապատվություն Մաքսիմ Պատրիարքն իրենց օրհնությունը բաշխեցին Ս. Ալեքսանդր Նևսկու տաճարում ի մի ժողոված հավատացյալներին: Այնուհետև Նորին Սրբությունը և հայրապետական պատվիրակության ուղեկցող պաշտոնատար անձինք ուղղվեցին դեպի Մայր տաճարից ոչ շատ հեռու գտնվող «Անհայտ զինվորի» հուշարձան. առ ի հարգանս հանուն հայրենյաց զոհվածների, ուր Վեհափառ Հայրապետը ծաղկեպսակ մի պսակ դրեց հուշարձանին:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Բուլղար Եկեղեցու Ս. Սինոդի շենքում Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպեց Բուլղար Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Սինոդի անդամների հետ: Հանդիպմանը ներկա էին Բուլղարիայի Նախարարների խորհրդի Կրոնից գործերի տնօրենը, փոխտնօրենը, Ռումինիո և Բուլղարիո հայոց թեմի առաջնորդը, Բուլղարիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը, Բուլղարահայոց թեմի թեմական խորհրդի ատենապետը, պաշտոնատար այլ անձինք: Սինոդի անդամների հետ հանդիպումն ավարտվեց ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի տրված պաշտոնական ընթրիքով:

## *ՀՈՒՆԻՍ 26*

Այցելության հաջորդ օրը նախատեսված էր հանդիպումներ Բուլղարիայի Հանրապետության իշխանությունների հետ:

Նշենք, որ Բուլղարիան խորհրդարանական կառավարմամբ երկիր է:

Իշխանությունների հետ առաջին հանդիպումը տեղի ունեցավ Բուլղարիայի Ազգային ժողովում. Ամենայն Հայոց Հայրապետն այցելելով խորհրդարան՝ տեսակցեց խորհրդարանի խոսնակ տիար Օգնյան Գերջիքովի հետ: Հանդիպման ընթացքում



ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ



ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Վեհափառ Հայրապետը, ի շարս այլեայլ հարցերի, որոնց անդրադարձավ զրույցի ընթացքում, հատուկ կերպով կարևորեց Բուլղար Ուղղափառ Եկեղեցու առաքելությունը Բուլղարիայի Հանրապետության կյանքում: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ առաջիկա օրերին Ազգային ժողովում քննարկվելիք օրենքի նախագիծը, որը կոչված է օրենսդրորեն կարգավորելու Բուլղարիայի կրոնական կյանքը, մեծապես կնպաստի Բուլղար Եկեղեցու առջև ծառացած բազմաթիվ խնդիրների լուծմանը:

Նորին Սրբությունը խորհրդարանի խոսնակին վստահեցրեց, որ Բուլղարիայում բնակություն հաստատած հայորդիները, ովքեր երկար տարիներ վայելում են բուլղար հյուրընկալ ժողովրդի բարյացակամությունն ու աջակցությունը, որպես ազնիվ ու նվիրյալ քաղաքացիներ իրենց երկրորդ հայրենիքի, պիտի շարունակեն ապրել արեղծագործ ու շինարար կյանքով՝ ի բարօրություն Բուլղարիայի Հանրապետության, քանի որ բուլղարաբնակ հայորդիք Բուլղարիան սիրում են այնպես, ինչպես Հայաստանն են սիրում:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունը, ի հիշատակ իր այցի, Ազգային ժողովի նախագահին նվիրեց արծաթյա հուշամեդալ և «Էջմիածնի գանձերը» գիրքը:

Հաջորդ հանդիպումը նախատեսված էր Նախարարների խորհրդում, քանի որ Հանրապետությունից բացակայում էր Նախարարների խորհրդի նախագահ փիար Սիմեոն Սաքսքոպուրկոթսքին, ի դեմս Բուլղարիայի կառավարության նախագահի Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ հանդիպեց Կրոնից գործերի տնօրեն փիար Իվան Ժելեֆը, ով Նորին Սրբությանը փոխանցեց փիար Սաքսքոպուրկոթսքու ողջույններն ու բարեմաղթանքները: Հանդիպման ընթացքում կարևորվեց Եկեղեցու դերը մարդկության և ի մասնավորի բուլղար ու հայ ժողովուրդների կյանքում:

Նույն օրը նախագահական նստավայրում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Բուլղարիայի նախագահ փիար Գեորգի Փարվանովի հետ: Նախագահը հանուն բուլղար ժողովրդի բարի գալուստ մաղթեց Ամենայն Հայոց Հայրապետին և հույս հայտնեց, որ Նորին Սրբության այցը պիտի խթանի երկու ժողովուրդների եղբայր հաղորդակցման զորացմանը, ինչպես նաև Բուլղարիայի և Հայաստանի Հանրապետությունների հարաբերությունների ընդլայնմանը և հայ-բուլղարական կապերի սերտացմանն ու զարգացմանը: Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը հատուկ կերպով շեշտեց Հայոց ցեղասպանության Բուլղարիայի դատապարտման կարևորությունը, որպեսզի համայն աշխարհում այլևս նման ահավոր ողբերգություններ թույլ չտրվեն: Նախագահ Փարվանովը նշեց, որ Բուլղարիայի Հանրապետությունն իր վերաբերմունքը կարտահայտի 1915 թվականին Օսմանյան կայսրության կողմից հայ ժողովրդի հանդեպ իրագործված ցեղասպանության վերաբերյալ:

Ի հիշատակ իր այցելության, Նորին Սրբությունը Բուլղարիայի Հանրապետության նախագահին նվիրեց արծաթե նկարազարդ ափսե և «1700-ամյակի» ոսկե հուշամեդալ:

Կեսօրից հետո հայրապետական պատվիրակությունն ուղևորվեց Բաչկովո վանք: Վանքի միաբանությունը, վանահայր Նաում եպիսկոպոսի գլխավորությամբ, ջերմ ընդունելություն ցույց տվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Տաճարում ողջույ-

ԲՈՒԼՂԱՐԻԱ՝ հետո. ի պատիվ Նորին Սրբության
նի և բարեմաղթանքի խոսքերի փոխանակումից հետո. ի պատիվ Նորին Սրբության
տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ: Կարճատև դադարից հետո հայրապե-
տական պատվիրակությունը մեկնեց Պլովդիվ քաղաք, որտեղ նախատեսված էր
հանդիպում քաղաքային իշխանության և հայ համայնքի հետ:

Նորին Սրբությանը բարի գալուստ մաղթելուց հետո, Պլովդիվի քաղաքապետ
պիար Իվան Չոմակովը նշեց, որ թեև քաղաքում բնակություն են հաստատել տար-
բեր ազգությունների ներկայացուցիչներ, ովքեր տարբեր կրոնների հետևորդներ են,
սակայն նրանք ապրում են եղբայրական սիրով և համագործակցությամբ: Քաղա-
քապետը բարձր գնահատական տվեց հայ համայնքին, որը շինարար ու ստեղծա-
գործ կյանքով իր ներդրումն է բերում քաղաքի զարգացմանն ու բարգավաճմանը:
Վեհափառ Հայրապետը ուրախությամբ լսեց հայորդյաց մասին քաղաքապետի ա-
սած խոսքերը և իր հերթին վստահեցրեց, որ նրանք, որպես Բուլղարիայի արժանա-
վոր քաղաքացիներ, նույն նվիրումով ու նախանձախնդրությամբ պիտի շարունակեն
իրենց ստեղծագործ ու կառուցողական գործունեությունը:

Քաղաքապետի հետ հանդիպումից հետո, Նորին Սրբությունն այցելեց Պլովդիվի
հայոց Ս. Գևորգ եկեղեցի, որտեղ բազմաթիվ հավատավոր հայորդիներ անհամբեր
սպասում էին Ամենայն Հայոց Հայրապետին: Գեղակերտ եկեղեցում Նորին Սրբութ-
յանն ընդունեցին «Հրաշափառ»-ի արարողությամբ: Հանուն եկեղեցական դասի և
հավատացյալ հոտի, Ռումինիո և Բուլղարիո հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ.
Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը ոգեշունչ ու հուզիչ խոսքերով ու բարիգա-
լստյան մաղթանքով ողջունեց Վեհափառ Հորը: Այնուհետև Նորին Սրբությունը
հայրապետական իր օրհնության խոսքը հղեց Պլովդիվի հայ համայնքին:

Եվ Պլովդիվում, և՛ մյուս քաղաքներում, որտեղ Վեհափառ Հայրը հանդիպում էր
տեղի հայ համայնքների հետ, իր օրհնության հետ միասին, իր հորդորն ու պատ-
գամն էր հղում հավատավոր հայորդյաց, որ նրանք հավատարիմ մնան ազգային
սրբություններին՝ հայոց լեզվին ու հայրենի հավատքին, լինեն հայ ժողովրդի փառքը
հավելող զավակներ և հյուրընկալ Բուլղարիայի արժանի քաղաքացիներ:

Ի հիշատակ Պլովդիվի Ս. Գևորգ եկեղեցի անդրանիկ այցելության, Վեհափառ
Հայրը եկեղեցուն նվիրեց արծաթե մի սկիհ: Այս ամենից զատ, առ ի գնահատումն
թեմակալ առաջնորդի երկարամյա եկեղեցանվեր գործունեության, Նորին Սրբութ-
յունը գեղեցկազարդ պանակեով զարդարեց Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս
Մարտիկյանի կուրծքը:

Ամեն ոք ցանկանում էր համբուրել հայրապետական մեռոնաօծ Ս. Աջը և վայելել
Ամենայն Հայոց Հայրապետի հայրական օրհնությունը: Ողջույնի արարողությունից
հետո եկեղեցու մեջ խռնված բոլոր հավատացյալներին հնարավորություն տրվեց ի-
րենց հոգու փափագն իրականացնել. նրանք արտասվախառն աչքերով մոտեցան և
երկյուղով ու հավատքով համբուրեցին հայրապետական Սուրբ և Օծյալ Աջը:

Աջահամբույրից հետո Ս. Գևորգ եկեղեցու Տեր Գևորգ և Տեր Դանիել քահանա
հայրերի առաջնորդությամբ Վեհափառ Հայրապետն այցելեց եկեղեցուն կից նորա-
բաց թանգարան, որը Պլովդիվի հայ համայնքի ինքնատիպ ընծան է Հայոց Եկեղե-
ցուն 1700-ամյակի տոնակատարության առթիվ: Թեմակալ առաջնորդի, Պլովդիվի

եկեղեցական վարչության ատենապետ փիար Եղիազար Ուզունյանի և թանգարանի տնօրեն փիար Ռուբեն Զավուշյանի կողմից, Նորին Սրբության այցելության կապակցությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ընծայվեց ԺԷ դարի մասունքակիր գեղեցկահյուս մի խաչ:

Այնուհետև եկեղեցու բակում տեղի ունեցավ համերգ, որին ներկա էին Պլովդիվի քաղաքապետը, քաղաքում իրենց առաքելությունը ծավալող քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, պաշտոնատար տարբեր անձինք:

Հանդիսությունից հետո, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, հայ համայնքի կողմից տրվեց պաշտոնական ընթրիք, որին հրավիրված էին քաղաքային իշխանությունները, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, համայնքի անդամներ և այլք: Պաշտոնական ընթրիքի ժամանակ, Վեհափառ Հայրապետի այցի առթիվ, քաղաքային իշխանությունը դրամական հատկացում կատարեց հայ համայնքի կարիքների համար, ինչը, Նորին Սրբության բնորոշմամբ, քաղաքապետի հոգատար և բարյացակամ վերաբերմունքի արտահայտությունն է տեղի հայ համայնքի նկատմամբ:

Ուշ երեկոյան հայրապետական պատվիրակությունը վերադարձավ Բաչկովո վանք:

## ՀՈՒՆԻՍ 27

Վաղ առավոտյան հայրապետական պատվիրակությունը, հրաժեշտ տալով Բաչկովո վանքի միաբանությանը, մեկնեց ծովափնյա Վառնա քաղաք:

Վառնայի Ս. Աստվածածնի Վերափոխման տաճարում Նորին Սրբությանը ողջունեց և բարի գալուստ մաղթեց Վառնայի Կիրիլ մետրոպոլիտը, ով ի դեմս Սուրբ Սինոդի ընկերակցում էր Վեհափառ Հայրապետին հնգօրյա այցի ընթացքում: Վառնայի տաճարում Ամենայն Հայոց Հայրապետին ողջունելու էին եկել ոչ միայն բուլղար, այլև հայ հավատացյալներ: Ողջունելով և բարի գալուստ մաղթելով Նորին Սրբությանը, Կիրիլ մետրոպոլիտն իր խոսքում անդրադարձավ հայ-բուլղարական հարաբերություններին: Պատասխան խոսքից հետո, առ ի գնահատումն հայ համայնքի նկատմամբ Կիրիլ մետրոպոլիտի ցածած հոգատար և բարյացակամ վերաբերմունքի, Վեհափառ Հայրապետը գեղեցկազարդ լանջախաչ նվիրեց նրան, իսկ ի հիշատակ իր այցելության՝ Վառնայի տաճարին ընծայեց հայկական մի մանրանկար:

Ողջույնի արարողությունից հետո մետրոպոլիտի նստավայրում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն և ճաշկերույթ:

Կարճատև դադարից հետո, երեկոյան, Նորին Սրբությունը հանդիպեց Վառնայի քաղաքապետ փիար Կիրիլ Յորդանովի հետ: Այնուհետև Վեհափառ Հայրապետը Կիրիլ մետրոպոլիտի, քաղաքապետի և պաշտոնատար այլ անձանց ընկերակցությամբ ուղևորվեց քաղաքային զբոսայգի՝ ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունման 1700-ամյակի խաչքար-հուշարձանի բացումը կատարելու:

Խաչքարի օրհնության կարգից հետո Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը

այցելեց Վառնայի Հայոց Ս. Սարգիս եկեղեցի, որը, նախաձեռնությամբ հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Սարգիս քահանա Հովհաննիսյանի և արդյամբ Հայկական բիզնես փորումի նախագահ տիար Անդրանիկ Ջեզերյանի ու փորումի մյուս անդամների, Նորին Սրբության այցի առիթով, բավական սեղմ ժամկետում վերանորոգվել էր: «Նորափետուր զարդարյալ» Ս. Սարգիս եկեղեցին, իր քահանայից դասի ու հավատացյալ անդամների հետ, «Հրաշափառ»-ի արարողությամբ դիմավորեց Ամենայն Հայոց Հովվապետին, ով գալիս էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից իր հետ բերելով Հայոց 131 Հայրապետների, Ս. Գրիգոր Լուսավորչի Ս. Աջի և Սուրբ Էջմիածնի օրհնությունը: Այստեղ ևս Նորին Սրբությանը ողջունեց և բարի գալուստ մաղթեց թեմակալ առաջնորդը: Ի հիշատակ իր այցի, Վեհափառ Հայրը եկեղեցուն նվիրեց արծաթյա մի սկիհ: Ողջույնի արարողությունից հետո եկեղեցուն կից մարզադաշտում տեղի ունեցավ ցեղարվեստական հանդիսություն:

Երեկոյան այն հյուրատանը, որտեղ իջևանել էին հայրապետական պատվիրակությունը և Նորին Սրբությանն ուղեկցող պաշտոնատար անձինք, հայ համայնքի կողմից, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տրվեց պաշտոնական ընթրիք, որին իրենց մասնակցությունն էին բերել Վառնայի, Բուրգասի, Ռուսեի, Շումենի հայ համայնքների հոգևոր հովիվները, Վառնայի հայոց համայնքի անդամներ, պաշտոնատար այլ անձինք:

Առ ի գնահատումն Մայր Եկեղեցու հանդեպ դրսևորած սիրո, նվիրումի և անկեղծ հոգատարության, Ամենայն Հայոց Հայրապետը խորհրդանշական ընծաներով պատվեց տիար Անդրանիկ Ջեզարյանին, Անդրանիկ Շաքարյանին, Վանուհի Առաքելյանին, Կարո Հակոբովիչին, Կարկո Ղուկասյանին և մի շարք այլ բուլղարահայերի:

Ընթրիքն ավարտվեց Նորին Սրբության օրհնության խոսքով:

### *ՀՈՒՆԻՍ 28*

Առավոտյան հայրապետական պատվիրակությունը Վառնայից մեկնեց Սոֆիա: Մայրաքաղաքի ճանապարհին Նորին Սրբությանը հյուրընկալեց Վելիկի Տառնովո քաղաքի Գրիգորի մետրոպոլիտը: Եկեղեցում ողջույնի արարողությունից հետո, ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Գրիգորի մետրոպոլիտի կողմից տրվեց պաշտոնական ճաշկերույթ, որին իրենց մասնակցությունն էին բերել քաղաքային իշխանության ներկայացուցիչները: Կարճատև դադարից հետո հայրապետական պատվիրակությունն ուղևորվեց Սոֆիա:

Թեպետ ճանապարհը հոգնեցուցիչ էր, սակայն Բուլղարիայի հիասքանչ բնության հանդեպ հրապույրն ի չիք էր դարձնում այդ հոգնությունը:

Մայրաքաղաք հասնելուն պես, հայրապետական պատվիրակությունն ուղղվեց դեպի Ներքին գործոց նախարարություն. Նորին Սրբությունը հանդիպեց Բուլղարիայի ՆԳ նախարար տիար Սոլոմոն Բասիի հետ: Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձան Եկեղեցու առաքելությանը և համոզմունք հայտնեցին, որ հզոր պետության առհավատչյան զորավոր Եկեղեցին է: Զրույցի ժամանակ ՆԳ նախա-



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆԻ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՆԵՐՔԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻ
ՀԵՏ ՀՀ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՊԼՈՎԴԻՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՎ ԵՎ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐՈՎ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԵՎ ՊԼՈՎԴԻՎԻ
ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎԻ ՀԵՏ ՔԱՂԱՔԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՔԱՐՈԶԵԼԻՍ



բարը դրվատանքի խոսքերով բնութագրեց հայ համայնքին և շեշտեց, որ դարերի պատմություն ունեցող հայ-բուլղարական բարեկամական կապերը պետք է սերտացնել և զարգացնել: Նորին Սրբությունն իր գոհունակությունն արտահայտեց, որ բուլղարաբնակ հայորդիները հյուրընկալ Բուլղարիայում ամենուր վայելում են թե՛ իշխանությունների, թե՛ բուլղար ժողովրդի սերը, հարգանքն ու աջակցությունը: Ջերմ և անկեղծ զրույցից հետո, ի հիշատակ իր այցելության, Նորին Սրբությունը փայտե մի գեղեցկազարդ խաչքար և 1700-ամյակի արծաթյա հուշամեդալ նվիրեց պրն Սոլոմոն Բասիին: Վերջինս էլ Նորին Սրբությանն ընծայեց մի գիրք, որը ներկայացնում էր Բուլղար Ուղղափառ Եկեղեցու նշանավոր վանքերից Ռիլայի վանքի պատմությունը, ինչպես նաև Ներքին գործերի նախարարության հաստատման 125-ամյակին նվիրված ոսկե հուշամեդալ:

«Бояна» կոչվող կառավարական հյուրատանը կարճատև դադար առնելուց հետո, հայրապետական պատվիրակությունն ուղղվեց Սոֆիայի հայկական եկեղեցի:

Ծավով պետք է նշենք, որ Սոֆիայի Ս. Աստվածածին հայկական եկեղեցին փակվել և հիմնահատակ քանդվել է 1912 թվականին, և 1935 թվականից ի վեր հայ համայնքի համար որպես եկեղեցի ծառայել է «Հայ Ազգային տան» առաջին հարկի սրահը, որը «կը կահաւորուի եւ կը ձեւաւորուի որպէս եկեղեցի՝ Սուրբ Աստուածածին անուան տակ»:

«Հրաշափառ»-ի արարողությամբ Նորին Սրբությունը մուտք գործեց եկեղեցական պաշտամունքի սրահ, որտեղ խոնվել էին հավատավոր հայորդիները և անհամբեր ու կարոտալի հայացքներով սպասում էին իրենց Հովվապետին: Թեմակալ առաջնորդ Սրբազան Հոր բարիգալստյան խոսքից հետո, Նորին Սրբությունն իր օրհնության խոսքն ուղղեց սոֆիաբնակ հայերին:

Ի շարս այլ հարցերի, Վեհափառ Հայրապետն իր խոսքում ցավով խոսեց այստեղ ազգային ավանդական ճարտարապետական հորինվածքով կերտված եկեղեցի չունենալու մասին, ուստի, որպեսզի Սոֆիայի հայ համայնքը ևս օժտվի սուրբ տաճարով՝ Նորին Սրբությունը սոֆիաբնակ հայորդյաց ուսերին մի պարտավորություն դրեց, որ նրանք ձեռնամուխ լինեն Աստծո տաճարի կառուցման սուրբ գործին, որպեսզի հաջորդ հայրապետական այցելության ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետին իր բանավոր հոտին ողջունի ազգային ճարտարապետության կնիքով կնքված հայկական եկեղեցում:

Սոֆիաբնակ հայորդիք մեծ պատրաստակամությամբ հանձն առան իրենց Հովվապետի պատվերը և խոստացան մոտ ապագայում կյանքի կոչել այն: Իր խոսքի ավարտին Վեհափառ Հայրը հայրապետական բարձր գնահատանքի ու օրհնության արժանացրեց բոլոր այն անձանց, ովքեր կազմակերպել էին Բուլղարիա այցելությունը, ովքեր ընկերակցել էին հայրապետական պատվիրակությանը՝ հնգօրյա այցի ընթացքում, ովքեր նվիրումով ու նախանձախնդրությամբ փքնում են ի պայծառություն Հայոց Եկեղեցու, ի փառս հայ ժողովրդի և ի շենություն Բուլղարիայի ու Հայաստանի Հանրապետությունների: Եվ վերջում, ի հիշատակ անդրանիկ այցելության, Նորին Սրբությունը հայկական մի մանրանկար նվիրեց Սոֆիայի եկեղեցուն:

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍՈՖԻԱՅԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*Ուրախ ենք անչափ, որ Հովվապետական այցելությամբ գտնվում ենք Բուլղարիայում, որի հյուրընկալ հողում դարեր շարունակ իր կյանքն է կառուցում հավատավոր հայ համայնքը՝ միշտ հավատարիմ ազգային ու եկեղեցական իր ավանդներին:*

*Սուրբ Աստվածածնի բարեխոսությունը հայցող գեղեցիկ այս եկեղեցում հավաքված սիրելի զավակներ Մեր, հայրենակարոտ ձեր սրտերին Հայրապետական Մեր ողջույնն ենք բերում, սեր և օրհնություն Աստվածակառույց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, Հայաստանի ու Արցախի հայրենի մեր երկրից ու այնտեղ ապրող ձեր եղբայրներից ու քույրերից, որ ներկա դժվարությունների մեջ անհուն համբերությամբ, մեր պատմության կանչը և հայրենի հողի սերը իրենց սրտերում, նոր կյանք են կառուցում համայն հայության Հայրենիքում:*

*Ամեն ժողովուրդ ունի իր ազգային մեծ երազը: Մեր մեծ երազանքն ու ձգտումն է, որ այսօր ազատ ու անկախ մեր Հայրենիքը գտնի իր կայուն, ապահով կյանքը, համայն մեր ժողովրդի համախումբ ջանքերով վերագտնի արարումի իր ուժերը և այն ուղղի պետության հզորացմանը ու հասարակության առաջընթացին: Եկել է այն ցանկալի ժամանակը, երբ ազատ ու անկաշկանդ են Հայաստանի ու Հայոց Սփյուռքի հարաբերությունները, և մեր միացյալ ջանքերով պիտի առավել ամրանան ու ծաղկեն հայրենաշինության մեր մեծ նպատակին, պիտի օգնենք, որ ամենուր՝ Հայաստանում և Սփյուռքում հայորդյաց հոգիները զորանան նախնյաց սուրբ հավատքով ու ժառանգությամբ, առ Հայրենին և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին սիրով ու նվիրումով:*

*Սիրելի բարեպաշտ հայորդիք, եկեք միասիրտ աղոթենք ու սաղմոսերգուի խոսքով հայցենք. «Տեր, օրհնիր քո ժառանգորդներին, հովվիր ու հավետ բարձրացրու նրանց», հայցենք, որ երրորդ հազարամյակը ազգային մեր կյանքում լեցուն լինի երկնապարգև շնորհներով՝ հավատի լույսով, սիրով ու բարությամբ, խաղաղությամբ ու համերաշխությամբ, որպեսզի ժողովուրդների համատեղ ընթացքի մեջ մեր քայլերը լինեն հպարտ, հաստատ ու անսայթաք:*

*Այս ընթացքում Մենք առիթ ունեցանք հանդիպելու Բուլղարական Ուղղափառ Եկեղեցու Առաջնորդ Նորին Սրբություն Մաքսիմ Պատրիարքին, երկրի բարձրաստիճան պաշտոնատար անձանց: Մեծապես մխիթարված է Հայրապետիս հոգին, քանզի հանդիպումների ընթացքում լսեցինք միայն գնահատանքի ջերմ խոսքեր հայ գաղութի վերաբերյալ, որը, դարեր առաջ*

*հիմնվելով հյուրընկալ այս հողում, ազնիվ մասնակցություն է բերում երկրի հասարակական ու մշակութային կյանքին, ծառայում նրա շինությանն ու առաջընթացին:*

*Հայրապետական Մեր օրհնությունը և բարձր գնահատանքն ենք բերում Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանին և հոգևոր դասին՝ Քրիստոսասեր սպասավորության մեջ մշտապես դրսևորած անսակարկ նվիրումի և ի պայծառություն մեր Սուրբ Եկեղեցու արգասավոր ծառայության համար, որի երջանիկ ականատեսը եղանք Մեր այցելության ընթացքում: Հարազատ զավակներ ու նվիրյալ սպասավորներ Առաքելական մեր Եկեղեցու, հանապազ զորացեք Տիրոջով և հավատարիմ եղեք ձեր հայրերի սուրբ ուխտին: Բուլղարիո հայոց եկեղեցիներում Պատարագ մատուցելիս մշտապես առ Աստված աղոթեք նաև Մայր Աթոռի անսասանության և մեր Հայրենիքի խաղաղության ու առաջընթացի համար:*

*Հայրական օրհնություն ձեզ, հավատավոր հայորդիք Բուլղարիայի: Հպարտ եմ և հույժ քաջալեր այժմ որպես Հայոց Հայրապետ՝ տեսնելով ձեզ համախումբ մեր Եկեղեցու շուրջ, հավատարիմ ազգային մեր ավանդներին, մեսրոպատառ սրբազան լեզվին: Ամուր մնացեք ձեր հավատքի մեջ: Մեր փոքր ազգի յուրաքանչյուր զավակ թող հավատարմությամբ նայի երկինք և ունկնդիր լինի մեր հայրերին, ովքեր հավատալով Աստծո նախախնամությանը Իր փոքր հոտի նկատմամբ, իրենց մահով իմացյալ ու կյանքով գիտակից փառքը կերտեցին մեր ժողովրդի: Հավատարիմ մնացեք նրանց հայրենապաշտ լույս պատգամներին, նրանց հեղած արյանը, որից ծնունդ առավ մեր Հայրենիքի նոր, անկախ պետականությունը և մնաց անսասան ու կանգուն մեր Սուրբ Եկեղեցին: Շարունակեք ձեր ընթացքը եկեղեցասեր ու հայրենապաշտ նույն ոգով, հպարտ՝ Ամենայն հայոց հավատքի 1700-ամյա նվիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով, ազատ Հայաստանով և այդպես կրթեք ձեր սիրելի զավակաց՝ նրանց մատաղ հոգիներում ամուր դնելով հիմքը Իջման Սուրբ Խորանի, Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Ս. Գրիգոր Լուսավորիչ-Խոր Վիրապի, Գեղարդավանքի և հայոց նվիրական բոլոր սրբավայրերի:*

*Մեր հանապազ աղոթքն է, որ Աստված ապահով ու խաղաղ, շեն ու բարգավաճ պահպանի Բուլղարիան՝ իր աստվածասեր ժողովրդով, հոգևոր ու աշխարհիկ իր բարեխնամ առաջնորդներով:*

*Հայրապետիս ի խորոց սրտի հայցն է առ Աստված, որ Ամենախնամ Տերը միշտ հաստատուն ու պայծառ պահի Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, հավատով զորացյալ ու հայրենական կյանքով լեցուն՝ Տիրախնամ թեմը Բուլղարիո հայոց:*

*«Օրհնեալ եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն: Սէր եւ խաղաղութիւն ամենեքիս»:*

Ողջույնի արարողությունից հետո, «Հայ Ազգային փառ» բակում փեղի ունեցավ համերգ: Հայ համայնքի երգչախմբի կատարմամբ հնչեցին մի շարք երգեր: Համերգի ընթացքում հնչեց նաև «Ողջույնի երգ» նոր ստեղծագործությունը (խոսք` Միհրան Պողոսյանի, երաժշտ.` Հայկաշոտ Աղասյանի), որը բուլղարահայոց ձոնն էր Վեհափառ Հայրապետին:

Հրաժեշտ տալով հայ համայնքին, հայրապետական պատվիրակությունն ուղևորվեց դեպի «Даун-Таун» հյուրատուն, որտեղ Բուլղարիայում ՀՀ դեսպանության կողմից կազմակերպվել էր ընդունելություն: Պաշտոնական ընդունելությանը ներկա էին Բուլղար Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Ամենասրբություն Մաքսիմ Պատրիարքը, Սուրբ Սինոդի անդամներ, Բուլղարիայի քրիստոնեական այլ Եկեղեցիների հոգևոր առաջնորդներ, ՆԳ նախարար փիար Սոլոմոն Բասին, Բուլղարիայում հավատարմագրված օտար պետությունների դիվանագիտական ներկայացուցիչներ, պաշտոնատար այլ անձինք:

Ուշ երեկոյան հայրապետական պատվիրակությունը վերադարձավ կառավարական հյուրատուն:

*ՀՈՒՆԻՍ 29*

Պաշտոնական այցելության վերջին օրը հայրապետական պատվիրակությունը մեկնեց Ռիլայի վանք, որտեղ նախատեսված էր հոգեհանգստյան պաշտոն Բորիս Գ թագավորի դամբարանին:

Ռիլայի վանքում Ամենայն Հայոց Հայրապետին ողջունեցին և բարի գալուստ մաղթեցին վանահայր Ցոհան եպիսկոպոսն ու վանքի միաբանությունը: Տաճարում փոխանակված ողջույնի ու բարեմաղթանքի խոսքերից հետո, ի հիշատակ իր այցելության, Նորին Սրբությունը վանահայր եպիսկոպոսին նվիրեց գեղեցկազարդ մի պանակե: Այնուհետև, Բորիս Գ թագավորի հոգվույն խաղաղության համար, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն: Կարճատև այցելությունն ավարտվեց Նորին Սրբության և Ցոհան եպիսկոպոսի միջև կայացած ջերմ զրույցով:

Մինչ Բուլղարիայից մեկնելը, հյուրատանը, որտեղ կանգ էր առել հայրապետական պատվիրակությունը, տրվեց հրաժեշտի ճաշկերույթ, որին մասնակցում էին Բուլղար Ուղղափառ Եկեղեցու գահակալ Մաքսիմ Պատրիարքը, մետրոպոլիտներ, Ռումինիո և Բուլղարիո հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը, Բուլղարիայի թեմի թեմական խորհրդի ատենապետ փիար Ռուբեն Գրիգորյանը, պաշտոնատար այլ անձինք:

Պաշտոնական ճաշկերույթից հետո, ի գնահատումն Բուլղարիայի հայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ փիար Ռուբեն Գրիգորյանի եկեղեցանվեր գործունեության, Նորին Սրբությունը նրան պարգևեց 1700-ամյակի արծաթյա հուշամեդալով:

Պաշտոնական ճաշկերույթից հետո, հայրապետական պատվիրակությունն

ուղևորվեց Սոֆիայի օդանավակայան, ուր Նորին Սրբությանը բարի ճանապարհ մաղթելու էին եկել Սուրբ Սինոդի անդամներ, Նախարարների խորհրդի Կրոնից գործերի փսօրեն փիար Իվան Ժելեֆը, փոխփնօրեն փիար Էմիլ Վելինովը, Ռումինիո և Բուլղարիո հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը, Բուլղարիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան փիկին Անդա Անանը, Բուլղարիայի թեմի թեմական խորհրդի ատենապետ փիար Ռուբեն Գրիգորյանը, պաշտոնական այլ անձինք:

Հունիսի 29-ին ավարտվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական այցը Բուլղարիա. Սոֆիա-Վիեննա չվերթով Վեհափառ Հայրապետը ժամանեց Ավստրիայի մայրաքաղաք Վիեննա:

Օդանավակայանում Նորին Սրբությանը և հայրապետական պատվիրակությանը դիմավորելու և ողջունելու էին եկել Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը, Ավստրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան փիար Ջիվան Թաբիբյանը, ինչպես նաև Վիեննայի հայ համայնքի ներկայացուցիչները: Բարիգալստյան արարողությունից հետո, հայրապետական պատվիրակությունն առաջնորդվեց Վիեննայի «Inter-continental» հյուրանոցը:

Երեկոյան, ի պատիվ Նորին Սրբության, հայ համայնքի կողմից տրվեց ոչ պաշտոնական ընթրիք:

Հաջորդ օրը, հունիսի 30-ին, կիրակի, Ամենայն Հայոց Հայրապետը Վիեննայի հայոց Ս. Հռիփսիմե եկեղեցում մասնակցեց Սուրբ Պատարագին: Օրվա պատարագիչն էր Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ վիեննայաբնակ հայությանը հայրապետական իր պատգամը հղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հավարտ Սուրբ Պատարագի, եկեղեցուն կից ընդունելության սրահում Նորին Սրբությունը հանդիպեց հավատավոր հայորդիներին, ովքեր մեծ փափագ ունեին հայրապետական մյուռոնաբույր Սուրբ Աջը համբուրելու:

Վիեննայահայությանը հրաժեշտ տալով՝ Նորին Սրբությունը և հայրապետական պատվիրակության անդամներն ուղևորվեցին հյուրատուն: Այնուհետև, ուշ երեկոյան, հայրապետական պատվիրակի, Ավստրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի, ինչպես նաև հայ համայնքի ներկայացուցիչների ուղեկցությամբ, Վեհափառ Հայրը ճանապարհվեց օդանավակայան, որտեղից էլ՝ Վիեննա-Երևան չվերթով ժամանեց Հայաստան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

*ԱՐԹՈՒՐ ՄՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ մեր ժողովրդին մատուցած Ձեր բազում ծառայութիւնների եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ տածած Ձեր անկեղծ սիրոյ ու նուիրումի համար:

Յարգարժան պրն Ծառուկեան, մեր ժողովուրդը ճանաչում էր Ձեզ իբրեւ անուանի մարզիկի, ով իր յաջողութիւններով միջազգային ասպարէզներում բարձր է պահել մեր երկրի անունը: Այսօր Դուք ճանաչուած էք նաեւ որպէս գործարար ու բարեգործ հայորդի, որի սէրը հանդէպ հայրենի երկիրը, հարազատ ժողովուրդն ու Մայր Եկեղեցին դրսեւորւում է բազում հայրենաշէն նախաձեռնութիւններով ու աստուածահաճոյ գործերով՝ յանուն ազգային հասարակական մեր կեանքի շինութեան ու անկախ մեր երկրի առաջընթացի:

Մենք ուրախութեամբ ենք ականատես նաեւ Ձեր որդիական սիրուն ու ծառայասիրական պատրաստակամութեանը՝ հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Առ Աստուած Ձեր հաւատի եւ դէպի հարազատ ժողովուրդը Ձեր անկեղծ նուիրումի արտայայտութիւնն է Ձեր հովանաւորութեամբ կա-

ռուցուած Սուրբ Աստուածածին եկեղեցին, որի օծման սրբազան արարողութիւնը կատարեցինք Ձեր եւ մեր ժողովրդի հաւատաւոր զաւակների մասնակցութեամբ ու աղօթքներով: Այս սրբավայրը, որպէս տուն Աստուծոյ եւ տուն աղօթից, դարեր շարունակ իր շնորհաբաշխ դռները պիտի բացի հաւատաւոր մեր զաւակների առջեւ՝ Աստուածային օրհնութիւն սփռելով նուիրական մեր հողին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը եւ Ձեր ծառայութեանց ու վաստակի ամենաբարձր գնահատանքով շնորհում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Ամենախնամ Աստուած հաւատքի մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ Իր օրհնութեան ներքոյ պահի ու պահպանի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ նրկար կեանք, գործոց յարանորոգ յաջողութիւններ և ամենայն բարիք:

Թող Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ բիւր բարիքների եւ առատ ողորմութեան:

*«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան ամէն»:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Յունիսի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 90

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԱՐՍԼԱՆՅԱՆՆԵՐԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՍԼԱՆԵԱՆ, ՈՐ Ի ԲԵՅՐՈՒԹ, ԼԻԲԱՆԱՆ

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ վերստին խնդագին գոհունակութեամբ անդրադառնում Ձեր եկեղեցաշէն ու ազգօգուտ գործունէութեանը:

Սիրելի Տէր եւ Տիկին Արսլանեաններ,

Ուրախ ենք մեծապէս, որ Ձեր կեանքն արդիւնաւորում էք հարազատ ժողովրդին ու Մայր Եկեղեցուն մատուցած Աստուածահաճոյ բազում ծառայութիւններով: Տասնամեակներ շարունակ, որպէս պատուարժան անդամ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Դուք հոգեւոր ու նիւթական Ձեր կարողութիւնները սիրառատ ոգով ի սպաս էք դնում ազգային եւ եկեղեցական մեր կեանքի շինութեանն ու զօրացմանը, սրբազան մեր արժէքների անխաթար պահպանմանն ու զարգացմանը:

Բարեգործի Ձեր անունը առյաւէտ կապուած է հայրենի մեր երկրի Ազատան գիւղի Սուրբ Յարութիւն եկեղեցուն, որի նորոգութեան աշխատանքները տարիներ առաջ կատարուեցին Ձեր ազնիւ հովանաւորութեամբ: Այսօր արդէն նորոգուած սրբավայրի լուսաւոր կամարների ներքոյ հաւատաւոր հայորդիները իրենց աղօթքն են առ Աստուած բարձրացնում, հաղորդւում Աստուածային սուրբ խորհուրդներին եւ արժանանում երկնապարգեւ շնորհների՝ երախտագիտութեամբ Տիրոջ օրհնութիւնը հայցելով Ձեր բարի գործերին:

Ի գնահատումն Մայր Եկեղեցուն մատուցած Ձեր անսակարկ ծառայութեանց, յղում ենք Ձեզ Մեր սէրն ու բարեմաղթանքները եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

պարտույ բարձրագոյն շքանշանը:

Մեր ամենաջերմ աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ ի խորոց սրտի մաղթում, որ Տէրը Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ մշտապէս առաջնորդի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաշէն գործոց նորանոր յաջողութիւններ:

*«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն»:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 7-ն Յունիսի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 92

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2002 թվականի հունիս-հուլիս ամիսների ընթացքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Կոնդակով

**«Ս. Գրիգոր Լուսավորիչ»** շքանշանով պարգևատրվել են.
Գագիկ Ծառուկյան (Կոտայքի թեմ)
Հարություն Արսլանյան (Լիբանան)

**«Ս. Սահակ-Ս. Մեսրոպ»** շքանշանով պարգևատրվել են.
Արա Թոփյան (Լիբանան)
Եղիա Տիգրանյան (Երուսաղեմի հայոց Պատրիարքություն)

**«Ս. Ներսես Շնորհալի»** շքանշանով պարգևատրվել են.
Ջորջ և Ռոզ Մեքենյաններ (ԱՄՆ Արևելյան թեմ)
Րաքսի Ջամյան (ԱՄՆ Արևմտյան թեմ)
Փաթ Փափազյան (ԱՄՆ Արևմտյան թեմ)
Նորմա Ցակլչյան (ԱՄՆ Արևմտյան թեմ)
Դայանա Թումաջյան (ԱՄՆ Արևմտյան թեմ)

**Օրհնության գիր է տրվել.**
Ս. Հովհաննես-Կարապետ եկեղեցու ծխական համայնքին (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)
Սարգիս Սարգիսյան (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)
Կարո Հակոբովիչ (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)
Արփո Թահմիզյան (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)
Կարլո Ղուկասյան (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)
Անդրանիկ Ջեզարյան (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)
Անդրանիկ Շաքարյան (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)
Վանուհի Առաքելյան (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)
Դիմիտր Իվանով (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)
Կարպիս Բեյլերյան (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)
Հարություն Հարությունյան (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)
Հակոբ Գրիգորյան (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)
Վահան Անգելյան (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)
Միլեն Կուրտև (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)
Վեսելինա Սավովա (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)

**Ավագության պատիվ է տրվել.**
Գուսան քահանա Հափավյան (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)
Սահակ քահանա Աշակերտյան (Դամասկոսի թեմ)
Զարեհ քահանա Զարգարյան (Կանադահայոց թեմ)

**Լանջախաչ կրելու իրավունք է տրվել.**
Դանիել քահանա Գարաճյան (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)
Եզրաս քահանա Պոկպան (Ռումինիայի և Բուլղարիայի թեմ)

# Ն.Ս.Օ. Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք հղում համայն մեր ժողովրդին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա տոնական առիթով:

Նվիրական է Սահմանադրության օրվա խորհուրդը, քանզի մենք հաստատում ենք մեր հավատարմությունը հայոց վերահաստատված պետականության հանդեպ, հարգում մեր նախնյաց դարավոր ձգտումը, ջանքն ու մաքառումը օտար բռնապետությունից ազատագրվելու, օրինասեր, արդարամիտ ու ճշմարտահոգի պետություն կերտելու՝ իբրև հայոց բարօր ու շեն գալիքի երաշխիք: Այսօր մենք վերստին խոնարհվում ենք Հայոց անկախ պետականության 1991 թվականի նոր արշալույսը իրենց «վարդագույն արյամբ» արժեվորած հայորդյաց սուրբ հիշատակների առջև:

Թող Սահմանադրության օրվա խորհուրդը զորացնի մեր հոգիներում Հայրենյաց սերը, մեր կամքն ու պատրաստակամությունը՝ մեր ամենօրյա գործերով, մեր կյանքով Մայր Հայաստանի նոր օրը կառուցելու:

Թող Աստված առաջնորդ լինի մեզ Հայրենիքի հանդեպ մեր ծառայության մեջ. ամեն:

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
5 հուլիսի 2002 թ.

# ՄԱՅՐ ԱԹՈՌԸ՝ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ ԽՆԴՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ի մոտո հետևում է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության կալվածքների շուրջ Իսրայելում տեղի ունեցող վերջին իրադարձություններին և խնդրի առնչությամբ ներկայումս Իսրայելի դատարանում ընթացող դատավարությանը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մշտապես կապի մեջ է Երուսաղեմի Հայոց Պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի հետ և ընթացիկ իրավիճակի մասին ամեն օր լուրեր և տեղեկություններ է ստանում:

Վեհափառ Հայրապետը նաև հատուկ նամակ է հղել Իսրայելի վարչապետ Արիել Շարոնին՝ կոչ ուղղելով Իսրայելի կառավարությանն ընդառաջ Պատրիարքարանի հայցին ընդունելի լուծում գտնել միջազգային հնչեղություն ստացած «Պարոն տեր» կալվածքի շուրջ ծագած խնդրին՝ չխաթարելով 400 տարուց ի վեր Հայոց Պատրիարքարանին պատկանող կալվածքի հոգևոր-մշակութային արժեքը:

# ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

## Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՎԻՐԱՊԻՑ ԵԼՆԵԼՈՒ ՏՈՆԻՆ
(1 հունիսի 2002 թ.)

*«Այսօր է զոր արար Տէր,*
*եկայք ցնծասցուք եւ ուրախ եղիցուք ի սմա»:*
*(Սաղմ. ճԺԷ 24)*
*«Այսօր է, որ Աստված ստեղծեց Երկինքը և երկիրը,*
*եկեք ցնծանք և ուրախանանք այս օրով»:*

Սիրելի հավատացյալներ.

Այս խոսքերը մեր մտածումները կարող են զբաղեցնել ամեն օր, որովհետև ամեն օր նոր օր է իր պարունակությամբ, իր բովանդակությամբ Աստծուց պարգևված ներշնչումներով մարդու համար և մարդու գործունեության: Ահա թե ինչու ամեն օր մենք կարող ենք մտածել, որ այսօր է, որ մեր գործերով Աստված արարում է ամեն ինչ, և մեծ գոհունակություն զգալով փառք տանք Աստծուն և ուրախանանք այդ բոլոր պարգևների համար:

Եվ ահա այսօր մի պատմական, մի կրոնաբույր մեծ իրողություն և բովանդակություն պարունակող տոն է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցում. մենք ուրախությամբ և ցնծությամբ տոնախմբում ենք մեր հավատո հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի Վիրապից հանվելու կամ ելնելու տոնը: Այսօր բազմաթիվ հայ հավատացյալներ անձնապես այցելում են Խոր Վիրապ, իջնում են վար, երկրպագում են և իրենց մտքով ու հոգով վերապրում են այն բոլոր պատմական իրադարձությունները, որոնք կատարվեցին իբրև Աստուծո շնորհք Հայաստան աշխարհում 1701 տարիներ առաջ և ինչու չէ նաև դրան նախորդող մի ժամանակահատվածում: Իսկ բոլոր նրանք, ովքեր հնարավորություն չունեն անձնապես այցելելու, ուխտի գնալու և իրենց աղոթքը կատարելու Խոր Վիրապում, ապա իրենց հոգու մեջ են ապրում այս օրվա խորհուրդը: Եվ դա, սիրելիներ, վերաբերում է ամբողջ հայ ժողովրդին, ուր որ էլ նրանք գտնըվեն և ապրեն՝ Հայաստանում թե Հայաստանից շատ հեռու տարբեր վայրերում:

Ի՞նչ էր, որ տեղի ունեցավ այդքան երկար դարեր առաջ, որին նախորդել էր առաքելական քարոզությունը, երբ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալներն անմիջականորեն եկան Հայաստան, բերեցին Ավետարանի լույսը և այն բաշխեցին հայ ժողովրդին: Մեր ժողովրդի մի հատված հետևեց և հավատաց այդ ճշմարիտ վարդապետությանը, ընդունեց այն և ապրեց քրիստոնեական կյանքով երեք դար շարունակ՝ մինչև 300 թ.: Այդ թվականից փոքր-ինչ առաջ Հայաստանում քարոզելու նպատակով դարձյալ գտնվում էին տարբեր քարոզիչներ և նաև նրանց մեջ մի հավատա-

վոր այր, որը պիտի հետո դառնար մեր Ս. Գրիգոր Լուսավորիչը, ով մեր արքայական տոհմի հարազատ ճյուղից էր: Գրիգորի հայրը դավադրաբար սպանել էր մեր Տրդատ թագավորի հորը՝ ուղարկված լինելով Պարսկաստանից, որպեսզի արքունական հեղաշրջման ճանապարհով փոխվեր արքայական ընտանիքը և մի այլ տոհմ թագավորեր Հայաստանում, որը բարեկամական հարաբերություններ ուներ Սասանյան տոհմի հետ, որը թագավորում էր Պարսկաստանում:

Արքայասպանությունից հետո Անակի ընտանիքը սրի է քաշվում և հրաշքով փրկված մանուկ Գրիգորը տարվում է Կեսարիա քաղաք, որտեղ ևս քրիստոնեական զորավոր համայնք կար, և քրիստոնեական մթնոլորտում նա այնտեղ դաստիարակվեց, մինչև չափահաս դառնալը: Նույն այս ողբերգությունից հետո Տրդատ թագավորը ևս մանուկ հասակում Հայաստանից տարվել էր Հռոմ, ուր զինվորական կրթություն էր ստացել, դարձել մի հզոր արքա և գալով թագավորում էր Հայաստանում:

Տրդատը մնացել էր հեթանոս, և Հայաստանի բնակչության կարևոր մի մասը շարունակում էր հեթանոսության մեջ ապրել, իսկ Գրիգորը դարձել էր ճշմարիտ քրիստոնյա մի անձնավորություն՝ ծառայելով Տրդատի մոտ: Եվ ահա, երբ մի օր պետք էր, որ զոհ մատուցանեին Հայաստանում այն ժամանակ ընդունված չաստվածներին, Գրիգորը հրաժարվում է մասնակցել այդ զոհաբերության արարողությանը, իսկ Տրդատը փորձում է նրան ստիպել: Այդժամ Տրդատին հուշում են նաև, թե նրա հայրն էր, որ սպանել էր Տրդատի հորը: Եվ ահա թագավորը, առավել ևս զայրացած, նրան ստիպում է, որ ուրանա Քրիստոսին, և երբ սուրբը հաստատուն է մնում իր հավատքի մեջ և անսասան կերպով շարունակում է այդ խոստովանությունը, այնժամ արքան հրամայում է նրան ենթարկել տարբեր չարչարանքների:

Տեսնելով, սակայն, որ ոչ մի միջոցով չի կարողանում ընկճել սուրբի կամքը՝ նրան դատապարտում է մահվան, բայց ցկյանս բանտարկությամբ, և հրամայում է, որ տանեն և նետեն Արտաշատի մոտ գտնվող Վիրապը, որը ծառայում էր իբրև բանտ, ուր արգելափակում էին մահվան դատապարտվածներին և մոռանում էին նրանց մասին այն մտքով, որ այլևս նրանք պիտի չկարողանան ապրել աշխարհում:

Եվ ահա այն ընթացքում, երբ Գրիգորը արգելավայրում էր գտնվում, տեղի են ունենում մի շարք այլ իրադարձություններ, որոնք ևս կապված էին Հայաստանում քրիստոնեական վարդապետության տարածման հետ:

Այս շաբաթվա ընթացքում, սիրելի հավատացյալներ, դուք ջերմեռանդ կերպով Ս. Պատարագներին մասնակցեցիք և հետևեցիք այդ արարողություններին՝ Ս. Հռիփսիմյանց, Գայանյանց տոնակատարություններին, ու նաև մտովի ապրեցիք այն ամբողջ պատմական պահը, երբ Տրդատ արքան դաժան կույսերին փորձում էր շեղել ճանապարհից, հեռացնել Ավետարանից և Քրիստոսից և նույնիսկ նա ուզում էր իրեն կնության վերցնել Հռիփսիմեին, որը համարձակ կերպով նրան մերժում է՝ արժանանալով Տրդատի արքայական գոռոզամիտ բարկությանը: Նաև այս բոլոր կույսերը ենթարկվում են հալածանքի, չարչարանքի և ի վերջո բոլորը նահատակության պսակն են ընդունում իրենց լուսե ճակատներին:

Ահա այս բոլոր ցասկոտ արարքներից հետո Տրդատը հանկարծ հոգեփոխության է ենթարկվում: Անշուշտ որ նրա հոգում խիղճն է արթնանում և ըստ երևույթին ավելի մտքից ծանոթանալով Հայաստան բերված նոր վարդապետությանը, որի ակամա հալածիչն էր նա դարձել, իր մեջ սկսում է այդ խիղճը գործել, խղճահարության վե-

բածվել. և նա հիվանդանում է ծանրորեն: Արքայադուստր Խոսրովիդուխտը մտմր-փուքների մեջ և ամբողջ արքունիքը մտահոգություններով պատված՝ թե ի՞նչ պիտի լինի գահի բախտը. երբ արդեն կիսախելագար մի արքա է այնտեղ բազմած և որը չէր կարողանում այլևս փիրապետել իր արարքներին և կորցրել էր իր կյանքն իսկ կառավարելու ուղին ու ճանապարհը. մտածում էին սարսափահար՝ թե ի՞նչ պիտի լիներ այս պայմանների մեջ Հայաստանի և հայ ժողովրդի ապագան:

Աստված էր սակայն, սիրելի հավատացյալներ, կանխատեսել և որոշել ամեն բան. այդ ապագան հայ ժողովրդի համար պիտի լիներ կենսատու, պիտի լիներ վեր-ելքի մի ապագա և պիտի լիներ փրկության ապագա քրիստոնեական նոր կրոնի ըն-դունմամբ ամբողջ հայ ժողովրդի կողմից: Ահա Գրիգոր Լուսավորչի քարոզչությունը, որ սեր էր դարձել և իր ծիլերն էր սկսում տալ, հալածիչ արքայի մեջ գտավ ես մի գործիչ՝ այդ նպատակը իրագործելու համար: Արքայադուստրը երազում ունեցավ հայտնություն, թե Տրդատ թագավորին միայն Ս. Գրիգորը պիտի կարողանար բուժել այդ ծանր հիվանդությունից: Նա զարմանում է, որովհետև արդեն անցել էին 14 երկար ու ծիգ տարիներ, և շատերն արդեն մոռացել էին Գրիգորին: Եվ ահա երբ մի քանի անգամ կրկնվում է հրաշքը, փորձում են ստուգել և հավաստիանում են, որ Գրիգորը դեռ հրաշալի կերպով վերապրում էր և շարունակում էր իր ճգնությունը, իր քրիստոնեավայել ընթացքը Վիրապի խոր վիհում:

Արքայադստեր հրամանով նրան պալատ են փոխադրում, որտեղ անմիջապես իր աղոթքով Գրիգորը բուժում է արքային, որը ամբողջականորեն քրիստոնյա դառ-նալով հրահանգում է, որ ամբողջ Հայոց աշխարհը հրաժարվի կռապաշտությունից, հեթանոսությունից և ընդունի ճշմարիտ կրոնը, որը ահա և այդ ժամանակից դառ-նում է Հայաստանի և հայ ժողովրդի պաշտոնական կրոնը նաև: Շատ կարճ ժամա-նակում հայ ժողովուրդը դարձի է գալիս արքայի գլխավորությամբ, մկրտվում է և մի նոր պատմական ուղի է որդեգրում:

Ահա, սիրելիներ, այս պատմական իրադարձություններն են, որ խտացած են ե-րեք կարևոր փոների մեջ՝ «Մուտն ի Վիրապ»-ի, «Ելն ի Վիրապէն» և վաղը՝ « Կա-թողիկե Ս. Էջմիածնի» տոների մեջ: Մուտն ի Վիրապը, սիրելիներ, չարչարանքի, զրկանքի, ամեն տեսակ հալածանքների պահն է հայ ժողովրդի համար, մի տեսակ նաև երկար դարեր հեթանոսական խավարի մեջ խարխափելու պահն է: Ելն ի Վի-րապեն, սիրելիներ, հաղթանակի պահն է հայ ժողովրդի համար, ճշմարիտ հաղթա-նակի, որով ամեն մի հայ իր հոգում արդեն խոստովանած և դարձի եկած, իր հայաց-քը լուսավոր մի ապագայի հառած արդեն պիտի ընթանար աշխարհի դժվար ճամ-փաներով: Էջմիածնի տոնը դարձյալ հաղթանակի շարունակությունն է ահավասիկ, սիրելիներ, այս Իջման Խորանի և այս տաճարի հաստատման, որի տոնը վաղը պի-տի լինի:

Եվ ահա դարեր և դարեր հայ ժողովուրդը, հայ հավատացյալը չի մոռանում այս իրադարձությունները: Նա իր երախտագիտությունն է իր հավատքի մեջ դրած ար-տահայտում ամեն անգամ, երբ մտովի վերապրում է այդ բոլորը և հիշում է այս պայ-ծառ պատմական դեմքերին պատմությունը վերհիշելիս, կամ իր ամենօրյա եկեղե-ցական տոնակատարության շղթայի և կա՛մ իր առօրյա աղոթքը և հավատքը ար-տահայտելու մեջ:

Ահա, սիրելիներ, 301 թվականին կամ սրանից 1701 տարիներ առաջ ևս, հավաք-

ված այս վայրում, հայ հավատացյալները կարող էին ասել. «Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք եւ ուրախ եղիցուք ի սմա»: Եվ 1701 տարիներ շարունակ, ամեն օր, տարին 365 օր, հայ հավատացյալն այս մտքերով և այս ուրախությամբ է ապրել ու իր հայացքը բարձրացրել իր աղոթքի հետ առ Աստված: Ահա այսօր մենք ծննդյան նոր տարի ենք զուգե տոնում, առաջին տարին զուգե 1700 տարի հետո, և դարձյալ ուրախանում ենք այս օրով: Մենք լցվում ենք հույսով, խանդավառությամբ, ոգևորությամբ, լավատեսությամբ, որովհետև գիտենք, որ վաղը և հաջորդող բոլոր օրերն այն օրերն են, որ Աստված մեզ է պարգևում բարի արարմունքների համար:

Եկեք, սիրելիներ, հրաժարվենք ամեն տեսակ վատից և չարից, այնպես, ինչպես դա կատարեց մեր ժողովուրդը 301 թվականին, և վերանորոգված հետևենք մեր հավատո հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի թելադրանքին և առաջնորդությանը, ինչպես շարականն է ասում՝ «Հովիվ քաջ և առաջնորդ բարի, Տեր Սուրբ Գրիգոր, մեծ խոստովանող Քրիստոսի, Աստվածային ճշմարիտ քահանայապետ և տվող բոլոր օրենքների, ով Տեր Սուրբ Գրիգոր»:

Ահա եկեք շարունակենք պահել և պահպանել մեր հավատո հոր առաջնորդությունը և այսօր, այս Սուրբ Խորանի առջև, սիրելիներ, ուխտենք հավատարիմ մնալ մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, որ հիմնեց ինքը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչն այս կատարելությամբ, իր այս շքեղությամբ, և պարգևեց դարերի համար, հավիտենականության և հավերժության համար իր օրհնված ժողովրդին:

Եկեք հպարտ զգանք, սիրելիներ, որ մենք Հայաստանյայց Եկեղեցու անդամներն ենք, որ մենք կրողն ենք Ավետարանի ճշմարտության, նրա լույսի՝ տրված մեզ առաքյալների կողմից, ապա շարունակված Գրիգոր Լուսավորիչով և մեր բոլոր ժամանակների մեջ մեր բոլոր մեծ առաջնորդներով, մեծ նվիրյալներով, մեր Եկեղեցու մեծ գործիչներով: Եկեք հեռու տեղեր չպտտվենք՝ ինչ-ինչ բաներ փնտրելու ակնկալությամբ: Մի բան թող իմանա մեր ժողովուրդը՝ ամենաճշմարիտ դավանանքը, հավատքը կրողը ինքն է՝ հայ հավատացյալը և հայ ժողովուրդը: Մեզ մի բան է մնում միայն կատարել՝ հավատարիմ մնալ անցյալի այդ ողջ ժառանգությանը, իսկ եթե կկարողանանք այն փոխանցել ուրիշների ևս հայ շրջանակներից դուրս, ապա դրանով մենք ևս երախտագիտության և շնորհակալության արժանի կլինենք, բայց մեր պարտականությունն է, որ անպայմանորեն այդ բոլորն իբրև ժառանգություն փոխանցենք մեր իսկ՝ հայկյան արյուն կրող հետնորդներին:

Գնացեք, սիրելիներ, ուր որ կտեսնեք մի հայ, որ մոլորյալ ճանապարհների վրա է դեգերում, ասեք՝ «Եղբայր կամ քույր, ինչ ես կատարում, ինչու ես մոլորվել, ինչու ես հեռացել քո հարազատ տնից և նախ քո առաջնորդ ծնողներից՝ գլխավորությամբ զույգ առաքյալների ու Լուսավորչի, և զրկվել Աստծո օրհնությունից: Վերադարձի՛ր այդ օրհնության մեջ, ներշնչվի՛ր Հայաստանի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հավատքը կրողը մեր նախնի տիտանական անձնավորությունների օրինակից և հետևի՛ր նրանց: Փառք տուր Աստծուն յուրաքանչյուր օրվա համար, հավատա, որ հենց այսօրն է, որ Աստված ընծայում է մեզ, որի մեջ Նա արարում է ամեն բան, և որ Նա կարող է վերստին արարել մեզ՝ հոգեփոխության ենթարկելու ճանապարհով, և անմնացորդ ուրախություն բաշխել մեզ այժմ և հավիտյանս հավիտենից, ամեն»:

*«Շնորհք եւ խաղաղութիւն եւ սէր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանսդ. ամէն»:*

# Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՈՆԻՆ

(2 հունիսի 2002 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի եղբայրներ և քույրեր, մեր հոգու Լուսավորիչ Սուրբ Գրիգորի Խոր Վիրապեն ելնելուն նվիրված տոնին ինձի որպես քարոզի բնաբան ընտրած եմ այս տոնի շարականի մանկունքը, որում կերգվի

«Հրաշափառ Աստուած եւ միշտ բարեխնամօղ,
Որ յառաջ գիտութեամբ զփրկութիւն Հայաստանեայց սկզբնաւորեալ,
Ի պարթեւական մեղապարտ ազգէն Լուսաւորիչ մեզ շնորհեցեր.
Վասն որոյ, բարեխօսութեամբ սորա Փրկիչ կեցո զմեզ»:

(Հրաշափառ Աստված և միշտ բարեխնամող,
Դու, որ նախագիտությամբ հայաստանցիներուս փրկությունը սկզբնավորեցիր.
Պարթևական մեղապարտ ազգեն Լուսավորիչ մեզի շնորհեցիր,
Որի համար սորա [Ս. Գրիգորի] բարեխոսությամբը Փրկիչ եղիր մեզ):

Չորրորդ դարի սկիզբը, սիրելիներ, հայ ժողովուրդի կյանքին մեջ, հայ ժողովուրդի պատմության մեջ, հայ ժողովուրդի կրոնին և ճակատագրին մեջ, քաղաքականության մեջ մեծ հեղաշրջում տեղի ունեցավ: Անցյալ տարի տոնեցինք այդ հեղաշրջման, այդ փոփոխության 1700-ամյակը, երբ որ աստվածային նախախնամությամբ առաջինը հայերուն Աստված վերապահեց և շնորհեց պետականորեն Ավետարանի քարոզությունը, Ավետարանի փրկությունը Հայոց աշխարհին, հայ ժողովուրդին: Այդ հեղաշրջումը տարբեր մակարդակների վրա տեղի ունեցավ, ոչ միայն կրոնական, ազգային, այլև մշակութային, ընկերային, բարոյական և քաղաքական, որ նաև կնքեց ճակատագիրը մեր ժողովուրդին, իբրև նոր քրիստոնյա ժողովուրդ՝ բարոյական և մշակութային բարձր մակարդակով:

Հավանաբար, սիրելիներ, պատմությունը ձեզի ծանոթ է: Կուզեի միայն ձեզ հիշեցնել, որ չորրորդ դարու սկիզբը Լուսավորիչը անհավասիկ այս տոնին կողմեն պանծացվող օրն էր, որ կելներ Խոր Վիրապեն, իր 13 տարվան բանտարկութենեն և այդ խորխորատի մեջեն, խավարի մեջեն կբերեր լույսը սիրո և հավատքի և այդ լույսով օրհնեց և օծեց հայ ժողովուրդը:

Տրդատ թագավոր, գալով Հռոմեական կայսրությունից՝ Հռոմեն, հռոմեական օգնությամբ բարձրացավ իր հայրենական գահին վրա, իբր հաջորդը, ուրեմն, Արշակունյաց թագավորներու, և այդ առիթով իր երախտագիտությունը կուզեր հայտնել ոչ միայն հռոմեական կայսրերուն, այլ նաև ժամանակվա հեթանոսական աստվածներուն: Իր շնորհակալությունը կհայտներ և այս առիթով նաև կցանկանար, որ իր ափենադպիրը, իր թարգմանը, անունով Գրիգոր Պարթև, ևս մասնակցի այդ հանդիսության և աստվածներուն իր շնորհակալությունը, իր զոհը մատուցանե: Եվ Գրիգոր մերժեց այդ առաջարկը, և, առաջին անգամ ըլլալով, Տրդատ կլսեր Քրիստոսի անունը: Առաջին անգամ Տրդատ գաղափար կունենար քրիստոնեության մասին և կզարմանար, թե ինչպե՞ս մեկը կընդդիմանար իր կամքին, իր հայրերու աստվածներին: Մինչ այդ, այդ աստվածներն էին՝ Վահագն, որպես երկնքի և ամպրոպի, պատերազմի և խաղաղության աստված, Անահիտ, որպես պտղաբերության, գեղեցկության աստվածուհի, նմանապես Աստղիկ, իբր առաքինությանց աստվածուհի, Տիր, որպես մշակույթի աստված: Եվ Տրդատ զայրացավ, որ իր ատենադպիրը կհամարձակի չընդունիլ, զոհ չմատուցանել այդ աստվածություններուն: Եվ առաջին անգամ ըլլալով, Գրիգոր կպատմեր Սուրբ Ավետարանի մասին, որովհետև Կեսարիայում նա Ավետարանը սորված էր, կարդացած էր, լսած էր և գիտեր Հայոց փրկությունը այս Ավետարանով, Քրիստոսի նոր պատգամով, սիրո ու խաղաղության և եղբայրության պատգամով պիտի գար Հայոց աշխարհ: Չարչարվեցավ, տանջվեցավ, խաչվեցավ Սուրբ Գրիգոր և սակայն չփոխեց իր կամքը, չփոխեց իր հավատքը և տեղի չտվավ թագավորի կամքին, տեղի չտվավ թագավորի ճնշումներուն: Եվ ատոր համար Խոր Վիրապ նետվեցավ:

Սուրբ Գրիգոր, դուրս գալով բանտարկութենեն, քարոզեց Սուրբ Ավետարանը, և Սուրբ Ավետարանով, սիրելիներ, Հիսուսի սիրո պատգամով, Սուրբ Հոգվո շնորհներով, Աստուծո խոսքով հայաստանցիներու և հայերու փրկությունը պատմության մեջ սկիզբը առավ և կշարունակվի մինչև այսօր և նաև ապագային՝ մեր հավիտենականության մեջ:

Ի՞նչ կնշանակե փրկություն: Փրկությունը տեղի ունեցավ չորրորդ դարուն և կշարունակվի. հեթանոսական այդ բազմաթիվ աստվածություններեն փրկվեցանք: Փրկվեցանք նաև հանցագործություններեն, փրկվեցանք մեղքի փառասիրութենեն և ծանրութենեն, մոլորություններեն, նախանձե ու ատելութենե, և մեզի տրվեցավ սիրո Ավետարանը, մեզի տրվեցավ լույսի Ավետարանը, հավիտենական կյանքի նոր պատգամը և հույսը: Եվ մեր ժողովուրդն առավ այդ լույսը, մեր ժողովուրդն առավ այդ պատգամը: Հավիտենական կյանքի պատգամը մեր նախնիները սիրով ընդունեցին, մաքառելով մեզի տվեցին իրենց կյանքը և անցան հավիտենականության մեջ և մեզի ճանապարհը բացին, որ մենք ալ գնահատենք մեր քրիստոնեական հավատքը և ընդունինք զայն և կարենանք ապրիլ, արժանանալ Սուրբ Գրիգորի բերած լույ-

սին, ա՛լ ավելի արժանի ըլլալ Աստուծո օրհնության, շնորհքին և նախախնամության:

Մեծ է դերը և տեղը Սուրբ Գրիգորի մեր պատմության մեջ: Մեր 1700-ամյա կյանքի պատմությունը կպարփինք Գրիգոր Լուսավորչին:

Իր մտածումները մեր հոգու Լուսավորիչն ամփոփեց «Յաճախապատում ճառք» հավաքական անվամբ գրքին ճառերու հավաքածուին մեջ:

Ամեն ժողովուրդ ունի իր Լուսավորիչը, ամեն ժողովուրդ ունի իր քարոզիչը, բայց միայն հայն է, որ ունի Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, այն եսկայական դեմքը և անձը, որ իշխեց մեր ճակատագրի վրա, մեր պատմության վրա՝ Վաղարշապատից մինչև ողջ պատմական Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Մենք իր մկրտության զավակներն ենք: Եվ այսօր, սիրելիներ, այս տոնին առիթով մեզի կմնա աղոթել և մաղթել և Աստուծմեն ուզել, որ Սուրբ Գրիգոր Խոր Վիրապեն դարձյալ ելնե և գա և այցելե իր ժողովուրդին, Խոր Վիրապեն ելնելով՝ մեզի հավիտենական կյանքի պատգամները բերե, Խոր Վիրապեն ելնելով՝ մեզի այս լույսը բերե, մի անգամ ևս նորոգե մեզ մեր լուսավորության մեջ, մեր հավատքին մեջ, նորոգե մեզ մեր քրիստոնեական կյանքին մեջ, մեր ամբողջ ժողովուրդը, մեր հոգեորականությունը, ինձ և ձեզ, բոլորս: Թող Լուսավորիչ մի անգամ ևս գա և մեզ բոլորս օրհնե, մի անգամ ևս օծե մեզ Սուրբ Մյուռոնով, և մենք ըլլանք նոր ժողովուրդ՝ արժանի իր և Աստուծո օրհնության:

Կուզեի մի խոսք ևս հիշել մեր պատմութենեն, որ բոլորին ծանոթ է և սակայն արժանի է այս պահուս հիշվելու: Մեր պատմիչներեն Առաքել Դավրիժեցին կըսե. «Ամբողջ հայ ազգը Լուսավորչի սուրբ աջոյն և իր հիմնած Էջմիածնի վրա կապված կանգուն կմնա»: Պատմությունը, սիրելիներ, 1700 տարվան կվկայե այս:

1700 տարիներե ի վեր այստեղ՝ այս կենտրոնում մեր վանական սրբազնագույն Հայրապետները, մեր Մաշտոցները, մեր Խորենացիները, մեր Օձնեցիները, Նարեկացիները, Տաթևացիները իրենց սրտի և հոգիի լույսը այստեղ բացած են, սփռած են մեր ժողովուրդին, և մեր ժողովուրդը ոչ ոք կրցած է բաժնել իր քրիստոնեական հավատքեն, ոչ ոք կրցած է բաժնել Լուսավորչյան իր հավատքեն, Լուսավորչյան ծնունդեն:

Թող գա Լուսավորիչ Խոր Վիրապեն և մի անգամ ևս մաքրագործե մեզ, մաքրագործե Հայաստան աշխարհը աղանդավորներե, չարախոսներե և գրպարփիչներե, նոր ժամանակներու «մարգարեներե», որոնք կուզեն իրենք մեզի նոր «փրկություն» բերել: Մենք մեր փրկությունն ունինք շնորհիվ Ավետարանին, Սուրբ Հոգվո հաղորդ շնորհներուն: Մենք մեր փրկությունը ունինք շնորհիվ Ավետարանի քարոզած սիրույն և Սուրբ Հոգվո կենաց շնորհներուն և պետք չունինք ավելորդաբանություններու:

Եվ այսօր, Լուսավորչի տոնին առիթով, կմնա ինձ, սիրելիներ, խնդրել Աստծո օրհնությունը, Սուրբ Հոգվո շնորհները, Սուրբ Լուսավորչի աջոյն օրհնությունը և օ-

ծումը մեզ բոլորիս: Թող մեր ժողովուրդը, hո՛գ չէ, թե դժվարության մեջ, հավիտյանս անսասան մնա, ամուր մնա իր առաքելական Սուրբ Հավատքին մեջ:

Թող մեր ժողովուրդը անսասան մնա իր հույսին մեջ, իր քրիստոնեական հույսին և սիրո մեջ: Թող մեր Հայաստան աշխարհը, թող մեր կառավարությունը իմաստուն ըլլան մեր ժողովուրդի կարյաց գոհացումը տալու, որպեսզի մեր ժողովուրդի նաև ֆիզիկական ապահովությունը ունենանք, որպեսզի հավաքվինք, մեկտեղվինք և Լուսավորչի սուրբ աջույն օրհնությունը ամեն օր ընդունինք:

Թող Տերը ձեզ բոլորդ օրհնե Սուրբ Լուսավորչի աջով, Խոր Վիրապի լույսով. ամեն:

# Տ. ՊԱՐԹԵՎ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ «ԳԻՒՏ ՏՓՈՅ ՍՐԲՈՒՀՒՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ» ՏՕՆԻՆ

(23 հունիսի 2002 թ.)

Փառք և գոհություն Ամենաբարին Աստուծո. որ անարժանիս այսօր արժանի որավ այս Սուրբ Տաճարի մեջ. այս Էջմիածնաէջ Սուրբ Խորանի վրայեն. ուր երկնքի և երկրի միացումն է. պատարագելու և ձեզի հետ միասին փառք և գոհություն մատուցանելու Ամենակարողին:

Իմ որդիական անկեղծ և խորունկ զգացումներս Ամենայն Հայոց Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսին, որուն հայրական բարձր կնօրհնումով անիթն ընծայվեց մեզի այս իսկապես հոգեպարար և հոգեթով պահին ապրելու, և Նորին Սրբության կհայտնենք որդիական մեր անկեղծ զգացումները, մանավանդ անոր համար, որ այսօր համեստ անձիս քահանայական ձեռնադրության յոթերորդ փաքին կամբողջանա:

Վեհափառ Հայր, ի խորոց սրտի կաղոթենք, որ Աստված Ձեզի պարգևե առողջ կյանք, ընդ երկար գահակալություն Ս. Գրիգոր Լուսավորչի Ս. Աթոռին վրա, և կաղոթենք, որ Ձեր հովվապետական՝ հովվական գավազանը միշտ Ահարոնի գավազանի նման ծաղկյալ ըլլա:

*«Թողլ կուք երկոցունց աճել ի միասին»:*
*«Թողլ կվեք, որ երկուքն միասնաբար աճեն»:* (Մատթ. ԺԳ 30)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի ազգակիցներ, հայրեր ու մայրեր, քույրեր ու եղբայրներ. 21-րդ դարու մեջ կապրինք և կապրինք այնպիսի շրջանակներու մեջ, ուր թե՛ բարին և թե՛ չարը, թե՛ լավը և թե՛ վատը միասնաբար գոյություն ունին կողք կողքի: Սակայն հաճախ որպես մարդ այն բոլոր երևույթներեն, որոնք կպտեղծվին մեր շուրջ, հաճախ ականատես կըլլանք, որ չար մարդիկ, անօրեն մարդիկ, անհավատ մարդիկ երբեմն շատ ավելի լավ պայմաններու մեջ կապրին, քան մենք, որ կհավատանք Աստուծո, որ կփառաբանենք Անոր ճշմարիտ սուրբ Անունը: Եվ որպես մարդ հաճախ արդարորեն կընդվզինք, թե ինչու համար այս անարդարությունը այս կյանքին մեջ, կընդվզինք և կբողոքենք Աստուծո՝ ըսելով. «Տե՛ր, եթե Դու գոյություն ունես, կես մեր վիճակը և ողորմիր մեզ»: Եվ հաճախ այսպիսի հարցումներ կուգան մեր մտքի հորիզոնին վրա՝ ամպի նման մթագնելու և հարց տալու, որ եթե Աստված գոյություն ունի, հապա ին-

չո՞ւ չարը, հապա ո՞րկե չարը, ո՞րկե չարիքը և չարությունը: Անավասիկ այսպիսի հարցումներու դիմաց մենք այսօր միասնաբար այս Սուրբ Խորանեն Պատարագի սկիզբը լսեցինք Ճաշու Ավետարանի ընթերցումը, որ քաղված էր Մատթեոսի Ավետարանի 13-րդ գլուխեն, ուր Հիսուս կխոսի Երկնքի Արքայության մասին:

Ի շարս այլ առակներու, Տերը նաև կըսե. «Երկնքի արքայությունը նման է այն սերմնացանին, որ օր մը, բարի առավոտ մը սերմ մը ցանեց արտի մեջ: Երբ գիշեր եղավ, ու բոլոր մարդիկ քնած էին, թշնամին եկավ և ցորենի հետ որոմ ցանեց: Ժամանակ անցավ, և հասկերը սկսան արդեն հասկ կապել, ցորեն կապել, և հանկարծ սկսեց երևալ որոմը: Ծառաները զարմացան և եկան ու Տիրոջ ըսին. «Տե՛ր, չէ՞ որ դու միայն ցորեն ցանեցիր, ուրկե՞ հապա այդ որոմը»: Եվ Տերը կպատասխանե. «Թշնամի մարդու գործ է այն»: Եվ ծառաները կհարցնեն. «Տե՛ր, կուզես երթանք և ցորենը քաղենք»: Բայց Տերը կըսե. «Ո՛չ, մի դպչիք անոնց: Զգեցեք, որ անոնք կողք կողք աճին, մինչև հունձքի ժամանակը, որպեսզի չըլլա, թե երբ որոմը քաղեք, նաև ցորենը քաղեք: Այլ երբ վերջին ժամանակները հասնին, այն ատեն պիտի պատվիրեմ իմ ծառաներուս, որպեսզի երթան և նախ որոմները քաղեն, խուրձ ընեն և պատրաստեն կրակի համար, իսկ ցորենները հավաքեն և իմ շտեմարաններուս մեջ լեցնեն»:

Անավասիկ, սիրելի հայրենակիցներ, Քրիստոսի պատմած որոմներու առակը: Քրիստոս 2000 տարիներ առաջ պատմեց այս առակը: 2000 տարիներե ի վեր մենք կխոսինք այս առակի մասին: Բայց եկեք մտածենք, թե այսօր 21-րդ դարու ապրած մարդոցս համար ի՛նչ նշանակություն, բայց մանավանդ՝ ի՛նչ անհրաժեշտ իմաստ ունի, ի՛նչ պատգամ ունի փոխանցելիք այս առակը այսօր մեզմե յուրաքանչյուրին: Սերմնացանը, որ ցանեց բարի սերմը, անիկա Աստված Ինք է, իսկ արտը՝ աշխարհն է, որուն մեջ կապրինք բոլորս: Ցորենը՝ բարի մարդիկն են, որոնք Աստուծո խոսքը կլսեն ու կգործածեն, իսկ թշնամին, որ որոմ կցանե, այն սատանան է, բանսարկուն, որ Ավետարանը կըսե՝ գիշերով կուգա և կցանե, երբ բոլոր մարդիկ քնած են: Հետաքրքրականորեն Ավետարանը չի ըսեր՝ երբ Տերն ինքը քնացած էր, այլ՝ երբ մարդիկ քնացած էին:

Այսօր ալ, սիրելիներ, Աստված մեզի տված է այս կյանքը. Աստված մեզի որպես ավանդ թողած է այս աշխարհը և պատվիրած է մեզ մշակել ու գործել Իր փառքի համար: Մեզմե յուրաքանչյուրը՝ հոգևորական թե աշխարհական, հոգևոր կամ ոչ, ի՛նչ պաշտոնի վրա որ գտնվի, ի՛նչ աթոռի վրա որ գտնվի, ի՛նչ մակարդակի վրա որ գտնվի կամ կյանքի ի՛նչ համեստ պարագայի վրա գտնվի, պարտավոր է Քրիստոսի թողած պատվիրաններն ապրիլ և ապա փոխանցել:

Շնորհալի Հայրապետի բացատրության համաձայն՝ «Ոչ թե ըլլալ խողովակ մը, որուն մեջեն պիտի հոսի Աստուծո խոսքը, այլ ըլլալ ավազան մը», որ նախ մենք՝ հավատացյալներս ծծենք, ապրինք և ապա լույս դառնանք ուրիշներուն: Մեզմե յուրաքանչյուրին պարտականությունն է արթուն հսկել մեկս մյուսի հավատքի վրա, հսկել նույն ինքը քու անձին հավատքին վրա, հսկել Եկեղեցվո կյանքին վրա: Չի բավեր մտածել, որ միայն եկեղեցականներն իրենք է, որ պետք է հսկեն հոտի վրա, որ պետք է առողջ ու արթուն պահեն Եկեղեցին:

Եկեղեցին քարեղեն փաճարը չէ. սիրելիներ, Եկեղեցին մեզմե յուրաքանչյուրն է. Քրիստոսի մարմինը և անդամը: Եվ որպես անդամ պարտավոր ենք յուրաքանչյուրս առողջ պահել մեր անձը, որպեսզի առողջ մնա Ընդհանրական Եկեղեցին: Թշնամին է, որ կուգա և որոմ կցանե:

Որոմը, սիրելիներ, այն բոլոր չար խորհուրդներն են, այն բոլոր չարիքներն են, որոնք արմատ կդնեն մեր կյանքին մեջ, երբ մեր սրտից կբացակայի Քրիստոսին ներկայությունը: Սատանան այն ժամանակ միայն կրնա մեր հոգիներուն մեջ թափանցնել, երբ Քրիստոս բացակա է մեր կյանքերեն: Իսկ Քրիստոսին ներկայությունը մեր կյանքին մեջ կրնանք զգալ միայն այն ատեն, երբ սեր ունինք իրարու նկատմամբ, միայն այն ատեն, երբ հարգանք ունինք իրարու նկատմամբ, միայն այն ատեն, երբ ձեռք ձեռքի տված Աստուծո փառքին համար կաշխատինք երկրի վրա:

Քրիստոս այս առակը պատկերացուց որպես Երկնքի Արքայություն, և, սիրելիներ, Երկնքի Արքայության մանրապատկերը, նախապատկերը եկեղեցին ինք է, որովհետև հավիտենական ժամանակներու մեջ երբ Քրիստոս գա, այլևս չարն այնտեղ գոյություն չպետք է ունենա, այլ Տերն Ինք պետք է թագավորե: Բայց Քրիստոսի խոսքը կվերաբերի այս ժամանակներուն մեջ ապրողներին, այս փաճարներուն մեջ ապրողներուն, որովհետև ո՞վ ըսավ, որ եկեղեցի եկողն անպայմանորեն հավատացյալ է, որովհետև ո՞վ ըսավ՝ եկեղեցի երթալով, մոմ վառելով, խունկ ծխելով հավատք է, որ ունինք: Մեզնից ոչ ոք գիտե, թե կողքին կեցող եղբայրը, թե իր կողքին նստող քույրը, հայրը կամ մայրը ինչ հավատքի կպատկանի, որովհետև, ինչպես Սաղմոսը կըսե. «Սրտերը քննողը Աստված է միայն»:

Հետևաբար, մեզմե յուրաքանչյուրը գիտնա միայն ցանել, ցանել, ինչ որ Աստված մեզի ձգած է, ցանել Աստուծո խոսքը, ցանել Աստուծո սերը, ցանել Աստուծո պատվիրանը, և ցանելը ոչ միայն կրավորական գործունեություն պետք է ըլլա, այլ նույնինքդ՝ դուն, որպես քրիստոնյա, պետք է այդ հողին մեջ մեռնիս,- կըսե Քրիստոս: Որովհետև ով որ իր անձը Քրիստոսի առաջ կխոնարհեցնե, պիտի բարձրանա, և ով որ բարձրացնե, պիտի խոնարհի:

Այսօր Սուրբ Աստվածածնի խուփի գտնման տոնն է, սիրելիներ: Դուք շատ լավ գիտեք, որ արկղը, խուփը կգործածվի, որպեսզի մեջը զարդեղեններ, իրեղեններ կամ զգեստներ պահվին: Այսօր, սիրելիներ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո մեջ ապրող յուրաքանչյուր հավատացյալ քրիստոնյա Աստվածամոր այդ խուփի, քրիստոնեական հավատքի խուփի մեջ կներկայացնե գանձ մը: Ուշադիր ըլլանք, որ մենք այդ գանձը արժևորենք, փայլ փանք անոր, որպեսզի Քրիստոսի դատաստանի դիմաց ամոթով չմնանք:

Չարը մեր սրտերի մեջ երբեք տեղ չի կրնար ունենալ, բույն դնել, եթե մենք իսկապես ընդունինք մեր մեջ Քրիստոսը՝ ճշմարիտ Աստվածը, Աստուծո Որդին: Հետևաբար, սիրելիներ, մի մտածեք երբեք և մի նախանձիք բոլոր անոնց, որոնք չար կյանք կապրին, որոնք անարդար կյանք կապրին և հաջողություն կգտնեն այս աշխարհի վրա, որովհետև Քրիստոս կըսե՝ այդ է նրանց վարձը. այլ մենք խնդրենք վերուստ եկած շնորհքը, մենք խնդրենք Վերին Երուսաղեմը, որ Քրիստոս պիտի պարգևե մեզ

դատաստանի վերջին օրը:

Քրիստոս կպահէ չարը երկու պատճառով` որպէսզի նախ երբ որոմը քաղէ, ցորենն ալ հետը չկորչի, այսինքն` խնայէ ցորենը, որպէսզի չփչանայ, և երկրորդ ու մանաւանդ` Քրիստոս փարված Իր հայրական գութեն, Իր հայրական սերեն, կձգէ որոմն ալ ցորենի կողքին, որպէսզի օր մը որոմն ալ դարձի գայ, ցորեն դառնայ, պտուղ հասկ դառնայ և փրկվի:

Կարելի բա՞ն է: Այո՛, սիրելիներ, կարելի է, որովհետև հիշեցեք այն մեծ թագավորը` Տրդատ, որուն հիշատակը երեկ կատարեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, երբ ինք որոմ էր հայ հողի մեջ և ապա դարձավ պտուղ հասկ: Հետևաբար, եկեք այս հավատքով, այս գիտակցությամբ աղոթենք մեկս մյուսիս համար, աղոթենք, որ Աստված ողորմի մեզմե յուրաքանչյուրին, որ Աստված միշտ արթուն պահե Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո նվիրապետական չորս Աթոռները, որպեսզի կարողանան անշահախնդիր կերպով իրենց աստվածահաճո առաքելությունը կատարել Եկեղեցվո փառքի համար:

Աղոթենք Մայր Հայրենիքի բարվոք ծաղկման համար, աղոթենք ձեզմե յուրաքանչյուրի հիվանդ եղբոր կամ հարազատի համար, աղոթենք աշխարհի խաղաղության համար: Եվ երբ աղոթքը մեր շրթներեն չպակսի, այն ատեն սերը պիտի փթթի յուրաքանչյուրիս հոգիի մեջ, և այն ատեն պիտի լսենք Քրիստոսի ձայնը, որ պիտի ըսե. «Եկեք ինձի, ով դուք բոլոր հոգնածներ ու ծանրաբեռնվածներ, եկեք և ժառանգեցեք Երկնքի Արքայությունը, որ սկիզբեն իսկ ձեր բոլորին համար պատրաստված է», որով օրհնյալ եք և օրհնյալ ըլլաք. ամեն:

# Տ. ՍԵՐՈՎԲԵ ՎԱՐԴԱՊԵՏ ԻՍԱԽԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(14 հուլիսի 2002 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Ջի եկն Որդի Մարդոյ կեցուցանել զկորուսեալսն»:

«Որովհետև Մարդու Որդին եկավ փրկելու կորածին»:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ, այսօր Վարդավառին հաջորդող կիրակին է: Հայ Եկեղեցու Հայրապետների հաստատած կանոնի համաձայն, ձեզ Պատարագի ընթացքին ճաշու ընթերցվածներ, Աստվածաշնչից հատվածներ ընթերցվեցին: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ամբողջ տարվա ընթացքին թե՛ իր Պատարագների և թե՛ նաև այլևայլ արարողությունների ընթացքին ամեն օր որոշ հատվածներ է ընթերցում Աստվածաշունչ Սուրբ Մատյանից, որովհետև Սուրբ Գիրքն է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու քարոզության գիրքը:

Մենք, իբրև Եկեղեցի, Աստվածաշունչն է, որ ամեն օր քարոզում ենք մեր ժողովրդին, և ոչ ոք թող չփորձի հակառակն ապացուցել: Երբ որ ձեր ճանապարհին, կյանքի առօրյա ճանապարհին մարդկանց հանդիպեք, որոնք փորձեն հակառակն ասել, փորձեն ձեզ թյուր խորհուրդներով հակառակը ապացուցել, սուտ է նրանց քարոզությունը: Ասացեք նրանց, որ Հայ Եկեղեցին Աստվածաշունչն է քարոզում, որ Հայ Եկեղեցին մեր հարուցյալ Տերն է քարոզում, և դրա վկայությունն են նաև այսօր Պատարագի ընթացքին ընթերցված հատվածները Հին Կտակարանից և ապա՝ Նոր Կտակարանից:

Այդ ընթերցվածները դասավորված են համաձայն օրվա իմաստի, համաձայն օրվա խորհրդի՝ տալու պատգամը օրվա: Յուրաքանչյուր օր, յուրաքանչյուր կիրակի մանավանդ, երբ որ մենք Սուրբ Պատարագ ենք մատուցում, այդ օրվա պատգամը Աստվածաշնչի բնորոշ մի հատվածի ընթերցանությամբ փորձում ենք փոխանցել մեր ժողովրդին: Եվ այսօր Մատթեոսի Ավետարանից մի հատված կարդացվեց, ուր մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, մի փոքրիկ առակ է խոսում հավաքված ժողովրդին: Եվ ինչո՞ւ այս առակը, որը կորսված ոչխարի առակն է. որովհետև ճիշտ դրանից առաջ, եթե մենք Ղուկասի Ավետարանի նույն հատվածը բացենք, այնտեղ փարիսեցիներ և երեց իշխանավորներ Հիսուսին մեղադրում էին՝ ասելով, թե ո՞վ է այս մարդը, որ մեղավորների հետ է նստում: Եվ իբրև պատասխան այս մեղադրանքի՝ Հիսուս նրանց առակով է պատասխանում, և այդ առակը կորած ոչխարի առակն է:

Փարիսեցիները, երեց իշխանավորները և դպիրները այն ժամանակ, երբ Հիսուս աշխարհ եկավ, իրենք իրենց տեսնում էին որպես արդարներ, տեսնում էին իբրև օրենքի հսկիչներ և օրենքը կատարողներ, այլ խոսքով՝ արդարներ: Երբ նրանք տեսնում էին, որ Հիսուս մեղավորների հետ է շրջում, մաքսավորների հետ է շրջում, այն

ժամանակ Հիսուսին մեղադրում էին այս պատճառով: Սակայն ո՞վ էր որոշել՝ ով է մեղավորը, ով է արդարը. չէ՞ որ մենք չենք որոշում, չէ՞ որ փարիսեցին, դպիրը, իրեն իշխանավորը չէր որոշում, թե արդյոք ի՞նքն է արդար, թե՝ մաքսավորը, ով էր նրանցից ավելի արդար: Հիշեցեք փարիսեցու և մաքսավորի առակը, որ տաճար էին գնում աղոթելու, և Տերը ասաց, թե մաքսավորը ավելի արդարացվեց, որովհետև նա սրտանց աղոթեց:

Մեկ բառ կամ մեկ նախադասություն էր մաքսավորի աղոթքը, բայց սրտաբուխ էր, բայց անկեղծ էր, բայց խոնարհ էր: Եվ այդ մաքսավորը փրկվեց և ոչ թե փարիսեցին, որ ի ցույց մարդկանց էր աղոթում: Նույնն էլ այստեղ. ով որոշեց՝ ով էր մեղավորը և ով էր արդարը. չէ որ որոշողը մարդը չէ, չէ որ որոշողը նրանք չէին, այլ որոշողը Աստված է: Բայց նեթե մի պահ ընդունենք անգամ փարիսեցին իբրև արդար և ուրիշները իբրև մեղավոր, արդեն Հիսուս իր առակով այդ է բացատրում:

Կորսված ոչխարի առակը, ուր ասվում է, որ մի մարդ եթե հարյուր ոչխար ունենա և մեկը կորչի, ինքը չի՞ թողնելու այդ իննսունինը, չի՞ գնալու-որոնելու այդ մոլորյալ ոչխարին, որովհետև այդ ոչխարն օգնության պետք ունի, և սպասում է, որ իր տերը պիտի գա և գտնի իրեն: Իսկ չէ որ մենք նույնպես՝ գավակներս Աստծո, բանավոր հոտը Աստծո, չէ որ եթե մենք ենք մեղավոր, ապա ավելի մենք պետքը ունեինք Տիրոջ, որ գար-գտներ մեզ, փրկեր մեզ, որովհետև Մարդու Որդին եկավ փրկելու կորածը: Ահավասիկ Հիսուսի առաքելության բուն նպատակը:

Ինքը՝ Հիսուս էլ ասում է, թե երկնքի մեջ ուրախությունը շատ ավելի մեծ կլինի, եթե այդ կորածը գտնվի, եթե այդ կորածը դարձյալ իր հոր տունը դառնա: Այստեղ կորած ասելով կարող ենք հասկանալ մեղքի մեջ տվայտող անձը, այդ կորածը դարձյալ դեպի Աստված վերադառնա, դեպի Տերը վերադառնա՝ մաքրվելու իր մեղքերից, ինչպես որ անառակ որդին վերադարձավ հայրական տուն և ասաց. «Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո»:

Այսօր նաև Պողոս առաքյալի թղթից մի հատված կարդացվեց ձեզ, որտեղ առաքյալը, հիշելով Հիսուսին և Տիրոջ ընտրած առաքյալներին, ասում է, թե՝ չէ՞ որ Տերը մեզ ընտրեց, որ մենք այդքան էլ իմաստուն չէինք, այդքան էլ մեծ չէինք, այդքան էլ անմեղ չէինք: Հիշենք Հիսուսի առաքյալներին. ո՞վ կար նրանց մեջ՝ մաքսավորներ, ուրիշ մեղավորներ, հասարակ մարդիկ, թերևս այն ժամանակվա փարիսեցիական հասարակությունից մերժված մարդիկ, որոնք գիտուն չէին, բայց Աստված ընտրեց նրանց, և նրանք դարձան Հիսուսի Ավետարանի քարոզիչները:Նրանք կարողացան հաղթել շատ ավելի մեծերին, որոնք իրենց մեծ էին կարծում, որոնք իրենց արդար լին կարծում, որոնք իրենց հզոր էին կարծում, որոնք իրենց իմաստուն էին կարծում: Այս մարդիկ կարողացան հաղթել նրանց և Քրիստոսի Ավետարանը քարոզել աշխարհե աշխարհ, որովհետև, ինչպես Պողոս առաքյալն է ասում, նրանք պարծեցան ոչ ուրիշ բանով, եթե ոչ՝ Տիրոջ խաչով ու նույն ինքը՝ Տիրոջով: Նա, ով պարծենում է, թող պարծենա Տիրոջով:

Ահավասիկ մեր պարծանքը, ահավասիկ այն հենարանը, որի վրա մենք հիմնված՝ կարող ենք պարծենալ, և եթե պարծենանք, և եթե Տերը լինի մեր հիմքը և հավատքը,

մեր ուղենիշը, այն ժամանակ մենք կկարողանանք բազում ու բազում մեծագույն գործեր կատարել, ինչպես կատարեցին Քրիստոսի աշակերտները, նրա հետևորդները: Տերը եկավ ոչ միայն այն ժամանակի մարդկանց համար, այլ նաև այսօր՝ մեզ համար, որովհետև «Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր նոյն եւ յաւիտեան»:

Նույն Հիսուսն է, ով այսօր ներկա է նաև մեզ հետ և մեզ է տալիս նույն պատգամը՝ ասելով. «Ես եկել եմ ձեզանից յուրաքանչյուրի համար. եթե դուք մտածում եք, որ դուք մեղավոր եք, եկեք դեպի Աստված, և Տերը կընդունի ձեզ»: Չէ՞ որ նույն Հիսուսն ասաց՝ Հայր մեր՝ ասելու համար, որ Աստված ամեն բանից առաջ Հայր է ներողամիտ, Հայր, որը սպասում է մեզ, Հայր, որը գորովագութ է, Հայր, որը ներողամիտ է, և մեզ մնում է գալ դեպի Հայրը և պարծենալ միայն Նրանով:

Երեկ Հայ Եկեղեցին Սուրբ Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի տոնն էր նշում: Թադեոս առաքյալը Հիսուսի տասներկու աշակերտներից մեկն էր, համեստ մի մարդ, բայց այդ համեստ մարդը, Տիրոջ վրա հիմնվելով, Տերը ունենալով իբրև ուղենիշ, կարողացավ Քրիստոսի Ավետարանը քարոզել՝ ամեն մեկ փորձանք հաղթահարելով, և եթե պետք եղավ՝ Հայոց աշխարհում իր արյունը նաև թափեց՝ ասելու համար, եթե Տերը ինձ հետ է, ոչ ոք կարող է ինձ հաղթել: Այդ հավատքով քարոզվեց ու հաստատվեց նաև այս եկեղեցին, որի բեմի վրա կանգնած՝ ես այսօր Պատարագ եմ մատուցում, ուր որ դուք եք նաև հավաքվել Տիրոջ խորհրդավոր ներկայության պայմաններում:

Քրիստոնեական պատմության ընթացքին բազմաթիվ անձեր կգտնենք: Հիշեցեք, այսօր կարդացինք Մատթեոսի Ավետարանը. մաքսավոր մի մարդ՝ ոչ շատ խելացի, ո՛չ շատ գիտուն, ո՛չ լեցուն մարդկային իմաստությամբ, բայց աստվածային իմաստությունը խոսեց այդ մարդու մեջ: Եվ եթե մենք այսօր Հիսուսի կյանքի շատ դրվագների պատմությունն ունենք, դա շնորհիվ Մատթեոս ավետարանչի է, որ մաքսավոր էր կոչվում, ներկայացնում էր, խորհրդանշում էր մեղքը երեսն իրականության մեջ:

Հիշեցեք Հռիփսիմյանց կույսերին, որոնք իրենց հավատքով, Տերը ունենալով իբրև իրենց պարծանք, իբրև իրենց փառք, կարողացան իրենց հավատքով հայոց Տրդատ թագավորին անգամ ծունկի բերել և նրան ևս քրիստոնյա դարձնել: Հետևաբար, հիշենք այսօրվա պատգամը, որ Հիսուս եկավ մեղավորի համար, կորածի համար, եկավ ասելու՝ Աստված քո Հայրն է, արի, արի դեպի Նա: Պողոս առաքյալն էլ ամբողջացրեց, թե՝ «ով որ պարծենում է, թող պարծենա Տիրոջով»: Հիշենք այսօրվա այս երկու պատգամները մեր առօրյա կյանքի ընթացքին: Թող Տերը դառնա ձեր հույսը, թող Տերը դառնա ուղենիշը ձեր կյանքի այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

# Տ. ԳՆԵԼ ԱԲԵՂԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԶՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(9 հունիսի 2002 թ.)

Սիրելի հավատացյալներ.

Քառասուն և ավելի օրեր առաջ, Սուրբ Խաչի Երևման տոնին, ծնկի գալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ավագ Ս. Սեղանի առջև, ես և իմ օծակից եղբայրները, ընդունեցինք կրոնավորի նվիրյալ և պատասխանատու աստիճանը՝ մեզ վրա վերցնելով Հիսուս Քրիստոսի ծանր, սակայն միևնույն ժամանակ քաղցր լուծը:

Դժվար է խոսքերով արտահայտել այն հոգեվիճակը, որ ապրում եմ այս պահին որպես նորընծա քահանա՝ կանգնած մեր Տիրոջ սրբազնասուրբ Խորանին:

Օրհնում և փառաբանում եմ Ամենաբարձրյալ, Ամենախնամ Աստծուն, որ ինձ՝ հողեղեն արարածիս արժանացրեց քահանայական կոչմանը և դարձրեց Իր Տան և Իր Ճշմարիտ Խոսքի սպասավոր՝ մասնակից դարձնելով առաքյալների և Եկեղեցու հայրերի սրբազան առաքելությանը:

Քառասնօրյա պահեցողությունից և հոգևոր խոկումից հետո նորընծա հոգևորականի համար հոգևոր բերկրանք է նորաօծ ձեռքերով մերձենալ Սուրբ Խորհրդին՝ պատարագել և աղոթել համայն մարդկության փրկության և բարօրության համար:

Որդիական խոնարհությամբ իմ սրտի երախտագիտությունն ու շնորհակալությունն եմ ցանկանում հայտնել ազգիս Վեհափառ հայրապետին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Նորին Սրբության հայրական հոգատարության, հոգևոր դաստիարակության ու խնամքի համար: Ինչպես նաև երախտապարտ եմ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանին, որ սիրով հանձն առավ հոգևոր ծնողի պարտականությունը և քահանայական օծմամբ մի նոր ուղի բացեց մեր կյանքում: Երախտագիտության խոսք եմ ուզում հղել նաև Վազգենյան Հոգևոր Դպրանոցի և Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական կազմին, որոնց երկար տարիների քրտնաջան աշխատանքի պտուղն եմ այսօր: Շնորհակալ եմ նաև մեր կոչման համար վկայած հոգևոր դասին և հավատավոր ժողովրդին, ովքեր մասնակից եղան մեր ձեռնադրության Ս. խորհրդին: Նաև իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում Ս. Զորավոր եկեղեցու հոգևոր դասին և երգչախմբին, որոնք ընդառաջեցին անդրանիկ և ուխտիս Պատարագը մատուցելու այս սուրբ կամարներից ներս:

*«Տիրոջ Հոգին իմ վրա է, այդ իսկ պատճառով ինձ օծեց. ինձ ուղարկեց աղքատներին ավետարանելու» (Ղուկ. Դ 18):*

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:

Հիսուս Քրիստոս, վերադառնալով Իր ծննդավայր՝ Նազարեթ, որտեղ Ինքը մեծացել էր, սովորության համաձայն գնաց ժողովարան: Այնտեղ Նրան տվեցին Եսայի մարգարեի գիրքը: Բացելով այն, Հիսուս սկսեց կարդալ այն հատվածը, ուր ասվում էր. «Տիրոջ հոգին իմ վրա է, այդ իսկ պատճառով ինձ օծեց, ինձ ուղարկեց աղքատներին ավետարանելու»: Մարգարեի այս խոսքերը խոստացված Մեսիայի մասին էին, հետևաբար Հիսուս Իր քարոզչությունը սկսում էր Իր գալստի մասին մարգարեությամբ: Տերը շարունակելով այս վկայությունը՝ ասաց. «Այսօր այս գրվածքները կատարվեցին, երբ լսում էիք ձեր ականջներով» (Ղուկ. Դ 21):

Իրապես, անհնար է պատկերացնել Հիսուսի Ավետարանի հաղթանակը, եթե չընդունենք, որ Տիրոջ Հոգին Նրա վրա էր:

Հիսուսի մարդեղությունից դարեր առաջ ապրեցին և գործեցին բազում փիլիսոփաներ, ինչպես Սոկրատեսը, Պլատոնն ու Արիստոտելը, ովքեր մարդկային մտքի բարձր հանճարներ էին և ովքեր փափագում էին ճանաչել Ճշմարիտ Աստծուն, բայց այդպես էլ չկարողացան: Ինչո՞ւ: Քանզի նրանք մարդկային մտքի հսկաներ էին, սակայն իրենց մեջ բացակայում էր Տիրոջ Հոգին:

Հիսուս ճշմարտապես աստվածային Հոգով էր ընթանում, այդ իսկ պատճառով Նրա աստվածային առաքելությունը հաջողությամբ պսակվեց, և Նա եղավ համայն մարդկության փրկիչը:

Եթե չլիներ Սուրբ Հոգու գալուստը, անհնարին էր, որ աշակերտները գիտակցեին այն առաքելական բարձր կոչման մասին, որի ընտրյալներն էին: Առանց Տիրոջ Հոգու անհնար էր, որ նախկին ձկնորսները հանկարծ քրիստոնեական կրոնի անձնազոհ առաքյալները դառնային: Անշուշտ, մենք մեզ պիտի հարցնենք, թե ինչպե՞ս է հայտնվում Տիրոջ Հոգին, ահավասիկ կատարյալ մի օրինակ: Տիրոջ Հոգու անսահման զոհաբերության այն բարձրագույն գիտակցությունն էր, որ Հիսուս ցույց տվեց՝ Գողգոթայի խաչին գամվելով:

Մեր Փրկիչն աստվածային Սուրբ Հոգին փոխանցեց Իր առաքյալներն, նրանք էլ՝ իրենց հաջորդներին, որով էլ յուրաքանչյուր հալածանք, նախատինք և չարչարանք հանձն առան և մահն արհամարհեցին: Առանց զոհաբերության այս Անսահման Հոգու հնարավոր չէր քրիստոնեության հաղթանակն ապահովել: Առանց Տիրոջ Հոգու անհնար էր, որ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը կարողանար ցույց տալ զոհաբերության այն անընկճելի ոգին, որի շնորհիվ Հայոց հեթանոս արքա Տրդատն իր առջև ծնկի եկավ և Հայաստան աշխարհը լուսավորեց Քրիստոսի հավիտենական լույսով: Նույնպես անհնար էր, որ առանց Տիրոջ Հոգու Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը կարողանային կատարել այն հսկա բարոյական և մտավոր աշխատանքը, որի շնորհիվ հայ ազգը կարողացավ դիմագրավել ձուլման դարավոր վտանգին, մի բան, որը հզորագույն թագավորների ուժերից վեր էր:

Հետևաբար մենք՝ հայ հոգևորականներս, առավել ևս պիտի առաջնորդվենք այդ Հոգով, հակառակ դեպքում կարող չենք լինի հոգևոր և բարոյական նոր կյանք ներշնչել հայորդիներին: Մի քարոզիչ, որ չունենա ավետարանաշունչ ոգին, անհնարին է, որ ազդեցություն թողնի հավատացյալների վրա: Հավատ չունեցողը չի կարող հավատ ներշնչել, քանզի մարդը չի կարող իր չունեցածից բաժին հանել ուրիշին:

Այսօր և ընդմիշտ հայ սերունդների համար փրկության միակ ճանապարհը ճիշտ և առողջ այն գիտակցությունն է, որ առանց բարոյական արժեքների, որոնք Սուրբ Հոգու ծնունդն են, մարդ արարածը ոչնչություն է՝ անկախ նրա ուսումից, ճարտար լեզվից և հարուստ լինելուց: Մարդկային մեծագույն հաղթանակները բարոյական հաղթանակներ են և ոչ թե նյութական: Ինչո՞ւ կործանվեց Հին Հռոմը՝ հզոր Հին Հռոմը: Ոչ թե այն բանի համար, որ հարստություն, գիտություն, աշխարհիշխան փիլիսոփաներ չուներ, այլ քանզի բարոյական անկմամբ զուրկ էր դարձել բարոյական արժեքներից:

Ինչպես անհատներն են, նույնպես էլ ազգերն են: Մի ազգ որչափ էլ հզոր լինի, եթե բարոյական արժեքներ չունենա, ապա դատապարտված է վերանալու պատմության թատերաբեմից: Հետևաբար, եթե ցանկանում ենք իբրև անհատ և ազգ ապրել ու գործել և ոչ թե վերանալ աշխարհի երեսից, պարտավոր ենք բարձր պահել մեր հայրերի ավանդած բարոյական արժեքները, առանց որոնց կկորցնենք մեր աստվածային պատկերը:

Սիրելիներ, անդրանիկ քարոզիս ավարտին ցանկանում եմ իմ առաջին պատգամը թողնել ձեզ. «Փնտրեցեք Սուրբ Հոգին ձեր հոգիներից ներս և դուք պիտի ապրեք սիրո, բարու և խաղաղության մեջ»:

*«Շնորհք, սէր եւ Աստուածային սրբարար զօրութիւն եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն»:*

# Տ. ԶՈՀՐԱՊ ԱԲԵՂԱ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(9 հունիսի 2002 թ.)

*«Նախանձ տան քո կերիցէ զիս»* (Հովհ. Բ 17):
*«Քո տան նկատմամբ իմ նախանձախնդրությունն ինձ պիտի ուտի»:*

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սաղմոսերգուի դարերի խորքից եկող խոստովանությունն է ամրագրված այս տողերում: Խոստովանություն, որը միևնույն ժամանակ մարգարեություն էր, խոստովանություն, որ հավաստաբազոր է ուղեցույցի:

Այս տողերը, արտասանված Դավիթ թագավորի կողմից Քրիստոսի մարդեղությունից 1000 տարիներ առաջ, վերհառնեցին Աստվածորդու աշակերտների մտքում, երբ Հիսուս հաղթականորեն մուտք գործելով Երուսաղեմ, ընթացավ տաճար, սրբագործեց «Աստծո տունը» և Իր նախանձախնդրության դրսևորումով մեզ համար եղավ «օրինակ բարի»:

Աստծո տաճարում աստվածային հեզությունը փոխակերպվեց սրտմտության, մեր Տիրոջ «սրբասեր աչքը» չհանդուրժեց ապականությունը և Քրիստոսի նախանձախնդրության շնորհիվ սրբացավ տաճարը:

Նույն նախանձախնդրությամբ էր, որ Մովսես մարգարեն Իսրայելի ժողովրդին դուրս բերեց Եգիպտոսից, Հեսուն առաջնորդեց նրանց «Ավետյաց Երկիր»: Նախանձախնդրությունն իմաստնացրեց Սողոմոնին ու Միրաքին, ոգեշնչեց մարգարեներին, ուղղորդեց սաղմոսերգուին կնքելու իր խոստովանագիրը:

Եղիա մարգարեն, մինչ հրեղեն կառքով իր երկինք բարձրանալը, այդ ոգին փոխանցեց Եղիսեին:

Հիսուս իր համբարձումից 10 օր հետո աշակերտների վրա իջեցրեց «զհոգին նախանձախնդրութեան եւ հրոյ»: Եվ առաքյալները, ովքեր Քրիստոսի ձերբակալության ժամանակ «հրեաների աչից թաքնվել էին», բոցավառված այդ ոգով, անվեհեր նետվեցին վկայելու Աստվածորդու մասին և արժանացան նահատակության փառավոր պսակին: Նրանցից երկուսի արյունը սրբագործեց հայոց հողը և դարձավ վեմը Հայ Եկեղեցու:

Նույն ոգով մեր հավատո հայր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը հանձն առավ կրել բազում փառապանքներ և որպես իր չարչարանքների պտուղ լուսավորեց ազգը հայոց: Եվ մեր հայրերը, հայացքները հառած այդ Կենսատու Լույսին, իրենց արյան և քրտինքի գնով փայփայեցին ու առատապես մեզ փոխանցեցին ազգային-եկեղեցական արժեքները:

Սիրելի հավատացյալ եղբայրներ ու քույրեր, մի՞թե այսօր նախանձախնդրության ոգու անհրաժեշտությունը կենսական չէ մեզ համար, մի՞թե սաղմոսերգուի շուրջ 3000

փարիներ առաջ արտասանված խոսքերն արդիական չեն, մի՞թե Աստվածորդու տված օրինակը խորթ չէ այսօրվա մարտահրավերներին: Մի՞թե երանություն չէ, Հայրենիքի ու Եկեղեցու նկատմամբ մեր դրսևորած նախանձախնդրության պատճառով, ազգային-եկեղեցական արժեքները «նախապապերի նախատինքին» արժանանալը:

Հարցնենք ինքներս մեզ: Արդյոք մեր մեջ բնակվու՞մ է նախանձախնդրության ոգին, արդյոք ամբողջական նվիրման ու հանձնառության ոգո՞վ ենք մոտենում մեր պարտավորություններին:

Յուրաքանչյուր ընձեռված առիթով պարծենում ենք մեր հայրերի փառավոր աշխարհներով ու մեր ժառանգած արժեքներով:

Այո՛, այսօր մենք վայելում ենք նրանց քրտնության գինը, բայց արդյո՞ք դա բավարար է: Այո՛, այսօր նույնպես հանդիպում ենք ազգանպաստ ու եկեղեցաշեն ձեռնարկումների, բայց որքանո՞վ է մեզանից յուրաքանչյուրը մասնակից այդ ամենին և ի՞նչը պետք է ուղղորդի մեզ մաս և բաժին ունենալու այն մեծ առաքելության մեջ, որ կոչվում է «շինություն»: Այսօր, առավել քան երբևէ, մեծ են հնարավորություններն ապրելու և արարելու: Երանելի ենք, քանզի Ամենաբարձրյալն Աստված մեզ շնորհ ու ազատություն է պարգևել անկաշկանդ ընթանալու առաջ և մեր հայրերի ավանդին մեկ քար ևս ավելացնելու: Բայց ի՞նչն է պատճառը, որ մեր վերելքն ուշանում է. ոչ այնքան կայուն տնտեսությո՞ւնը, սոցիալական բարդություննե՞րը, թե՞ բարոյահոգեբանական մթնոլորտը՝ անտարբերությունը մեր շրջապատում տիրող երևույթների նկատմամբ: Արդյոք այս կերպ չե՞նք դավաճանում մեզ բազում անգամներ փորձություններից ազատած նախանձախնդրության ոգուն, հիշենք, որ այդ ոգին մեզ երբեք չի դավաճանել:

Ահա այս տեսիլով է, որ շուրջ քառասուն օրեր առաջ ես և իմ օծակից եղբայրները Միածնաէջ սրբազան փաճարում ձեռնադիր ընդունեցինք քահանայական աստիճանը:

Ահա այս փառավոր տեսիլով, իմ անպարագրելի երախտագիտությունն եմ մատուցում Ամենայն Հայոց Հայրապետին՝ Տ. Տ. Գարեգին Բ Սրբազնագույն Կաթողիկոսին, որ օրհնեց և առաջնորդեց իմ ընթացքը:

Սիրահոժար երախտիքով է առլեցուն սիրտս հանդեպ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, ում ձեռամբ ստացա քահանայական աստիճանը: Շնորհապարտ եմ հոգևոր ծնողիս, որ սիրով ընդառաջեց խնդրանքիս՝ անդրանիկ Պատարագս մատուցելու առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցում:

Իմ շնորհակալության խոսքն ու խոնարհումը Մայր Աթոռի միաբանությանը, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական կազմին, որոնց անմիջական խնամքի ներքո հասակ եմ առել և այսօր արդեն կոչվում եմ հոգևոր ծառայության:

Շնորհակալություններս ձեզ, թանկագին հավատացյալներ: Աղոթեցե՛ք ինձ համար, որպեսզի չթերանամ նվիրումիս ու ծառայությանս մեջ: Աղոթեցե՛ք ինձ համար, որպեսզի երբեք չփկարանա նախանձախնդրությունս հանդեպ մեր Սուրբ, Առաքելական և Մայր Եկեղեցին. ամեն:

# *ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ*

***ՌԱՖԱՅԵԼ ՊԱՊԱՅԱՆ***
*Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ,*
*ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ,*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

## ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

(Տեսական հարցադրումներ)

Աշխարհը մտահոգող բազմաթիվ հարցերի ու խնդիրների պատասխաններ գտնելու մեր ճիգերի ընթացքում կարծես թե մեզանում հետզհետե ամրապնդվում է այն միտքը, որ այդ խնդիրների մեծամասնությունն արդի հասարակության հոգևոր ճգնաժամի, կյանքի գերագույն աղբյուր Աստծուց նրա օտարման արդյունք է: Այդ հոգևոր ճգնաժամի հաղթահարումը մեծամասամբ կախված է Եկեղեցու և պետության հարաբերությունների ճշգրտումներից: Հարցն այն է, թե ինչպե՞ս պիտի ընկալվի Եկեղեցու և պետության տարանջատման սկզբունքը: Ըստ երևույթին, այս հարցում հարկ կա զուգահեռներ անցկացնել հենց պետական իշխանության թևերի տարանջատման սկզբունքի հետ: Արդյո՞ք օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները հանդիսանում են իրարից մեկուսացված և իրար հետ որևէ առնչություն չունեցող կառույցներ: Անշուշտ՝ ոչ, քանի որ իշխանության այս երեք թևերն էլ ծառայում են կամ պիտի ծառայեն մեկ միասնական նպատակի՝ երկրի բարգավաճմանը, յուրաքանչյուրն իր ոլորտում և իր իրավասությունների շրջանակում: Նույն կերպ կարելի է պնդել, որ պետությունն ու Եկեղեցին, այսինքն պետա-վարչական և հոգևոր իշխանությունները՝ յուրաքանչյուրն իր ոլորտում, պիտի ծառայեն նույն նպատակին, որն է՝ մարդկանց բարեկեցությունը: Հասարակության մեջ բարին ու խաղաղությունը չեն կարող հաստատվել առանց այդ հասարակության յուրաքանչյուր անդամի ներսում բարու ու խաղաղության հաստատման: Այս երկու խնդիրներից առաջինը, հասարակական հարթության մեջ, հիմնականում պետության գործառույթն է, երկրորդը՝ մարդու, անձի, անհատի հարթության մեջ՝ Եկեղեցունն է: Եվ քանի որ առաջինը կախված է երկրորդից (մարդիկ են պետություն կառուցում և ոչ թե հակառակը), ուստի ճիշտ կլիներ այս թվարկման մեջ տեղափոխություն կատարել:

Պետությունը մշակում և ընդունում է օրենքներ, գործում է այդ «գրված» օրենքների շրջանակում՝ ղեկավարվելով պոզիտիվ օրենքի նորմերով, և ապահովում է նրանց կատարումը հասարակության կողմից: Այդ օրենքները պիտի բխեն բնական իրավունքի նորմերից, հակառակ դեպքում օրենքի գերակայությունը վերածվում է անիրավության գերակայության: Այս հարցն առայժմ մնում է որպես իրավունքի այն տե-

սարանների բանավեճերի առարկա, որոնք դեռ չեն էլ թերթել Գիր Գրքոցը, ուր Աստված Ինքն է միանշանակ պատասխան տալիս իրենց հարցադրումներին. «Վա՜յ անօրեն կանոններ գրողներին և այն դպիրներին, որ անիրավություն են գրում, արդարների դատաստանը ծռելու համար և իմ ժողովրդի տնանկների իրավունքը հափշտակելու» (Եսայի Ժ 1-2): Այստեղ միանշանակ ընդգծված է, որ իրավունքի աղբյուրը ոչ թե ուժն է, այլ Աստված, իրավունքի սկիզբն է ոչ թե պետությունը, այլ արարչագործությունը, պոզիտիվ իրավունքի հիմքն է ոչ թե քաղաքական նպատակահարմարությունը, այլ բնական իրավունքը: Հենց բնական իրավունքների նորմերն են կազմում բովանդակությունը մարդու աստվածատուր իրավունքների, որոնք ինքնաբերաբար են ծնունդ առել նրանից, որ մարդը՝ Աստծո պատկերն ու նմանությունն է: Մեր առջև վաղուց է ծառացել մի հարց. ինչպե՞ս են հարաբերվում «աշխարհիկ իրավունքն» ու «քրիստոնեական բարոյագիտությունը (էթիկան)», այլ կերպ ասած՝ պետական և աստվածային իրավունքը: Նման հարցադրման հարթության մեջ կարծես թե պարզ է, որ պետության ոլորտը պոզիտիվ իրավունքն է, իսկ Եկեղեցու ոլորտը՝ բնական իրավունքը: Դժվար թե որևէ մեկը կասկածի տակ առնի այն, որ պետության չմիջամտելը Եկեղեցու գործերին չի նշանակում, որ Եկեղեցին գործում է անկախ պետության կողմից հաստատված օրենքներից: Բայց նույն կերպով Եկեղեցու չմիջամտելը պետության գործերին չի կարող նշանակել, որ պետությունն անկախ է այն բարոյական ու բնական օրենքներից, որոնք հաստատել է Աստված, իսկ քարոզում է Եկեղեցին:

Այն հանգամանքը, որ Մովսեսն էր ժողովրդի առաջնորդը, իսկ Ահարոնը՝ քահանան, այս երկուսին բաժանում էր լոկ գործառութային (ֆունկցիոնալ) իմաստով, ոչ թե ըստ էության: Այդ իսկ պատճառով Աստծո Ոգով օժտվել էին երկուսն էլ: Աստծո Ոգին տրվել էր նաև ներկայացուցչական իշխանության ավագանու անդամներին, ընդ որում այդ Ոգին Մովսեսից էր վերցվել ու բաշխվել նրանց. «Տերն իջավ ամպի մեջ, խոսեց Մովսեսի հետ, առավ նրան տրված Ոգուց և դրեց յոթանասուն ծեր փղամարդկանց մեջ: Երբ Ոգին հանգչեց նրանց վրա, նրանք մարգարեացան» (Թուեր ԺԱ 25): Հետագայում տեսնում ենք, որ նույն արարողակարգը կատարվում է նաև դատական (Դատավորաց գրքում) և գործադիր իշխանության կայացման ընթացքում: Աստծո Ոգին՝ իշխանության համար ամենաանհրաժեշտ գործոնն է, քանի որ դրանով իսկ դաշինք է կնքվում Աստծո և իշխանավորի միջև: Աստծո Ոգին տրվում է որպես «կանխավարձ», և պետական իշխանությանը ներկայացվում է մի պահանջ՝ պահպանել այդ Ոգին, այսինքն անշեղորեն հետևել Աստծո նախանշած ուղուն, անխաթար մնալ Աստծո հետ կնքած դաշինքի մեջ: Որքան էլ հեռանա արդի պետությունը Եկեղեցուց, այնուհանդերձ մենք այսօր էլ ենք տեսնում նշված փոխկապվածության հեռավոր զուգահեռները: Բավական է հիշեցնել շատ երկրներում ամրագրված այն ավանդույթը, որով երկրի նախագահը պաշտոնի անցնելու արարողության ժամանակ իր երդումն ասում է ձեռքն Աստվածաշնչին դրած: Սակայն պիտի նշենք, որ ցավոք այդ պահը ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ Հայաստանում ու գրեթե ամենուր վերածված է արարողական ձևականության: Արդի աշխարհում կրո-

նից (Եկեղեցուց) պետության տարանջատման սկզբունքը փաստորեն նենգափոխվել է ու դարձել պետությունն Աստծուց անջատելու միջոց: Նման գործելակերպ պարբերաբար տեսնում ենք պատմության ընթացքում. ինչպես. օրինակ. ռուսաց կայսր Պետրոս Առաջինի հրամանագրով պատրիարքության վերացումը, կոմունիստական պետության ամենաագրեսիվ աստվածըմբոստությունն ու հոգևորականների ֆիզիկական ոչնչացումը:

Մինչդեռ Եկեղեցու և պետության տարանջատման իմաստն ամենևին այլ է: Գուցե տարօրինակ թվա, բայց Աստվածաշնչում, ուր խստակորեն շեշտվում է աստվածիշխանության (թեոկրատիայի) գաղափարը, տեսնում ենք, ինչպես այդ վերջինի հետ եզակի միաձուլվածությամբ ներկայացված է պետությունից Եկեղեցու տարանջատման սկզբունքը: Հին Կտակարանում հստակ մատնանշվում է հոգևոր ու պետական իշխանությունների ոլորտների ու գործելակերպի տարբերությունը: Հոգևոր իշխանության նշանակետն է մարդու ներաշխարհը, մինչդեռ պետական կառույցների օբյեկտ են հանդիսանում մարդու էության արտաքին դրսևորումները: Միմիայն սրանով է իմաստավորվում պետության և Եկեղեցու տարանջատման սկզբունքը: Պետության ու իր ուժային կառույցների միջամտությունը ներանձնական ոլորտին աստվածահաճո չէ. նման միջամտությունն Աստվածաշնչում որակավորվում է որպես չարիք: Սաղմոսներից մեկի բնագիրը հնչում է հետևյալ կերպ (ցավոք, արդի աշխարհաբարում բնագիրը ճիշտ չի թարգմանված). «Նրանք հաստատվել են չարամտությամբ [...]. անօրենություն են փնտրում, քննում են ու քննում՝ անգամ մինչև մարդու ներքին կյանքն ու սրտի խորքերը: Բայց Աստված կխոցի նրանց իր նետով» (Սաղմ. ԿԳ 6-8): Ջորջ Օրուելի «1984» վեպում նկարագրված մղձավանջում՝ այն պետության մեջ, ուր համընդհանուր հսկողության տակ էին մարդու կենսագործունեության բոլոր դրսևորումները, ամենասարսափելին այն էր, որ պետական կառույցների շարքում կային ճշմարտության նախարարություն և սիրո նախարարություն, որտեղ խոշտանգումների միջոցով պարտադրում էին սիրել «մեծ եղբորը» (այդպես էր անվանվում այդ պետության ղեկավարը): Աստվածաշունչը գտնում է, որ հոգևոր ոլորտը ենթակա չէ պետությանը, որը գործում է հարկադրանքի մեխանիզմներով. «Ոգիի վրայ իշխող մարդ չկայ» (Ժող. Ը 8): Եվ Նոր Կտակարանում տեսնում ենք, որ Քրիստոս չի ներխուժում, այլ դուռն է թակում, և որպեսզի Նա ներս մտնի, պետք է միայն ասել. «Եկ, Տէր Յիսուս» (հմմտ. Հայտն. ԻԲ 21): Սակայն Նոր Կտակարանն ավելի ստույգ է մատնանշում հոգևոր իշխանության սկզբունքային տարանջատումը իշխանության այլ թևերից. «Տվեք կայսրինը՝ կայսեր, և Աստծունը՝ Աստծուն» (Մատթ. ԻԲ 21, Մարկոս ԺԲ 17, Ղուկաս Ի 25). «Արդ, հատուցեցե՛ք յուրաքանչյուրին իրենց պարտքերը. որին հարկ՝ հարկը, որին մաքս՝ մաքսը, որին երկյուղ՝ երկյուղը, որին պատիվ՝ պատիվը» (Հռոմ. ԺԳ 7): Արդյո՞ք հոգևոր և աշխարհիկ իշխանության տարանջատման մասին չեն Քրիստոսի այն խոսքերը, որոնք նշում են, որ Ինքն էլ, առաքյալներն էլ այս աշխարհից չեն: Քրիստոս, հոգևոր իշխանություն հանձնելով առաքյալներին, ասում է նրանց. «Ես ընտրեցի ձեզ աշխարհից» (Հովհ. ԺԵ 19), - և այստեղ **ընտրել** նշանակում է **զատել, անջատել**: Ինչպե՞ս է, սակայն, այս ամե-

նը համապեղվում Աստծո միջնորդության գաղափարի հետ:

Պետական կառավարման այն համակարգում, որն արդի պետական իրավունքի տեսությունն անվանում է «զսպումների և հակակշիռների համակարգ», Եկեղեցին պիտի ինքն իրեն ընկալի որպես զսպող գործոններից մեկը, իսկ պետությունն էլ պիտի ընդունի Եկեղեցուն որպես այդպիսի գործոն: Հիշեցնենք, որ բիբլիական պատմության մեջ, օրինակ, դատական իշխանության անջատ և անկախ լինելու հանգամանքը միակ պայմանն էր, որի շնորհիվ իշխանության այդ թևը կարողացավ ծառայել որպես գործադիր իշխանության քմահաճույքները կասեցնող զսպման գործոն: Միայն այդ անկախության պարագայում դատական իշխանությունը, հանձինս Սամուելի, կարողացավ զահընկեց անել օրինախախտ Սավուղ թագավորին: Սրա նմանությամբ, հոգևոր իշխանությունն էլ կարող է դառնալ զսպող գործոն և հակակշիռ պետական իշխանության նկատմամբ, կարող է դեմ առնել մարդու աստվածատուր ազատությունը ճնշելու պետական նկրտումներին, միայն այն դեպքում, երբ լինի պետությունից անջատված և անկախ: Դատական իշխանությունը՝ հակակշիռ է «ներքևից», հոգևոր իշխանությունը՝ հակակշիռ է «վերևից»: Ուստի «այս աշխարհից չեք» բառերը, մատնանշելով հոգևոր իշխանության տարանջատվածությունը երկրային իշխանությունից, ամենևին չեն նշանակում նրա անջատվածությունը: Մարդու արժանապատվության ոտնահարումների ցանկացած հավականություն խանդիսանում է հոգևոր ոլորտ մխրճվելու հավակնություն: Նման հավակնություններին խակադրվելն էլ արդի պետական իրավունքի տերմինաբանությունն անվանում է «հակակշիռ»: Եկեղեցու «զսպող» գործառույթը, անշուշտ, ոչ թե իրավական, այլ զուտ բարոյական գործառույթ է: Աստծո երկյուղն էլ, որը կանխում է չար արարքները, իրավական գործոն չէ, սակայն անխուսափելիորեն է ներգործում՝ առանձին մարդու, ինչպես նաև ողջ հասարակության համապատասխան հոգևոր կողմնորոշման պայմաններում:

* * *

Աստվածաշնչում ամրագրված պետական իրավունքի կարևորագույն նորմերից մեկում խոչակվում է. «Քո եղբայրներից քո վրա թագավոր կդնես. դու չես կարող քեզ վրա թագավոր դնել մի օտարականի, որ քո եղբայրը չէ» (Երկր. Օր. ԺԷ 15): Այսօր ողջ աշխարհում աստվածաշնչյան բոլոր օրենքներից այս մեկն է առավելապես հետևողականորեն պահպանվում. երկրի առաջին դեմքի քաղաքացիությունը, լինի դա թագավոր թե նախագահ, պարտադիր ցենզ է: Այնուհանդերձ ստիպված ենք նշել, որ ինչպես նախագահի երդման պարագայում, այնպես էլ այս դեպքում Հին Կտակարանի այս օրենքի իմաստն աղավաղված է և աղճատված, ընդ որում սղվել է դրա հենց հոգևոր բաղադրամասը: Հին Կտակարանի այս նորմը հարկ կա ընթերցել մի այլ բազմիցս կրկնվող իրավաբանական դրույթի ենթատեքստում. «Երկրացու և ձեր մեջ բնակվող օտարականի համար մեկ օրենք թող լինի» (Ելից ԺԲ 49): Նման ենթատեքստում բովանդակային շեշտը «օտարական» բառից տեղափոխվում է «եղ-

բայր չէ» արտահայտության վրա: Եղբայրությունն իմաստավորվում է որպես միակ Աստծո զավակ լինելը, և հենց դա ընդգծված է այն հանգամանքով, որ Հայր Աստծո մասին Քրիստոսի «Հայր Իմ» բանաձևը մարդկանց առաջարկվող աղոթքի տեքստում Փրկիչը փոխարինում է «Հայր մեր» արտահայտությամբ: Չի կարելի թագավոր ընել ոչ թե պարզապես օտարականի, այլ այն «օտարականին, որ քո եղբայրը չէ», և ուրեմն չի ճանաչում Աստծուն որպես Հայր: Սրա հետ է կապվում արդիականությունն այն մտքի, որ ժամանակին արտահայտել է ռուս փիլիսոփա Վ. Սոլովյովը. «Պետական իշխանությունն իր գործողությունների բնույթով ու ծագումով միանգամայն անկախ է հոգևոր իշխանությունից: Այդ իսկ պատճառով նրանց համաձայնությունը կարող է լինել միմիայն ազատ, բարոյական՝ ըստ խղճի ու հավատի: Հիմնական հարցն այն է, թե հավատո՞ւմ է արդյոք աշխարհիկ իշխանությունը Եկեղեցուն, թե՞ ոչ: Քրիստոնեական պետության կառավարությունը պարտավոր է հավատալ Եկեղեցուն: Խոսքը զուտ բարոյական, ոչ թե իրավական պարտավորության մասին է»[1]: Դա գրեթե նույնն է, ինչ երդումը Աստվածաշնչի առջև. ոչ մի սահմանադրության մեջ Սուրբ Գիրքը չի նշված որպես այդ արարողության պարտադիր, իրավաբանորեն ամրագրված ատրիբուտ, սակայն ավանդույթը հաստատվել է և կարծես թե որևէ մեկն առանձնապես չի մտահոգվում, որ դրանով պետությունը կարող է միաձուլվել Եկեղեցու հետ:

Եթե «եղբայրների» միջավայրը նախ և առաջ հոգևոր միջավայրն է, և եթե աշխարհիկ իշխանության համար միևնույն չէ, թե ինչպիսին է այդ միջավայրը, ապա միանշանակ է, որ պետությունը չի կարող անտարբեր լինել հոգևոր իշխանության գործունեության հանդեպ: Հիշեցնենք Մովսեսի բացականչությունը. «Երանի՛ թե Տերը ամբողջ ժողովրդին մարգարեներ դարձներ՝ Իր Ոգին տալով նրանց» (Թուեր ԺԱ 29): Չափազանց կարևոր է, որ յուրաքանչյուր մարդու մեջ Աստծո Ոգու ներկայության ցանկությունն արտահայտեց ոչ թե քահանա Ահարոնը, որն ավելի բնական ու սպասելի կարող է թվալ, այլ առաջնորդ Մովսեսը: Պատահական չէ, որ հետագայում Աստծո ուղիներով ընթանալու կոչեր անում են ոչ միայն քահանաներն ու մարգարեները, այլ նաև դատավորներն ու բարեպաշտ թագավորները: Պետության անտարբերությունը հոգևոր իշխանության գործունեության հանդեպ՝ չափազանց մեծ և անթույլատրելի շռայլություն է թեկուզ այն պատճառով, որ այդ գործունեության արդյունքից է հիմնականում կախված հասարակության օրինապահությունը, որը հիմնվելու է ոչ թե պետության ուժային մեքենայի վախի, այլ հասարակության յուրաքանչյուր անդամի ներքին որակների ու մղումների վրա: Ժողովողի գրքի մի հրաշալի ձևակերպման մեջ ամենայն պարզությամբ է բացահայտված պետության ու Եկեղեցու տարանջատման սկզբունքի բիբլիական իմաստը. «Պահի՛ր թագավորի խոսքը, մանավանդ Աստծո երդումի պատճառով» (Ժող. Ը 2): Այնպես որ գործադիր իշխանությունն իրականում ուժեղ է այն դեպքում, եթե նա հենվում է այն դաշինքի վրա, որ իր ժողովուրդը կնքել է Աստծո հետ, ինչպես տեսնում ենք Աստվածաշնչում:

---

[1] **Соловьев В.**, Соб. соч., т. 2-ой, с. 128.

Պետական և հոգևոր իշխանության միությունը, ոչ թե ֆունկցիոնալ, այլ ընդհանուր նպատակային իմաստով, հասարակության առողջության միակ գրավականն է: Այդպես էլ հարկ է հասկանալ, թե ինչո՞ւ «Արածեցրո՛ւ Իմ գառները» (Հովհ. ԻԱ 15, 16, 17) արտահայտությունը, որ Քրիստոսն ասաց Պետրոս առաքյալին նրան հոգևոր իշխանություն հանձնելիս, գրեթե բառացի կրկնությունն էին դրանից շա՜տ առաջ ասված այն խոսքի, որ ինչել էր թագավորական իշխանությունը Դավթին հանձնելիս. «Դու հովվես իմ ժողովրդին» (Բ Թագ. Ե 2): Առանց այդ միասնության ճանաչման, որը ենթադրում է ինչպես Եկեղեցու գործառույթներն աշխարհում, այնպես էլ աշխարհիկ իշխանավորների հովվությունը, անհնար է ճիշտ որոշել Եկեղեցու տեղը հասարակության կյանքում և անհնար է դիմակայել այն կարծիքին, թե իբր Եկեղեցու հոգսն է միայն փրկությունը հանդերձյալ աշխարհում, իսկ պետության խնդիրն է՝ ինչպես այս աշխարհում ավելի արագ ու ավելի հիմնովին փոխարինել աստվածապտուր ազատությունը շուկայական հարաբերություններով (ահա ևս երկու հասկացություն, որոնք արդի հոգեզուրկ մեկնաբանություններում դարձել են հոմանիշեր):

Եկեղեցու ծառայության արդյունավետությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, այդ թվում հասարակության կողմից հոգևոր կողմնորոշիչների միանշանակ ընկալումով: Սակայն զերազանցապես աթեիստական արդի աշխարհը կարծես թե հետևողական քայլեր է անում, որպեսզի հասարակությունը զրկվի նման հոգևոր «կոնսենսուսի» հնարավորությունից: Այդ նպատակին ծառայող գործիքներից մեկն էլ խղճի ազատության այն աղավաղված սկզբունքն է, որը համառորեն պարտադրվում է աշխարհին: Այն մեկնաբանությամբ, որով դա քարոզվում է ներկայումս, այդ սկզբունքը նշանակում է ոչ թե խղճի ազատություն, այլ ազատություն խղճից: Հենվելով մարդու հոգևոր աշխարհի աստվածամերժ ընկալման վրա, այն ենթադրում է, թե խիղճը մի վերացական բան է և կարող է մնալ որպես այդպիսին՝ անկախ նրանից, թե ո՞ւմ է երկրպագում անձը՝ Աստծուն, թե սատանայի: Ազգը, ժողովուրդը հավաքական մի անձ է: Այդ հավաքական անձի հոգևոր աշխարհը նույնչափ նուրբ է, որքան և առանձին անհատինը, իսկ շատ հարցերում՝ ավելի խոցելի: Ոչ ոք չի կարող արգելել որևէ պետության՝ օրենսդրորեն ամրագրել իր առաջնահերթ պարտականությունը՝ նախ և առաջ և առավելագույնս հոգալ իր ժողովրդի մշակութային ու հոգևոր արժեքների մասին: Բայց չգիտես ինչու արդի միջազգային հանրությունը հնարավոր է գտնում արգելել ազգային պետությանը՝ իր վրա վերցնել հատուկ պարտավորություններ ազգային հոգևոր արժեքների նկատմամբ, ճանաչել այդ արժեքների գլխավոր պահպանիչ ու քարոզիչ հանդիսացող Եկեղեցու հետ իր դաշինքի առաջնահերթությունը, այն Եկեղեցու, որը դարերով գործել է իր հոգևոր տարածքում: Կյանքի բոլոր ոլորտների նյութականացված ընկալմամբ արդի աշխարհն ուժգնորեն պաշտպանում է պետությունների տարածքային ամբողջականությունը լոկ աշխարհագրական կտրվածքով՝ միևնույն ժամանակ նպաստելով հոգևոր տարածքի ամբողջականության խաթարմանը: Միանգամայն արդարացի պնդելով, որ մարդու հոգևոր աշխարհ չի կարելի ներխուժել ուժային մեթոդներով, հակառակ այդ իր իսկ թեզին, որն էլ խղճի ազատության միակ հենքն է, այսօրվա աշխարհն, ըստ երևույ-

թի, ենթադրում է, թե միանգամայն արդարացված է ողջ ժողովրդի հոգևոր աշխարհի ներխուժելը ուժային դիրքերից, տնտեսական սանկցիաների կիրառման սպառնալիքներով:

Եկեղեցին և պետությունը պիտի միավորվեն խղճի ազատության միակ ճշմարիտ ընկալմամբ և համատեղ պաշտպանեն այդ ընկալումը՝ հռչակելով, որ մենք պատրաստ ենք ընդունել այլակրոն ցանկացած մարդու, ցանկացած հարանվանության պատկանող հարգանքով, որ մենք երաշխավորում ենք մարդու անձեռնմխելիությունը, հավատքի հետևանքով նրա հետապնդման ու որևէ խտրականության անթույլատրելիությունը, սակայն սեփական հոգևոր փարախի պաշտպանությունն ինչ-ինչ հավակնություններից համարում ենք նույնքան անվիճելի մեր պարտքը, որքան երկրի տարածքային ամբողջականության պաշտպանությունը:

Եկեղեցին իր ողջ պատմության ընթացքում ինչպես Հայաստանում, այնպես էլ այլ երկրներում բազմիցս ապացուցել է, որ նա հանդիսանում է իր երկրի տարածքային ամբողջականության նույնքան նվիրյալ պաշտպան, որքան պետությունն է: Եվ Եկեղեցին իրավամբ կարող է ակնկալել պետությունից, որ նա էլ ըմբռնի, որ աշխարհիկ իշխանությունը նույն հետևողականությամբ պիտի պաշտպանի իր երկիրը հոգևոր սպրդումից: Ինչքան ուզում է համամարդկային լինեն արժեքները, դրանք չեն կարող դառնալ երկրի հոգևոր մթնոլորտի կայունության երաշխիք, եթե դուրս են ազգային այն արժեքներից, որոնցով դարեր շարունակ ապրել և ապրում է ժողովուրդը, հակառակ բոլոր պատմական արհավիրքներին: Եկեղեցու և պետության կողմից իրենց գործնական ու հոգևոր խնդիրների նման միասնական գիտակցումն է միայն, որ կարող է դառնալ հիմք՝ իրենց արդյունավետ համագործակցության համար հոգևոր ոլորտում, որն անշուշտ կոչված է առողջացնել նաև մյուս բոլոր ոլորտները:

*ՎԱԼԵՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ*
*ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ,*
*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու*

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Կրոնը և կրոնական կազմակերպությունները (Եկեղեցին) դարեր, անգամ հազարամյակներ շարունակ փիրապետող դերք են ունեցել բոլոր ժողովուրդների հասարակական կյանքում, մեծապես նպաստել հասարակական հարաբերությունների կարգավորմանը և վճռորոշ դերակատարություն ունեցել ինչպես պետությունների ներքին կյանքում, այնպես էլ արտաքին հարաբերությունների ոլորտում: Եվ չնայած ապակրոնականացման ավելի քան երկուհարյուրամյա ընթացքին, այսօր էլ կրոնը և կրոնական կազմակերպություններն ամենուր շարունակում են կատարել իրենց աշխարհայացքային, կարգավորող, միասնականացնող գործառույթները, մեծ դեր խաղալ հասարակական հարաբերությունների ոլորտում, նպաստում են ազգային արժեքների պահպանմանը, մարդկանց բարոյական նկարագրի ձևավորմանը: Եվ այս պատճառով է, որ բոլոր պետությունները, առանց բացառության, մեծ ուշադրություն են դարձնում Եկեղեցու հետ հարաբերությունների բնականոն զարգացմանը, և որպես կանոն՝ այդ հարաբերությունները կարգավորվում են առաջին հերթին սահմանադրական մակարդակով:

Պետության և Եկեղեցու փոխհարաբերություններն արտահայտելու համար օգտագործվում են «աշխարհիկ պետություն» և «պետական կրոն» հասկացությունները: Աշխարհիկ է համարվում այն պետությունը, որտեղ պետությունը և Եկեղեցին անջատված են միմյանցից և, հետևաբար, նրանցից յուրաքանչյուրը չի կարող միջամտել մյուսի գործունեությանը, իսկ պետությունը պարտավոր է բոլոր կրոնական ուսմունքների և կրոնական կազմակերպությունների համար, սովորաբար օրենքով սահմանված կարգով, ապահովել հավասար պայմաններ: Աշխարհիկ պետությունը նշանակում է նաև, որ կրոնը և կրոնական միավորումները որևէ ձևով չեն ազդում պետական իշխանության ձևավորման և իրագործման վրա, ինչպես և պետական կրթությունը աշխարհիկ է (դպրոցը անջատված է Եկեղեցուց): Ներկայումս աշխարհի բազմաթիվ պետությունների սահմանադրություններում ամրագրված է պետության աշխարհիկությունը և կամ պետության անջատված լինելը Եկեղեցուց (Ֆրանսիա, Ռուսաստան, Միջինասիական հանրապետություններ, Ադրբեջան, Ալբանիա և այլն):

Չնայած պետության՝ Եկեղեցուց անջատման գործընթացն ունի ավելի քան եր-

կուծարյուրամյա պատմություն (սկսած ֆրանսիական մեծ հեղափոխության ժամա-
նակաշրջանից), և, ինչպես արդեն նշեցինք, շատ պետություններ արդեն աշխարհիկ
են, այնուամենայնիվ այսօր դեռևս բազմաթիվ պետություններում, այդ թվում՝ ժո-
ղովրդավարական պետություններում, սահմանադրությունների մակարդակով ամ-
բագրված է այդ պետությունների ոչ աշխարհիկ լինելը. այսինքն՝ այդ պետություննե-
րում գործում է պետական (ազգային) կամ պաշտոնական (երբեմն օգտագործվում է
նաև «տիրապետող կրոն» հասկացությունը) Եկեղեցու ինստիտուտը, ինչը ենթա-
դրում է, որ այդ պետություններում որոշակի Եկեղեցի (համապատասխան կրոնա-
կան ուսմունք) ունի հատուկ կարգավիճակ և պետությունը տարբեր չափերով հովա-
նավորում ու աջակցում է այդ կրոնական կազմակերպություններին. տալիս է արտո-
նություններ, կարող է դրանց ֆինանսավորել, անգամ այս կամ այն ձևով մասնակցել
այդ կազմակերպությունների գործունեությանը և բարձրագույն եկեղեցական պաշ-
տոնյաների նշանակմանը, երբեմն նաև թույլատրել իրականացնել քաղաքացիական
կացության (ամուսնության, ծննդի, մահվան) ակտերի գրանցումներ: Նշենք նաև,
որ պետական (պաշտոնական) կրոնի ինստիտուտը հատուկ է և՛ բուդդայականութ-
յուն, և՛ քրիստոնեություն, և՛ իսլամ դավանող երկրներին:

Հասկանալի է, որ Եկեղեցու (կրոնի) նկատմամբ այսպիսի պետական վերաբեր-
մունքն առաջին հերթին հատուկ է բացարձակ և սահմանադրական միապետութ-
յուններին, որոնց պետության գլուխը՝ միապետը, որպես կանոն, միաժամանակ նաև
հոգևոր առաջնորդն է: Այսպես, Նորվեգիայի թագավորությունում պաշտոնական
կրոն է համարվում ավետարանական-լյութերական կրոնը (Նորվեգիայի Սահմանա-
դրություն, հոդված 2), Դանիայի թագավորությունում նույնպես ավետարանական-
լյութերական Եկեղեցին պետական (ազգային) Եկեղեցի է, որի նյութական ապահո-
վությունն իրականացնում է պետությունը (Դանիայի Սահմանադրություն, § 4), Լիխ-
տենշտեյնի իշխանությունում պետական Եկեղեցի է Հռոմեական-Կաթոլիկ Եկեղե-
ցին, որն օգտվում է պետության աջակցությունից (Լիխտենշտեյնի Սահմանադրութ-
յուն, հոդ. 37), Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագա-
վորությունում պետական Եկեղեցի է Անգլիկան Եկեղեցին և այլն: Նման մոտեցում
գոյություն ունի նաև իսլամ դավանող մի շարք բացարձակ և սահմանադրական
միապետություններում (Սաուդյան Արաբիա, Օման, Հորդանան, Մարոկկո և այլն):
Սակայն Եկեղեցու (կրոնի) նկատմամբ նման դիրքորոշումը հատուկ է ոչ միայն միա-
պետություններին, այլև հանրապետական կառավարում ունեցող պետություններին:
Այսպես, Իսլանդիայում «ավետարանական-լյութերական Եկեղեցին պետական Ե-
կեղեցի է և որպես այդպիսին օգտվում է պետության աջակցությունից և հովանավո-
րությունից» (Իսլանդիայի Սահմանադրություն, հոդված 62): Հունաստանում թեև չի
նշվում պետական (պաշտոնական) Եկեղեցի լինելու հանգամանքը, սակայն Քրիս-
տոսի արևելյան-ուղղափառ Եկեղեցու դավանանքը հայտարարվում է տիրապետող
կրոն Հունաստանում, միաժամանակ ամրագրվում է Եկեղեցու կարգավիճակը՝ «եկե-
ղեցին ավտոկեֆալ է, որը կառավարում է Սուրբ Սինոդը» (Հունաստանի Սահմանա-

դրություն, Բաժին Բ. հոդ. 3.1)։ Մի քանի այլ պետություններում նույնպես չի օգտագործվում պետական (պաշտոնական) Եկեղեցու հասկացությունը, սակայն սահմանադրության համապատասխան հոդվածների բովանդակությունից ակնհայտ է դառնում որևէ կոնկրետ Եկեղեցու գերիշխող դիրքը և կարգավիճակը տվյալ պետությունում։ Այսպես, Արգենտինայի Սահմանադրությունում ամրագրված է, որ «Դաշնային կառավարությունը աջակցում է Հռոմեական առաքելական կաթոլիկ կրոնին» (հոդված 2), Իռլանդիայի Սահմանադրությունում նշվում է, որ «Պետությունը ճանաչում է Հռոմեական առաքելական կաթոլիկ սուրբ Եկեղեցու հատուկ դիրքը» (հոդ. 44.2), Բոլիվիայի Սահմանադրությունում՝ «Պետությունը ճանաչում և աջակցում է Հռոմեական առաքելական կաթոլիկ կրոնը» (հոդված 3)։ Մի շարք պետությունների սահմանադրություններով պետության և Եկեղեցու հարաբերությունները կարգավորելու նպատակով կիրառվում է պայմանագրային ձևը։ Այսպես, Կոլումբիայի Սահմանադրությամբ ամրագրված է՝ «Կառավարությունը կարող է փոխադարձության հիման վրա Վատիկանի հետ կնքել պայմանագիր՝ պետության և կաթոլիկ Եկեղեցու միջև հարաբերությունները կարգավորելու համար» (հոդ. 53), Վենեսուելայի Սահմանադրությամբ նախատեսվում է. «Կարող են կնքվել կոնվենցիաներ կամ պայմանագրեր պետության և Եկեղեցու միջև հարաբերությունները կարգավորելու համար» (հոդված 50)։ Պետության և տարբեր Եկեղեցիների միջև հարաբերությունների ուրույն ձև է նախատեսված Լեհաստանի Սահմանադրությունում։ Նախ, հատուկ ձև է մշակվել կաթոլիկ Եկեղեցու հետ փոխհարաբերություններում. «Լեհական Հանրապետության և կաթոլիկ Եկեղեցու միջև հարաբերությունները որոշվում են Առաքելական Մայրաքաղաքի հետ կնքված միջազգային պայմանագրով և օրենքներով» (հոդված 25. 4), իսկ մյուս Եկեղեցիների հետ հարաբերությունները որոշվում են այնպիսի օրենքներով, որոնք ընդունվում են կառավարության և այդ Եկեղեցիների ներկայացուցիչների հետ կնքված պայմանագրի հիման վրա (հոդված 25. 5)։ Պետության և Եկեղեցու հարաբերությունների կարգավորումը հետաքրքիր լուծում է ստացել Իտալիայի Սահմանադրությունում. ըստ որի վերոհիշյալ հարաբերությունները կարգավորվում են Լատերանի համաձայնագրերով, ընդ որում այդ համաձայնագրերի փոփոխությունները «...չեն պահանջում Սահմանադրության վերանայման որևէ ընթացակարգ» (հոդ. 7)։ Այսինքն՝ Սահմանադրությամբ ամրագրվել են ավելի վաղ կնքված Լատերանի համաձայնագրերի դրույթները, և պետությունը փաստորեն Սահմանադրությունից անկախ կարող է ինքնուրույնաբար կարգավորել պետության և կաթոլիկ Եկեղեցու միջև հարաբերությունները։ Ճշգրիտ լինելու նպատակով նշենք, որ Լատերանի համաձայնագրերի հիմնական պայմանագրով կաթոլիկությունը ճանաչվել է Իտալիայի միակ պետական կրոնը և դրա հիման վրա ստեղծվել է Վատիկան պետությունը, իսկ մյուս պայմանագրով՝ Կոնկորդատով, որոշվել են կաթոլիկ Եկեղեցու իրավունքներն ու արտոնությունները Իտալիա-

յում[1]:

Ինչ վերաբերում է իսլամ դավանող ժողովուրդներին, ապա հարկ է նշել, որ ոչ միայն միապետություններում է խաղում կրոնին, այլև հանրապետություններում, որոնց մի մասը ուղղակիորեն հռչակված են իսլամական հանրապետություններ (Իրան, Պակիստան և այլն), իսկ մի մասն էլ իսլամը համարում է պետական (պաշտոնական) կրոն (Ալժիր, Թունիս, Եգիպտոս և այլն):

Անհրաժեշտ է նկատել, որ թեև տարբեր պետություններում պետության և Եկեղեցու հարաբերությունները կարգավորվում են ամենատարբեր մեխանիզմներով, այնուամենայնիվ շատ պետություններում, հատկապես ժողովրդավարական պետություններում, կա մի ընդհանրական մոտեցում. դա խղճի, դավանանքի ազատությունն է, որի պաշտպանությունը երաշխավորված է այդ պետությունների սահմանադրություններով: Ի դեպ, դավանանքի ազատությունը ենթադրում է ինչպես ցանկացած կրոն դավանելու ազատություն, այնպես էլ ծիսական արարողությունները համատեղ կատարելու նպատակով կրոնական կազմակերպություններում, կրոնական համայնքներում միավորվելու իրավունք: Ընդհանուր առմամբ ժողովրդավարական պետությունների սահմանադրությունների գերակշիռ մասը հռչակելով ցանկացած կրոն դավանելու, կրոնական համայնքներում մարդկանց միավորվելու իրավունքները, միաժամանակ ամրագրում է, որ այդ իրավունքների իրագործումը չպետք է վտանգի պետական անվտանգությունը, խաթարի հասարակական կարգուկանոնն ու բարոյականությունը, վնաս պատճառի մարդկանց առողջությանը, մյուս անձանց իրավունքների ու ազատությունների իրականացմանը, ինչպես և կրոնական համոզմունքները չեն կարող լինել սահմանադրական ու քաղաքացիական պարտականություններից հրաժարվելու հիմք: Նշենք, որ սահմանադրություններում ամրագրված այսպիսի մոտեցումներն ամբողջովին համահունչ են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի և մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջազգային մյուս փաստաթղթերի դրույթներին:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, արդի աշխարհում պետությունների մեծամասնությունը, այդ թվում ժողովրդավարական պետությունները, չափազանց կարևորում է պետության և Եկեղեցու (կրոնի) հարաբերությունների կարգավորումը, և դա առաջին հերթին կատարվում է պետության հիմնական օրենքի մակարդակով:

Հարկ ենք համարում նշել նաև, որ մարդու իրավունքների ու ազատությունների արդի ըմբռնման, ինչպես և գաղափարախոսական պլյուրալիզմի տեսանկյունից դիտարկելով խղճի և դավանանքի ազատությունը խիստ ծնական չափանիշների առումով, կարելի է ենթադրել բոլոր կրոնական ուսմունքների իրավահավասարության անհրաժեշտությունը: Սակայն իրականում, ինչպես արդեն գիտենք, այդպիսի բացարձակ իրավահավասարություն-գոյություն չունի, և յուրաքանչյուր պետությունում

---

[1] Լատերանի պայմանագրեր, ՀՍՀ, հ. 4, էջ 494:

որևէ կոնկրետ Եկեղեցի (և նրա կրոնական վարդապետությունը) ունի հատուկ կարգավիճակ: Այդպիսի վերաբերմունքն, իհարկե, պատահական չէ, ոչ էլ կամայականության դրսևորում, այլ պետության կյանքում կրոնի ունեցած դերի կարևորության արտացոլումն է: Այսպիսի մոտեցումը ամենևին չի նշանակում ժողովրդավարությունից հրաժարում, որովհետև ժողովրդավարական պետության խնդիրներից առաջնահերթը հասարակությանը ծառայելն է, հետևաբար պետությունը չի կարող անտեսել հասարակության համար այնպիսի կարևոր նշանակություն ունեցող հասարակական գիտակցության ձև, ինչպիսին է կրոնը:

Համեմատաբար մանրամասն ներկայացնելով պետության և Եկեղեցու (կրոնի) փոխհարաբերությունների սահմանադրական կարգավորման աշխարհում առկա տարբերակների համայնապատկերը, բնականաբար հարց է առաջանում, թե ինչպե՞ս են կարգավորվում համանման հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում, և առաջին հերթին, իհարկե, ՀՀ Սահմանադրությունն ինչպիսի՞ վերաբերմունք է դրսևորում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և նրա վարդապետության նկատմամբ:

Այս առումով նշենք, որ ՀՀ Սահմանադրությունում Հայ Եկեղեցին և նրա վարդապետությունը որևէ ձևով չեն հիշատակվում և հետևաբար որևէ վերաբերմունք չի ցուցաբերված: Իհարկե ՀՀ Սահմանադրությունը, կառուցված լինելով ընդհանուր ժողովրդավարական սկզբունքների հիման վրա և մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության դիրքերից, ամրագրում է նաև խղճի և դավանանքի ազատության իրավունքը և նշում, որ այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով (հոդ. 23):

Դատելով ՀՀ Սահմանադրության այսպիսի դիրքորոշումից և, հետևաբար, այն հանգամանքից, որ պետությունը որևէ Եկեղեցու նկատմամբ որևէ պարտավորություն չի ստանձնում, կարծում ենք, միանշանակ կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունը աշխարհիկ պետություն է:

Պետության ժողովրդավարությունը, ինչպես տեսանք տարբեր պետությունների համայնապատկերում, ամենևին չի նշանակում Եկեղեցու նկատմամբ որևէ վերաբերմունքի բացակայություն, այլ, ընդհակառակը, ակնհայտ դրսևորվում է Եկեղեցու կարևորությունը, անհրաժեշտությունը տվյալ երկրում հասարակական հարաբերությունները կանոնակարգելու, մարդկանց հոգևոր կարիքները բավարարելու, ազգային արժեքները պահպանելու և զարգացնելու հարցում, ինչպես և հասարակության մեջ բարոյականության, բարյացակամության, բարու, հույսի, հավատի ու սիրո կայուն ու առողջ մթնոլորտ ստեղծելու գործում: Ուստի նկատի ունենալով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում, ինչպես պետականություն ունենալու և առավել ևս պետականությունից զրկված լինելու ժամանակաշրջաններում, համոզված ենք, որ անհրաժեշտ է պետության հիմնական օրենքում հստակ սահմանել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու տեղը և դերը Հայաստանի Հանրապետությունում և ոչ միայն որպես մեր հարցանքի տուրքը առ Հայաս-

տանյայց Առաքելական Եկեղեցին, այլն որպես հասարակական հարաբերությունների հզոր կարգավորիչ և բարոյական հաստատուն խարիսխ, առանց որի մեր հասարակությունը և պետությունը կարող են հեշտությամբ զրկվել ազգային արժեքներից և տրվել այլազան հզոր ու կործանիչ հոսանքներին՝ դրանից բխող բոլոր փխուր հետևանքներով:

Ինչ կարգով կարելի է սահմանադրորեն և օրենսդրորեն կատարել անհետաձգելի համարվող այս խնդիրը: Անհրաժեշտ է, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին մեր հանրապետությունում ունենա որոշակի, իրավաբանորեն հստակ ձևակերպված և ատպշած կարգավիճակ:

Խնդիրը լուծելու համար, կարծում ենք, կարիք չկա հեռու գնալ: Անհրաժեշտ է ցայսօր աշխարհում առկա, վերը ներկայացված գունաշարի տարբերակներից ընտրել որևէ մեկը և այն, չկապելով սահմանադրական այլ փոփոխությունների հետ, նախապատրաստել այդ մեկ փոփոխությունը հանրաքվեի: Մեր կարծիքով նախընտրելի տարբերակը իտալականն է կամ լեհականը, այսինքն՝ պետությունը պայմանագիր է կնքում Եկեղեցու հետ՝ պայմանագրին տալով միջազգային պայմանագրի կարգավիճակ:

Սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ սահմանադրական փոփոխություններ կատարելը բոլոր դեպքերում բարդ և համեմատաբար երկարատև գործընթաց է, կարելի է այդ հարցը ժամանակավորապես, մինչև սահմանադրական փոփոխություններ կատարելը, լուծել նաև օրենսդրական մակարդակով՝ համապատասխան փոփոխություններ կատարելով մի քանի գործող օրենքներում, ինչը ցանկության դեպքում կարելի է իրականացնել կարճ ժամկետում:

## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

*ՎՐԵԺ ՄԿՐՏՉԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

*Պատմական գիտությունների դոկտոր*

# 571 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԴԱՎԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

560-ական թվականներից սասանյան դուռը հույժ անհանդուրժող քաղաքականություն էր վարում իր գերակայությանը ենթակա քրիստոնյաների նկատմամբ: Ինչպես հավաստում է VI դարի ասորի մատենագիր Հովհան Եփեսացին, Խոսրով Անուշիրվան արքան «հրամայեց կրակի ատրուշաններ կառուցել ամբողջ Պարսկական Հայաստանում»[1]: Արյաց արքան 564 թ. Հայաստանի մարզպան կարգեց պարսից Սուրենյան ազդեցիկ տոհմից Չիհովր-Վշնասպին, որը խիստ ծանրացրեց հարկային բեռը և քայլեր ձեռնարկեց Հայաստանի ներքին ինքնավարության և Հայոց Եկեղեցու իրավունքները սահմանափակելու ուղղությամբ՝ ոտնատակ տալով դեռևս 484 թ. Նվարսակի պայմանագրով ամրագրված դրույթները: Հայաստանի և Հայ Առաքելական Եկեղեցու գլխին վերստին կախվեց հավատափոխության սպառնալիքը՝ անկանխատեսելի հետևանքներով:

Ենթադրվում է, թե պարսիկ մարզպանը գործում էր հակառակ Խոսրով I Անուշիրվան թագավորի, որն իբր թե հանդուրժող էր Հայոց Եկեղեցու նկատմամբ[2]: Հայաստանի մարզպանը, սակայն, արքայի արձակած հրամանների անշեղ գործադրողն էր և Հայոց Եկեղեցու նկատմամբ բռնարարքների էր դիմում նրա հրահանգներով: Նկատենք, որ Խոսրով Անուշիրվանի կամքով Սյունիքի հարկային դիվանը Դվին քաղաքից տեղափոխվեց Փայտակարան նահանգ՝ մտցվելով Ատրպատականի կազմի մեջ, որպեսզի «մի եւս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա»[3]: Փաստորեն Սյունյաց և Արցախի եկեղեցիները դուրս եկան Հայ Առաքելական Եկեղեցու հետ ունեցած նվիրապետական միությունից: Սասանյան արքունիքը այդպիսով փորձում էր հակակշիռ ստեղծել ընդդեմ բյուզանդամետ հայ նախարարների և Հայոց Եկեղեցու:

Ենթադրվում է, որ Սյունիքի և Արցախի առանձնացման գործում վճռորոշ դեր է խաղացել Սյունյաց իշխանների և Մամիկոնյանների «դարավոր մրցակցությունը»,

[1] Ասորական աղբյուրներ, Ա, առաջաբան, թարգմանություն և ծան. Հ.Գ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 388:

[2] Մ. Օրմանեան, Ազգապատում, Ա, Ս. Էջմիածին, 2001 թ., էջ 654:

[3] Պատմութիւն Սեբէոսի, աշխ. Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 67-68:

որի պատճառով պարսկամետ սյունեցիները, չհանդուրժելով Մամիկոնյանների քաղաքական դիրքորոշումը, հակված են դրացի Պարսկաստանի կողմը, որպեսզի միանան Ատրպատականին և «ազատագրվեն Մամիկոնյանների ազդեցությունից»[4]: Սակայն Սյունիքի և Արցախի անջատվելը Հայաստանից սոսկ երկու տների հակամարտության հետևանք չէր: Այն ուներ ավելի լայն հետնախորք և շոշափում էր այդ նահանգների հոգևոր և եկեղեցական շահերը և առաջին հերթին արդյունք էր Սասանյանների ու նրանց արբանյակների ներդրած ջանքերի, որոնք նպատակաուղղված էին Հայաստանի և Հայոց Եկեղեցու պառակտմանն ու թուլացմանը:

570-ական թթ. սկզբին սասանյան դուռն ամեն շանք ի գործ դրեց, որպեսզի Աղվանից Եկեղեցին նույնպես բաժանի Հայոց Եկեղեցուց: Այդ պայմաններում պավարտ հող ստեղծվեց Աղվանքում նեստորականների քարոզչության համար: Վերջինները, ինչպես հավաստում է Մովսես Կաղանկատվացին, Աղվանից աշխարհում նույնպես սերմանում էին «անիծյալ Նեստորի և Քաղկեդոնի ժողովի չար որոմը»[5]: Հայոց Կաթողիկոս Հովհաննես Գաբեղյանն անհրաժեշտ համարեց հատուկ թուղթ ուղարկել իր հոգևոր իրավասությանը ենթակա Աղվանից Եկեղեցու հայրերին՝ Աբաս Կաթողիկոսին և յոթ եպիսկոպոսների, զգուշացնելով Աղվանքում քարոզչական գործունեությունն ուժեղացրած նեստորականներից ու քաղկեդոնականներից:

Հայոց Հայրապետը նրանց կոչ էր անում հաստատ պահել Գրիգոր Լուսավորչից ավանդված հավատքը և արմատախիլ անել նեստորականների «մահաբեր վարդապետությունը»: Ընդսմին Հայոց Կաթողիկոսը, շեշտելով Հայ և Աղվանից Եկեղեցիների դավանական միության փաստը, հիշեցրեց Աղվանքի հոգևոր հայրերին, որ «հարքն ձեր հաւատակից էին հարանց մերոց, եւ դուք՝ մեզ»[6]: Հովհաննես Գաբեղյանը նկատի էր առնում այն հանգամանքը, որ բախտակից հարևանի հետ դավանական միության պահպանումը կայուն գրավական էր դառնալու Հայաստանի և Աղվանքի քաղաքական համադաշնության համար, ինչը հատկապես կարևորվում էր տվյալ պահին:

Հայաստանի և սասանյան դռան միջև լարված հարաբերությունները վերաճեցին հայերի զինված ընդդիմակայության, որն սկսվեց կրոնական հողի վրա: Սեբեոս պատմիչի վկայությամբ, հայերի ապստամբական շարժումն սկսվեց «ի ԽԱ (41) ամի թագաւորութեան Խոսրովայ»[7], այսինքն 571 թ.: Ասողիկը ապստամբութ-

---

[4] Տես Ն. Ակինեան, Թուղթ Մակարայ Ա Երուսաղեմի Հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց, Վիեննա, 1930, էջ 52-53: Հիշյալ թուղթն ուղղված է եղել ոչ թե Սյունյաց եպիսկոպոսին, այլ Հայոց Կաթողիկոս Վրթանեսին (333-341), Երուսաղեմի Մակար I Հայրապետի կողմից:

[5] Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխ. Վ. Առաքելյանի, Երևան, 1983, II, Է, էջ 122-123:

[6] Նույն տեղում, էջ 123, 125, Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 81-82:

[7] Սեբեոս, Ը, էջ 67:

յան սկիզբ է համարում Հուստինոս II կայսրի գահակալության յոթերորդ տարին[8], որը նույնպես ընկնում է 571 թ.: VIII դ. սկզբի քաղկեդոնական հայ հեղինակը (Դիեգեսիս) հայերի ապստամբության սկիզբ է համարում Խոսրով Անուշիրվանի գահակալության 40-րդ տարին[9]:

Հովհան Եփեսացու վկայությամբ, Հայոց Կաթողիկոս Հովհաննես Գաբեղյանը փորձեց մարզպանին ետ պահել Հայաստանում ատրուշաններ կառուցելու դիտավորությունից՝ ասելով, որ հայերը, իբրև քրիստոնյաներ, հավատի խնդրում չեն ենթարկվում արյաց արքային: Սակայն մարզպանը մնաց անդրդվելի: Այնժամ կաթողիկոսը ժողովրդին իրազեկեց մարզպանի դիտավորությունների մասին, որից հետո «Քրիստոսի հավատի նախանձախնդրությունից տարված, բոլորը՝ մոտ տասը հազար մարդ, մեկ մարդու նման, հավաքվեցին, զինվեցին ու ճակատամարտի պատրաստվեցին Քրիստոսի համար ապրելու կամ մեռնելու հաստատ որոշումով...»[10]:

Կաթողիկոսը և նրա մերձավորները մի վերջին փորձ ևս արեցին մոլեկրոն մարզպանի եկեղեցադավ ձեռնարկումները կասեցնելու հույսով՝ ասելով. «Մինչև որ մեզանից վերջինը չմահանա, ոչ մի հեթանոսական տաճար չի կառուցվելու մեր երկրում»: Սակայն «մարզպանն, ինչպես հրամայված էր իրեն, պատրաստվեց (ատրուշանի) կառուցման: Նա առարկում էր ու ասում մարդկանց. «Նայեք, դուք ապստամբվում եք արքայից արքայի հրամանի դեմ»[11]:

Ապստամբության համար ազդանշան ծառայեց Վարդան Մամիկոնյանի («Կարմիր Վարդանի») կողմից Հայաստանի պարսիկ մարզպանի սպանությունը: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, Վարդանն «սպանանի զմարզպանն Սուրէն ի Դվին քաղաքի, եւ ինքը հանդերձ այլօք նախարարօքն գնայ ի ծառայութիւն Յունաց»[12]: Նույնն է հավաստված նաև Դիեգեսիսում[13] և Վարդան Արևելցու մոտ[14]:

571 թ. հայերի հարուցած ապստամբությունը հանգեցրեց հայ-բյուզանդական ռազմա-քաղաքական դաշինքի, որի համար, իբրև պարտադիր պայման, բյուզանդական կողմն առաջ քաշեց հայ և բյուզանդական Եկեղեցիների դավանական միության խնդիրը: Հուստինոս II կայսրը և Հովհան Սքոլաստիկոս Պատրիարքը ջանացին օգտագործել հարմարադեպ պահը՝ հայերին քաղկեդոնականության գիրկը ձգելու համար: Մինչդեռ հայերը հետամուտ էին բոլորովին այլ նպատակների: Կայսրության հետ կնքվելիք դաշինքը նրանց կարծիքով հարկ է, որ դառնար սա-

---

[8] Ստեփաննոս Տարոնեցի (Ասողիկ), Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, II, Բ, էջ 84:

[9] G. Garitte, La Narratio de rebus Armeniae ("Corpus Scriptorum Orientalium", vol. 132 (t. 4). Louvain, 1952, p. 37).

[10] Ասորական աղբյուրներ, Ա, էջ 389:

[11] Նույն տեղում:

[12] Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 63-64:

[13] La Narratio de rebus Armeniae, p. 37.

[14] Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 61:

սանյան խավարակուռ տիրապետությունից և նրա հարուցած կրոնական հալածանքներից ձերբազերծվելու հաստատուն երաշխիք: Ստեփաննոս Տարոնեցին գրում է, որ Վարդան Մամիկոնյանը Կոստանդնուպոլսում հաղորդվում է Հուստինոս կայսեր հետ, որը Վարդանի պատվին Ս. Սոփիա տաճարի Ավագ դուռը կոչում է «Դուռն Հայոց»[15]: Դիեգեսիսի հավաստմամբ, «Վարդանին ու նրա հետևորդներին հրավիրեցին Սուրբ Սոփիայի մի դուռը, որը մինչև այժմ անվանվում է Հայոց դուռ»[16]:

Ապստամբության սկզբում Կոստանդնուպոլիս Վարդան Մամիկոնյանի փախըստյան մասին մատենագիրների հաղորդումները ճշգրտման կարիք ունեն: Ապստամբության դրոշ պարզած Վարդանը նման փութկոտությամբ Հայաստանից հեռանալով հարկ է, որ գլխատեր շարժումը: Իրադարձություններին ավելի ժամանակամերձ Սեբեոս պատմագիրը հաղորդում է, որ մարզպանին սպանելուց հետո Վարդանը մնացել է Հայաստանում և կազմակերպել ժողովրդական ընդվզումը Սասանյան պետության դեմ, պարտության է մատնել իր դեմ նետած պարսից զորքերին, իսկ կայսրության մայրաքաղաք է մեկնել ավելի ուշ[17]:

571 թ. Հայաստանում բռնկված ժողովրդական շարժման կրոնական ազդակները վճռորոշ նշանակություն ունեին և հետզհետե վերաճեցին քաղաքական հույսերի, որոնք խարսխվում էին հավատակից հզորագոր հարևանի զորակցության մերձանկարի վրա: Անշուշտ կողմերից յուրաքանչյուրն այդ դաշինքում ուներ իր նպատակները՝ թելադրված քաղաքական շահերով և դրանց հետ լծորդվող դավանական ուղեգծով: Ընդ որում վերջինս հույժ կարևոր կռվան էր ռազմա-քաղաքական դաշինքն ամրակայացնելու գործում: Երկու քրիստոնյա երկրների համադաշն ուղեգծին էականորեն խոչընդոտում էր նրանց միջև գցված դավանական անջրպետը, որը կյանքի էր կոչվել Բյուզանդիայի կայսերականացված Եկեղեցու հայրերի մեղքով: Հատկանշելի է, որ Կոստանդնուպոլսի Պատրիարք Հովհան Սքոլաստիկոսը հայերի ապստամբության տարում 571 թ. մարտի 22-ին նույնիսկ փակել տվեց մայրաքաղաքի բոլոր միաբնակ եկեղեցիները[18]:

Հայոց Կաթողիկոս Հովհաննես Գաբեղյանը նույնպես ապստամբության հաղթանակն ապահովելու հնարավոր հեռանկարը լծորդում էր կայսրության զինական օժանդակության հետ և որոշակի ջանքեր ներդրեց այն իրականացնելու համար: Նա գործուն քայլերի դիմեց Հայ և Բյուզանդական Եկեղեցիների միջև դավանական տարաձայնությունները հարթելու և կայսրության ու ապստամբ հայ նախարարների միջև ռազմա-քաղաքական դաշինք կռելու համար: Սկզբնաղբյուրների ընձեռած տեղեկություններից երևում է, որ Հուստինոս II կայսրը առաջին հերթին բանակցություններ է վարել Վարդան Մամիկոնյանի և նրան ընկերակցող հայ նա-

---

15 Ստեփաննոս Տարոնեցի, II, Բ, էջ 85:

16 La Narratio de rebus Armeniae. p. 37.

17 Սեբեոս, էջ 68:

18 Աստրական աղբյուրներ, Ա, էջ 344:

խարարների հետ՝ նրանց առաջադրելով դավանական միությունը իբրև դաշինքի կանխապայման:

Կայսրը գիտեր, որ Հայոց Եկեղեցու հայրերը դյուրությամբ չեն համաձայնվի դավանական միությանը: Ուստի Վարդանին և նախարարներին հասկացրեց, որ զորակցելու է նրանց՝ ընդդեմ Պարսկաստանի[19], ինչին բնականաբար չպետք է առարկեին ապստամբության դրոշ պարզած հայ նախարարները: Կայսրն առաջ քաշեց նաև դավանական միության խնդիրը: Սակայն ինչպես վկայված է Դիեգեսիսում, Վարդան Մամիկոնյանը և նրա հետ Բյուզանդիա մեկնած հայ նախարարները հրաժարվել են հույների հետ հաղորդվելուց այն պատճառաբանությամբ, որ Հայոց վարդապետները նման հրահանգ չէին տվել իրենց: Ուստի կայսրը Վարդանին հորդորում է հրավիրել հայ եպիսկոպոսներին ու վարդապետներին և քննել դավանական միության խնդիրը[20]: Այս վկայությունների լույսի տակ պարզ է դառնում, որ Վարդանը կայսեր մոտ է մեկնել միայն ռազմա-քաղաքական դաշինք կնքելու մտադրությամբ՝ առանց դավանական միությունը նկատի առնելու: Բայց կայսրը նրան հարկադրել է քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ:

Ելնելով Հայաստանում իր իսկ կողմից հարուցված ապստամբության շահերից, Վարդանը կայսրության մայրաքաղաք հրավիրեց Կաթողիկոս Հովհաննես Գաբեղյանին և բարձրաստիճան ուրիշ եկեղեցականների, որոնց մասնակցությամբ կայսրը ժողով գումարեց՝ հայ-բյուզանդական դաշինքի և դավանական միության խնդիրները քննարկելու համար[21]: Ժողովում Հովհաննես Գաբեղյանը թերևս նախարարների հորդորով հարկադրված էր, հանուն հայ-բյուզանդական զինադաշինքի, ընդունել կայսրի ու Պատրիարքի կողմից առաջադրված դավանական միության պահանջը և հաղորդվել Պատրիարքի հետ՝ «առանց ստուգելու ու անհանգստանալու Քաղկեդոնի ժողովի կապակցությամբ»,- գրում է ասորի մատենագիրը[22]:

Ժողովին մասնակցած հայ հոգևորականների ու նախարարների մի մասը հայրենիք վերադառնալուց հետո հրաժարվեց դավանական միությունից: Սակայն Աղվանից Աբաս Կաթողիկոսը և Սյունյաց Վրթանես եպիսկոպոսը հետևեցին Հայոց Կաթողիկոսի ուղեգծին և, ըստ երևույթին, ընդունեցին դավանական միության առաջարկը[23]: Հովհաննես Կաթողիկոսը միությունը համարում էր Հայաստանին Բյուզանդիայի կողմից զորակցություն ցուցաբերելու երաշխիք: Նա հույս էր ակնկալում, որ այդ դաշինքով հնարավոր կդառնա հավատակից Բյուզանդիայի զորությունը հակադրել զրադաշտական Պարսկաստանին և այդպիսով վերջինիս հարկադրել փոխելու իր քաղաքականությունը Հայաստանի ու Հայոց Եկեղեցու նկատմամբ:

---

[19] Նույն տեղում, էջ 391:

[20] La Narratio de rebus Armeniae, p. 37.

[21] Նույն տեղում:

[22] Ասորական աղբյուրներ. Ա. էջ 391-392:

[23] La Narratio de rebus Armeniae, p. 37-38.

Հայոց դյուրաբեկ Հայրապետն ստիպված եղավ հայրենավանդ դավանական հավատամքը դնել երկրի ռազմա-քաղաքական շահերի զոհասեղանին՝ անտես առնելով եկեղեցական, հոգևոր ավանդույթն ու շահախնդրությունները: Ստեղծված իրավիճակում նա համոզված էր, որ միայն այդ գնով է հնարավոր ձեռք բերել հզոր Բյուզանդիայի զորակցությունը: Փաստորեն ռազմա-քաղաքական դաշինքում վճռորոշ էր դառնում դավանական միության խնդիրը և կաթողիկոսի դիրքորոշումը: Անշուշտ, տվյալ պահին միությունը հույժ կարևոր նշանակություն էր ձեռք բերում ապստամբությամբ ալեկոծված Հայաստանի և նրա Եկեղեցու հետագա ճակատագրի համար: Սակայն միության այդ փորձը բնավ չներգործեց հայ ժողովրդի դավանական ինքնորոշման վրա, քանի որ այն հող չգտավ Հայաստանում, իսկ շատ չանցած՝ մերժվեց Հայոց Եկեղեցու կողմից:

Քաղկեդոնական հեղինակները փորձում են այլ լույսի տակ ներկայացնել Շիրակավանի ժողովի արդյունքները: Փոտ Պատրիարքը, անշուշտ հենվելով նաև Դիեգեսիսի վկայությունների վրա, հայոց Զաքարիա կաթողիկոսին հղած թղթում գրում է, որ Կոստանդնուպոլսի այդ ժողովում հայերը գրավոր կերպով ընդունել են Քաղկեդոնի ժողովի որոշումները[24]: Նույնի հետևողությամբ IX դ. Վրաց մատենագիր Արսեն Սափարացին գրում է, որ Շիրակավանի ժողովից հետո բովանդակ Հայաստանն ընդունել է քաղկեդոնական դավանությունը[25]:

Իրապես, ինչպես տեսանք, Կոստանդնուպոլսի այդ ժողովում առաջադրված դավանական միությունը հայերի համար ուներ զուտ քաղաքական շարժառիթներ: Այդ հանգամանքը լավ էին ըմբռնում նաև կայսրն ու Պատրիարքը, որոնք ժողովին մասնակցող հայ նախարարներին ու եկեղեցականներին փաստորեն կանգնեցրին ճակատագրական երկընտրանքի առջև: Հույների հետ հաղորդվելուց հրաժարվելն ինքնին թշնամանք էր հարուցում Բյուզանդիայի դեմ, որի հետ զինակցություն ձեռք բերելու հույսով էին հայերը ժամանել այնտեղ:

Տվյալ պահին դավանական միությունից հրաժարվելը կնշանակեր կուլ գնալ սասանյան բռնապետությանը և ապստամբ Հայաստանն ու Հայոց Եկեղեցին ձգել արհավրալից փորձությունների գիրկը: Անշուշտ, կայսրը ևս ուներ իր քաղաքական հաշիվները: Նա կամենում էր հայ-բյուզանդական դավանական միությամբ[26] Արևելքի քրիստոնյաներին գցել իր ազդեցության տակ և նրանց հակադրել Պարսից պետությանը: Այդ նպատակադրման հետնախորքի վրա ակնհայտ է դառնում «ամ-

[24] Տե՛ս Православный Палестинский сборник, т. XI, вып. I, С. Петербург, 1892, с. 182.

[25] Տես Լ. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, Երևան, 1934, էջ 41-42:

[26] Այս մասին ուշագրավ վկայություններ են պարունակում ասորի և բյուզանդական մատենագիրների երկերը (տե՛ս Հովհան Եփեսացի, Եկեղեցական պատմություն (Ասորական աղբյուրներ, Ա, էջ 430-431): Տե՛ս նաև Մենանդրոսի մոտ ("Византийские историки", пер. С. Дестунис, С. Петербург, 1860, с. 404).

բողջ հայկական հողերի ազատագրման համար» հայ ապստամբներին զինական աջակցություն ցույց տալու կայսեր խոստումը[27]:

Կայսրությանը հայերի ուղղած օգնակոչը դարձավ բովանդակ Հայաստանին տիրանալու համար Բյուզանդիայի ձեռնարկած ռազմարշավների սկզբնառիթը: Այն թերևս նպաստեց նաև հայերի ու վրացիների ապստամբական ուժերի միաբանությանը: Վրացիները հետևեցին հայերին՝ ապստամբության դրոշ պարզելով Սասանյան պետության դեմ[28]: Անշուշտ, հայ-վրացական դաշինքին էականորեն նպաստեց երկու երկրների Եկեղեցիների դավանակցությունը:

Հայ-բյուզանդական դաշինքով զորացած հայերի դեմ պարսից զորքերը ծավալուն հարձակումներ ձեռնարկեցին: Հայոց ապստամբությունը ճնշելու նպատակով պարսիկ զորապետ Գողոն Միհրանը (Վահրամ Չուբինը) ստվարաթիվ զորքով, բազմաթիվ մարտական փղերով, հոների և ուրիշ ցեղերի զորակցությամբ ներխուժեց Հայաստան՝ արյաց արքայից հրաման ունենալով ավերել Հայոց աշխարհը, սրածել նրա բնակիչներին: Սեբեոսը հաղորդում է, որ Սյունյաց իշխանը դաշնակցում էր պարսիկներին՝ պատերազմելով հայ ապստամբների դեմ[29]: Դա, անշուշտ, պարտադրված դաշինք էր:

Վահրամ Չուբինը, պարտություն կրելով վրաց ապստամբներից, վերադարձավ Հայաստան[30], հավանաբար Սյունիք, քանի որ վերջինս, ինչպես տեսանք, 571 թ. միացվել էր Ատրպատականին, ինչը նույնպես պատճառ կարող էր դառնալ պարսիկների հետ Սյունյաց իշխանի դաշինքին: Հարկադրական այդ դաշինքը սակայն չփոխեց Սյունիքի դավանական կողմնորոշումը: Նրա Եկեղեցին պահպանեց միաբնյա հավատքը: Հետագայում Հայոց Կաթողիկոս Աբրահամ Աղբաթանեցու ընտրությանը (607 թ.) մասնակցեց նաև Սյունյաց Քրիստափոր եպիսկոպոսը, որը Հայաստանի մյուս հոգևորականների հետ նզովեց նեստորականությունը և «ժողովն Քաղկեդոնի, եւ զպիղծ տումարն Լեւոնի»[31]:

576 թ. բյուզանդական բանակները գրավեցին գրեթե ամբողջ Հայաստանը[32]: Թեև հայերը, հավատարիմ մնալով կայսրության հետ կնքված դաշինքին, լայնորեն զորակցում էին նրան, այդուհանդերձ բյուզանդական զորայինները դաժան վերաբերմունք էին ցուցաբերում հայ բնակչության նկատմամբ[33]: Դա, անշուշտ, ուներ իր հրդապատճառները: Հայ ժողովուրդը դեմ էր հայ-բյուզանդական դավանական միությանը, որը մերժեց նաև հայ հոգևորականության ցերակշիռ մասը: Երբ վերջինս տեղեկացավ հույների հետ Հայոց Կաթողիկոսի և նրան ձայնակցողների հա-

[27] Աստրական աղբյուրներ. Ա, էջ 391:

[28] Տես Մենանդրոսի մոտ ("Византийские историки", с. 426).

[29] Սեբեոս, Թ, էջ 70:

[30] Նույն տեղում:

[31] Գիրք թղթոց, էջ 151-152:

[32] Սեբեոս, Ը, էջ 68, Աստրական աղբյուրներ. Ա, էջ 425-430:

[33] Նույն տեղում, էջ 430, Ստեփաննոս Տարոնեցի, II, Թ, էջ 85:

դորդության մասին, խիստ հանդիմանեց նրանց[34]: Ավելին, ըստ Միքայել Ասորու, հայ եկեղեցականները տեղեկանալով Հայոց Կաթողիկոսի ու նրա հետևորդների դիրքորոշման մասին, սպառնացին, որ եթե նրանք ընդունեն քաղկեդոնյան դավանանքը, ապա ենթակա են վտարման Հայոց Եկեղեցուց[35]:

Դավանական միության ձախողումը խիստ բացասաբար ազդեց նաև հույն զորականների վարքագծի վրա: Ստեղծված պայմաններում բյուզանդական զորքի շահած հաղթանակները չէին հանգչում ամուր հիմքերի վրա: Ի վերջո հայ-բյուզանդական դաշինքը, զրկվելով հոգևոր և քաղաքական խթաններից, քակտվեց: Տարադեմ Հովհաննես Գաբեղյան Կաթողիկոսն ընկավ գրեթե անել կացության մեջ և մերժյալ փաստորեն հայտնվեց կայսրության մայրաքաղաքում պահվող պատանդի վիճակում: Թեև նա կողմ էր երկու Եկեղեցիների դավանական միությանը, սակայն այն փաստը, որ այդ միությունը մերժվեց հայերի կողմից, հավանաբար վերջիններիս վրա ներգործելու համար կայսեր հրամանով տարաբախտ Հայրապետն առմիշտ պահվեց Կոստանդնուպոլսում և իր մահկանացուն կնքեց այնտեղ:

Հայաստանի հոգևոր դասի կողմից դավանական միության մերժումն ուներ նաև նյութական հիմք և շոշափում էր հայ եկեղեցականների աշխարհային շահերը: Ինչպես հայտնի է, Բյուզանդիայի կայսերականացված Եկեղեցին երբեք ապահարկ չի եղել: Հարկատվությունից չէին խուսափում գյուղերի քահանաները, վանականները և եկեղեցական մյուս պաշտոնյաները: Մինչդեռ Հայոց Եկեղեցին պարսից տիրապետության տակ պահպանեց ապահարկության իրավունքը:

Բյուզանդական Եկեղեցու հետ դավանական միությունն անխուսափելիորեն հանգեցնելու էր Հայոց Եկեղեցու կախվածությանը, որի հնարավոր հետևանքներից մեկը հարկ է, որ լիներ Հայոց Եկեղեցու սպասավորների հարկային արտոնյալ կարգավիճակի վերացումը: Ուստի պետք է նկատի առնել նաև այս հանգամանքը՝ հայ-բյուզանդական դավանական միության խնդիրներն արծարծելիս: Հայ հոգևոր դասի նյութական շահագրգռությունները ևս նպաստող ազդակ էին Բյուզանդական Եկեղեցուց սահմանազատվելու պարագայում:

571 թ. ուժ ստացած հայ-բյուզանդական դավանական միությունը իրերի բնական ընթացքով կարճակյաց եղավ՝ քաղաքական վայրիվերումների և, իհարկե, Բյուզանդիայի կայսեր ու նրան հնազանդ դավանամոլ կղերի անզիջում դիրքավորման պատճառով: Հայ և բյուզանդական Եկեղեցիների միջև դավանական ներհակությունը շարունակվեց բյուզանդա-պարսկական պատերազմի (572-591) գրեթե ողջ ընթացքում, երբ կողմերը «քսան տարի վիճում էին հավատքի շուրջը»[36]: Չնայած դրան, պատերազմի առաջին շրջանում հայերը զինակցում էին բյուզանդական զորքին ընդդեմ պարսիկների: Միքայել Ասորին գրում է, որ հայերի և պարսիկների

[34] Ասորական աղբյուրներ, Ա, էջ 430. Ստեփաննոս Տարոնեցի, II, Բ, էջ 85:

[35] Michel le Syrien, Chronique, II, ed. J. Chabot, Paris, 1901, p. 305.

[36] La Narratio de rebus Armeniae, p. 38-39.

միջև մղվող պատերազմը շարունակվեց վեց տարի, այսինքն մինչև 577 թ.[37], երբ պարսկական զորքերին հաջողվեց վերագրավել Հայաստանը[38], որտեղ հասկանալի պատճառներով ստեղծվեց քաղաքական նոր կացություն: Այդ պայմաններում հայերը վերակողմնորոշվեցին դեպի Սասանյանները, որով առժամապես փոխվեց վերջիններիս վերաբերմունքը հայերի հանդեպ, և մարեց նրանց միջև եղած նախկին հակամարտությունը:

Հայաստանի համար աղետալի հետևանքներ ունեցան բյուզանդա-պարսկական զինաբախումները: Հայ ժողովրդի կրած անլուր զրկանքների, տառապանքների ու զոհերի պատճառով ժամանակի ամենալուսավոր հոգևորական Վրթանես Քերթողի կողմից բյուզանդացի Սոփոնես զորապետին հղված պատասխան թղթում շեշտվում էր այդ պատերազմների ընթացքում հայերի կրած տառապանքների, թափառական վիճակի, նրանց տված մեծաթիվ զոհերի մասին:

Թղթի հեղինակը, թերևս դիվանագիտական նկատառումներով, պատերազմի պատճառ է համարում «Նեռին հյուրընկալողն ու առաջնորդողը ... որը մի ազգի ապստամբության պատճառ դարձավ»[39]: Բայց հեղինակը չի նշում, թե «Նեռին առաջնորդողի» տակ ում նկատի ունի: Ենթադրվում է, որ Վրթանեսն ակնարկում է ապստամբության առաջնորդ Վարդան Մամիկոնյանին:[40] Վրթանես Քերթողը նշված թղթում շոշափում է դավանաբանական խնդիրներ՝ պաշտպանելով Հայ Առաքելական Եկեղեցին քաղկեդոնականությունից: Այդպիսի մղումով նա հարկ է, որ դատապարտեր հայ-բյուզանդական դավանական միությանը համաձայնություն տված Հովհաննես Կաթողիկոս Գաբեղյանին, որը, ինչպես նշել ենք, վճռորոշ դեր խաղաց դաշինքի կայացման գործում:

Հայոց 571-572 թթ. ապստամբությունը թեև չընդգրկեց ժողովրդի լայն խավերին, սակայն ցույց տվեց օտար բռնատիրության դեմ պայքարելու հայերի վճռականությունը և սասանյան արքունիքին հարկադրեց փոխել իր վերաբերմունքը Հայաստանի և Հայոց Եկեղեցու նկատմամբ: Այդ պայքարում կրոնական գործոնը հարկավ ունեցավ վճռական նշանակություն՝ ձեռք բերելով բացորոշ քաղաքական երանգավորում:

---

[37] Michel le Syrien, Chronique, II, p. 304.

[38] Ասորական աղբյուրներ, Ա, էջ 431:

[39] Գիրք թղթոց, էջ 93:

[40] Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 407:

*ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ*
***Պատմական գիտությունների թեկնածու***

# ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ Ա ՀԱՄԱԴԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ (ԿԹՂ. 1715-1725 ԹԹ.) ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

1605 թվականից ի վեր Արարատյան աշխարհ ոտք չկոխած օսմանյան բանակը դարձյալ այստեղ հայտնվեց մեկ էլ 1724 թ. հունիսին[1]: Երեքամսյա պաշարումից հետո, սեպտեմբերի 23-ին (հին տոմարով), թուրքերը գրավեցին Երևանի բերդը[2]: Ավելի շուտ, 1724 թ. հունիսի 12-ին, Կ. Պոլսում կնքվեց ռուս-թուրքական պայմանագիրը, որի համաձայն, բացառությամբ Դերբենդից Մազանդարան ձգվող մերձկասպյան շրջանների, որոնք 1722-1723 թթ. արդեն հիմնականում գրավված էին ռուսների կողմից, ամբողջ իրանական Այսրկովկասը ճանաչվեց Օսմանյան կայսրության տարածք[3]: Այդպիսով, ամրագրվեց օսմանյան վարչությունն ամբողջ Արարատյան երկրի, այդ թվում նաև՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վրա՝ անհայտ և անորոշ ժամանակով:

Այս շրջադարձային փոփոխությունը բոլորովին նոր ու չափազանց բարդ խնդիրներ էր դնում Մայր Աթոռի առջև: Եթե մինչ այդ, սկսած 1461 թվականից, Օսմանյան կայսրության մեջ ապրող հայությունը, իբրև առանձին «միլլեթ», պետության առջև ներկայացված էր Կ. Պոլսի հայոց պատրիարքով ու պատրիարքությամբ, ապա այժմ Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական կառույցում գերագույն մարմին հանդիսացող Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, բնականաբար, ձգտելու էր ինքը տիրանալ այդ մենաշնորհին: Այս հավակնությունն աստիճանաբար ամրանալու էր, որովհետև Էջմիածնի կաթողիկոսն ու միաբանները, տեսնելով Իրանի շարունակվող ճգնաժամն ու քայքայումը՝ նրա մեծ մասի հայտնվելը աֆղանական, օսմանյան և ռուսական ռազմակալման տակ, առաջիկա տարիների ու տասնամյակների համար, Օսմանյան վարչությանն այլընտրանք չէին կարող պատկերացնել: Հետևաբար, Մայր Աթոռն իր և Հայոց Եկեղեցու շահերի տեսակետից անհիմաստ ու վտանգավոր էր դիտելու Օսմանյան կայսրության տարածքում Էջմիածնի գերակայության զիջումը Պոլսի պատրիարքությանը: Սակայն, ինչպես կտեսնենք, 1724-1735 թթ. այդ խնդիրը որևէ վերջնական լուծում չստացավ ու մնաց առկախ վի-

---

[1] Տե՛ս Ա. Մ. Այվազյան. Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին. Պատմա-բանասիրական հանդես, 1991, հմր. 1, էջ 95:

[2] Նույն տեղում, էջ 98-100:

[3] Պայմանագիրն ամբողջությամբ տե՛ս Полное собрание законов Российской империи. Москва, 1839, Т. VII, документ No. 4531.

ճակում, որովհետև Հայ Եկեղեցու կառավարումը Ս. Էջմիածնից մեծապես դժվարացել էր ստորև քննվող մի շարք հանգամանքների բերումով:

Պարսկական ճակատների վրա շարունակվող պատերազմը քաղաքական-տնտեսական ընդհանուր անապահով իրադրություն էր ստեղծել ողջ Այսրկովկասում, որոշ չափով էլ՝ Թուրքիայի արևմտյան շրջաններում[4]: Արարատյան երկրի հայությունը, որ Մայր Աթոռի հիմնական հենարանն էր, մարդկային ահավոր կորուստներ էր կրել. մինչև 1725 թ. Պարսկաստանում եղած լեհ ճիզվիտ Թ. Կրուշինսկուի տեղեկությունների համաձայն, միայն Երևանի գրավման ժամանակ սպանվել էր 30.000 հայ, բացի այդ՝ տասնյակ հազարավոր հայեր քշվել էին գերության[5]: Փլուզվել էին Էջմիածնի տնտեսական կարողությունները, խզվել էին կապերը արևելահայության ֆինանսական մայրաքաղաք Նոր Ջուղայի և առհասարակ Պարսկաստանի, ինչպես և՝ Գանձասարի, Տաթևի, Գանձակի, Շամախիի, այլ կարևոր կենտրոնների ու թեմերի հետ:

• • •

Աստվածատուր Կաթողիկոսի անունը ցայսօր հանիրավի չի ներառվել 1720-ական թթ. հայ ազատագրական շարժման գործիչների շարքում, մինչդեռ այդ ասպարեզում կան նրա գործունեությունը լուսաբանող պերճախոս տեղեկություններ:

Կաթողիկոսական օծումից (1715 թ. մայիսի 7)[6] շուրջ մեկ տարի անց Աստվածատուր Կաթողիկոսը հանդիպում է հայ զինված ապստամբությունը վաղուց ի վեր գաղտնաբար նախապատրաստող գործիչներից մեկին՝ Մինաս վարդապետ Տիգրանյանին: Այս երկուսի միջև Ս. Էջմիածնում 1716 թ. հուլիսի 15-ից մինչև 23-ը տևած բանակցությունները[7] բացահայտում են Աստվածատուր Կաթողիկոսի շրջահայաց ու զգուշավոր, բայց միաժամանակ բացարձակ նվիրվածությունը Հայաստանը զենքով ազատագրելու գաղափարին: 1717 թ. մարտի 14-ին Մինաս վարդապետը ռուսական կառավարությանը տված իր բանավոր զեկույցում հայտնում էր,

---

[4] Տե՛ս Դավիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց»: Աշխատասիրեց Սամուէլ վրդ. Արամեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1978, էջ 96-97 (փաստաթուղթ 12), էջ 98 (փ. 16, 17), էջ 99 (փ. 19), էջ 101 (փ. 27), էջ 106 (փ. 37): Օսմանյան զորքը գերեվարել էր ոչ միայն պարսկահպատակ, այլև, որ կարող է տարօրինակ թվալ, օսմանահպատակ բազմաքանակ հայերի. տե՛ս Մ. Վ. Չամչեանց. Պատմութիւն Հայոց, Հ. Գ, Վենետիկ, 1786 (այսուհետև՝ ՉԱՄ, Գ), էջ 783:

[5] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Մ. Այվազյան, Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ., Պատմա-բանասիրական հանդես, 1991, հմր. 2 (133), էջ 113; Armen M. Ayvazian, The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal. (Center for Policy Analysis, American University of Armenia, Yerevan, Armenia, 1997), pp. 36-39.

[6] ՉԱՄ, Գ, էջ 768. Մ. արքեպս. Օրմանեան. Ազգապատում, հ. Ա-Բ, Կ. Պոլիս, 1912-1914 (այսուհետև՝ ԱԶԳ), սյուն. 1918:

[7] Армяно-русские отношения в 1-ой трети XVIII века. Сборник документов. Т. II, часть I. Под редакцией Аш. Иоаннисяна, Ереван, 1964 (այսուհետև՝ АРО, I), док. 148, 154, с. 358, 367.

որ, լսելով իրենից ազատագրական ծրագրերի և ռուսներից սպասվող օգնության մասին, կաթողիկոսը «շատ ուրախացավ և բանավոր նրան պատասխանեց, որ այն գործը, որի մասին վարդապետն իրեն տեղեկացրեց, շատ բարի է, և նա ցանկանում է այդ գործում ծառայել և օժանդակել Նորին Ցարական Մեծությանը (իմա՝ Պետրոս Ա-ին, Ա.Ա.), միայն թե նա մեծ մտավախություն ունի շահից, քանզի դա մեծ զորք է. այնպես չստացվի, որ իրենք բոլորը (իմա՝ ամբողջ հայությունը, Ա.Ա.) ավերածության ենթարկվեն: Սակայն, եթե Նորին Ցարական Մեծությունը ցանկանա Պարսկաստանի դեմ պատերազմով դիմել և իր զորքերն այդ երկիր ուղարկել, ապա թող նույն վարդապետի (իմա՝ Մինաս Տիգրանյանի, Ա.Ա.) կամ այլ հավատարիմների միջոցով նախապես իրեն լուր տա, թե ինչ է նրանից ակնկալում, իսկ ինքն՝ իր բոլոր հավատարիմների հետ, պատեհ միջոցը գտնելով, այդ գործում հավատարմություն և կարեցած չափով օգնություն ցույց կտա»[8]:

Այդ պատասխանը գրավոր ներկայացնելու Մինաս վարդապետի խնդրանքին Աստվածատուր Կաթողիկոսը խոհեմաբար առարկում է՝ ասելով. «Գրավոր այս բանը շարադրելը և (ռուսաց ցարին) հավատարմություն հայտնելն անհնար է, քանզի այս գործը պետք է հույժ գաղտնի պահել՝ պարսիկներից և որոշ հայերից: Փոխարենը՝ կտա վարդապետին քողարկված իմաստով մի նամակ, ուր կասվի, թե նա եղել է պատրիարքի մոտ և զեկուցել նրան ամեն տեսակ գործերից, որոնք ընդունվել են սիրով և հաճությամբ»[9]:

Զեկույցի վերջում Մինաս վարդապետը եզրակացնում էր, որ Գանձասարի Եսայի Կաթողիկոսը լրիվ պատրաստ է դիմելու զինված ազատագրական պատերազմի և ռուսների օգնությանն ապավինելու, իսկ Ս. Էջմիածնի կաթողիկոսը «թեև բանավոր հայտնում էր իր հակվածության մասին, սակայն այդ գործում Եսայու պես վստահելի չէ, քանզի շատ է երկնչում շահից»[10]:

Հետագա իրադարձությունները ցույց են տալիս սակայն, որ Աստվածատուր Կաթողիկոսի նկատմամբ Մինաս վարդապետի արտահայտած մտահոգությունը չափազանցված էր: Ամենայն հավանականությամբ, Մինաս վարդապետը ռուսներին դիտավորյալ էր հետ պահում Աստվածատուր Կաթողիկոսի հետ աշխույժ կապեր հաստատելու մտքից՝ նպատակ և առաջադրանք ունենալով առավելագույնս ապահովագրել Ս. Էջմիածնի անվտանգությունը:

Ազատագրական պատերազմի այս նախապատրաստությունների շղթայում պետք է դիտել Եսայի Հասան-Ջալալյանի երկու այցը Ս. Էջմիածին՝ 1719 և 1721 թթ., որոնց արդյունքում Աստվածատուր Կաթողիկոսը արձակում է չորս կարևոր կոնդակ: Այս կոնդակները տնտեսապես ու վարչականորեն զորացնում էին Գանձասարի Աթոռը՝ շնորհելով նրան պատմականորեն Ս. Էջմիածնին ենթակա մի

---

[8] АРО, I, док. 154, с. 368.

[9] Նույն տեղում. կաթողիկոսի գրած նամակը տե՛ս АРО, I, док. 148, с. 358-359.

[10] АРО, I, док. 154, с. 370.

շարք շրջաններ՝ Շամախին, Շիրվանը, Շաքին, Ղաբալան[11]: Աստվածատուր Կաթողիկոսի կոնդակներից մեկը պարզապես արտառոց էր. այն ուղղված էր Գանձասարին երբևէ որևէ տուրք չտված շրջանների հայությանը՝ «ի վերայ Նախիջեւանու, Գողթնեաց, Ղափանու եւ Թիֆլիզու..., զի զկամաւոր ողորմութիւնս տալով օգնեսցեն պարտուց նորին»[12]:

Ավելին, Աստվածատուր Կաթողիկոսը Եսայու նկատմամբ բարյացակամ հանրային տրամադրություն ստեղծելու ջանք է թափում առ այդ շեշտելով նաև իր և Եսայու մտերմությունը և հորդորելով ժողովրդին. «զի ընկալցին զԵսայի Կաթուղիկոսն եւ զնուիրականան արդիւնսն ի նա յանձնեսցին՝ որպէս նուիրակի ի Սրբո[յ] Էջմիածնէ գնացելոյ... Թէպէտ մեր էիք բնական՝ եւ մեր էք, սակայն մեք մերով կամաւ եւ յօժարութեամբ դմա շնորհեցաք ի սէր դորին եւ վասն աղքատութեան Գանձասարու Աթոռոյն: Այսուհետեւ պարտիք հնազանդիլ եւ ընդունիլ զԵսայի Կաթուղիկոսդ ձեր, որում ներհակքն՝ մեզ են ներհակք»[13]:

Կարծում ենք, Եսային բազմիցս օգտագործած պիտի լիներ այս կոնդակի ավելի քան մեկ մեկնաբանության տեղիք տվող այն բանաձևումը, որ Եսայու թշնամիներին դասում էր Աստվածատուր Կաթողիկոսի թշնամիների շարքը՝ «որում ներհակքն՝ մեզ են ներհակք»: Այս բանաձևումը կարելի էր ի ցույց դնել որպես ազատագրական պատերազմի գաղափարին Ս. Էջմիածնի լիակատար համերաշխության մի այլաբանական վկայություն, որը շատերի (հատկապես՝ տատանվողների) համար Հայաստանի ազատագրության վտանգավոր ձեռնարկին միանալու մի լրացուցիչ փաստարկ ու դրդիչ պիտի ծառայեր:

Այս կոնդակները միտված էին զգալիորեն ամրապնդելու առաջիկայում սպասվող ազատագրական պատերազմի մեջ առաջամարտիկի դեր ստանձնելու ընդունակ (և այդ առաքելությանը եռանդուռորեն նախապատրաստվող) արցախահայության դիրքերը և բարձրացնելու Արցախի հոգևոր-քաղաքական կենտրոն Գանձասարի հեղինակությունը: Հիշենք, օրինակ, որ տեղական հայոց զինուժը գաղտնաբար վերակազմելու, արդիական զենքով սպառազինելու և գլխավորելու նպատակով՝ մոտավորապես նույն ժամանակ, 1718-1720 թթ. միջև, Շիրվանից Արցախ էր հրավիրվել ու բուռն գործունեություն ծավալել հայ պրոֆեսիոնալ զորահրամանատարների մի խումբ՝ Ավան-յուզբաշու առաջնորդությամբ (ժամանակակիցները այս զինվորականներին անվանում էին «շիրվանցիներ», «Շիրվանայ տղէք»)[14]:

---

[11] Սիմէոն Երեւանցի. Ջամբռ. Վաղարշապատ, 1870, էջ 84: Օրմանյանը վրիպմամբ իբրև Եսայու երկրորդ այցելության տարի է նշել 1720-ը (ԱԶԳ, սյուն.1929): Սիմեոն Երևանցին այս այցելություններին տալիս է զուտ եկեղեցական-եկամտական իմաստ, այս տեսակետին հետևում է նաև նրանից օգտված Մ. Օրմանյանը: Եսայի Հասան-Ջալալյանի երկում այս այցելությունների մասին չի հիշատակված (տե՛ս Եսայի Հասան-Ջալալեան. Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի: Երուսաղէմ, 1868):

[12] Սիմէոն Երեւանցի. Ջամբռ, էջ 84:

[13] Նույն տեղում:

[14] Армяно-русские отношения в 1-ой трети XVIII века. Сборник документов. Т. II, часть II. Под редакцией Аш. Иоаннисяна, Ереван, 1967 (այսուհետև՝ АРО, II), док. 278, с. 187-188. Տե՛ս. Ա. Մ. Այվազյան, Իրադարձությունները Այսրկովկասում 1723 թ. և արցախահայերի առաջին օգնական ռազմեր-

Չի բացառվում, որ Արցախի ազատագրական պատերազմի միջնաբերդ դարձնելու ծրագրին Ս. Էջմիածինն սկսել էր աջակցել դեռևս մինչև Աստվածատուր Կաթողիկոսի գահ բարձրանալը՝ տակավին Նահապետ և Աղեքսանդր Կաթողիկոսների օրոք, որովհետև նրանք էլ Եսայուն աննախադեպ կարգի օժանդակություն են ցույց տվել. մասնավորապես Աղեքսանդր կաթողիկոսն առաջինն էր, որ փորձ արեց (թեկուզ ապարդյուն) Շամախու և Շիրվանի հայերին դնել Գանձասարի ուղղակի ենթակայության տակ[15]: Այս վարկածի ստուգումը, սակայն, առանձին ուսումնասիրության կարիք ունի:

Ըստ երևույթին, Աստվածատուր կաթողիկոսը հայության պաշտպանական կարողությունները ամրապնդելու նմանատիպ քայլեր էր ձեռնարկում նաև այլ շրջաններում: Այդպիսի գործունեության մասին կարող է հուշել 1724 թ. հունիսի 1-ին Սանահինի վիճակի ժողովրդին նրա ուղղած կոնդակը, որով հորդորվում է «առատ տրօք» օգնել վանքի առաջնորդ Հովհաննես վարդապետին նույն վանքի պարիսպը կառուցելու համար[16]: Կոնդակը գրվել է օսմանյան ռազմական մեծ արշավանքի նախօրեին, երբ Երևանը դեռևս գրավված չէր: Ամենայն հավանականությամբ, Սանահինի պարսպի կառուցումն ու այս կոնդակը որոշակիորեն կապված էին սպասվող պատերազմական գործողությունների հետ:

Եվ այսպես, 1722-1724 թթ., երբ ազատագրական պատերազմն արդեն իրականություն էր, որքան էլ Աստվածատուր կաթողիկոսն ու հայ գործիչները ձգտում էին գաղտնի պահել հայոց զինուժի հետ Ս. Էջմիածնի կապերը, դրանք այնքան ծավալուն էին, որ ի վերջո հայտնի դարձան և՛ պարսկական, և՛ օսմանյան հետախուզությանը: Գիլանենցի՝ խիստ հավաստի աղբյուր ճանաչված օրագրի[17] մեկ այլ տեղեկություն ուղղակի է խոսում այդ կապի մասին (տեղեկությունը վերաբերում է 1723 թ. ապրիլ-մայիս ամիսների միջոցին). «Մեր կաթուղիկոսն (իմա՝ Աստվածատուր Համադանցին՝ Ա.Ա.) հայոց ասկարին [=զինվորության] խետ մին այ, որ յամիշայ [=մշտապես] գաղտուկ մինն ըզմինու գիր ան եղէլ գրում: Մեր կաթուղիկոսին մին գիրն կբռնուի: Էս գիրն կբերեն կտան Ցարեւանայ նայիպին [=խանի փոխանորդին]:

---

քը Սյունիք.. Պատմա-բանասիրական հանդես, 1990, հմր. 4 (131), էջ 69-71: Արցախում կենտրոնացվող հայոց զինուժը զինելու և մարզելու նախապատրաստությունների մասին համառոտաբար տե՛ս Armen M. Aivazian, The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal, pp. 9-10, 15-17.

[15] Տե՛ս Սիմէոն Երեւանցի. Ջամբռ, էջ 81-83:

[16] Մաշտոցյան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 42: Աստվածատուր Կաթողիկոսի այս կոնդակը վրիպել է Հ. Անասյանի «Հայկական մատենագիտությունից», տե՛ս հ. Ա (Երևան, 1959), էջ 676-685:

[17] Գիլանենցի հաղորդումների արժանահավատությունը իրավամբ բարձր են գնահատել Ք. Պատկանյանը, Ա. Հովհաննիսյանը և Լ. Լոքհարտը, տե՛ս Петрос ди Саргис Гиланенц. Дневник осады Испагани афганами (1722-1723). Перевод и объяснения К. Патканова. Санкт-Петербург, 1870, с. XXIII. Հմմտ. Աշ. Հովհաննիսյան. Պետրոս դի Սարգիս Գիլանենց. Ս. Էջմիածին, 1916, էջ 12. տե՛ս նաև The Chronicle of Petros di Sarkis Gilanentz. Translated from the original Armenian and annotated by Caro Owen Minasian. With an Introduction and additional Notes by Laurence Lockhart. Lisbon, 1959, pp. X-XII:

էս նայիբն Կաթուղիկոսին կանչել էր տարել, թէ՝ «դու էլ աս մեզնէ դոնմիշ ելէլ [=ըմբոստացել ես մեր դեմ][18]. էս քո գիրն այ, որ հայոց ասկարին գրել աս»: [Կաթողիկոսն] ասացել այ, թէ «էտ գիրն ես չեմ գրել, էտ թշնամու շինած գիրայ»: Եւ [նայիբը] կաթուղիկոսին էլ շատ խաֆայաթ [=նեղություն] կտայ եւ ԴՌ (4000) ոսկի ջարիմա [=տուգանք] յինք կառ[ն]ու, քանի օր կպախի, յետոյ մարդ մէչ կընկանի, բաց կթողու»[19]:

Այս դեպքից մի քանի օր անց Երևանի նայիբը դարձյալ կանչում է Աստվածատուր Կաթողիկոսին և խնդրում, «թէ ձեր Հայոց ասկարն շատ թուրք ա ջարթում, որ ուզեն՝ գոն Ցարեւանայ վերայ. դու մին գիր գրէ ձեր ասկարին վերայ, որ էս երկիրն չը գոն եւ մեր մարդին դէկմիշ չնեն [=ձեռք չտան]»[20]:

Կաթողիկոսը դժկամորեն մի նամակ է գրում հայոց զորքերի հրամանատարությանը՝ նայիբին զգուշացնելով, որ հազիվ թե նրանք ենթարկվեն իր խոսքին: Սակայն նայիբը պնդում է՝ ասելով, թե «թամամ Խայէրոց գլխայորն դու աս, որ յամիշայ [=միշտ] քեզ կլսեն...պիտի որ գրես»[21]: Մեծ ճնշման ենթարկվելով, Աստվածատուր Կաթողիկոսը «մին մախիլայ գիր կը գրէ», այսինքն՝ մի կեղծ դիմում է գրում հայոց զորքերի հրամանատարությանը[22], որում առերեսորեն հորդորում է հայոց զորքին չշարժվել դէպի Արարատյան երկիր, սակայն՝ «գրին տակումն կը գրի, թէ «դուք ինչպէս խէրիաթ [=հարմար] կը տեսնէք, էնպէս արէք, ձեր գիտացածն ձեռաց տէք ոչ (=ձեր ծրագրերը մի մատնեք)»[23]:

Արդ, «գրին տակումն» անգլերեն և ռուսերեն թարգմանիչները հասկացել են իբրև «նամակի վերջում»[24]: Սակայն այս «գրին տակումն» պետք է հասկանալ իբրև նամակի բովանդակությունից դուրս՝ նույն թերթի կամ ծրարի ներքևի ինչ-որ հատվածում անպայման ծածկագրով գրի առնված տողեր, քանի որ կաթողիկոսը չէր կարող բացահայտ գրել այդ տողերը (Մայր Աթոռում ծածկագրերի գործածումը սովորական բան է եղել)[25]:

---

[18] Անգլերեն թարգմանված է այսպես՝ «Դո՞ւ էլ ես մեզ լքել կամ դո՞ւ էլ ես մեզնից երես թեքել» [You have also abandoned us!]. - The Chronicle of Petros di Sarkis Gilanentz, p. 49.

[19] Տե՛ս «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի». Գլուխ 104.- «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, հմր. Գ, էջ 196:

[20] Նույն տեղում, Գլուխ 105, էջ 197:

[21] Նույն տեղում:

[22] Ռուսերեն թարգմանության մեջ «մախիլա»-ն ճիշտ չէ՝ "написал письмо в общих выражениях" Петрос ди Саргис Гиланенц. Дневник осады Испагани афганами, с. 40. անգլերենում ճիշտ է՝ «a false letter» (The Chronicle of Petros di Sarkis Gilanentz, p. 49, note 3):

[23] «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի». «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, հմր. Գ, էջ 197: Անգլերեն թարգմանության միջից լրիվ դուրս են ընկել «ձեր գիտացածն ձեռաց տէք ոչ» բառերը (The Chronicle of Petros di Sarkis Gilanentz, p. 50), իսկ ռուսերեն թարգմանությունը ճիշտ է "не выдавайте ваших планов" (Петрос ди Саргис Гиланенц. Дневник осады Испагани афганами, с. 40):

[24] The Chronicle of Petros di Sarkis Gilanentz, p. 50; Петрос ди Саргис Гиланенц. Дневник осады Испагани афганами, с. 40.

[25] Մայր Աթոռում ծածկագիր նշանների գործածության մասին տե՛ս Դիւան հայոց պատմութեան: Աշխատասիրութեամբ՝ Գիւտ Աղանեանցի: Գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ 842-852. Գիրք ԺԱ, Թիֆլիս, 1913, էջ 463:

Հայկական զորքի հրամանատարությունը մի պատասխան գրությամբ հայտնում է, որ կաթողիկոսին հարցելով, նրանք չեն շարժվի դեպի Արարատյան երկիր, թեև նախապես այդպիսի մտադրություն ունեին, և պահանջում է Մայր Աթոռն ու հայությանը չնեղել. «Մենք ուզում ինք զինք ձեզ վերայ, չումքի մեր կաթուղիկոսն մեզ գրել էր՝ թէ «սոքա մեզ բարեկամ են, սոցա դէյմիշ չնէք եւ դէս չգէք», մեր կաթուղիկոսին խաթեր խամար էլ եկինք ոչ, յետ դարցանք: Զուն որ մենք էս մարդայորութիւնն արարինք, պիտի որ դուք էլ մեր կաթուղիկոսին եւ իր թամամ վանքէրին եւ միայբանոցն եւ տեղիտ Խայէրին ջաֆայ չառէք՝ լավ աղաթօվ պախէք»[26]:

Սակայն, որոշ ժամանակ անց Երևանի նայիբը հանդիմանում է Աստվածատուր կաթողիկոսին կեղծ նամակ գրելու համար, քանի որ հայկական զորքերը հաջողությամբ շարունակում են ընդլայնել և ամրացնել իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքները. «Նաիպն կաթուղիկոսին կկանչէ, թէ՝ «քոյ Խայէրն թուրք ջառթելն իվլայցուցել են, քո գրած գիրն մախիլայ էր գրած. մենք էլ քեզ հավատման չենք եւ էստոնք քեզ թողման չենք»[27]:

Այս իրադարձությունները Գիլանենցին հայտնել է դեպքի պահին Էջմիածնում գտնված Մկրտիչ վարդապետը, որը ճշտում է միայն, որ Աստվածատուր Կաթողիկոսի նամակը հասցեագրված էր «Հայոց ասկարի մեծայորին»: Ամենայն հավանականությամբ, նամակը ստացողն ու դրան պատասխանողը Արցախի հայոց զորքերի գլխավոր հրամանատար Ավան-յուզբաշին էր, և ո՛չ Դավիթ-բեկը, որի ուժերը քանակապես մոտ երկու անգամ զիջում էին (շուրջ 20000 զինվոր) Արցախի հայոց բանակին ու դեռևս Սյունիքի ներսում լուծելիք բարդ խնդիրներ ունեին[28]: Ի դեպ, 1723-1724 թթ. հայ զինվորության չորս խոշոր հատվածները (Արցախ, Սյունիք, Երևան, Նախիջևան) իսկապես նպատակ են ունեցել ստեղծելու միասնական ազատագրական ճակատ, որն Արցախի հայ հրամանատարությանը 1724 թ. սկզբին դեռևս հնարավոր էր թվում «Եւ էս Խայերին մէջտեղն Քուրդ [=մահմեդական ուժեր] կայ: Էս Խայերն ասում են, թէ... «կուզնանք Քուրտին վերէն, քուրտն փչացնենք, որ տեղէս (իմա՝ Արցախից, Ա.Ա.) մինչի Երեւան ողջ Խայեր ան՝ Ա [1] կուտառնան»[29]:

Բայց այս ծրագիրը, տարբեր պատճառներով, իրագործել չի հաջողվում[30]:

---

[26] «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի», «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, հմր. Գ, էջ 197:

[27] Նույն տեղում, Գլուխ 107, էջ 197:

[28] Տե՛ս Ա. Մ. Այվազյան, Իրադարձությունները Այսրկովկասում 1723 թ. և արցախահայերի առաջին օգնական ռազմերթը Սյունիք, էջ 63-80: Դավիթ-բեկի տրամադրության տակ գտնվող մարտիկների ընդհանուր թիվը ճշտել ենք 1720-ական թթ. հայոց զորքի թվաքանակին նվիրված դեռևս անտիպ մի հոդվածում:

[29] АРО, II, док. 239, с. 99, Ա. Մ. Այվազյան, Իրադարձությունները Այսրկովկասում 1723 թ., էջ 77-78:

[30] Armen M. Aivazian, The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal, p. 46. Ա. Մ. Այվազյան, Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ., էջ 102-114:

Մեկ տարի անց, 1724 թ. մարտի 13-ին, Ս. Էջմիածնից մի նամակ էլ է հասցեագրվում Արցախ՝ «իշխանաշուք իշխանացաց գլուխ կարգեալ... պարոն Աւան բէկ ուզբաշուն»[31]: Այս նամակը գրված է օսմանյան խոշոր հարձակման նախաշեմին, որանում Արարատյան երկրի հայության ու նաև պարսկական իշխանությունների անունից շտապեցվում է ռուսական զորքերի խոստացված (սակայն՝ երբեք չիրագործված) առաջխաղացումը: Հետաքրքիր է, որ նամակն ստորագրել է ոչ թե Աստվածատուր Կաթողիկոսը, այլ նրա աթոռակալ Հովասափը. անշուշտ, սրանով դարձյալ փորձ էր արվում հնարավորինս ապահովագրել կաթողիկոսի անձը հետագա հնարավոր բարդություններից:

Տարբեր աղբյուրներից Ս. Էջմիածնի համերաշխությունն ու համագործակցությունը հայ ազատագրական շարժմանը հայտնի էր դարձել նաև օսմանյան հետախուզությանը: 1723 թ. ապրիլի 2-ին Էջմիածին այցելած թուրք դեսպանը Աստվածատուր Ա. Համադանցի Կաթողիկոսին (1715-1725) մեղադրում էր, թե «դու էլ մեծ սուչի (=հանցանքի) տէր ես, որ Ռուստին խետ մին ես դառցել, էնչանք խայ ես կանգընացուցել, որ ասում ան, թէ ԿՌ (60 000) խայ եարաղով հազիր ան (=զինված պատրաստ են [կովելու])»[32]:

Այս գաղտնի կապը հաստատում են նաև 1724 թ. փետրվարի 25-ին Ղարաբաղից ռուսների մոտ առաքված պատվիրակները, որոնց ասելով՝ հայերի «Արարատյան պատրիարքը (այսինքն՝ Ս. Էջմիածնի կաթողիկոսը - Ա.Ա.) Ղարաբաղ՝ Եսայի Կաթողիկոսի մոտ հաճախակի մարդկանց է ուղարկում ու նամակներով հավաստիացնում նրան՝ նրա հետ իր ունեցած համաձայնության մեջ»[33]:

Այս առումով դիտելի է, որ 1725 թ. սկզբին Գիլանից հայկական էսկադրոնի հրամանատարներից մեկի՝ Ռուսաստանում գտնվող հայ ազատագրական շարժման ներկայացուցիչ Մինաս վրդ. Տիգրանյանին գրած նամակից պարզվում է, որ վերջինիս գործունեությունը բացահայտվել էր փոքր-ինչ ավելի շուտ, մոտավորապես 1720 թ., ահա այդ հատվածը. «Հայր սուրբ, այժմ ամենուրեք հայտնի եղավ մեր բանը. այնքան տարի ոչ ոք չգիտեր քո խորհրդի և գործունեության մասին, այլ և այն բանի մասին, որի համար դու այդտեղ ապրում ես: Ահա այժմ հինգ տարի է, ինչ մեր բանը հայտնի դարձավ բոլոր դավանանքներին...»[34]:

Այսպիսով, տարածաշրջանում անսպասելիորեն հայտնված հայկական խոշոր զինուժի կապերը Ս. Էջմիածնի հետ՝ իրանական և օսմանյան տերությունների խոր անվստահությունն էին առաջացրել Մայր Աթոռի նկատմամբ:

Մեկ տարի անց, սակայն, իրադրությունն այլ էր. ռուսները 1724 թ. հունիսին Կ. Պոլսում պայմանագիր էին կնքել Բարձր Դռան հետ՝ համաձայնելով գրեթե ամբողջ Այսրկովկասի և հյուսիսային Իրանի օսմանյան ռազմակալմանը և բավարար-

---

[31] АРО, II, док. 228, с. 85-86.

[32] «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի». «Կռունկ Հայոց աշխարհին», 1863, հմր. Գ, էջ 196:

[33] "однакож оной патриарх Араратской, чрез частую пересылку в Карабах к патриарху Исайу, письмами обнадеживает о своем согласии с ним" АРО, II, док. 291, с. 206.

[34] Աշ. Հովհաննիսեան. Պետրոս դի Սարգիս Գիլանենց (Ս. Էջմիածին, 1916), էջ 17, 26:

վելով սոսկ մերձկասպյան շրջանների գրավմամբ. օսմանցիները մեծ զորքով ներխուժել էին Արևելյան Հայաստան և հյուսիսային Իրան. Թիֆլիսն ու Վրաստանը առանց դիմադրության անցել էր նրանց վերահսկողության տակ. իսկ հայկական զինված ուժերը. հույսն սխալմամբ դնելով ռուսական խոստացված առաջխաղացման վրա. լիովին կորցրել էին նախաձեռնությունը և պարփակվել Արցախ-Սյունիք լեռնային տարածագոտում: Աստվածատուր Կաթողիկոսը. ելնելով փոխված հանգամանքներից. 1724 թ. սեպտեմբերի սկզբին շահ Թահմասպ Բ-ի մոտից վերադառնալով Մայր Աթոռ, խոհեմորեն կատարում է օսմանցիների առաջադրանք-խընդրանքը. այն է՝ ստանձնելով Երևանի բերդի անձնատվության բանակցություններում գլխավոր միջնորդի դերը[35]:

Աստվածատուր Կաթողիկոսը ջանում էր վաստակել օսմանցիների վստահությունը՝ անշուշտ նպատակ ունենալով Մայր Աթոռի և նվաճված տարածքների հայության շահերի պաշտպանությունը. բայց 1725 թ. հոկտեմբերի 10-ին նա դժբախտ պատահարի զոհ դարձավ[36]: Սա էլ մի նոր ուժգին հարված էր Էջմիածնի իշխանությանը. Մայր Աթոռն անկաթողիկոս մնաց մինչև 1728 թ. սկզբները. երբ Կարապետ Ուլնեցին (որն Ամենայն Հայոց Կաթողիկոս էր ընտրվել 1726 թ. փետրվարին Կ. Պոլսում) վերջապես ժամանեց Էջմիածին[37]:

Վերը թվարկված հանգամանքների բերումով՝ 1724-1728 թթ. Էջմիածինը պարզապես ի վիճակի չէր կատարելու իր սովորական կառավարչական գործառույթները և որևէ լուրջ մրցակցություն առաջարկելու Կ. Պոլսի պատրիարքությանը, որի գերհեղինակավոր Հովհաննես Կոլոտ Պատրիարքը (1715-1741), օգտագործելով Բարձր Դռան հետ իր վաղուց ի վեր մշակած կապերը, շարունակում էր քրտնաջան աշխատել թե՛ օսմանցիների նվաճած պարսկական նոր նահանգներում, թե՛ կայսրության նախկին սահմաններում ապրող հայության օգտին:

[35] Տե՛ս Judasz Tadeusz Krusinski. The History of the Late Revolutions of Persia. Vols. 1 and 2. New York, 1973 (Լոնդոնի 1740 թ. հրատարակության վերատպություն). Vol. 2, p. 178. Հմմտ. Աբրահամ Երևանցի. Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի: Հրատարակեց Սահակ Ճեմճեմյան. Վենետիկ-Ս. Ղազար, 1977, էջ 31-35):

[36] ՁԱՄ, Գ, էջ 801:

[37] Տե՛ս ՁԱՄ, Գ, էջ 804. ԱՋԳ, սյուն.1954:

*Պ. Ա. ՉՈԲԱՆՅԱՆ*

*Պատմական գիտությունների թեկնածու*

# ՄԻ ԴՐՎԱԳ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ-վրացական եկեղեցական հարաբերությունները դեռևս ամբողջական ու համակողմանի ուսումնասիրության չեն արժանացել: Հայ պատմագիտության մեջ սկզբնաղբյուրների ընձեռած հնարավորությունների սահմաններում լուսաբանվել են հիմնականում հայ-վրաց եկեղեցական բաժանման ժամանակաշրջանի պատմության հարցերը (VI-VII դդ.), մասամբ ներկայացված են Քարթլ-Կախեթի տարածքում հայերի բնակության ու Վրաց Եկեղեցու գերակայության ներքո նրանց գոյատևելու հետ առնչվող խնդիրները (XI-XIII դդ., XVIII դ.) և այլն: Առավել պակաս չափով են հայտնի Արևմտյան Վրաստանում հայ բնակչության առկայության ու վրաց իշխանությունների ու Եկեղեցու հետ նրանց հարաբերությունների հարցերը: Այդ մասամբ բացատրվում է սկզբնաղբյուրների և նրանց հրատարակությունների պակասով: Արևմտյան Վրաստանը թեև ոչ նույնքան սերտ, ինչպես Արևելյան Վրաստանը, սակայն, այնուամենայնիվ, ինչպես ուղղակի և երկուստեք հետաքրքրող ընդհանուր հարցերի շուրջ համատեղ հանդես գալու և գործելու առումով, այնպես էլ իր տարածքում հայկական համայնքների առիթով ունեցել է որոշակի հարաբերություններ Էջմիածնի Հայոց Կաթողիկոսարանի հետ և հաճախ նաև ընդառաջել նրա խնդիրներին:

Ստորև հրատարակվող վավերագիրը ևս, որ պահվում է Վրաստանի Գիտությունների Ակադեմիայի Ձեռագրերի Ինստիտուտի արխիվային բաժնում (Armd-124), այդ առումով կարող է նպաստ բերել XIX դարասկզբի Արևմտյան Վրաստանում տիրող իրավիճակի պարզաբանման խնդրին: Այն պարունակում է ականատեսի հավաստի տվյալներ հայ բնակչության առկայության, նրանց հասարակական ու տնտեսական վիճակի ու նաև դավանական-եկեղեցական ու լեզվական իրողության մասին: Սիմեոն Երևանցի Կաթողիկոսի նախաձեռնությամբ սկսված բանակցությունները Արևմտյան Վրաստանի թագավոր Սողոմոն I-ի և Արևելյան Վրաստանի թագավոր Հերակլ II-ի հետ հանգեցրել էին նրան, որ երկու թագավորներն էլ, տեղի տալով Հայոց Կաթողիկոսի առաջարկություններին ու հորդոր-պահանջ-

նրին, իրենց տիրապետության սահմաններում հատուկ վճիռներով արգելել էին շարունակել կաթոլիկ դավանանքի տարածումը հայոց մեջ[1]:

Մաքսիմե Կաթողիկոսի կողմից Սիմեոն Երևանցի Կաթողիկոսին առաքված նամակում ասվում էր, թե «թագաւորն մեր իսկոյն լուաւ եւ կացոյց զինուորս վարօղս եւ ... ի բաց վարեաց յիշխանութենէ իւրմէ սուտ վարդապետաց նոցա եւ զեկեղեցին եւ զժողովուրդս նոցա զամենայն յանձնեաց նուիրակին քո Մարտիրոս վարդապետին»[2]: Ավելին, վրաց կաթողիկոսի հավաստմամբ «ի վիճակի մերում հրամայեցաք անհերկիւղ թէւ առեալ շրջեսցէ ուր եւ իցեն յազգի ձերոյ ժողովուրդ, զոր ինչ կարգեալ իցէ ի վերա նոցա՝ առնուն, ոչ ոք լինի արգելող...»[3]:

Սողոմոն I թագավորի կարգադրության մասին հայտնի է նաև այլ սկզբնաղբյուրից: Իր կազմած և դեռևս մասամբ անտիպ[4] ժամանակագրության մեջ Տեր Հովհան Խոջա-Օհանյանի (մահ. 1809 թ.) գրառած վկայությամբ, որը մինչ այդ արդեն 11 տարի էր, ինչ գտնվում էր Քութայիսում (1766-1777 թթ.), վայելում էր Սողոմոն թագավորի հովանավորությունը ու թագավորի ներկայությամբ բանավիճում հայոց կաթողիկոսի առաքած Մարտիրոս վարդապետի հետ՝ պաշտպանելով կաթոլիկ համայնքի շահերը, արձանագրելու, թե «թագավորը ...հրամայեց Քութայիսի կաթոլիկներին կա՛մ վրացիանալ և կա՛մ հայանալ»[5]:

Ստորև հրատարակվող վավերագրի համաձայն, էականորեն փոփոխված իրավիճակ էր ներկայացնում XVIII - XIX դդ. սահմանագլխին Արևմտյան Վրաստանի հայ բնակչության կարգավիճակը: Թեև Սիմեոն Երևանցի Կաթողիկոսի մահից հետո (1780 թ.) Ղուկաս Կաթողիկոսը հատուկ նամակով ծանուցելով իր գահակալությունը, Սողոմոն I թագավորից և Մաքսիմե Կաթողիկոսից խնդրել էր, «...զի որպէս յաւուրս հոգեկոյս Հայրապետին մերոյ եւ նորին աղերսանօքն ընդ Քրիստոսազօր արքային հատիք այտի զուտս մոլար ախթարմայից սուտ կարգաւորացն եւ զեկեղեցին մերազնէից եւտուք իւրեանց, որոյ աղագաւ եւ եդիք զկանոնս[6] դատավճռական՝ այլ ոչ թողուլ նոցա մտանել ի կալուածս ձեր,... զնոյն կանոնսն խնդրեմ եւ ես՝ ունիլ հաստատուն եւ ոչ տալ մուտս ուտից նոցին մտանել ի ձերդ կալուած եւ ապականել զմիտս պարզամտաց: Նմանապէս եւ զեկեղեցին թողուլ ի ձեռս նոցա, զի

---

[1] Հերակլ II-ի 1775 թ. հունիսի 14-ի կարգադրության հայերեն թարգմանությունը տե՛ս В. М. Мартиросян, П. А. Чобанян. Документы по истории армяно-грузинских взаимоотношений и общественной жизни Грузии (II пол. XVIII в.).-"Кавказ и Византия", выпуск 3, Ереван, 1982, с. 244-251 (այսուհետ՝ ԿԲ-3): Սողոմոն I թագավորի և Արևմտյան Վրաստանի Մաքսիմե Կաթողիկոսի 1776 թ. ապրիլին գրված նամակները Սիմեոն Երևանցի Կաթողիկոսին՝ տե՛ս նույն տեղում, էջ 256-260:

[2] Նույն տեղում, էջ 259-260:

[3] Նույն տեղում, էջ 260:

[4] П. А. Чобанян. "Дневник" Тер-Иоанна Ходжи-Оганова.-"Кавказ и Византия", вып. 2, Ереван, 1980, с. 87-90.

[5] Նույն տեղում, էջ 90.

[6] ԿԲ-3, էջ 267-269:

մնացեն հաստատուն ի հաւատս Հայաստանեայցս Սրբոյ Եկեղեցւոյ»[7], սակայն 1784 թ., Սողոմոն I թագավորի մահից հետո, իրավիճակը կտրուկ փոխվել էր և, Հայոց Եկեղեցու ներկայացուցիչների ոչ հաճախակի այցելություններով պայմանավորված, հայկական համայնքը աստիճանաբար ենթարկվում էր դիմահեղման, իսկ վրաց հոգևորականությունը որդեգրում ավելի անհանդուրժողական կեցվածք:

Իրավիճակի սրման վրա իր կնիքն էր թողնում նաև Վրաց պետականության վերացման փաստը XIX դ. սկզբին, որը պատճառ դարձավ նաև Արևմտյան Վրաստանի կողմից, որ երեք տասնամյակ Սողոմոն I-ի գլխավորությամբ կենաց-մահու պայքար էր մղել Օսմանյան կայսրության դեմ անկախության համար, նոր կողմնորոշում որդեգրելու ու Սողոմոն II վերջին թագավորի կողմից Օսմանյան կայսրությանը ապավինելու որոշման համար:

* * *

Մեք, ներքոյ ստորագրօղքս, զորս խնկութեամբ ականատես և զորս ի հաւաստի արանց ականջալուր, յԱստուածակոյս կողմանէ վկայեմք, զի զօրեցի տէր Մովսէս Տէր Բարսեղեանն, որ է միաբան Գօրւոյ սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն, որ վասն իւրեց հարկաւորութեան պատահեալ ի յիմէրէթ ի ժամանակս բազմավրդով խռովութեանցն երկուց ազգաց և թագաւորաց, այսինքն՝ Ռուսաց և յիմէրեթու ի 1810 թուին, որ կայր ի մէջ նոցա պատերազմ անհնարին: Քանզի սոյն այս տէր Մովսէս պատահեալ նախ ի Սաչխէրէթ[8] կոչեցեալ սահման և անդանօր հայակրօն ժողովրդականս մխիթարեալ քարոզութեամբ և հաստատեալ ի յուղղափառ հաւատս, որ պատկանի առ սուրբ եկեղեցիս հայոց և անտի գնացեալ ի Չխար[9] կոչեցեալ գիւղ մի, ուր գոլով յազգէս հայոց գերդաստանս իբր 35 չունելով նոցա քահանայ, բաց ի միոյ զառամեալ և երկու աչօք յուսաւորեալ քահանայի, որ անկարացեալ հովուել զնոսա, կային ժողովրդականք ալնոքին անմխիթար ի լուսոյ կրօնի մերում: Ուր կացեալ սմայ ամիսս երիս և անդ հովուեալ զնոսա և զեկեղեցիս նոցա պաշտպանեալ

[7] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Դ, էջ 53-55: Հմմտ. ԿԲ-3, էջ 263, հմմտ. նույն տեղում, էջ 265: Նամակի համառոտագրությունը տես «Դիվան հայոց պատմության. Նոր շարք. Գիրք առաջին. Ղուկաս Կարնեցի». Հատոր Ա (1780-1785). Աշխատասիրությամբ Վարդան Գրիգորյանի, Երևան, 1984, էջ 129:

[8] Գյուղ Արևելյան և Արևմտյան Վրաստանի սահմանին: Վախուշտի Բագրատիոնիի հաղորդմամբ, դեռևս XVIII դարի առաջին կեսին այնտեղ բնակվում էին վրացիներ, հայեր և հրեա վաճառականներ և զբաղվում առևտրով:

[9] Ըստ Վախուշտիի վկայության, Չխարը եղել է քաղաք, սակայն ավերվել է Լևան Դադիանիի կողմից և վերածվել փոքրիկ գյուղակի: Վախուշտիի հաղորդման համաձայն, երբ իշխան Լևան Դադիանին գերի էր վերցրել վրաց Գեորգի թագավորին, ապա հորը ազատելու համար Ալեքսանդր արքայազնը բանակցություններ սկսեց Լևան Դադիանիի հետ, իսկ վերջինս թագավորին գերությունից ազատելու համար փոխարենը պահանջեց Չխարի վաճառականներին, Չխարի հայերին ու հրեաներին: Արքայազնը ստիպված էր բավարարել նրա պահանջները և ազատել իր հորը, որը սակայն գերությունից ազատվելուց հետո շուտով վախճանվեց (1639 թ.): Տե՛ս "ქართლის ცხოვრება", IV, თბ., 1973, გვ. 829. Նույն փաստը արձանագրել են Փարսադան Գորգիջանիձեն ("საისტორიო მოამბე", თბ., 1925, ტ. II, გვ. 33), Բերի Էգնատաշվիլին, ռուս դեսպանագնաց Ֆ. Ելչինը և այլք:

քարոզութեամբ ի մխիթարութիւն անդանօր բնակեալ ժողովրդականացն: Վասն զի գոլով սմայ քաջակիրթ ի բարբառ վրաց և մանաւանդ լուսաւորեալ եկեղեցական ուսմամբ ոչ սակաւ պատսպարան եղև նոցա ի մէջ օտարասեռ և այլակրօն քրիստոնէից երկուց ազգաց. այսինքն վրաց և ի մէնջ հեստեալ լատինացելոցն, որք զազգս մեր նկուն արարեալ առ ի չգոյէ օրէնսգէտ քահանայից, անհնարին աղէտս տարակուսութեան հասուցանէին ազգիս մերում, զառ ի կողմանէ դաւանութեան և կրօնի և մէտս անդանօր եղեալ խղճալի ազգ. գոլով վարակեալ ի տգիտութեան, օրաւուր մտափոխ լինէին ի կրօնս նոցա և շատք ևս դառնային առ նոսա իսկ: Արդ, խոհական և արիաջան քահանայն տէր Մովսէս իւրով լուսատու քարոզութեամբն հաստատէր զնոսա ի յուղղափառ հաւատս և անսայթաք դաւանութիւնս սրբոյ եկեղեցւոյ մերում՝ իրազեկ առնելով զամենեսեան զհաւատոյս մերոյ ուղղաշաւիղ և արքունական ճանապարհ: Եւ ի սոյն միջոցի և յառաջ քան զայս, յորժամ զօրքն ռուսաց մտեալ եղան անհնարին բռնութեամբ զայն աշխարհ, սկսան ի նախնումն սասանեցուցանել զազգն, որ ի հպատակութենէ նոցա ստամբակէին, քայքայէին զտունս բնակչացն, նաև զեկեղեցիս իսկ և աւար առնէին զամենայն զգոյս, որք անդր՝ եթէ ժողովրդականացն, որք եղեալ էին ի պահեստ, և եթէ զեկեղեցական անօթսն, յորոց մի ևս գտաւ զեկեղեցիս հայոց: Այնինչ դիմեալ զօրացն՝ ի յեկեղեցի անդր, ուր և բռնութեամբ զդրունս եկեղեցւոյն կործանեալ և մտեալ ի ներքս սկսան ցիր և ցան կացուցանել զամենայն զգոյս, որ անդր, եթէ ժողովրդականացն, որք եղեալք էին ի պահեստ և եթէ զեկեղեցական անօթսն, թէ հանդերձեղէն և թէ արծաթեայ սպասք: Քանզի յայնմ սոսկալի միջոցի բոլոր բնակիչք գեղջն փախուցեալք էին 17 յամուր վայրս և մտեալ ի մերձակայ մթին անտառս, իսկ սոյն այս տէր Մովսէս արիաջան և եռանդնոտ քահանայ մեծաւ վստահութեամբ ի դիմի կացեալ յահեղախրոխտ զօրացն իւրով ճարտարահնար քաջասրտութեամբն, գրեթէ մեղմացոյց յայնմ վայրի զգազանաբարոյութիւն նոցա և իսկոյն անձապարեալ փութացաւ մատեաւ առ հզօր զօրապէտն Սիմոնովիչ և ի նմանէ առեալ զհրաման և զոյգ ընդ հրամանին զերկոտասան զինուորս և շտապ տագնապաւ սլացաւ առ եկեղեցիս մեր և զայնոսիկ զերկոտասան զինուորիք շրջապատեալ զեկեղեցին՝ էհան արտաքս զմիահամուռ զօրս ռուսաց և զնոսա շուրջանակի պահապանս կացուցեալ՝ դարձաւ անդրէն առ նախագրեալ զօրապետն: Առեալ վերստին զհրաման սաստիկ՝ եթէ որք միանգամ ունին յափշտակեալ ի յեկեղեցւոյ անտի զիր ինչ, զնոյնս անթերի յետս դարձուցանել և այնպէս ըստ այնմ հրամանի և ելք իրացն կատարեցան՝ կորուսեալ մի միայն շքեղ ֆիլոնի և ոչ զայլ ինչ: Եւ բաց յայսմանէ զամենայն փախստական ժողովրդականս գեղջն յայնմիկ յորդորմամբ ամոքեալ ի հնազանդութիւն տէրութեան ռուսաց՝ ժողովեալ զամենեսեան բերեալ կացոյց յանդիման առ զօրապէտն Սիմոնովիչ և հաշտեցուցեալ ընդ նմայ երդմամբ ըստ սովորութեան ռուսաց և այսպէս յանդորրացոյց զեկեղեցին և զժողովրդականս յայնր տեղւոյ մինչև ցայսօր: Եւ զկնի այսոցիկ եղելութեանց չուեալ աստի ի թագաւորանիստ քաղաք Իմէրէթու ի Քութայիս, նոյնպէս իւրով պարկեշտ վարուք և քաղաքավարութեամբն, նաև հոգեշահ խրատախօսութեամբն ի յեկեղեցիս հայոց շահեաց զամենայն ազգ մեր, որք ի վաղուց հետէ գոլով ծարաւիք ի լսելոյ զբան տեառն և զորպիսութիւնէ աւանդութեանց եկեղեցւոյս մերում, գրեթէ լիակատար սփոփանս ընկալեալ ի յոգի՝ մխիթարեցան ոչ սակաւ: Եւ յաւուր վերացման խաչի հանդէս մեծ արարեալ ի յեկեղեցի անդ, զոր

անդանօր եղեալ մերակրօն հայք ի յատուրս իւրեանց ոչ էին տեսեալ բնաւ, մանաւանդ որք զարմացեալքն էին ի վերա հանդիսի եկեղեցւոյն յատինակրօնից, զոր կատարեն ի տօնի Մարմնոյ և Արեան Տեառն, վարկելով, եթէ ոչ միայն հայք ի մեծէ զարմացմանէ յապուշս կրթեցան, այլև վիրք և հեստեալքն ի մէնջ, որք չէին տեղեակ արարողութեանցս մերում եկեղեցւոյ, ոմանք զարմացեալք և ոմանք կորագլուխ խոնարհեալ յերկիր՝ յամօթալից ստորահայեացք լինէին: Ուր և հրաւիրեալք էին ի սոյն շնորհազարդ քահանայէ Դիմիտր կնիազ Օրբելեանն և մեծ զօրաւարք հանդերձ ամենայն մեծամեծ նախարարօքն ռուսաց և վրաց և անուանի վաճառականաց ոմանց ի մէնջ հեստեալ հայկազանց, որք միահամուռ ընդ միմեանս զմեծամեծ գովասանութիւնս տային ծեսի և աւանդութեանց եկեղեցւոյս մերում: Եւ անդանօր ի թագաւորական քաղաքի եղեալ խղճալի ազգ մեր բարձր ի գլուխ պարծելով համարէին զայս քահանայ իբրև զհրեշտակ Աստուծոյ իջեալ զառ ի մխիթարութեան յինքեանց՝ եթէ համօրէն բնակչաց երկրին, որք ի յազգէս հայոց: Եւ որ առաւել զարմացման արժանաւորն է և ի յաւիտենիցն անլուր, որ ի սահմանս այն, հարկաւորեմք զվասն ճշմարտութեան գրել և վկայել անդանդաղ: Քանզի յորմէ ժամանակաց հետէ ազգ մեր բնակեալ է ի յերկրի յայնմիկ, բնաւ եկեղեցի մեր ոչ է ունեցեալ զհրաման հնչեցուցանելոյ զզանգակ, այլ վարէին միայն կոչնակաւ: Արդ, յայսմ ժամանակի սա միայն գտաւ առաջին զայս փառս սեպհականելոյ ազգի և եկեղեցւոյ մերում ի յերկրի անդ և եթէ որպիսի անձնադիր ճարահատ ջատագովութեամբ՝ յայտ առնեմք: Քանզի մինչ չև ևս էր կատարեալ զհրաշափառ հանդէսն խաչվերացի նախ զնացեալ է հարց զխորհուրդ զանազան առարկութեամբ կնիազ Դիմիտրէ զօրապետէն և ի նմանէ ընկալեալ զհրաման, յորում և առաջի գտեալ էր զհրաման, և անտի երթեալ առ կոմէնդանտն և ի նմանէ թէպէտ ոչ ըստ բոլոր ..սեյն»[10], նա ևս տուեալ էր մասնատր տեղի հաճութեան, ապա եկն ի յեկեղեցին և ի նմին աւուր շաբաթու առ կախեալ զզանգակն ի միջոէ ծառոյ սկսաւ հնչեցուցմամբ կատարել զնախատօնայն, իսկ հայք զարհուրեալք յայհէ իմէրէլ ազգէն և քահանայք ի կաթողիկոսէ և յեպիսկոպոսաց տեղւոյն (որք ցայնժամ բազմութեան մեծ կայր ժողովեալ ի քաղաք անդր) սկսան աղաչել զքահանայս զայս՝ եթէ մի մատներ զմեզ և զգլուխս քոյ ի փորձութեան, զի չէ եղեալ զայս ի յաւիտենից բնաւ և ոչ ևս է հնար: Իսկ սա սրտադիւր և յուսադիրս արարեալ զամենեսեան, սկսաւ ուժգին ևս հնչեցուցանել, և այն ինչ զձայն զանգակին հասեալ յունկս հայրապետի և եպիսկոպոսացն վրաց, սկսան կատաղիլ իբրև զամեհիս մերանց և զինքեանս զօրէն յուշկապարկաց (իբրև լուիլոց զձայն քնարին Որփէոսի) ըզհերս և զերեսս ծուատեալ աւաղակոծ եղեալ տարաբաղտ զինքեանս կարդային և այնպիսի սաստկատոչոր սրտմտութեամբ երագեալ հասին առ կնիազն Դիմիտրի ի բողոք և նա զամենեսեան զնոսա հանդարտեցուցեալ, կոչեաց զսոյն քահանայ առ ինքն ի ժողով անդր և պատուով մեծարեալ մերձ յինքեան և բարձր քան զամենեսեան նստուցեալ, սկսաւ բանս ի մէջ արկանել, յայնժամ սկսան ամենայն կարգաւորք ի մեծէ մինչև ցփոքունս բողոք կարդալ զվասն անլուր ձայնին, ասելով՝ զայդ ոչ է եղեալ երկրի մերում ոչ ի մերումս ժամանակի և ոչ ի ժամանակս նախնեաց մերոց. և այժմ ևս ոչ է հնար յայդմ լինել. ահա այդու իսկ յայտնի տեսանի զնշան մերս ապաբաղդութեան:

---

[10] Անընթեռնելի է մեկ բառ:

Եւ զկնի բազում խօսակցութեանց կնիազ Դիմիտրի մեծ զօրավարն, ինքնեն կացեալ ի վերայ ոտից, սկսաւ միջնորդել՝ օրինակ ի մէջ արկանելով զայնոսիկ զեկեղեցիս հայոց, որք ի Վրացտուն և ի Ռուսաստան, տալով և զայլ բազմադիմի բանատր պատճառս: Իսկ հայրապետն բոլոր եպիսկոպոսօք տեսեալ զանհնարին զոյն խափանման յայնմ, շօշափելով զմիտս այնպիսի միջնորդի. սկսաւ ի պատիւ նորա ստորս ասել. ընկալնլով ակամայ կամօք զմիջնորդութեան նորա: Ի մէջ սոցա միայն Գէնաթէլ կոչեցեալ նախացահ արհիեպիսկոպոսն սկսաւ ճանկել զերեսն և փետել զհերս ասելով զայս. կամ սպանէք զիս յայսմ տեղւոջ և կամ բարձէք զայդ անլուր ձայն: Իսկ քահանայս առաջի ժողովոյն այնորիկ բացեալ զբերան իւր, սկսաւ մեղմ և հեզիկ հոգւով խօսել ընդ նմայ և հաւատոյ և զդաւանութիւնէ նոցա և մեր, հրաւիրելով զեպիսկոպոսունսն խօսել ընդ յինքեան (թ. 1բ) ի յատենի անդ: Իսկ եպիսկոպոսն զայն ի նախնումն յառաջ մատուցեալ խոստացաւ մտանել ընդ քահանային մերում ի պայքար քննութեան և յորժամ քահանայ մեր հանեալ ի ծոցոյ իւրմէ զՄաշտոց մի և մատոյց առաջի ասելով. ահա այս է բովանդակիչ արարողութեան եկեղեցւոյ մերում, յորում բովանդակեալ կայ զեօթն խորհուրդ եկեղեցւոյն, հանէք ուրեմն և ցուցէք սա և զձերն և այնպես եղեալ առընթեր միմեանց և խօսեսցուք նախ ի վերայ եօթանց սրբազնութեանց խորհրդոց և ի վերայ յայսմիկ վստահութեան քահանային, սկսաւ եպիսկոպոսս այս այլազգունել և յիմարել և յետս կալ ամենէն ի հասարակ խօսակցութիւնէ նս: Իսկ կնիազն մեծաւ ստիպմամբ յառաջ կոչէր զնա ասելով՝ ոչ է պարտ Օրէնսդրիդ Ազգիս ի միոյ փոքրիկ և նուաստ օրինացիտէ յայսմանէ յետս կասել, այլ մանաւանդ պարտիս ըստ նախախրախոյս խոստմանդ՝ կամ խօսել ընդ սմայ և կամ պարտութիւն խոստովանել: Արդ, եթէ ընդ սմայ ոչ վստահանաս խօսել, որ յետինն է ի գիտնականացն հայոց, իսկ եթէ զպատահիցես ընդ մեծամեծ աստուածաբանսն եկեղեցւոյն հայոց, յայնժամ զի՞նչ ունիցիս խօսել: Եւ զկնի այսորիկ արձակեալ ժողովոյն և քահանայս, երթեալ ի եկեղեցին, կատարեաց հնչմամբ զանցակայ զհանդէս Խաչվերացին, որպէս գրեցաւ ի վերոյ: Եւ ի քաղաք անդր կին մի՝ առն ուրում ի մէնջ հեստելոյ և մեծ հօրդորիչ մերասէր կանանց, որպէս և որք նոցա պատրիչք պարզամիտ արանց մերոց, տեսեալ սորա զկարգ թաղման մեր ի վերա ուրուք ննջեցելոյ, որ զամենայն ի բարբառ վրաց կատարեաց, վասն օգտի անդանօր հայոց, որք չեն հմուտ մերս լեզուի (որպէս և բոլոր կարգ հանդիսին խաչվերացի յայն բարբառ կատարեաց, որով և յոյժ սիրելի գտաւ յաչս մեծամեծացն վրաց և բոլոր ժողովրդականացն), կինն զայս զկնի թաղման ննջեցելոյն եկեալ համբուրեաց զաջ սորա՝ ի խորոց սրտէ հոգոց հանելով, և սա զգաստ աչալրջութեամբ գիտացեալ զտարփանս հոգւոյ նորա, որ յայնմ պահու խանդաղատեալ գտաւ ի սէր արարողութեանց եկեղեցւոյ մերում, սկսաւ սա զկնի սակաւ միջոցի փութալ տեսանել զկինն զայն, և այնպես ետես և լուսաւորեաց զնա ազդու քարոզութեամբ իւրով, խոստովանելով և հաղորդելով զնա ըստ աւանդութեան եկեղեցւոյս մերում, խառնելով ի դասս ազգիս հայոց՝ ուղղադաւան ժողովրդականաց սուրբ լուսաւորչին: Ահա աստանօր կատարեալ զայս ամենայն վերոյ գրեալ իրագործութիւնս, լուեալ եթէ կան սմի Լայիլարշի[11] կոչեցեալ գեղջ զերկոտասան ցերդաստան ազգէս հայոց, գնաց և յայցելութիւն նոցա՝ իբր յերկուց աւուրց ճանապարհ ի յերկիւղալից տեղւոջ:

[11] Գյուղ Արևմտյան Վրաստանում:

Եւ եգիտ զբնակիչս տեղւոյն այնորիկ իբր զոչխարս մոլորեալ՝ յանդիւղի որոց ոչ գտցէ հովիւ ըստ աւետարանական բանին, մանաւանդ անայցելու և տարակուսեալք յոյժ՝ սակս ներքոյ գրեալ պատճառանացն: Քանզի ազգ մեր ի մէջ ազգին իմէրէթու ոչ ունելով զպատիւ կատարեալ քրիստոնէի (ըստ որում անծանօթք են արարողութեանց և սահմանադրութեանց սուրբ եկեղեցւոյս մերում) յաղագս այնորիկ ի ներքին կողմն բնակչաց երկրին, առաւելապէս տկար գտանին ազգ մեր յաղագս այսմ ի Լայիլարշ յայսմիկ գեղջն՝ ոչ զերեխայս նոցա ընկալնուքն ի գիրկ՝ առ ի լինել կնքահայր, և ոչ ընդունէին զնոսա իբրև զքրիստոնեայս: Իսկ եթէ միմեանց լինէին ինքեանք կնքահայր՝ և այս լինէր անհնարին գործ, զի չհաստութիւն ծագէր ի միջի՝ որքան առ խնամութեան, վասն այսորիկ կային ի մէջ տարակուսութեան, մանաւանդ ի բնակչացն տեղւոյն յազգէն վրաց, հրէայք ևս համարեցեալք էին, իսկ քահանայս այս ընդ հասանելն ի յայս տեղի, գնաց ի տուն արհիեպիսկոպոսի տեղւոյն, խօսեցեալ ընդ նմա յաղագս ուղղափառ մերս դաւանութեան և կրօնի, և զկնի արար զնա որպէս արդարև որդի և ժառանգ եկեղեցւոյ մերում, յայնմ հետէ սոյն այս եպիսկոպոսս հրատարակեաց բովանդակ ժողովրդեան իւրում, զի թարց խոկման լինիցին կնքահայր հայոց, ասելով. ես նախ առաջին լինեմ, զի ունին հայք զճշմարիտ հաւատս, որպէս մեք: Ահա այսոքիկ և զորս սոցին նման եղելութիւնք տեսաք և լուաք և վասն այսորիկ վկայեմք ճշմարտապէս այսպէս գոլ և համարեմք զսա արդարև արժանաւոր պատուոյ և շնորհաց:

Գրեցաւ 1811 թուին և ի մայիսի 17 ի Թիֆլիզ:

(Վավերագրի պատճեն հաստատում են)

ქ. ამისი ასლი ენახე და ესე სავადიმა ასლთან თანასწორია, ასლთან დამოწმობა მიკირტუმ მუნთო....

(Սրա բնագիրը տեսա և այս պատճենը բնագրին հավասար է, պատճենի հետ հավաստումը Մկրտում Մունթո...)

ქ. ამისი ასლი ენახე და ეს სავადი იმასთან თანასწორ ასლია გადმოწერილი ისაი ფითუნოვი

(Սրա բնագիրը տեսա և այս պատճենը նրա հետ հավասար բնագիր է արտագրված. Եսայի Փիթունով)

ამის ასლი ენახე ამ სავადზე ხელი მოვაწერე სურბნიშნის ეკლესიის დეკანოზი მიღდის ტერ ნიკოლოზ იზმიროვი

(Սրա բնագիրը տեսա, այս պատճենը արտագրեցի Սուրբ Նշան եկեղեցու դեկանոզ մահտեսի Տեր Նիկողոս Իզմիրով)

Սորին ասլն տեսի համեմատ սորին, որոյ աղագաւ վասն ճշմարտութեան ձեռագրեցի Նորաշինու եկեղեցւոյ տէր Մելքիսեդ Տէր Մովսիսեան հայոց Թիֆլիզու

ქ. ამ ზემო ნაწერის დამსწრე ვარ რომელიც სრულ მინახავს და სხუისაგანაც გამიელნინ რომ ჭეშმარიტათ ყოფილა თავადი კაპიტანი ბარათოვი გიორგი

(Այս վերոգրյալիս ականատես եմ, որը լրիվ տեսել եմ և ուրիշներից ևս տեղեկացա, որ իրապես եղել է, իշխան կապիտան Բարաթով Գիորգի)

Վերոյ գրեալ բանիցս ըստ ամենայնի վերահաս եմ, զի մինչ ես էի ի Քութայիս, որոց ոմանց ականջատես եմ և ոմանց՝ ականջալուր ի հաւատարիմ անձանց և ռուսաց և վրաց, վասնորոյ վկայութիւն տամ ստորագրեմ Եագոր Ստէփանեան Բարե-

ռով

ქ. ავეტიქ არუთინოვი (Ավետիք Արութինով)

ქ. იოსებ ზარგარი სტეფანაძე (Հովսեփ Զարգար Ստեփանաձե)

Հարութիւն Գասպարեան

სულხანა ზაფიროვი (Սուլխան Զափիրով)

მე თათულა ოჰანოვი ამ ზემო ნაწერის დამწრე ვარ

(Ես Թաթուլ Օհանովս այս վերոգրյալիս ականատես եմ)

Սողոմոն Աբիմէլիքեան

მირიმან მირიმანოვი (Միրիման Միրիմանով)

ქ. ამ ზემო ნაწერის დამწრე ვარ იმ ჟამათ იმერეთში ვიყავი და თვალით ვიხილე ეს ამბავი მე გორელი მირიანაშვილი გიორგი

(Այս վերոգրյալիս ականատես եմ, այն ժամանակ եղել եմ Իմերեթում և աչքով տեսա այս եղելությունը, ես գորեցի Միրիանաշվիլի Գիորգի)

თავადა ბარათოვი ვახტანგ. (Իշխան Բարաթով Վախթանգ)

ქ. ამ ზემო წერილის მოწამე ვარ, რადგანაც იმ ჟამათ იქ იარანალ მაიორის სიმონოვიჩს ვიახლდი მოენეთა და დაეესწარ კოლეჟსკის რეისტრატორი იაკობ ისაკოვი

(Այս վերոգրյալիս վկա եմ, քանզի այն ժամանակ այնտեղ գեներալ-մայոր Սիմոնովիչին ուղեկցում էի որպես թարգմանիչ և ներկա եղա. կոլեժսկի ռեգիստրատոր Հակոբ Իսակով)

Ես դիւան Աւետիքի որդ(ի) պոտպորուճիկ Սոլոմոն Ծաճղաքաթեան

ოჰანეზა არუთინოვი (Օհանեզ Արութինով)

ქუთაისის ცხოვრებელი იოაკიმა მოელეა 'შვილი

(Քութայիսի բնակիչ Հովակիմ Մովլեա որդի)

ქ. მე დავით პაპა შვილი ამ ზემო ნაწერის დამსწერე ვარ ჩხარში მცხოვრებელი

(Ես Դավիթ Պապայի որդիս այս վերոգրյալիս ականատես եմ, Չխարի բնակիչ)

ქ. ამ ზემო წერილის მოწამე ვარ რაჭას ონის ქალაქში მოსახლე თომა ალიბეგოვი

(Այս վերոգրյալիս վկա եմ Ռաճայի Օնի քաղաքում բնակվող Թոմա Ալիբեգով)

ქ. ამ ზემო ნაწერის მოწამე ვარ და ამისთვის ხელს ვაწერ ონის მოსახლე იაკობ მერაბოვი

(Այս վերոգրյալիս վկա եմ և սրա համար ստորագրում եմ Օնիում բնակվող Հակոբ Մերաբով)

ქ. ამ ზემო ნაწერის დამწრე ვარ ჩხარელი პულუზა შვილი ანტონა.

(Այս վերոգրյալիս ականատես եմ Չխարցի Պուլուզի որդի Անտոն)[12]

12 Բերված են ոչ բոլոր ստորագրությունները, որ մեծ թիվ են կազմում:

*ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*
*Պատմական գիտությունների դոկտոր*

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԵՐԻՑ ՄԵԿԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

19-րդ դարի սկզբին հայոց պատմությանը նվիրված ռուսերեն լեզվով լույս տեսած առաջին գործը Հակոբ և Դավիթ Արզանով եղբայրների «Հայոց թագավորության պատմության ուրվագծման փորձ» աշխատությունն էր[1]: Հեղինակները հայոց պատմությանն անդրադառնալու շարժառիթը բացատրում են նրանով, որ, լինելով Լազարյան ճեմարանի սաներ, խորին հարգանքով են հիշում Հովակիմ Լազարյանին և իրենց ուսուցիչներին՝ Մոսկվայի համալսարանի պրոֆեսորներ Ա. Ֆ. Մերզլյակովին և Մ. Տ. Կաչենովսկուն, որոնք էլ, ինչպես իրենք են գրում, պարտավորեցրել են շարադրելու այդ գործը:

Արզանովները գրեթե անհայտ են հայ պատմագիտությանը: Տակավին հպանցիկ ու կցկտուր տեղեկություններ կան մեզանում նրանց մասին: Հայկական ներկայիս հանրագիտարաններում հիշատակված չէ ո՛չ նրանց անունը և ո՛չ էլ նրանց աշխատությունը: Գրքի մասին միակ հիշատակությանը, այն էլ՝ գրախոսականի տեսքով, մենք հանդիպեցինք ԳԱ «Տեղեկագրի» 1953 թ. հունիսյան համարի պրոֆ. Վ. Պարսամյանի հոդվածում[2]:

Գրքի ներածականում Արզանովները, հիմնավորելով իրենց ուսումնասիրության կարևորությունը, գրում են. «Անհարկի է խոսել առավելապես մի ժողովրդի պատմության օգտակարության մասին, որը բազում դարերի ընթացքում եղել է հին աշխարհի հզոր պետություններից մեկը և իր վրա է սևեռել Արևելքի նվաճողների ուշադրությունը. Շամիրամ, Ալեքսանդր Մակեդոնացի, պարթևներ, հռոմեացիներ, արաբներ, այնուհետև՝ Չինգիզ խան, Լենկ-Թեմուր, Նադիր շահ...»[3]: Շարունակելով ներկայացնել Հայաստան ներխուժած օտար նվաճողներին և հայ ժողովրդի մղած ազատագրական կռիվները, նրանք գտնում են, որ հերոսական պատմություն ունեցող այս ժողովրդի անցյալն արժանի է հատուկ ուսումնասիրության, և ափսոսանք են հայտնում, որ այդ «պատմությունը մնացել է համարյա թե մոռացված»[4]:

---

[1] Տե՛ս Яков и Давид Арзановы, Опыт начертания истории царства Армянского, М., 1827.

[2] Տե՛ս Վ. Պարսամյան, Պատմագիտության զարգացումը 19-րդ դ. առաջին կեսին, ԳԱ «Տեղեկագիր», 1953 թ., № 6, էջ 37 /ռուսերեն լեզվով/:

[3] Տե՛ս Я. и Д. Арзановы. Նշված աշխատությունը, էջ III:

[4] Նույն տեղում:

Արզանովների կողմից այս գործը ձեռնարկելու նպատակներից մեկն էլ հայոց պատմությունը որպես համաշխարհային պատմության բաղկացուցիչ մաս ներկայացնելն է: Նրանք ափսոսանք են հայտնում, որ «Հայաստանի պատմությունը, որը հին աշխարհի շատ տերությունների համար վիթխարի փոփոխությունների պատճառ է դարձել, այժմ չի մտնում համաշխարհային պատմության դասընթացի մեջ»[5]: Հիմնավորելով իրենց այս տեսակետը, Արզանովները գրում են. «ուսումնասիրելով հայոց պատմությունը, համարձակորեն կարելի է ասել, որ նրա իմացությունն այնքան օգտակար և անհրաժեշտ է, որքան մյուս ժողովուրդների պատմությունը»[6]:

Հեղինակների կարծիքով, բոլորը կարող են իրենց համար օգուտներ քաղել հայոց պատմության իմացությունից՝ «Կայսրից սկսած մինչև հետավոր գյուղակի բնակիչը»[7]: Արզանովները միաժամանակ ավելացնում են, որ հայ ժողովուրդն աշխարհին տվել է այնպիսի նշանավոր դեմքեր, որոնք կարող են «սովորեցնելու աստիճան ծառայել ողջ մարդկությանը. Արամ, Արտաշես, Տիգրան, Վաղարշակ, Տրդատ, Վռամշապուհ և այլն: Նրանք, վաստակելով բարերար միապետի անուն, մշտապես պատրաստ են եղել պաշտպանելու իրենց հայրենիքի ազատությունն ու անկախությունը»[8]:

Արզանով եղբայրները համոզվածությամբ գրում են նաև, որ եթե պատմաբան-հետազոտողին առավելապես հետաքրքրում է «անցած դարերի պատմության բազմաթիվ մութ ու խճճված էջերի» ստուգաբանումն ու ճշգրտումը, ապա հայոց պատմության ուսումնասիրությունը «հետաքրքրասեր ընթերցողի առաջ բազում նոր հայտնություններ կբացի՝ ինչպես քաղաքական, այնպես էլ հոգևոր և գիտական ոլորտներում»[9]: Նրանք իրավացիորեն գտնում են, որ առանց հայոց պատմության իմացության, անհնար է պատկերացում կազմել Ասիայի քաղաքական պատմության մասին, քանզի «հայոց պատմության մեջ հստակորեն ներկայացված են Ասիայի կարևոր իրադարձությունները»[10]:

Արզանովները միաժամանակ զարմանքով նկատում են, որ «Արևելքի բազմաթիվ ժողովուրդներից, որոնք հայերի հետ հավասար փառքի են արժանացել և ունեցել են պետական հզոր կազմավորումներ, միայն հայերն են կարողացել իրենց սերունդներին հավաստի տեղեկություններ հաղորդել Ասիայում կատարված իրադարձությունների մասին, մինչդեռ ասորիները, խալդերը, մարերը և մյուս ժողովուրդները հազիվ թե կարողանան այդպես հավաստի վկայել իրենց ծագման մասին»[11]:

---

[5] Նույն տեղում, էջ XIX:

[6] Նույն տեղում:

[7] Նույն տեղում:

[8] Նույն տեղում:

[9] Նույն տեղում:

[10] Նույն տեղում:

[11] Նույն տեղում:

Արզանովները անիրական և անհավանական են համարում հայ ժողովրդի ծագման մասին հունական աղբյուրների հաղորդած տեղեկությունները: Իրենց իսկ բնորոշմամբ. «Հայերի ծագման մասին հույն պատմիչների հաղորդած տեղեկությունները կեղծ են»[12]: Արզանովները նման բնորոշումը փորձում են բացատրել հետևյալ կերպ. «Հույն և հռոմեացի պատմիչները իրենց ժողովուրդների մասին ստեղծելով պատմական բնույթի երկեր՝ այն ներկայացնում էին որպես ճշմարտության միակ չափանիշ: Եվ ունենալով արդեն իրենց սեփական պատմագրությունը, նրանք այնուհետև անցան մյուս ժողովուրդների ծագման պատմությանը՝ նրանցից շատերի ծագումն անպայմանորեն կապելով կա՛մ արգոնավորդների, կա՛մ տրոյացիների հետ»[13]:

Ասվածը ապացուցելու համար, Արզանովները բերում են Տրոյայի օրինակը և ցույց տալիս, թե ինչպես որոշ պատմաբաններ հաստատում են նրա գրավման փաստը, իսկ մյուսները, ընդհակառակը, այն համարում են մտացածին. «Հույն պատմիչները նույնիսկ ձգտում են ապացուցել, թե Արևելյան շատ պետություններ առաջացել են իրենցից, այդ թվում և՝ Հայաստանը»[14]:

Այլ է, սակայն, Արզանովների վերաբերմունքը հռոմեական աղբյուրների նկատմամբ: Նրանց կարծիքով, հռոմեական պատմիչների գրածները գրեթե «համապատասխանում են Արևելյան պատմիչների հաղորդած տեղեկություններին... Հատկապես, երբ այն վերաբերում է Տիգրան երկրորդի և նրա որդու՝ Արտաշեսի գահակալությանը[15]:

Դատելով գրքում բերված բազմաթիվ քաղվածքներից, Արզանովները բավականին քաջատեղյակ են նաև ժամանակի եվրոպական հայագիտական գրականությանը և լայնորեն քննարկել են հին աշխարհի պատմության աղբյուրների մասին նրանց հայտնած տեսակետները: Արզանովների կարծիքով, հայ ժողովրդի ծագման հիմնահարցը առավել գիտականորեն է ներկայացված եվրոպացի գիտնականների աշխատություններում: Նրանք հատկապես համամիտ են ֆրանսիացի հայագետ Լե Բրյունի այն մտքի հետ, թե հայերը սերում են Արամից և իրենց անվանում են հայկյաններ՝ Հայկ Նահապետի անունով[16]:

Գրքում բերվում է նաև Աբբատ Միլլոտի մի կարծիքը, որը թեպետ ծայրահեղ է, սակայն հետաքրքրության համար կարելի է ներկայացնել. «Հեթանոս առաջին պատմիչները սկսեցին գրել այն ժամանակ, երբ արդեն բավականին ժամանակ էր անցել պետությունների հիմնադրումից: Հետևաբար, նրանք չէին կարող հիմնվել որևէ աղբյուրի վրա, բացի մութ ու աղոտ ավանդապատումներից... Հույները, ուղղակի, կարողանում էին ավելի հրաշալի ու գունեղ ներկայացնել դրանք»[17]:

---

[12] Նույն տեղում, էջ 26:

[13] Նույն տեղում:

[14] Նույն տեղում, էջ XI:

[15] Նույն տեղում, էջ XII:

[16] Նույն տեղում, էջ 27:

[17] Նույն տեղում, էջ XI:

Այստեղ էլ, մեր կարծիքով, Արզանովները կատարում են ուշադրության արժանի մի եզրակացություն. «Չհամարձակվելով ուղղակիորեն մերժել, կամ էլ կուրորեն ընդունել Հայաստանի մասին հույն պատմիչների թողած նկարագրությունները, նկատենք, որ յուրաքանչյուր երկրի պատմիչին առավել քան հայտնի էր իր երկրի պատմությունը, քան ուրիշինը»[18]: Այլ խոսքով, հեղինակները փաստում են մի կարևոր միտք, որը հետագայում զարգացվում է ուսումնասիրությունում, այն է՝ հայոց պատմությունը քննելիս, ամենից առաջ նախապատվությունը պետք է տալ հայկական, ապա նոր միայն օտար աղբյուրներին, որոնք «այդքան կուրորեն» (Արզանովների բնութագրումն է՝ Հ.Հ.) ընդունված են համաշխարհային պատմագիտության մեջ:

Արզանովներն այդ առումով մի ուշագրավ խորհրդածություն էլ ունեն. իրենց մտքերը հավաստելով Ռուսաստանի պատմության օրինակով, նրանք գրում են. «Ոչ մի պատմաբան, լինի հին թե նոր շրջանի, չի կարող հավասարաչափ վստահության արժանանալ ռուսական տարեգիրների համեմատությամբ, քանի որ դրանք Ռուսաստանի սեփականությունն են»[19]: Որքանով նկատում ենք, ասված է որոշակի և բավականին իրավացի:

Շարունակելով քննել հայկական աղբյուրների արժանահավատության հարցը, Արզանովներն ընթերցողին ուղղակի ստիպում են միանալու իրենց տեսակետներին: Նրանց կարծիքով, օտար պատմիչները, «որոնք բավականին հեռու են եղել հայկական միջավայրից և տեղացիներից տարբերվել են թե՛ իրենց հավատով և թե՛ լեզվով, բարքերով ու սովորություններով, հաջորդաբար գտնվել են կա մ պատերազմի, կա՛մ խաղաղության մեջ, ուստի և բնականաբար պետք է աշխատեին եթե ոչ զենքով, ապա գոնե խոսքով իրենց եռանդը գործադրել նրանց փառքը նսեմացնելու համար»[20]:

Արզանովները համարձակվում են ասելու, որ այդպիսի ճակատագիր է բաժին ընկել նաև հայոց պատմությանը, որն, իրենց խորին համոզմամբ, երբեք էլ այնպիսին չէ, «ինչպես ներկայացված է օտար աղբյուրներում: Եվ որպեսզի սրբենք այն այդ անճշտություններից, անհրաժեշտ է մշտապես դիմել հայ պատմիչներին»[21],- գրում են նրանք: Այս իմաստով, Արզանովների գրքի կարևոր արժանիքը պետք է համարել օտար պատմիչ-պատմաբանների ասածի հանդեպ քննական մոտեցումը:

Այդ աղբյուրներին հեղինակների քաջատեղյակությունը վերստին հավաստում է, որ Լազարյան ճեմարանում հայագիտական կրթությունը դրված է եղել պատշաճ հիմքերի վրա: Դատելով հեղինակների եզրակացություններից, Արզանովները բավականին հաջողությամբ են փորձում հավաստել օտար աղբյուրների հանդեպ հայկական աղբյուրների ունեցած առավելությունը. «Հայ պատմիչների գործերը, Արև-

---

[18] Նույն տեղում, էջ XII:

[19] Նույն տեղում, էջ XIII:

[20] Նույն տեղում, էջ XIV:

[21] Նույն տեղում:

եյքի շատ պատմիչների համեմատությամբ, հավաստի են, իսկ նրանց կողմից Ասիայում տեղի ունեցած իրադարձությունների մասին հաղորդած տեղեկությունները Եվրոպայում այժմ մեծ հետաքրքրություն են առաջացրել, ուստի ձգտում կա տիրապետելու հայերենին և ուսումնասիրելու այն երկրի պատմությունը, որը, չնայած իր հարափոփոխ ճակատագրին, ապրել է իր ոսկե դարերը»[22]:

Ասել, թե Արզանովների մոտ հարթ է ընթացել հայոց պատմության քննական տեսությունը, անշուշտ սխալ կլինի: Հայոց պատմությունը շարադրելիս, ինչպես իրենք են գրում, հանդիպել են բազում դժվարությունների: Որպես գլխավոր բարդություն, հեղինակները նշում են ժամանակագրության հարցը:

Սկզբում նրանք փորձել են ճշտել ու համեմատել հայ պատմիչների հաղորդած ժամանակագրական տեղեկությունները և աշխատել են ընտրել փոքր ի շատե համաձայնեցված տարբերակ, սակայն այստեղ էլ Արզանովները բախվել են հետևյալ խոչընդոտին. «Մեր ձեռքի տակ եղած հայ պատմիչներից չկա և մեկը,- գրում են նրանք,- որը շարադրած լիներ հայոց պատմությունը՝ թագավորությունների հիմնադրումից մինչև նրա անկումը: Ընդհանրապես, նրանցից յուրաքանչյուրը նկարագրել է ընդամենը հանրահայտ մի իրադարձություն... Մի մասն էլ գրել են միայն նշանավոր թագավորների ու զորապետերի կենսագրությունը, մյուսները՝ բացառապես աշխարհագրական և վիճակագրական տեղեկություններ են հաղորդում»[23]: Արզանովներն օրինակ են բերում Ագաթանգեղոսին, Եղիշեին և Ղազար Փարպեցուն:

Այդ հարցում, իհարկե, նրանք վերապահություն ունեն Մովսես Խորենացու նկատմամբ: Ընդգծելով, որ հայոց պատմությունն ամփոփ ձևով առաջին անգամ ներկայացվել է Պատմահոր մոտ, Արզանովները միաժամանակ նշում են, որ նույնիսկ այս աշխատությունը «բազում իրադարձությունների մասին մեզ համոզիչ պատասխաններ չի տալիս... Շատ դեպքերի մասին նա պատմում է կա՛մ խիստ համառոտ, կա՛մ էլ ընդհանրապես լռում է, որը նաև ինքն է խոստովանում»[24]: Կամ՝ մեկ այլ տեղ չհամաձայնելով Պատմահոր հետ Արշակունիների թագավորության հաստատման հարցում, Արզանովները հակված են այն դիտելու որպես պարթևական դինաստիա, մինչդեռ Մովսես Խորենացին գտնում էր, թե Արշակը սերում էր հրեական նախնիներից[25]:

Արզանովները, քննելով այս հարցը, գրում են. «Մյուս պատմիչները, օրինակ՝ Մխիթար Անեցին, հայտնում է, թե պարթևական թագավորության հիմնադիրը Պարթևն է եղել, Հայկի կրտսեր եղբայրը, և այս միտքն ավելի հավաստի է, քանի որ հաստատվում է պարթևների պատմական հուշարձաններով: Բացի այդ՝ նրանց լե-

[22] Նույն տեղում, էջ XVII:

[23] Նույն տեղում:

[24] Նույն տեղում, էջ 69:

[25] «Ուստի թագավորում է Արշակ քաջը, որ Աբրահամի սերնդից էր, Քետուրայի զավակներից, որով հաստատվում էր Աբրահամին ուղղված տիրոջ խոսքը՝ թե «Քեզանից ազգերի թագավորներ կծնվեն»: Տես՝ Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 130:

զում ու կենցաղը այնպիսի նմանություն ունեն հայերի հետ, որ հնարավոր չէ կասկածել նրանց՝ հայերից սերված լինելու մեջ»[26]: Իհարկե, մեղադրել Մովսես Խորենացուն ժամանակագրության և դեպքերի հաջորդականության բացակայության հարցում, մեղմ ասած, Արգանովների կողմից հիմնավորված չէ: Հիմնավորված չէ նաև հեղինակների հայտնած այն կարծիքը, թե Խորենացու միակ և հիմնական նպատակը սերունդներին պատմական դեպքերի ավանդումն է:

Վիճարկելի են Արգանովների այս և նմանատիպ մի շարք այլ տեսակետները ևս, սակայն, ի պատիվ հեղինակների, պետք է նշել, որ, քննադատական նման դիտողություններով հանդերձ, Արգանովները բարձր են գնահատել Մովսես Խորենացու պատմագիտական ժառանգությունը. «Մովսես Խորենացին չխամրող փայլով հավերժացած է եվրոպական շատ գիտնականների մոտ՝ Իտալիա, Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ռուսաստան... Սեր դեպի հայրենիքը և ասելիքի պարզություն, այս են նրա շարադրանքի առանձնահատուկ գծերը... Անաչառ այս Պատմիչը (օգտագործել են մեծատառով՝ հեղ.) մշտապես ծառայել է որպես Հայաստանի նկարագրության առաջին և յուրահատուկ ուղեցույց»[27],- գրում են նրանք:

Արգանովները գրքում հանգամանորեն անդրադառնում են նաև մյուս հայ պատմիչներին, բնութագրում նրանց գործերը: Այդ են հաստատում շարադրանքում բերվող բազմաթիվ բնութագրումները. Եղիշե. «Խոսքի պարզերանություն, արվեստի աստիճանի հասնող նախադասություններ, խելացի և չափավոր մտքեր, որոնք գրավում են յուրաքանչյուրին, ով զբաղվում էր ճարտասանությամբ», Ղազար Փարպեցի. «Պատմաբան-հռետոր... մտքերի մաքրություն և ճշմարտացիություն՝ ահա նրա շարադրանքի բնութագրական գծերը», Կորյուն՝ «Նրա մտքերը բավականին խորիմաստ են, կենդանի և բարձրառոճ»[28]:

Արգանովները գովեստի խոսքեր են ասում նաև Չամչյանի մասին և գտնում, որ նրա «Հայոց պատմությունը» լիարժեք աղբյուր կարող է ծառայել հայոց պատմության ուսումնասիրության խնդրում, հատկապես երբ հարցը վերաբերում է ժամանակագրությանը. «Նրա հայոց պատմությունը շարադրված է հաջորդականությամբ և կապի մեջ,- գրում են նրանք: - Կրքոտ դատողությունները, կենդանի և հստակ մտքերը, հաճելի ու ներդաշնակ շարադրանքը Չամչյանի անունը անմահացրել են արևելյան գրականության մեջ»[29]: Այնուհանդերձ, Արգանովները վերջինիս նկատմամբ ևս պահանջներ ունեն: Նրանք Չամչյանին քննադատում են հայոց թագավորներին ու զորապետներին Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու հանդեպ մի առանձին համակրանք ու նվիրվածություն վերագրելու մեջ և ապա ավելացնում՝ «որին բոլորից շատ նվիրված էր ինքը»[30]:

---

[26] Տես՝ Արգանովների աշխատությունը, էջ 69:

[27] Նույն տեղում, էջ XVIII:

[28] Նույն տեղում, էջ 147-148:

[29] Նույն տեղում, էջ XVIII-XIX:

[30] Նույն տեղում, էջ XIX:

Արզանովները բավականին հաճախ են դիմել նաև համաշխարհային պատմագրությանը և ինչ էլ որ նրանք գրում են ու ասում՝ անպայման հիշատակում են աղբյուրը, ինչպես, օրինակ՝ Աբբատ Բարտելեմին իր գրքում գրում է, Պլինիուսը ասում է, Դիոդոր Սիցիլիացին իր 31-րդ գրքում գրում է, Քսենոֆոնը իր Կյուրոպեդիայում խոսում է... և այլն[31] : Եվ այդ ամենն ընդամենը մեկ էջի վրա: Իհարկե, հեղինակները օտար պատմիչների հաղորդած բոլոր տեղեկությունները չէ, որ անվերապահորեն ընդունել են: Ասենք, օրինակ, ներկայացնելով Տիգրան երկրորդի գահակալության ժամանակաշրջանը, Արզանովները հանգամանորեն քննում են Պլուտարքոսի հաղորդած տեղեկությունները: Վերջինս, օրինակ, պատմում է, թե Լուկուլլոսը Հայաստան կատարած արշավանքի ժամանակ ունենալով ընդամենը 20 հազար զինվոր, ճակատամարտում հաղթել է Տիգրանի 260 հազարանոց բանակին և տվել ընդամենը հինգ զինվորի կորուստ. «Պետք է մտածել,- գրում են Արզանովները,- որ այս նշանավոր կենսագիրը կա՛մ սխալվել է թվերի մեջ, կա՛մ էլ գրել՝ ելնելով բացառապես հռոմեական ժողովրդի հանդեպ ունեցած իր բուռն հակումներից: Ի՞նչ է, հռոմեացիք հայերի դեմ միայն փղե՞ր են հանել մարտի»[32]:

Արզանովները քննում են նաև Պլուտարքոսի հաղորդած մեկ այլ տեղեկություն, թե իբր Տիգրան երկրորդը Տիգրանակերտի ճակատամարտից հետո, հուսահատության պահին, արքայական թագը հանձնել է իր տղային, և որն էլ վախից, իր հերթին այն տվել է պալատականներից մեկին, որն էլ իբր գերվել է հռոմեացիների կողմից: «Ինչպիսի՜ անհեթեթություն,- գրում են Արզանովները,- եթե դա նույնիսկ կատարվել է, ապա ինչո՞ւ չի ասվում, թե ի վերջո ուր մնացին արքայական թագն ու պսակը: Ցավոք, Պլուտարքոսը, որը մանրամասը նկարագրել է այս «հրաշք իրադարձությունը», մեզ ոչինչ չի հայտնում, բացի տեսքի, մեծության ու արժեքի մասին, ինչն այդքան գունեղ սիրում էին նկարագրել հռոմեացի պատմիչները»[33]:

Սա դեռ բոլորը չէ. Արզանովները գրքում բավականին քաղվածքներ են բերում նաև ժամանակի եվրոպական պատմաբաններ Լա Կրոզի, Լափորթի, Էդմ-Մենտելի, Ռիշելյեի, Աբբատ Վիլլեֆուրի և Սեն Մարտենի աշխատություններից: Հաստատելու համար բերենք, օրինակ, հայ ժողովրդին բնութագրող հատվածը. «Այս ժողովուրդը, որն իր զենքի ուժի շնորհիվ սարսափի մեջ է պահել հին աշխարհի բազում հզոր տերությունների և Արևելքում մեծագույն փոփոխությունների պատճառ դարձել, միևնույն ժամանակ առևտրում փառք է ձեռք բերել և մեծ սեր դրսևորել դեպի գիտությունները»[34]:

Տողատակում արված ծանոթագրությունից, սակայն, պարզ է դառնում, որ հայ ժողովրդի մասին այս բնութագրումները Արզանովներինը չեն: Դա էլ իհարկե, պատահական չի արվել Արզանովների կողմից: Հին աշխարհի հզոր պետություն ար-

---

[31] Նույն տեղում, էջ 29:

[32] Նույն տեղում, էջ 84:

[33] Նույն տեղում, էջ 85:

[34] Նույն տեղում, էջ 15:

տաճալտությունը պատկանում է Հակոբ Վիլլոտին, առևտրի փառքը՝ Լափորթին, ները դեպի գիտությունները՝ Վիլլեֆուրին: Վերջինիս Արզանովները հարկ են համարել ավելի հանգամանորեն ներկայացնել. «Ես համարձակվում եմ ասել,- գրել է Վիլլեֆուրը,- որ Հայաստանը կարող է աշխարհի շատ ժողովուրդների դասեր տալ, և անհայտ է, որ բոլոր ժամանակներում նրանցից եղել են մարդիկ, որոնք աչքի են ընկել գիտության բոլոր բնագավառներում. աստվածաբանություն, գրականություն, փիլիսոփայություն, պատմագիտություն: Հայ թարգմանիչներն իրենց արվեստի մեջ հմտացած էին, հունարեն, արաբերեն, պարսկերեն և լատիներեն լեզուների մեջ՝ խորագիտակ»[35]:

Արզանովները միաժամանակ անդրադարձել են օտար այն պատմաբաններին, որոնք այս կամ այն կերպ կասկածի տակ են առել հայ պատմիչների հաղորդած տեղեկությունները, ինչպես, օրինակ՝ Տրդատ Մեծի Բյուզանդիա կատարած ուղևորության վավերականությունը կասկածի տակ էր առնվել գերմանացի պատմաբան Շտիլինգի կողմից՝ պատճառաբանությամբ, թե իբր Եվսեբիոսը Կոստանդինի կենսագրականում այդ մասին ոչինչ չի ասում. «Հարգարժան Հովհան Շտիլինգը,- առարկում են Արզանովները,- իզուր է փորձում հակառակվել մեր պատմիչների հավաստումներին և վկայակոչում է Եվսեբիոսին, որն իր կենսագրականում հաճախ է լռել նաև շատ այլ կարևոր իրադարձությունների մասին»[36]:

Ահա այսպիսի ջանասիրությամբ ու գիտական նախանձախնդրությամբ, Արզանովները պարզաբանում և հստակություն են մտցնում հայոց պատմության այս կամ այն իրադարձության մասին հայ և օտար պատմիչ–պատմաբանների հաղորդած տեղեկություններում: Ուստի պատմագիտական տեսակետից, առավել ևս ժամանակի առումով, Արզանովներն, անշուշտ, դրվատանքի արժանի գործ են կատարել:

Արզանովներն իրենց հետազոտության բուն շարադրանքը սկսում են Հին Հայաստանի մասին աշխարհագրական տեղեկություններով, մանրամասն ներկայացնում Մեծ Հայքի նահանգներն ու գավառները՝ չմոռանալով ընթերցողին հիշեցնել, որ Արարատի գագաթին է իջել Նոյան Տապանը: Ի դեպ, հետաքրքիր մի ընդհանրություն. 19-րդ դարի հայագիտական գրեթե բոլոր ուսումնասիրություններում անպայման փաստվում է այս իրողության իսկությունը և ընդգծվում Հայաստանի՝ որպես մարդկության երկրորդ օրրան հանդիսանալու փաստը:

Արզանովները հայոց պատմությունը շրջաբաժանել են երեք ժամանակահատվածների՝ հին, միջին և նոր: Այդ պարբերացման հիմքում նրանք դրել են դինաստիական գործոնը. հին շրջանն իր մեջ ներառնում է Հայկյան և Արշակունյաց հարստությունների պատմությունը, միջին շրջանն ընդգրկում է Բագրատունյաց և Կիլիկյան Հայաստանի թագավորական տների պատմությունը: Նոր շրջանն Արզանովները սկսում են Կիլիկյան պետության անկումից և շարունակում մինչև 19-րդ դար: Ասենք սակայն, որ Արզանովների գրքում միայն հին շրջանի պատմության

---

[35] Նույն տեղում, էջ 16:

[36] Նույն տեղում, էջ 113:

քննությունն է: Իր հերթին, հին շրջանը Արզանովները բաժանել են առանձին ենթափուլերի: Առաջին ենթափուլը սկսվում է Հայկ Նահապետից (Արզանովները Հայկին համարում են հայկական պետության հիմնադիր) մինչև Պարույր Հայկազնը, կամ 2107 թ. մ.թ.ա. - 748 թ. մ.թ.ա.: Երկրորդ ենթափուլը սկսվում է Պարույր Սկայորդուց և հասնում մինչև Վաղարշակ թագավոր՝ 740 թ. մ.թ.ա.-149 թ. մ.թ.ա.: Եվ, վերջապես, երրորդ ենթափուլը սկսվում է Վաղարշակից և ավարտվում Արշակունյաց թագավորության անկումով՝ 149 թ. մ.թ.ա.- 428 թ. մ.թ.:

Արզանովները գրքում հատկապես շեշտում են հայերի ռազմական արվեստի մեջ հմտանալու փաստը. «Ռազմական արվեստին տիրապետելը,- գրում են նրանք,- հայերի կարևոր արժանիքն է: Նրանք աչքի են ընկնում քաջությամբ ու անօրինակ սխրանքներով... Հայ զինվորների վահանների վրա գրված էր՝ հանուն հայրենյաց... Ծնողները պարտավոր էին իրենց զավակներին դեռ մանկուց վարժեցնել դժվարին աշխատանքներին և ներշնչել նրանց մի սուրբ պարտականություն՝ հաղթել կամ մեռնել հայրենիքի ազատության համար: Հայ ռազմիկները աչքի են ընկել քաջությամբ, համարձակությամբ, ամուր մարմնակազմությամբ և ընդունակություններով: Նրանք համբերությամբ են տարել կյանքի բոլոր դժվարությունները և իրենց արյունը երբեք չեն խնայել հայրենիքի ազատության ու բարօրության համար»[37]:

Խորամուխ լինելով հարցի էության մեջ, կնկատենք, որ Արզանով եղբայրների գրքի հրատարակությունը ժամանակի առումով երբեք էլ պատահական չի եղել: Ընթացող ռուս-պարսկական 1826-1828 թթ. պատերազմի տարում, ռուս ընթերցողին հեղինակների կողմից հայ ժողովրդի մարտական ոգու այս կերպ ներկայացումն, անկասկած, աննպատակ չի եղել: Պատահական չէ նաև Արզանովների կողմից պարսից Շապուհ արքայի՝ իր նախարարներին ուղղված խոսքի մեջբերումը հետևյալ վերաշարադրանքով. «Հայ ռազմիկների հավատարմությունը, նվիրվածությունն ու հայրենիքի հանդեպ սերը վաղուց արդեն ինձ զարմացրել են: Վաղուց արդեն նրանք զրկվել են Արշակից, սակայն մինչև օրս, երբ լսում են զենքի ձայնը, կրկնում են իրենց թագավորի անունը և բացականչում. թող մեր կյանքը զոհաբերվի հանուն հայրենյաց... Երջանիկ է նա, ով կգլխավորի այդ բանակը և կզգա իր հայրենիքի և թագավորի հանդեպ այդքան նվիրվածություն»[38]:

Եվ քանի որ խոսվեց Արշակ երկրորդի մասին, կուզենայինք նշել մի կարևոր փաստ ևս: Ժամանակի հայոց պատմության քննական տեսություններում, այդ թվում և Արզանովների մոտ բավականին բացասական վերաբերմունք և գնահատական կա հայոց պատմության այդ նշանավոր գահակալի մասին: Իհարկե, հասկանալի է, որ Արզանովների այս գնահատականը գալիս է Մովսես Խորենացուց[39]: Մատյանում, Պատմահոր դրական միտումներով հանդերձ, Արշակ երկրորդի մասին գերակայում է խիստ ու բացասական վերաբերմունքը: Սակայն դա հարցի մի

[37] Նույն տեղում, էջ 163:

[38] Նույն տեղում, էջ 163-164:

[39] Տես՝ Մովսես Խորենացի. Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 253-269:

նողմն է միայն: Էականն այն է, որ պատմագիտական այդ գործերում մի կողմ թողնելով անձը, հեղինակները խորհրդածություն են անում իրենց պատկերացմամբ՝ լավ և վատ տիրակալների մասին: Արզանովները, օրինակ, այդ առթիվ գրում են. «Արշակ երկրորդի գահակալությունը որքան կործանարար էր, նույնքան և ուսանելի է: Այն ցույց տվեց, թե ինչ ողբերգության կարող է հասնել մի պետություն, որը ղեկավարվում է բռնակալ-թագավորի կողմից... Արշակի գահակալության հենց առաջին օրերից սկսած, անարդարությունն ու դաժանությունը փոխարինեց օրենքներին, իսկ հույներին և պարսիկներին չհնազանդվելը՝ նախապատրաստեցին նրա մեծագույն դժբախտությունը»[40]: Նույն գնահատականին հանդիպում ենք նաև ռուս հայագետներ Գլինկայի ու Վ. Աբազայի մոտ:

Միաժամանակ Արզանովները հատուկ հիշում են ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենի գրքի այն հատվածը, ուր ասվում է, թե «Արևելքում թագավորած դինաստիաներից Արշակունիներն էին միայն, որ աչքի ընկան քաջությամբ, քաղաքացիական բարեգործությամբ և այնպիսի հազվագույտ որակներով, որոնցով նրանք տարբերվեցին աշխարհի մյուս տիրակալներից և ստեղծեցին կենսունակ թագավորություն»[41]:

Խոսելով հայոց պետականության անկման պատճառների մասին, Արզանովները գտնում են, որ թագավորական իշխանությունը Հայաստանում սահմանափակվել է նախարարական իշխանությամբ, և որ նախարարները, «որոնք առաջնորդվում էին ոչ այնքան պետական բարօրության թելադրանքով, որքան անձնական շահերով»[42]: Շարունակելով այս հարցի քննությունը, նրանք գտնում են, որ նախարարների ու թագավորի անմիաբանության, ինչպես նաև նախարարների երկպառակության պատճառով «չարիքն արդեն դարձել էր ժառանգական և հիմնական պատճառ դարձավ, որ Հայաստանը երկար ժամանակով զրկվեր պետականությունից և գրեթե մշտապես իր վրա կրեր անկախության կորստի խարանը... Թագավորների արագ փոփոխությունները, ներքին երկպառակություններն ու արտաքին պատերազմները, այլազգիների հաճախակի հարձակումներն ու մյուս դժբախտությունները աստիճանաբար և աննկատ կերպով արագացրին նրա անկումը»[43]:

Արզանովները, փորձելով բացատրել այդ իրավիճակը, այնուհետև գրում են. «Որոշ թագավորներ իրենց կյանքը նվիրաբերեցին ընդհանուրի բարօրության համար և զգում էին միապետության անմխիթար վիճակը, սակայն վախենալով ընդհանուրի դժգոհությունից և կտրուկ բարեփոխումներից, ստիպված էին լռել և հաշտվել այս իրավիճակի հետ»[44]: Ի դեպ, պետք է նշել, որ Արզանովների այս մտքերը հե-

[40] Տես՝ Արզանովների աշխատությունը, էջ 121:
[41] Նույն տեղում, էջ 156:
[42] Նույն տեղում, էջ 158:
[43] Նույն տեղում, էջ 157:
[44] Նույն տեղում, էջ 75:

տագայում զարգացում ապրեցին մեր շատ հայագետների, հատկապես Կ. Եզյանի աշխատություններում:

Արզանովները գրքում առանձին բաժին են նվիրել հայ մշակույթի հարցերին և նրա զարգացումն անվերապահորեն կապել են քրիստոնեության ընդունման հետ. «Եկավ Տրդատի զահակալության ժամանակը, և լուսավորությունը նորից հարություն առավ Հայաստանում: Քրիստոնեական հավատի լույսից իմաստնացած, հայերը... անմահ անուններ վաստակեցին արևելյան գրականության մեջ. Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը և մյուսները ձգտեցին դեպի գիտությունները, դեպի բնության իմացությունը: Նրանց հետևեցին անվանի շատ փիլիսոփաներ ու աստվածաբաններ, պատմաբաններ ու բանաստեղծներ, աստղագետներ և մաթեմատիկոսներ»[45]:

Ասել, թե Արզանովների գիրքը զերծ չէ թերություններից, անշուշտ ճիշտ չի լինի: Բնականաբար, նրանց ոչ բոլոր մտքերն ու եզրակացություններն են հիմնավորված, երբեմն կարելի է հանդիպել նաև ուղղակի սխալ դատողությունների ու անհարկի ձևակերպումների, չնայած որոնց՝ Հակոբ և Դավիթ Արզանով եղբայրների «Հայոց թագավորության պատմության ուրվագծման փորձ» ուսումնասիրությունը կարևոր ներդրում էր հայագիտության մեջ: Նրանք շրջանառության մեջ դրեցին եվրոպական մի շարք հայագետների աշխատություններ՝ համապատասխան քննական մոտեցմամբ: Արզանովների գրքում հանգամանորեն քննարկված ու լուսաբանված է նաև հայկական աղբյուրների արժանահավատության հարցը, որն, անշուշտ, ժամանակաշրջանի առումով կարևոր նշանակություն ուներ:

[45] Նույն տեղում, էջ 173:

*ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ*

# ՀԱՂԱՐԾՆԻ ՎԱՆՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ 1885 Թ. ՄԻ ՎԱՎԵՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսը (կթղ. 1866-1882 թթ.) նախանձախնդիր հայ եկեղեցական ունեցվածքի և շահերի պաշտպանությամբ, գործուն քայլեր է ձեռնարկում վանքապատկան մի շարք կալվածքների, որոնց տարբեր միջոցներով տեր էին դարձել ինչ-ինչ մարդիկ և խաշնարած օտարները, վերադարձնելու այդ վանքերին:

Նման ծանր վիճակում էին գտնվում նաև Գուգարք աշխարհի՝ Աղստևի հովտի պատմական վանքերը՝ Գոշավանք, Հաղարծին, Մակարավանք և այլն: Հիշյալ վանքերի կալվածքների վերադարձման, բարեկարգման և հոգևոր կյանքը վերականգնելու խնդիրը իրականացնելու նպատակով Կաթողիկոսը ձեռնարկում է գործնական քայլեր՝ այդ նպատակով ընդգրկելով մի շարք հեղինակավոր հոգևոր և աշխարհիկ անձանց: Նոր Գետիկ-Գոշավանքի տեսուչ է նշանակում իշխան Վախթանգ Փարսադանյանին[1], Հաղարծին վանքում՝ Էջմիածնի միաբանության և Սինոդի անդամ Պողոս վարդապետ Տեր-Սարգսյանին[2], իսկ Մակարավանքում՝ Գրիգոր Տեր-Գրիգորյանին՝ «Արդար Վարդան» մականունով[3]:

Գործնականում, նրանց կողմից տվյալ խնդրի իրականացումը հանդիպում է լուրջ խոչընդոտների: Սակայն համառ պայքարից հետո գործը հաջողվում է գլուխ բերել միայն Հաղարծնի վանքի վանահորը: Նա ոչ միայն կարողանում է սրբավայրից դուրս վռնդել քոչվոր խաշնարածներին, այլև երկարատև համառ, հետևողական և ջանադիր աշխատանքի շնորհիվ ստեղծել վանքի հետագա գործունեությունը ապահովող անհրաժեշտ միջոցներով հագեցած մի տնտեսություն, բարեկարգում շինությունները, նոր շունչ հաղորդում եկեղեցական կյանքին:

Ասվածի հավաստումն են՝ ժամանակի պարբերականներում տպագրված բազմաթիվ հոդվածները և հանրահանաչ մտավորականների կարծիքները (Ռաֆայել Պատկանյան, Ալեքսանդր Երիցյան, Սիմոն Աբամելիք Լազարյան, Մակար Բարխուդարյան և ուրիշներ), բազմաթիվ արխիվային նյութեր:

Կարևոր և ուշադրության արժանի փաստաթուղթ է ՀՀ ՊՊԿԱ-ի վավերագիրը, որի մասին ցանկանում ենք խոսել: Այն կազմված է վանահոր օրոք, 1885 թվա-

---

[1] Մեսրովբ Սմբատյան, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի, որ այժմ Բայազետ գավառ, 1905, էջ 170-178: ՊՊԿԱ, ֆ. 57 ց. 2, գ. 2085:

[2] Նույն տեղում: ՊՊԿԱ, ֆ. 56, ց. 5, թղթապանակ 60, գ. 218, էջ 454:

[3] Մատենադարան, կաթողիկոսական ֆոնդ, ց. 19, վավերագիր 152, թղթ. 230, 259, թղթ. 232 և 260:

կանին, և ցույց է տալիս նախորդած 22 տարիների աշխատանքի ընթացքում վանահոր կողմից ձեռք բերած և ստեղծած եկեղեցական մասունքների, գրչագրերի, գյուղատնտեսական աշխատանքների պարագաների, շինարարական գործիքների, կենցաղային իրերի, բնակելի շինությունների, խաշինքի, գոմերի և այլ օժանդակ կենսական միջոցների՝ ութ թերթերի վրա արձանագրված շուրջ 290 անուն ունեցվածքը «Սեպհականութիւնք Սուրբ Աստուածածին վանից ՀԱՂԱՐԾՆԻ»,[4] որում արտացոլվել է Հաղարծնի վանահայր Պողոս վարդապետ Տեր-Սարգսյանի (1863-1896 թթ.) 22 տարիների անդադրում և հետևողական եկեղեցաշեն ու հոգևոր գործունեությունը: Վավերագիրը թեև անստորագիր է, և չի նշվում դրա կազմելու առիթը, սակայն այն շատ արժեքավոր է:

Արձանագրված իրերի բազմաբնույթ և մեծաթիվ լինելը զարմանք է պատճառում, թե Հայր Սուրբը այդ դժվարին ժամանակներում, ինչպիսի ջանքերի գործադրմամբ է կարողացել ստեղծել, ձեռք բերել այս ամենը և դրա հետ մեկտեղ շրջակա գյուղերի բնակչության շրջանում հոգևոր քարոզչություն կատարել, հորդորել նրանց դպրոցներ հիմնելու, հող մշակելու, շինարարական աշխատանքներ իրականացնելու, քայքայված եկեղեցիները բարեկարգելու համար միջոցներ հայթայթելու և այլն[5]:

Փաստաթղթում արձանագրված իրերը խմբագրված, համակարգված, անվանակոչված և գրանցված են յուրաքանչյուրը համապատասխան խորագրի ներքո.

## Ա - ՍՈՒՐԲ ՄԱՍՈՒՆՔ

-Մի արծաթեայ ոսկեզօծ ձեռաց խաչ, յորում զետեղին ի միջնակետին մասն Կենաց փայտի, ի չորս անկիւնս թեւոց ի ներքոյ հասարակ քարանց մասունք Սրբոց Առաքելոցն Թադէոսի ու Բարդուղիմէոսի, Ս. Լուսաւորչի եւ Թէոդորոս զինաւորի՝ ընծայեալ ի Գէորգ եպիսկոպոսէ Վեհապետեանց - 1 հատ:

-Մի արծաթեայ մեծադիր չիւթիլի խաչ, յորում զետեղի մասն Կենաց փայտի, մի երեսն ոսկեզօծ, ունի յիշատակարան անվերծանելի, ընծայող ի Մատթէոս եպիսկոպոսէ ՎԵՀԱՊԵՏԵԱՆՑ - մեկ հատ:

-Մի Տապանակեայ արծաթեայ տուփ ի միջակետէն հասարակ դեղնագոյն քար, յորում զետեղեն մասունք Ս. Յակովբայ Մծբնայ հայրապետի, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆԻ, Առաքելոյն Յակովբայ Տեառնեղբօր, Գէորգայ զօրավարին և Ս. Ստեփաննոսի, նուէր Յովհաննէս եպիսկոպոսի ԱՍԼԱՆԵԱՆՑ - մեկ հատ:

-Մի փոքրիկ խաչ արծաթեայ չիւթիշի, ի ծայր որոյ շղթայակապ, միւս ևս փոքրիկ խաչ ոսկեզօծ, յառաջնումն մասն Ս. Մինասայ և յերկրորդումն Ս. Յովհաննու Մկրտչի ի չորս անկիւն կանաչ քարինք, ի չորս ճաճանչ անթոս քարիւք - նուիրեալ ի Գրիգոր եպիսկոպոսէ Յովթեանց:

---

[4] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 56, ց. 87, գ. 18, տնտեսական բաժին:

[5] Տես «Էջմիածին» ամսագիր, 1993, № Դ-Ե-Զ:

-Մի արծաթեայ յեռւսայ խաչ ոսկեզօծ չիքիրթմայ, յորում զետեղի մասն անյայտ սրբոյ, չորս թեւքն սղեան քարամբք զարդարեալ. նուէր ի Թադէոս եպիսկոպոսէ Զիւնական - մեկ հատ:

Երկրորդ՝ «Զարդ եւ անօթեղէնք» մասում արձանագրված են ուխտավորների, քահանաների, վարդապետների, իշխանների, եպիսկոպոսների կողմից վանքին նվիրաբերված տարբեր տեսակի և չափսի արծաթյա սրբապատկերներ, կանթեղներ, խաչեր, քշոցներ բրոնզյա, եպիսկոպոսական, հովվական գավազաններ, երեք փրկչական պատկերներ «ի ճակատ երկուց խորանաց, յորոց մին թաղման»՝ նվիրված Մխիթար Գոշի վանքի վերատեսուչ Վախթանգ Փարսադանյանի կողմից, հասարակ աշտանակներ 10, երկու փոքրիկ շահեր «նուէր Մակար արքեպիսկոպոսի»՝ Վրաստանի առաջնորդից, մի զույգ զանգակ փոքրիկ «ի մէջ եկեղեցւոյ, մի զոյգ ևս մեծ ի զանգակատան յիշատակ Յովհաննէս Մամիկոնեանից», գմբեթի խաչ, նույն Մամիկոնյանից «սկիհ արծաթեայ ոսկեօծ մաղզմաիւ, հանդերձ գեղեցիկ շէնք Մոսկուայի, Մասնատուփ արծաթեայ» և այլն:

«Զգեստք» խորագրի ներքո արձանագրված են մի շարք տարբեր գույնի, արծաթյա զառատիպ շուռջառներ, զառ տիպի սեղանի վեց սփռոցներ, տարբեր սաղավարտներ, թաշկինակ Ավետարանի, խաչի, քող գավազանի, ժամհարի գոտի, շապիկ, թաշկինակ, հողաթափ, թնոց, քող սկիհի, Ավետարանի, գավազանի, ուրարք գույնզգույն զառ տիպի ինը հատ և այլն:

«Եկեղեցական գրեանք» և «Զանազան գրեանք» բաժիններում թվարկվում են վանքում պահվող գրքերը:

Բնականաբար անհամեմատ ավելի մեծ կարևորություն է ներկայացնում «Գրչագիրք» բաժինը, ուր թվարկվում են վանքում պահվող հետևյալ ձեռագրերը. «Կանոնգիրք մեծ և փոքր, երկու օրինակ, Աւետարան մագաղաթեայ գրեալ ի Բոնակօթ Սիւնեաց աշխարհի մի օրինակ, Հրահանգ քրիստոնէի մի օրինակ, Պորփիւրի գրոց լուծմունք մի օրինակ, Գիրք աստիճան տալոյ մի օրինակ»:

Է-ից ԺԸ բաժիններում թվարկվում են վանքի ունեցվածքը ներկայացնող առարկաները ու կահկարասին: Հաղարծնի վանքի ժամանակի վարչական համալիրի մասին պատկերացում կազմելու տեսանկյունից բավականին հետաքրքիր է ցուցակի վերջին՝ «Շինուածք» բաժինը, որում թվարկված շինություններից այսօր շատ բան չի պահպանվել: Ըստ այս ցուցակի, վանքն ունեցել է հետևյալ շինությունները.

-Մի քարակիր տուն վերնայարկն ստրապիլով, բաղկացեալ ի միոյ նախասենեակէ եւ ի չորից սենեակաց, իսկ ներքնահարկն կալապան, կից կալապանին ևս մի փոքրիկ կալապան:

-Մի տնտեսատուն, երկու սենեակօք, փոով հացի եւ չարտախով, տանիքն միոյ սենեկի ստրապիլ:

-Երկու խուց ստրապիլով՝ նորոգեալ, մի ճաննաճոց քարուկրեայ - կրից, կից որոյ մի սենեակ հասարակ:

-Փեթակք մեղուաց. յի վաթսուն փեթակք, դատարկ եօթ:

-Վեց գոմանոց:
-Մի մեծ մարագ:
-Մի ջրաղաց:
-Երկու զույգ ջրաղացի քար:
-Մի վրան տախտակաշեն և տախտակամած:
-Ճանապարհը 4000 սաժեն:

Ամփոփելով վերը թվարկվածը, ընդգծենք, որ սույն վավերագիրը, որպես մի կարևոր փաստաթուղթ, ամփոփելով ներկայացնում է Հաղարծին սրբավայրի վերակենդանացման գործունեության ուղղված ազնիվ հոգևոր այս առաջնորդի նախորդ 22 տարիների համառ աշխատանքի շնորհիվ ձեռք բերված հաջողությունները, ցավոք որը չի հաջողվում կատարել Մխիթար Գոշի վերատեսուչ Վախթանգ Փարսադանյանին և Մակարավանքի վանահայր Տեր Գրիգորին, որը սպանվում է օտարների ձեռքով:

Իբրև շարադրվածի հավելում պետք է ընդգծել, որ վանահայր Տեր Պողոս Մարգարյանը չի սահմանափակվում ձեռք բերածով, հետևողական պայքար է ծավալում վանքի իրավունքները նրա կալվածքների նկատմամբ վերականգնելու հարցում: Թեև նրան չի հաջողվում դատարանների միջոցով վերականգնել այդ իրավունքները, բայց և այնպես որոշում և մեկնում է Սանկտ Պետերբուրգ, որտեղ ինը ամիսների ջանքերից հետո Կարապետ Եզյանի աջակցությամբ, սենատի միջոցով վերականգնում է կալվածքների 700 դեսյատին հողատարածքների նկատմամբ այդ իրավունքները, որոնցից ստացվող եկամուտներով ցանկանում էր նաև այլ բարենորոգումներ ձեռնարկել:

Այսպիսով, նրա տասնամյակների պայքարը պսակվում է հաղթանակով և վերականգնվում է արդարությունը: Սակայն Սանկտ Պետերբուրգից վերադառնալուց հետո, ցավոք, 1896 թվականի նոյեմբերի 2-ին Էջմիածնում վախճանվում է տիֆից:

Արժևորելով Հաղարծնի վանահայր Պողոս վարդապետի 34 տարիների (1863-1896 թթ.) գործունեությունը, նրան նվիրված հիշատակի խոսքում «Արձագանք»-ում ասվում է. «ՈՎ ՏՈՆԵԼԻ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՔՈ ՀԻՇԱՏԱԿԸ ԵՐԲԵՔ ՉԻ ԹԱՌԱՄԻԼ, ԴԱՐԵՐ ԿԱՆՑՆԵՆ, ԱՇԽԱՐՀ ԿԻՄԱՆԱ, ՈՐ ԿՈՉՄԱՆԴ ԱՐԺԱՆԻ ԳՈՐԾ ԵՍ ԿԱՏԱՐԵԼ»[6]:

Այսօր ցանկալի է այդ նվիրյալ վանահոր անունը վեր հանվեր և հիշատակվեր իր կողմից վերակենդանացրած Հաղարծնի վանքի վեմերից մեկին, որը և կհանդիսանար մեր հարգանքի արտահայտությունը այդ ազնիվ հոգևոր սպասավորի հիշատակին:

---

[6] «Արձագանք», № 131, նոյեմբեր, 1896 թ.:

*ՄԱՆԻԿ ԲԱԲԱՅԱՆ*

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԵՎ ՄԵՍՐՈՊ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հանճարեղ բանաստեղծի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, անվանի գիտնական, ձեռագրագետ և հասարակական գործիչ Մեսրոպ Տեր-Մովսիսյանի ջերմ բարեկամության սկիզբը կարելի է համարել 1893 թ., քանի որ մեր ձեռքի տակ չունենք ավելի վաղ տարիների հանդիպումներին կամ կապերին վերաբերող նյութեր:

Ամենահին հիշատակությունը՝ «Հարգանքով բարեշնորհ Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանին՝ Թումանյանից., 1893, 4 սեպտ., Թիֆլիս» ընծայագրով՝ Հովհաննես Թումանյանի «Բանաստեղծություններ. Մոսկվա, 1890» գիրքն է: Այստեղ և հետագայում օգտվել ենք Ա. Ռ. Հայրապետյանի «Թումանյանի անձնական գրադարանը Երևանում» քառահատոր մատենագիտական նկարագրությունից (Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1987, 1989, 2000):

Մեսրոպ (ավազանի անունը՝ Փարսադան) Վարդանի Տեր-Մովսիսյանը[1] ծնվել է 1865 թ. մայիսի 7-ին Տաթևի վիճակի (այժմ Սյունիքի մարզ, Գորիսի շրջան) Շինուհայր գյուղում: Շուշիի թեմական դպրոցից հետո սովորել և ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Ապա 1887 թ. ավարտել է Ռևելի (Տալլին) ռուսական գիմնազիան և ընդունվել հայ գրական և հասարակական կյանքում խոշոր դեր խաղացած Դորպատի (Տարտու) համալսարանի դասական բանասիրության բաժանմունքը և ավարտել 1891 թ. որպես դասական լեզուների մասնագետ: «Արգոնավորդների արշավանքի մասին» ավարտաճառի համար պարգևատրվել է ոսկե մեդալով: Ուսման ծարավը նրան այնուհետև տարել է Վիեննա, որտեղ 8 ամիս ունկնդրել է համալսարանի դասախոսությունները և պարապել տեղի՝ հռչակավոր Վիեննայի արքայական գրադարանում: 1892 թ. այցելել է Փարիզ, որտեղ մի կարճ ժամանակ մնալուց հետո, Գևորգյան ճեմարանի տեսուչ Արիստակես եպս. Սեդրակյանի հրավերով գալիս է դասավանդելու ճեմարանում: 1893 թ. ապրիլին ձեռնադրվել է աբեղա, իսկ հուլիսին ստացել է վարդապետի աստիճան: 1893 թ. հուլիսին մեծ աքսորյալին՝ Խրիմյան Հայրիկին Երուսաղեմից դեպի Լուսավորչի գահը հրավիրելու պատվիրակության մեջ էր նաև նա՝ որպես թարգմանիչ: Կաթողիկոսը պետք է Ռուսաստան

[1] Կենսագրության շարադրանքի համար աղբյուրներ են հանդիսացել՝ Արման. Մեսրոպ Մագիստրոս. Թիֆլիս, 1911՝ գրված կաթողիկոսական ընտրությունների առիթով (գիրքը գտնվում է նաև Թումանյանի անձնական գրադարանում)։ Լ. Կարապետյան, Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը. Եր., 1992, Գ. Տեր-Վարդանյան, Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյան. Կենսագործունեությունը. «Ընդհանուր ցուցակ հայերեն ձեռագրաց», Մատենագիտություն. Եր., 1999, գրքերը:

մտնեն և Էջմիածին գար Եվրոպայով՝ Ավստրիայի մայրաքաղաքով, որովհետև չէր կարող մտնել համիդյան Պոլիս:

Այս հետաքրքիր ճանապարհորդության նկարագրությունը Մ. Տեր-Մովսիսյանը տվել է իր «Ուղևորություն Տ. Տ. Վեհ. կաթողիկոսի Ամենայն Հայոց Երուսաղեմից-Էջմիածին, Վաղարշապատ, 1894» գրքում, ընծայագրված՝ «Հովհաննեսին՝ գրողից. 1895 թ. դեկտ. Ս. Էջմիածին»:

«Հայ գյուղական տունը» զեկուցումով, 1894 թ. ամռանը Մ. Տեր-Մովսիսյանը մասնակցել է Ինսբրուկի մարդաբանների ու Ժնևի արևելագետների համաժողովներին: Այդ զեկուցումը որպես գիրք 1894 թ. հրատարակվել է Վիեննայում: Այն ընծայագրված է՝ «Հովհաննեսին՝ գրողից. 1895 թ. դեկտ. Ս. Էջմիածին»: Գիտաժողովի ընթացքում նա հնարավորություն է ունեցել վեց ամիս հաճախելու Փարիզի, Լոնդոնի, Բեռլինի ազգային և արքայական գրադարանները:

1893 թ. Վաղարշապատում լույս է տեսնում Ֆր. Կոնիբերի «Համեմատություն Դավիթ Անհաղթի գրյանց հունարեն բնագրի հետ» (Անգլ. թարգմ. Մ. Տեր-Մովսիսյանցի) գիրքը՝ ընծայագրված «Հովհաննեսին՝ թարգմանչից. 1895 թ. 1 դեկտ. Ս. Էջմիածին»:

1901 թ. Վաղարշապատում լույս է տեսել Վ. Գելցերի «Համառոտություն Բյուզանդական կայսրերի պատմության» (թարգմ. գերմ.՝ Մեսրոպ վ. Տեր-Մովսիսյանցի) գիրքը՝ ընծայագրված «Հովհաննեսին՝ Մեսրոպից, 18/6 1904 Էջմիածին»: Շատ խոսուն է Ջ. Բայրոնի՝ «The poetical works. London» գրքի ընծայագիրը՝ «Հայ բանաստեղծին՝ անգլիացի բանաստեղծեն հիշատակ. Մեսրոպ վրդպ., 1904.30.7. Էջմիածին»:

1903 թ. Պետերբուրգում լույս է տեսնում М. Тер-Мовсесян. Раскопки развалин церкви св. Григория близ Эчмиадзина // Известия С. Петербургской имп. Археолог. комиссии, вып. 7. առանձնատիպը, ընծայագրված՝ «Հովհաննեսին՝ Մեսրոպից. 1907.5.4»:

Մեսրոպ Մագիստրոսը, որպես թարգմանիչ, նաև Մատթեոս Բ Իզմիրլյանին է ուղեկցել Ս. Էջմիածին՝ Կ.Պոլսից Պետերբուրգ և ապա Մայր Աթոռ:

«Հայոց Կաթողիկոսի այցը Կովկասի փոխարքային» հոդվածում[2] Թումանյանը գրում է, որ Իզմիրլյանի և Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի հանդիպումը Մցխեթում Հայոց կաթողիկոսների և Կովկասի փոխարքաների լավագույն հարաբերությունների ապացույցն է: Շնորհիվ այդպիսի հարաբերությունների, պատմական շատ խոշոր թյուրիմացություններ պարզվել և հարթվել են: Այս հանդիպման հետ Թումանյանը կապում էր մեծ հույսեր: Բանաստեղծը նշում է, որ Կովկասի պատմության և ժողովուրդների մշտական հարգանքին են արժանի այն մարդիկ, որոնք «կյանքի ու լուսավորության բարիքներ տվեցին» այս ժողովուրդներին և «հանդիսացան սիրո և համերաշխության բարձր օրինակներ»: Մ. Տեր-Մովսիսյանը, մեծ ազդեցություն ունենալով կաթողիկոսի վրա, վարել է ցարական արքունիքի և

---

[2] «Հորիզոն», Թիֆլիս, 1910, 29 հունիսի:

Կովկասի փոխարքայի հետ եղած բոլոր հնարավոր բանակցությունները[3]: Ինչպես ինքն է գրել, եղել է Խրիմյանի, Իզմիրլյանի և հետագայում Գևորգ Ե Սուրենյանցի խորհրդատուն, կատարել է նրանց հանձնարարությունները «մասնավոր, բարձր իշխանությունների առաջ Պետերբուրգում և Թիֆլիսում»:

Խրիմյանի հետ Թումանյանի երկար տարիների բարեկամությունը, իսկ Իզմիրլյանի հետ՝ կարճ տևակցություններն իրենց գրական արտացոլումն են գտել նաև բանաստեղծի գործերում: Իր «Խրիմյան և Իզմիրլյան» հոդվածում[4] Թումանյանը այսպես է բնութագրել զույգ Հայրապետներին. «Երկուսն էլ հոգևորական էին բառի լայն իմաստով: Երկուսն էլ սիրում էին Ս. Գիրքը ու նվիրված էին հայրենի Եկեղեցուն: Երկուսն էլ վշտով էին հիշում ցոլիցինյան օրերը և առանձին հաճույքով էին կանգ առնում ներկա փոխարքայի վրա»:

Շատ իմաստուն է թումանյանական հետևյալ զուգահեռը. «Իզմիրլյանը պատկառում և ճնշվում էր կաթողիկոսական գահից, իսկ Խրիմյանը թեթև աչքով էր նայում գահի վրա և մինչև անգամ ոտանավոր էր գրում, թե Քրիստոսի հետևողին անվայել է գահը: Իզմիրլյանը գահն էր իրենից բարձր նկատում, Խրիմյանն իրեն էր գահից բարձր համարում: Իզմիրլյանը միշտ ու միայն գործից էր խոսում, Խրիմյանը գործից չէր խոսում և ձանձրանում էր գործից խոսելիս: Իզմիրլյանը սիրում էր խորհուրդ հարցնել, Խրիմյանը վիրավորվում էր, երբ խորհուրդ էին տալիս: Իզմիրլյանը մարդկանց հարգանքով էր վերաբերվում, Խրիմյանը՝ հեգնանքով: Իզմիրլյանը պարզ ու բաց սիրտ, Խրիմյանը՝ բարդ ու խորը: Իզմիրլյանը սրտալի ու շիտակ գործիչ էր, Խրիմյանը՝ խորամիտ փիլիսոփա: Իզմիրլյանը, անկասկած, մաքուր էր, Խրիմյանը՝ անպայման մեծ»:

«Հորիզոն» թերթի 1910 թ. դեկտեմբերի 15, 17, 21 համարներում Թումանյանի «Չպաշտպանեցինք» , «Ազնիվ մարդը», «Մեծերից հետո» հոդվածները նվիված էին Իզմիրլյանին, ինչպես նաև ապագա կաթողիկոսի ընտրությունների շուրջը ծավալված պայքարին, որին ակտիվորեն մասնակցում էր նաև Թումանյանը՝ կաթողիկոսական գահին ազնիվ, անշահախնդիր, հայրենասեր, նվիրյալ հոգևոր առաջնորդ տեսնելու ակնկալիքով:

«Արևելքից Արևմուտք» հոդվածում[5] Թումանյանը գրել է, որ ընդունված էր այն կարծիքը, թե Մխիթարյան զույգ միաբանությունների գրական-գեղարվեստական, գիտական-բանասիրական գործունեությանը Էջմիածնի միաբանությունը երբեք չի հասնի: «Բայց...Էջմիածինը փրկելու են նոր միաբանները իրենց գիտական-գրական գործերով և ժամանակի ընթացքում, ամենայն հավանականությամբ, խլելու են Մխիթարյաններից առաջնության պատիվը այդ ասպարեզում»: Նախկինում հրատարակված աշխատություններից բացի, Թումանյանը ընդգծում է Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի հայերեն ձեռագրերի «Ցուցակը», որը, ըստ Թումանյանի,

---

[3] Գ. Տեր-Վարդանյան, Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյան, էջ 10:

[4] «Հորիզոն», Թիֆլիս, 1910, 14 դեկտ.:

[5] Նույն տեղում, 1911, 13 մայիսի:

«մեծ նշանակություն է ունենալու մեր բանասիրական գիտության համար», հիշատակում է նաև Սահակ Ամատունու «Բառ ու Բանը», Տիրայր վարդապետի՝ Օքսֆորդի և Մանչեստրի հայ ձեռագրերի ցուցակը, Կոմիտասի բեղմնավոր գործունեությունը և, վերջապես, Գ. Հովսեփյանի «Մանրանկարչության արվեստը հայոց մեջ» (Թիֆլիս, 1902) ուսումնասիրությունը և այդ թեմայով Թիֆլիսում նրա կարդացած դասախոսությունները:

Թումանյանը «Կաթողիկոսական ընտրելիներ» հոդվածում[6] գրել է, որ չնայած կաթողիկոսի ընտրության մոտեցող օրվան, ընտրող ժողովրդի և նրա ներկայացուցիչների համար դեռ պարզ չեն թեկնածուների անունները: 1911 թ. ընթացքում արևմտահայ հոգևորականներից նշվում էին Ե. Դուրյանի և Մ. Օրմանյանի, իսկ ռուսահայերից՝ Գ. Սուրենյան և Ս. Պարզյան արքեպիսկոպոսների, Մ. Տեր-Մովսիսյան, Խ. Մուրադբեկյան, Կ. Տեր-Մկրտչյան եպիսկոպոսների և Բագրատ վարդապետի անունները:

Ռուսահայ ընտրելիներից հասարակությանը ծանոթ էին առաջին երկուսը, Բագրատ վարդապետը հանվել էր ցուցակից, իսկ Խորեն եպիսկոպոսը նոր էր ու երիտասարդ և պատրաստ էր հանելու իր թեկնածությունը: Մնում էին Էջմիածնի Սինոդի անդամ Մեսրոպ և Աստրախանի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսները: Քանի որ նրանք քիչ էին ճանաչված լայն հասարակությանը, ուստի Թումանյանը անհրաժեշտ է գտնում մամուլի ուշադրությունը հրավիրել այդ երկուսի վրա, որովհետև հնարավոր էր, որ «ընտրությունների ժամանակ սրանք հանդիսանան կենտրոնական անձնավորություններ»:

Թումանյանը «Մեծ մոլորեցնողն ու ծանր հանցավորը» հոդվածում[7] գրել է, որ կաթողիկոսական ընտրություններին հայ հասարակությունում դրսևորվել է երկու հոսանք՝ պահպանողական կամ կղերական և առաջադիմական կամ ազատամիտ: Առաջին հոսանքի թեկնածուներ են՝ Մ. Օրմանյան, Կ. Տեր-Մկրտչյան, Ս. Պարզյան, Բ. Կյուլեսերյան, իսկ երկրորդինը՝ Ե. Դուրյան, Մ. Տեր-Մովսիսյան, Խ. Մուրադբեկյան:

«Մշակ»-ում Ե. Տեր-Մինասյանը «Առաջիկա հայրապետական ընտրությունների առիթով» հոդվածում, պաշտպանության տակ առնելով պահպանողական թևին, առաջադիմականներին տալիս է անբարենպաստ բնութագիր: Ի պատասխան դրա, Թումանյանը գրում էր. «Մեսրոպ եպիսկոպոսի մասին խոսելիս ամենևին չի հիշատակում, թե նա եղել է մի որևէ դպրոցում, այդ հերիք չի, անցողակի թեստակ է առնում նույնիսկ նրա մագիստրոսությունը: Մի՞թե կարող է պատահել, որ Էջմիածնի նախկին միաբան Ե. Տեր-Մինասյանը չգիտենա, թե Մեսրոպ եպիսկոպոսը վերջացրել է Շուշու թեմական դպրոցը, Ներսիսյան դպրոցը, Ռևելի գիմնազիայի ավարտման վկայական է առել և Դորպատի համալսարանն է ավարտել»:

---

[6] Նույն տեղում, 11 սեպտ.:

[7] Նույն տեղում, 5 հոկտ.:

Մուրադբեկյանին և Դուրյանին նրա տված որակումները ևս Թումանյանը գտնում է չհիմնավորված և կանխակալ: Հոդվածագրի՝ Մեսրոպ և Կարապետ եպիսկոպոսների ռուսերենի իմացության համեմատության մասին Թումանյանը գրում է. «Կարապետ եպիսկոպոսը, որ Գերմանիայում է ավարտել, դուրս է եկել, որ խոսում է ռուսերեն և հիացմունք է ազդում, իսկ Մեսրոպ եպիսկոպոսը, որ Ռուսաստան է սովորել և Պետերբուրգում է ստացել իր մագիստրոսությունը, նրա ռուսերեն գիտենալը համարում է կասկածելի»: Նախիջևանում, թուրք-հայկական ընդհարումների օրերին, թշնամու դեմ գնացողը «իր հոտի քաջ հովիվ» Կարապետ եպիսկոպոսն է, իսկ նույն տեղում գտնվող Մեսրոպի մասին՝ լռություն: Կարապետ եպիսկոպոսի ծառայությունների մասին Ե. Տեր-Մինասյանը սկսում է ուսուցչությունից մինչև ներկա Ատրպատականի առաջնորդությունը: Լռության է մատնում Կովկասի բարձրաստիճան պաշտոնյաների և վերջին կաթողիկոսների կարևոր բանակցություններին Մեսրոպ եպիսկոպոսի՝ նրանց ներկայացուցիչ լինելը: Աղավաղում է ռուս գրող և հրապարակախոս Մ. Մենշիկովի և Մեսրոպ եպիսկոպոսի հայ և հունադավան եկեղեցիների մասին նրանց բանավեճը և եզրակացնում, որ «այսքանը բավական է կարծեմ, որ նրան կաթողիկոս չընտրեն»:

Թումանյանն իր հոդվածը վերջացնում է «ծանր ու տխուր մտքերով», թե այս ամենը արվում է դիմացինին տապալելու համար, տապալում և խորտակում են հավատը մարդու և նրա ազնիվ խոսքի, գործիչի և գործի, գրողի և նրա գրվածքի նկատմամբ: Նա գտնում է, որ այս ամենը «ավելի լուրջ խնդիր է, քան թե ամեն մի կաթողիկոսական խնդիր»:

Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանի և Թումանյանի անկեղծ բարեկամության խոսուն ապացույցն են Մեսրոպ եպիսկոպոսին Թումանյանի գրած նամակները: Թումանյանի Նամականին հրատարակվել է «Երկերի լիակատար ժողովածու»-ի տասներորդ հատորում (Եր., 1999): Բնագիրը պատրաստել և ծանոթագրել է Լ. Մ. Կարապետյանը՝ գիտնականին հատուկ բարեխղճությամբ:

Նամակը գրական այն ժանրն է, որն է՛լ ավելի է բացահայտում գրող-բարեկամի, գրող-հասարակական գործչի մարդկային էությունը: Նույնը կարելի է ասել գրքերի ընծայագրերի մասին, որոնցով հարուստ են Թումանյանի անձնական գրադարանի գրքերը: Թերթենք Հովհաննես Թումանյանի նամականին, ընտրենք Մեսրոպ Տեր-Մովսիսյանին գրած նամակները և այլոց նամակներում վերջինիս մասին տեղեկությունները: Թումանյանն իր նամակները սկսում է «Սիրելի Մեսրոպ», «Իմ սիրելի Մեսրոպ Սրբազան», «Սիրելի Մեսրոպ Սրբազան» խոսքերով:

Սիրական Տիգրանյանին, Թիֆլիս-Ալեքսանդրապոլ, 1910 թ. հուլիսի 13. գրած նամակում Թումանյանը նշում է, որ հունիսի 29-ին Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի և Իզմիրլյան կաթողիկոսի հանդիպման կապակցությամբ վերջինիս շքախմբի մեջ եղած Մեսրոպ և Բագրատ եպիսկոպոսները հյուրընկալվել են Թումանյանին:

«Ընտանիքին. Աբասթուման-Դսեղ, 1910, հուլիս 10» նամակից երևում է, որ Մես-

րոպ Սրբազանը նույնպես հանգստացել է Աբաստումանում:

Մեսրոպ Տեր-Մովսիսյանին գրված նամակը, Թիֆլիս-Էջմիածին, 1911. ապրիլի կեսեր. Թիֆլիսի Բեթղեհեմ եկեղեցու քահանաների միջև ծագած վեճը հարթելու համար խնդրում է Սրբազանի միջնորդությունը: Ակնարկում է նաև Վրաստանի և Իմերեթիայի հայոց թեմի առաջնորդական նոր ընտրությունների խափանման համար, ըստ Թումանյանի, Սրբազանի անարդարացի մեղադրվելը:

Մեսրոպ եպիսկոպոսին գրված հաջորդ նամակում Թիֆլիս-Էջմիածին. 1911 ապրիլի կեսեր, դիմում է խնդրանքով, որ գրող Մարգար Տեր-Ավետիսյանին, Ղուկասյանի անվան թոշակ նշանակելու համար Սրբազանը միջնորդի: Շուշեցի մեծահարուստ Ավետիք Ղուկասյանի (1837-1902 թթ.) կտակի համաձայն, թոշակի նշանակումը տնօրինելու էր կաթողիկոսը կամ Էջմիածնի ճեմարանի վարչությունը: Տվյալ դեպքում Մեսրոպ եպիսկոպոսը պետք է ստանձներ միջնորդի դերը: Գրում է նաև «Հորիզոն» թերթի առաջ ծառացած խնդիրների, կաթողիկոսական ընտրությունների և այն մասին, թե ինչպես «Քեզ հայհոյողներն էլ քանի գնում է, քեզ հետ բարեկամանում են»: Խոսքը Մ. Մենշիկովի և Մ. Տեր-Մովսիսյանի բանավեճի մասին է:

Հաջորդ նամակում Թիֆլիս-Էջմիածին. 1912, մայիսի 6, շնորհակալություն է հայտնում ազատվելու առթիվ Սրբազանի շնորհավորական հեռագրի համար: Դառնացած բանտարկության առիթներից, խոսում է դատի, նախաքննության, դատավարության և ավարտի մասին: «Պետք է Թիֆլիս գաս» խոսքերը վերաբերում են հետևյալին: Մեծահարուստ Համբ. Մելիքյանի և Վրաստանի ու Իմերեթիայի հայոց հոգևոր թեմի ժամանակավոր կառավարիչ Եփրեմ եպիսկոպոսի հետ Թումանյանի բանակցություններն ավարտվել են 1913 թ. հունվարին, Մեսրոպ եպիսկոպոսի՝ վերոհիշյալ թեմի առաջնորդ նշանակմամբ:

Նամակի առիթը՝ հայ տպագրության 400-ամյա հոբելյանն էր, նախաձեռնողը Լեոն էր, իսկ Թումանյանը՝ այդ գործի առաջին պաշտպանը, ընթացք տվողը և ակտիվ մասնակիցը: Էջմիածնում և Թիֆլիսում ստեղծված հանձնաժողովների միջև տոնակատարության ժամանակի մասին տարակարծությունների վերջակետը դրվել է Գևորգ Ե Կաթողիկոսի միջամտությամբ: 1912 թ. հոկտեմբերի 13-ից մինչև 1913 թ. նույն օրը հայտարարվել է հոբելյանական տարի: Մեսրոպ եպիսկոպոսը կաթողիկոսին Պետերբուրգ ուղեկցելու առիթը պետք է օգտագործեր հայագիտության կամ հայկական ակադեմիայի խնդիրը Ն. Մառի հետ քննարկելու համար: Այդ հարցերի մասին կա Ն. Մառին ուղղված Հովհ. Թումանյանի նամակը՝ գրված 1912 թ. ապրիլի 25-ին:

Մեսրոպ Մագիստրոսին ուղղված մյուս նամակում Թիֆլիս-Էջմիածին. 1912, նոյեմբ. 10, Սրբազանին խնդրում է դերասան Արմեն Արմենյանի եղբորը՝ Գ. Իփեկյանին թույլատրել պարապել Էջմիածնի Մատենադարանում:

Հաջորդ նամակում Թիֆլիս-Էջմիածին. 1913, հունվ. 28, իր և ընտանիքի կողմից Սրբազանին շնորհավորում է թեմի առաջնորդ ընտրվելու և Թիֆլիս տեղափոխվելու համար: Որպես Էջմիածնի Սինոդի անդամ խնդրում է նրա միջնորդությունը՝

մեղմացնելու Ներսես քահանա Հերթևցյանի գործած մեղքի համար կրելիք պատիժը: Թումանյանի գրադարանում է գտնվում Ն. Հերթևցյանի «Ответ архиепск. М. Мурадяна на послание Римского Папы Льва 13 /пер. с арм./. с прил. статьи» Придерживается-ли Арм. церковь монофиз. учения Евтихия? Ответ М. Меньшикову / Свящ. Н. Эртевцяна. Ростов н/ Д., 1913 գիրքը՝ հետևյալ ընծայագրով. «Возлюбленному поэту и публицисту Ованесу Туманяну от Нерсеса Эртевцяна. 1913 г., 6 марта. Ростов н/Д.», հավանաբար որպես երախտագիտության նշան:

Թիֆլիս-Էջմիածին. 1913, փետրվ. 11 նամակում գրում է Սրբազանին՝ օգնելու, «Հորիզոն» թերթի աջակցության և 1911 թ. կաթողիկոսական ընտրություններում «Մշակ»-ի բացասական վերաբերմունքի մասին: Սրբազանին ասում է, որ անդամակցելով Թիֆլիսի գրողների ընկերությանը՝ «Այստեղից դու կունենաս մշտական պաշտպանություն և համակրանք»: Ցավով նշում է, որ «մեր բարձր հոգևոր հայրերից – կաթողիկոս թե առաջնորդ - չմոտեցան գրականությանը»:

Ջաղվեր-Թիֆլիս. 1914. 3 օգոստ. գրված նամակում «Հայ ժողովրդի պատմական առողջ տրամաբանության և զգացմունքի» դրսևորում է համարում Վրաստանի և Իմերեթիայի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Մեսրոպ Սրբազանի նախաձեռնությամբ կազմակերպված Թիֆլիսի հայության ցույցը: «Մշակ»-ը գրել է. Ռուսաստանի նկատմամբ ունեցած հավատով, ժողովուրդը Թիֆլիսի վանքի Մայր եկեղեցում մասնակցել էր պատերազմի առիթով տրված Պատարագին, որից հետո հոգևորականները շարականներ երգելով, «խաչ ու խաչվառով» թեմի առաջնորդի գլխավորությամբ գնացել են փոխարքայի պալատ, որտեղ Մեսրոպ եպիսկոպոսն իր եղույթը և աղոթքը նվիրել է ռուսական զենքի հաջողությանը:

Փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովը պատասխան խոսքում իր համակրանքն է հայտնել հայ ժողովրդին, գնահատել նրա հավատարմությունը Ռուսաստանին և խոստացել այդ մասին տեղեկացնել թագավորին: Թումանյանն իր նամակը վերջացրել է՝ «Վերևից մինչև ներքև կանգնած ենք Ռուսաստանի հետ, և սրա վերջը շատ լավ բաների հետ կլինի հայոց հարցի վճիռը» խոսքերով:

1912 թ. հոկտեմբերի 31-ին Թիֆլիսում գումարվել էր Կովկասի հայաշատ բնակավայրերի պատգամավորների ժողով, ընտրվել էր Հայոց ազգային բյուրո, որի նպատակը պետք է լիներ Հայկական հարցը հանել միջազգային ասպարեզ: Մեծ է եղել Բյուրոյի դերը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայ կամավորական խմբեր կազմելու և գաղթականությանն օգնելու գործում: Թումանյանն այդ Բյուրոյի կենտրոնական կոմիտեի անդամ էր, իսկ Մեսրոպ Տեր-Մովսիսյանը՝ պատվավոր նախագահ: Բյուրոյի հրավերով, 1914 թ. օգոստոսին Վանից Թիֆլիս ժամանած Անդրանիկն իր պատրաստակամությունն է հայտնել Արևմտյան Հայաստանում ընդհատված հայդուկային ազատագրական պայքարն այս անգամ շարունակելու ռուսական բանակի հետ: Մեսրոպ եպիսկոպոսը, Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանը և բժիշկ, հասարակական գործիչ Հ. Զավրիևը Անդրանիկին ներկայացրել են Կովկասյան ռազմաճակատի ընդհանուր հրամանատարությանը:

Մինչ ռուս-թուրքական պատերազմի սկսվելը, 1914 թ. հոկտեմբերին Թիֆլիսում ստեղծվել էր «Պատերազմից վնասվածներին օգնող կենտրոնական կոմիտե», որը մշակութային և հոգևոր գործիչների մասնակցությամբ ծավալել էր ընդարձակ գործունեություն: Մեսրոպ Տեր-Մովսիսյանի նախագահությամբ կոմիտեի առաջին նիստում որոշվում է խնդրել կաթողիկոսին՝ հատուկ կոնդակով կոչ անել հայ ազգաբնակչությանը, նպաստելու կոմիտեի գործունեությանը, վերջինիս օգնելու խնդրանքով դիմել բոլոր ընկերություններին, անհատներին և գավառային մտավորականությանը:

Թումանյանը ընտանիքին գրված նամակում Արծափ-Թիֆլիս. 1914, նոյեմբ. 20, ասում է, որ դեպի Արևմտյան Հայաստան ճամփորդությունը նախապատրաստել էին Գևորգ Ե Կաթողիկոսը և Հայոց ազգային բյուրոյի նախագահ Ս. Հարությունյանը: Մասնակիցների ընտրությունը կատարել էր Մեսրոպ Տեր-Մովսիսյանը: Հանձնաժողովի կազմում էին Թումանյանը, Շիրվանզադեն, Մեսրոպ Սրբազանը, Խորեն եպս. Մուրադբեկյանը (հետագայում կաթողիկոս), Ներսիսյան դպրոցի տեսուչ Հ. Խունունցը, Ամբ. Խաչատրյանը՝ Երևանի ապագա քաղաքագլուխը, Ն. քհն. Բավրյանը՝ Տեր Նիկոլը:

Էջմիածնում ստանալով համապատասխան հանձնարարականներ, խումբը 1914 թ. նոյեմբերի 15-ին ճանապարհորդում է դեպի Իգդիր-Բայազետ-Ալաշկերտ-Բասեն-Սարիղամիշ-Ալեքսանդրապոլ-Թիֆլիս: Դեռ Արծափ չհասած, նոյեմբերի 20-ին ստացվել է շտապ հեռագիր՝ Մեսրոպ եպիսկոպոսին կարգադրվել է հետ վերադառնալ՝ Նիկոլայ Երկրորդ կայսեր՝ Թիֆլիս ժամանելու կապակցությամբ: Մեսրոպ եպիսկոպոսը սակայն խմբին ուղեկցել է մինչև Բայազետ և Թիֆլիս է վերադարձել նոյեմբերի 22-ին: Ճանապարհորդության նպատակն է եղել՝ «հայ զինվորներին հոգեպես մխիթարելը», տառապող հայ ժողովրդին հուսադրելը և ամենակարևորը՝ հանդիպել ցարական զորամասերի բարձրաստիճան հրամանատարներին, պարզաբանել և հերքել հայ կամավորական խմբերի հասցեին տարածված աննպաստ խոսակցությունները: Նոյեմբերի 20-ին Արծափի հին եկեղեցում Մեսրոպ և Խորեն եպիսկոպոսների կողմից կայսերական մաղթանք է կատարվել և համապատասխան աղոթքներ են կարդացվել: Ժողովրդի կրած նեղությունները Մեսրոպ եպիսկոպոսը համարել է ժամանակավոր, անցողիկ: Նոյեմբերի 21-ին Բայազետում հանձնախմբին ընդունել է գեն.-նահանգապետ Դրյագինը: Մեսրոպ եպիսկոպոսը շատ հստակ բացատրել է հայերի ինքնավարության հարցը, որ դա ոչ թե հայերի պահանջն է, այլ ռուս կառավարության քաղաքականությունը: 1905-1915 թթ. Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը (1837-1916) հայ կամավորական խմբեր ստեղծելիս ռուսական կառավարության և Կովկասի զինվորական բարձր հրամանատարության անունից հայերին խոստացել էր ինքնավարություն՝ համոզված լինելով դրա անիրագործելիությանը:

Մեսրոպ Տեր-Մովսիսյանին. Թիֆլիս-Աստրախան. 1916, 6 նոյեմբ.: Մինչ այս նամակը Թումանյանը Սրբազանից ստացել էր երկու նամակ՝ գրված 1916 թ. սեպտ. 15-ին և հոկտ. 15-ին: Նամակում գրում է Մեսրոպ Մագիստրոսի՝ Թիֆլիսից հեռա-

ճալուց հետո Ազգային բյուրոյի չկայացած նիստերի. Բյուրոյի շուրջը քաղաքում տարածված «դրամական բովանդակություն» ունեցող պատմությունների մասին: Խոսքը վերաբերում է Բյուրոյի տրամադրության տակ դրված բավականաչափ գումարների, որ Անդրանիկ զորավարը հավաքել էր հանգանակությամբ՝ փախստական հայերին օգնելու նպատակով:

Գումար էր ստացվել նաև Ռուսաստանից: Դրանց վերաբերյալ Անդրանիկը պահանջում էր մանրամասն հաշվետվություն: Խոսակցություններն այն մասին էին, իբրև թե Ազգային Բյուրոյի պատվավոր նախագահ Մ. Տեր-Մովսիսյանը Թիֆլիսից Աստրախան՝ նոր պաշտոնատեղի մեկնելով հաշվետու չի եղել դրամի ծախսման մասին: Սակայն Ազգային Բյուրոյի նախագահի տեղակալ Ալ. Խատիսյանը հերքել է այդ զրպարտանքը: Թումանյանն ասում է. «Մի խոսքով անտանելի դրություն է ստեղծվել, որից Աստված և կաթողիկոսը քեզ ազատեցին: Բայց մարդ արարածը միշտ ապերախտ է, թեկուզ մինչև անգամ եպիսկոպոս լինի: Եվ չեմ իմանում, էս լավությունը դու պիտի գնահատե՞ս, թե չէ»:

Մինչ վերոհիշյալ նամակը, 1916 թ. հոկտեմբերի 27-ի՝ Ն. Մառին ուղարկած գրության մեջ, Հայ գրողների կովկասյան միության նախագահ Թումանյանը գրում է, որ այդ ընկերության նախաձեռնությամբ, հայ մտավորականների և հարուստների մասնակցությամբ հիմնադրվող «մի խոշոր ընկերության» մասին: Խոսքը վերաբերում է Հայկազյան ընկերությանը[8], որի նպատակը պետք է լիներ կազմակերպել հայոց ակադեմիա, դնել հայկական համալսարանի հիմքը, զարգացնել հայագիտությունը: Այդ նամակով ցանկանում է իմանալ, թե արդյոք Մառը կաջակցի՞ ընկերության աշխատանքներին:

Իսկ նույն տարվա նոյեմբերի 6-ին Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանին գրած նամակում հայտնում է նշված գործի հաջողության մասին և հայտնում, որ Սրբազանը, որն Աստրախանի հայոց թեմի առաջնորդն էր (1916 թ. կեսերից – 1917 թ. 19 դեկտ.), նույնպես ընդգրկված է «առաջիկա հայոց բարձրագույն կուրսերի և հայկական ակադեմիայի համար նշանակված գիտնականների ցանկի մեջ»: Մեսրոպ եպիսկոպոսը պատասխանել է. «...խոսք եմ տալիս անպատճառ թողնել, այսպես կոչված, պաշտոնները և միանգամայն նվիրվել այդպիսի աշխատանքի: Բայց դժբախտությունն այն է, որ ես չեմ հավատում այդպիսի մտադրության հնարավորության»:

Ընկերության կանոնադրությունը, գրված Թումանյանի, Կ. Ալիխանյանի (մեծահարուստ, բանկային գործիչ), Մ. Բերբերյանի կողմից, երկար քաշքշուկից հետո հաստատվել է 1917 թ. դեկտեմբերի 1-ին: Չնայած դրան, 1917 թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին տեղի է ունեցել 13 նիստ: Հունիսի 4-ի նիստում ընկերության նախագահ է ընտրվում Կ. Ալիխանյանը, փոխնախագահ՝ Հովհ. Թումանյանը, քարտուղարներ՝ Ստ. Լիսիցյանը, Ստ. Մալխասյանցը, գանձապահ՝ Մ. Բերբերյանը:

---

[8] Ավելի մանրամասն տե՛ս Լ. Ա. Կարապետյան, Թումանյանը և Հայկազյան ընկերությունը: Թումանյան, Ուսումնասիրություն և հրապարակումներ: Հտ. 5. Եր., 1998, էջ 94-124:

Ընկերության ուսումնական ենթաժողովի հունիսի նիստերին հրավիրված էին Ն. Մառը և Մ. Տեր-Մովսիսյանը:

1917 թ. հոկտեմբերի 30-ի նիստում որոշվում է ակադեմիայի ցմահ անդամների կարգավիճակը: Ազատ անդամներ են առաջադրվում Մ. Տեր-Մովսիսյանը, Գ. Հովսեփյանը, Ստ. Մալխասյանցը: Որոշվում է նյութապես նպաստել Մ. Տեր-Մովսիսյանին՝ ձեռագրերի ցուցակը հրատարակելու, Ստ. Մալխասյանցին՝ հայերեն բառարանը հրատարակելու, Գ. Հովսեփյանին՝ մանրանկարչության արվեստին նվիրված ուսումնասիրությունները շարունակելու:

Նոյեմբերի 3-ի՝ Թումանյանի նախագահությամբ նիստում գրականության բաժնի համար միաձայն հավանական անդամներ են առաջադրվում Թումանյանը և ժամանակի հայ ականավոր գրողները: Գեղարվեստի բաժնում առաջադրվում են Եղ. Թադևոսյանը, Կոմիտասը և Թ. Թորամանյանը:

Ընկերության ժամանակավոր վարչության նոյեմբերի 5-ի նիստում Թումանյանը զեկուցել է հայկական ակադեմիայի բնույթի մասին, որը նման չպետք է լիներ ֆրանսիական կամ ռուսական պատվո ակադեմիաներին, այլ պետք է լիներ մի այնպիսի հաստատություն, որը միջոցներ և հարմարություններ ստեղծեր հայագիտությամբ զբաղվողներին՝ իրենց սիրած գործին նվիրվելու: Գրողների հարցը Թումանյանի առաջարկությամբ հետաձգվում է մինչև մյուս ճյուղերի կազմակերպումը: Չնայած Թումանյանի առարկությանը, խորհրդի անդամների համաձայնությամբ նրա անունը գրվում է հայ բանաստեղծների ցուցակում: Վարչության նոյեմբերի 21-ի ժողովում Մ. Աբեղյանը և Մ. Տեր-Մովսիսյանը առաջարկում են կազմել հանձնաժողով՝ ուսումնասիրելու և զեկուցելու ակադեմիայի թեկնածուների գիտական աշխատանքների մասին, անհրաժեշտության դեպքում հաշվի առնել այլ գիտնականների կարծիքը:

Վիճաբանություններից և արտահայտված տարբեր կարծիքների քննությունից հետո կազմվում է ակադեմիայի 18 անդամների նոր ցուցակը՝ Ն. Ադոնց, Հ. Օրբելի, Կ. Կոստանյան, Մ. Տեր-Մովսիսյան, Գ. Տեր-Մկրտչյան, Գ. Հովսեփյան և ուրիշներ:

Հայկազյան ընկերության աշխատանքները ընդհատվեցին 1917 թ. դեկտեմբերին սկսված ռուսական հեղափոխությունից հետո: Ընկերության գլխավոր նպատակներից մեկն էր հայկական համալսարանի ստեղծումը, որը երեք տարի անց իրականացավ արդեն Հայաստանի Հանրապետությունում և 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում հիմնվեց հայոց համալսարանը:

Չի ուշանում Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահ Թումանյանի հեռագիրը՝ «Թե՛ ընկերության, թե՛ իմ կողմից սրտագին շնորհավորում եմ հայկական առաջին համալսարանի բացումը ազատ Հայաստանում: Մեր ժողովրդին բռնակալներից ֆիզիկապես ազատելուց հետո պիտի ազատել նրա միտքն ու հոգին խավարի և տգիտության բռնակալությունից և հաղորդակից անել լուսավոր մարդկության ու տիեզերքի մեծ կյանքին: Մեր դարավոր մաքառումներով մենք դրան ենք ձգտել ամբողջ ցեղով: Հայկական համալսարանը պիտի կատարի էդ մեծ ու նվիրական գործը: Հայ գրողների կյանքն ու բախտը անխզելիորեն կապված են հա-

յոց համալսարանի կյանքի ու բախտի հետ: Կեցցե՛ ազատ Մայր Հայաստանը: Կեցցե՛ ազատ Հայաստանի ազատ համալսարանը»:

Համալսարանը 1920 թ. ամռանը տեղափոխվեց Երևան: Չնայած քաղաքական անբարենպաստ պայմաններին, 1920 թ. դեկտեմբերի 28-ին բացվեց Երևանի ժողովրդական համալսարանը: Հայագիտական բաժնի դեկան են ընտրվում Հայկազյան ընկերության Թումանյանի գործընկերներից՝ Մեսրոպ Տեր-Մովսիսյանը (նաև իր վկայությամբ), ապա Սիրական Տիգրանյանը:

Թումանյանը՝ Մեսրոպ Տեր-Մովսիսյանին, Երևան-Էջմիածին, 1921, մարտի 25, 26: Այս նամակով, որ գրել էր փետրվարյան հեղաշրջման ապրիլի 2-ի պարտությունից հետո, Թումանյանը նպատակ է ունեցել Սրբազանին ծանոթացնելու Հայաստանում տիրող վիճակի նկատմամբ իր վերաբերմունքի մասին:

Նույնին՝ Թիֆլիս-Էջմիածին, 1922, 29 օգոստոսի: Ծատ է ազդված Սրբազանի նամակից: Հավանական է, որ այդ օրերին, Էջմիածնի հոգևոր գործիչների, հատկապես գիտնական միաբանների նկատմամբ սկսված հալածանքի մասին է. «Քեզ համար քո գիտությունով պարապի, գործդ[9] գետնին հո չի մնալու: Այնուամենայնիվ, վշտանալու առիթ կա, հիրավի, եթե ոչ հուսահատվելու: Փոխանակ օգտվելու թե՛ քո, թե՛ Գարեգին եպիսկոպոսի[10] ուժերից, նրա են մղում»:

Նշեցինք Մեսրոպ Տեր-Մովսիսյանի ընծայագրած գրքերը Թումանյանին: Բայց Թումանյանն իր գրադարանը համալրել էր նաև Մեսրոպ եպիսկոպոսի հետևյալ երկասիրություններով. «История перевода Библии на армянский язык». СПб, 1902, «Էջմիածին ու հայոց հնագույն եկեղեցիներ», Վաղարշապատ, 1905, «Հատուածք երկաթագիր Հին Կտակարանի: Հանդերձ հնագրական պատկերաւ». ՊԳ, 1915 (Տպ. Գիտ. ճեմ. կայսեր.), Ծապուհ Բագրատունի, «Պատմութիւն» ի լոյս ածին Գ. Տեր-Մկրտչյան, Մեսրոպ եպիսկոպոս. Էջմիածին, 1921 (Տպ. գիտ. ինստիտուտի):

Մեսրոպ Տեր-Մովսիսյանին ուղարկած վերջին նամակից ութ ամիս անց, 1923 թ. մարտի 23-ին, իր մահկանացուն կնքեց Հովհաննես Թումանյանը, որով և դադարեց հայոց մեծ բանաստեղծի և գիտնական միաբանի՝ Մեսրոպ արքեպիսկոպոսի ջերմ ու անկեղծ բարեկամությունը:

[9] «Ցուցակ հայոց ընդհանուր ձեռագրերի» աշխատությունը:

[10] Գարեգին եպիսկոպոս Հովսեփյան, հետագայում Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո:

*ԲԱԿՈՒՐ ԳԱԼՍՏՅԱՆ*

# ԳՈՅԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ՀԻՍՈՒՆԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԴՐԱՄԱՆԵՐՈՒՄ

*«Ես ամեն ինչ գիտեմ այս աշխարհի մասին՝ չարիք և թշվառություն, ատելություն և վախ, անմաքրություն և փտություն... թող այդպես լինի, ես սիրում եմ այս աշխարհն այնպես, ինչպես որ կա»:*

**Վիլյամ Սարոյան**

Հետպատերազմյան առնվազն երեք տասնամյակների ընթացքում համաշխարհային գրական կյանքի առաջին գծում էին այն գրական ուղղությունները, որոնք ընդունում էին գրողի պատասխանատվությունը հասարակության առջև, քննում էին անհատի դրաման ընկերային անտարբերության խորքի վրա: Գրականության մեջ աստիճանաբար գերիշխող դիրքեր էին նվաճում «նոր գրականության» ըմբռնումները և էկզիստենցիալիստական հայացքները: Վերջինիս յուրահատկությունն այն էր, որ, ունենալով փիլիսոփայական մշակված կայուն համակարգ, այն միաժամանակ դուրս էր մղվում փիլիսոփայական գեղագիտական համակարգից և դառնում աշխարհազգացողություն, ոչ քիչ դեպքերում՝ առօրեական և զգացմունքային (Գ. Մարսել, Մ. Պրուստ, Ա. Մալրո, Ժ.-Պ. Սարտր):

ԱՄՆ-ում էկզիստենցիալիզմի տարածմանը և ամրակայմանը նպաստեց նախ հետպատերազմյան ամերիկյան իրականությունը, որը ոչ մի լավ բան չէր խոստանում, ավելին՝ այն խորացնում էր մինչ այդ եղած քաղաքական, տնտեսական ճգնաժամը: 40-ական թվականների ավարտը և 50-ական թվականների կեսերը համընկան մակկորտիզմի տխրահռչակ քաղաքականության առաջ բերած բարոյական հուսալքությանը:

Ամենուր Ջոզեֆ Ռեյմոնդ Մաքքորտիի ծավալած ծայրահեղ ռեակցիան հետապնդում ու հալածում էր առաջադեմ մտավորականությանը և դեմոկրատական ուժերին, հակապետական շինծու մեղադրանքներով բանտարկում ու մահվան էին դատապարտում հազարավոր մարդկանց: Դատապարտվում էր երկնող միտքը, առաջադեմ հայացքը, ըմբոստ ոգին: Ամենուրեք թագավորում էր բռնությունը, կասկածամտությունը, վախը: Այս ծանր ու դաժան իրականությունը, բնական է, չէր կարող իր դրոշմը չդնել այդ նույն իրականության մեջ ապրող և ստեղծագործող հեղինակների վրա, առհասարակ՝ ժամանակի գրականության վրա:

«Միացյալ Նահանգների գրողների տիրապետող մասը այսօր ամերիկյան իրականության մեջ նշմարում է քաղաքական և ընկերային խճճված մի լաբիրինթոս, որից ելք չկա,- հավաստում է Վիլյամ Սարոյանը,- ըստ նրանց՝ կյանքը դանդաղ և տառապագին մի անձնասպանություն է, ու նրանք այս թախծալի և ճնշող մթնոլորտը փոխադրում են իրենց երկերի մեջ: Ոչ նվազ տաղանդավոր հեղինակներ, ինչ-

պես Ջըրջըրդ Սիլվանը և ուրիշներ, ձգտում են մարդկանց հանդեպ մնալ վեհանձն և լոյալ, այն մարդկանց, որոնց ուղղում են անկեղծությամբ և մարդասիրությամբ տոգորված իրենց ստեղծագործությունները»[1]:

Ահա այս ժամանակաշրջանի ծնունդն են Վիլյամ Սարոյանի «Կոտորածն մանկանց» (1952) և «Քարանձավի մարդիկ» (1957), «Տարեկանի արտում» (1954), «Գնա՛, ծերուկ» (1953) դրամաները:

«Կոտորածն մանկանց» դրաման ուղղակիորեն արտացոլում է ամերիկյան կյանքի մթնոլորտը մակկարտիզմի տարիներին: Այս դրաման, կարծում ենք, սխալված չենք լինի, եթե համարենք Վիլյամ Սարոյանի ամենաուժեղ ստեղծագործություններից մեկը: Այն առաջ է քաշում գրողին բնորոշ հարցեր, որոնք հավասարապես վերաբերում են մարդկային արարքներին, կյանքի իմաստին և, որ գլխավորն է՝ ուրիշների ճակատագրերի պատասխանատվությունն իր վրա վերցնելու մարդու իրավունքներին:

Դրամայի գործողությունը ծավալվում է քաղաքային ռեստորանում, ուր նիստեր է գումարում տրիբունը՝ առավոտից մինչև ուշ երեկո քննելով բազմաթիվ գործեր: Անխտիր դատում են բոլորին, մարդկանց, որոնք հանցապարտ չեն, մարդկանց, որոնք անտեղյակ են իրենց կատարած «մեղքերին»: Բոլորի դատավճիռը նույնն է՝ «գնդականահարություն», իսկ մեղադրանքները՝ անհիմն ու անհեթեթ, ինչպես որ անհեթեթ է այն իրականությունը, որտեղ ստիպված ապրում են հերոսները՝ սպասելով մահվան դատավճռին:

Հեղինակի գրելաձևը ընդգծում է այն դառնացույն, ցիկլիզմին մոտեցող թերահավատությունը, որն առկա է մարդկանց և նրանց արարքների գնահատության մեջ: Բռնության և բթության աշխարհը պատկերվում է իբրև չարիք, որի հետ պայքարելը թվում է անմիտ և անհաղթահարելի: Սարոյանի համակրանքը անկասկած պայքարող, խիզախ և ազնիվ մարդկանց կողմն է: Եվ ինչքան էլ զուսպ, սեղմ ու ժլատ է հեղինակի գրելաձևը, նրա տրամադրությունները, անկախ ամեն ինչից, պարզ են: Այդ տրամադրություններն արտահայտվում են ոչ միայն կերպարների բովանդակության, այլև՝ Մեյ Ֆոլիի ուղղակի արարքների և շրջապատին տրվող գնահատականների մեջ: Նա սկզբից միայն զարշանքով, իսկ հետո՝ ավելի աճող զայրույթով է հետևում այն ամենին, ինչ տեղի է ունենում նրա աչքի առջև:

Դեպքերի տրամաբանությունը նրան կողմնակի դիտողից դարձնում է «պայքարի» ակտիվ մասնակից, նա չի թողնում, որ չորսամյա «մեղավորին» դատեն, մահապատժի ենթարկեն, և վտանգելով իր անձը՝ նրան առնում է իր պաշտպանության տակ և արհամարհելով չարագործներին՝ հեռանում: Մեյ Ֆոլին բարոյական հանձնառության կրողն է, նա կարողանում է դիմակայել ժամանակին և հոռետես գաղափարներին և պատրաստ է իրագործելու «ապրելու դատապարտվածությունը»՝ դրամատուրգ փիլիսոփայի էկզիստենցիալիստական գեղագիտական ծրագիրը: Նա մենակ չէ, նրա կողքին են Ռոուզը, Արչին, մարդիկ, որոնք գիտեն ընդվզել: Նրանք բոլորն էլ քաջ գիտակցում են, որ փրկելով երեխային՝ փրկում են իրենց ա-

[1] Վիլյամ Սարոյան, Պատմվածքներ, հարցազրույցներ, էսսեներ, հուշեր, Երևան, 1993, էջ 224:

պազան:

Այսպես, օրինակ՝ Արչին չդիմանալով իր շուրջը կատարվող անօրինություննե-րին, երբեմնի տեսած վայրագություններին՝ ասում է. «կարծում եք, թե կկարողա-նաք ապրել Ձեր իսկ ստեղծած ահ ու սարսափով լի էս կեղծ աշխարհում, ուր խու-ճապի եք մատնվել նույնիսկ էս մանչուկից, որը հիմա կգնդակահարվի ու չի էլ հաս-կանա, թե ինչ կատարվեց, ինչպես չհասկացան բոլոր մյուսները, որոնք չնայած տարիքին, նրանից ոչնչով ավելի մեղավոր չէին... մի՞թե կարծում եք, թե պիտի հանգիստ ապրեք ձեր ստեղծած նողկալի աշխարհում: Ի՞նչ խղճով եք ապրելու էս աշխարհում»[2]: Հենց այս ճանապարհին է գտնվում հերոսների համար գոյության խորհուրդը: «Մեզանից ոչ մեկը ձայն չհանեց, երբ դատում էին ու սպանում չափա-հաս տղամարդկանց ու կանանց, որոնք ոչ մի բանում մեզանից ավելի մեղավոր չէին: Բայց երբ նույնը պատահեց նաև երեխային, մենք չդիմացանք և ըմբոստա-ցանք»[3]:

Սա գոյության փիլիսոփայության այն դրույթն է, որ ներառում է կարեկցանքը, գութը որպես սիրո բնական նշան: Աշխարհը պիտի կառուցվի գիտակից նվիրումի՝ զոհաբերման սկզբունքի վրա: Մեր կարծիքով Վիլյամ Սարոյանի դրամայի ըմբո-ստացող հերոսը՝ Արչին, իրականում ինքը՝ գրողը, թափանցիկորեն ակնարկում է Ժան-Պոլ Սարտրի «Կեցություն և ոչնչություն» (1943) փիլիսոփայական նշանավոր աշխատությունը, որի մեջ զարգացվում է տեսական այն դրույթը, թե մարդը, որ դա-տապարտված է ազատության և «ապրելու» ինքնության, իր ուսերին պարտավոր է կրել աշխարհի ողջ բեռը, բարոյական ծանրությունը: Նա պատասխանատու է աշ-խարհի մեջ եղած հավասարակշռության պահպանման և իր կեցության որոշակի տեսակի շարունակականության համար:

Բացի ծրագրային այս մտադրույթից, Վիլյամ Սարոյանի ստեղծագործության մեջ միշտ կարելի է տեսնել փիլիսոփայական հարցադրումների խնամքով մշակված, հետևողականորեն քննված մի համակարգ, որ ծնունդ է էկզիստենցիալիստական հայացքի, սերված է սարտրյան գոյաբանական կեցության լայն տարածում գտած ընկալումներից: Մասնավորապես կեցության և գիտակցության տրոհումն ու հակա-դրությունը Վիլյամ Սարոյանին տանում է «գիտակցությունը որպես բարձրագույն կեցության» («իր համար կեցություն» տարատեսակ) մեկնական հունով՝ դրսևորելով փիլիսոփայական-գեղագիտական հայացքի ինքնատիպություն:

Բարոյական խնդիրները միշտ կարևորագույն նշանակություն են ունեցել Վիլյամ Սարոյանի համար և եղել են նրա ստեղծագործության կենտրոնում: Դրանք իրենց որոշիչ դերը պահպանում են նամանավանդ նրա 50-ական թվականների ստեղծա-գործություններում: Բայց այստեղ հեղինակը գործ ունի սոցիալական բարոյակա-նության հետ. ի՞նչ կարող է անել և ի՞նչ անելու իրավունք չունի առանձին անհա-տը, որը պատասխանատու է ոչ միայն իր և իր խղճի, այլև ընդհանրապես՝ մարդ-կանց և ամբողջ ժողովրդի առջև:

Այս խնդիրները պետք է ստիպեին Սարոյանին՝ իբրև պատմական փոփոխութ-

[2] Վիլյամ Սարոյան, Ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1987, էջ 215:
[3] Նույն տեղում, էջ 226:

յունների բուռն ժամանակաշրջանում ապրող գրողի. անդրադառնալ երկրի սոցիա-
յական ու քաղաքական հարցերին: Այդ հարցերի մի տեսակ լռելյայն պատասխանն
է «Քարանձավի մարդիկ» դրաման (1957): Դրամայի գործողության վայրը «Աշ-
խարհ» անունը կրող մի կիսավեր թատրոն է, որը շուտով պետք է քանդվի: Այստեղ՝
հինավուրց թատրոնի դահլիճում իրենց գոյությունն են պահպանում կյանքից մերժ-
վածներն ու վտարվածները՝ ծեր դերասանները՝ թագավորն ու թագուհին, ասպա-
րեզը լքած բռնցքամարտիկը, տնանկ մի աղջիկ, կրկեսի դերասան ամուսիններն ի-
րենց նորածին երեխայի և մեծ խելոք արջի հետ:

Նրանք հարկադրված պետք է լքեն իրենց կիսավեր քարանձավը՝ զոհ չդառնալու շենքի պայթեցումներին: Սարոյանը իր արվեստի ուժով կարողանում է պատկերել անիրավ իրականությունը, որի համար արվեստը արժեք չունի: Աշխարհը հրաժարվել է արվեստից, և միայն այս քարանձավում է ջերմանում արվեստը:

Մարդը այս դրամայում անօգնական է այն սարսափելի աշխարհի առջև, որտեղ իշխողը անիրավությունն է. «Այսքան էլ անիրավություն,- նկատում է Թագավորը,- Աստվա՛ծ իմ, ի՞նչպես են մարդիկ ատում իրար»[4]:

Սարոյանը, անկասկած, սրությամբ զգում է շրջապատող աշխարհի անարդարությունն ու անտարբերությունը, նրա անհոգի վերաբերմունքը անհատի նկատմամբ:

«Վիլյամ Սարոյանը,- գրում է հայրենի գրաքննադատ Նատալիա Գոնչարը,- իր բարի երևակայության, հումորի և էքսցենտրիկայի օգնությամբ իսկապես ստեղծում է մի ամբողջ աշխարհ, որը լիքն է մարդկային զգացմունքների խաղով՝ սեր ու եռանդ, հուսահատություն և հույս, վախ և ինքնազոհողություն»[5]:

Հակառակ իրականության, որտեղ բոլորը օտար են իրար, Սարոյանի հերոսները այս պիեսում էլ ստեղծում են իրենց մարդկային ընտանիքը, իրենց «տունը» բարու և հույսի, իրենց ձգող աշխարհը: Գրողի բարոյական հանձնառություն կրող հերոսները, չնայած իրենց դժվարին և անելանելի վիճակին, պատրաստակամ իրագործում են ապրելու «դատապարտվածությունը», որն էլ, անտարակույս, գրող-դրամատուրգի էկզիստենցիալ ցեղագիտական ծրագիրն է:

Սարոյանը իր հասուն շրջանի էկզիստենցիալիստական դրամաներում ընթերցողին բերում է այն համոզման, որ մարդու կյանքի ընթացքը, ճակատագիրը, նաև կյանքը որոշում է Աստված, Ում առջև մարդիկ անզոր են և ինչի էլ որ նրանք ձգտեն, որոշողը Բարձրյալն է, ճակատագրի կույր, անանուն, անճանաչելի անողոք ուժը:

Գոյապաշտական «Ըստվածքները» «Տարեկանի արտում» (1954) դրամայում զուտ փիլիսոփայական, անգամ այլաբանական որոշ միստիկ կառուցվածք ունեն: Նույնիսկ կարելի է ասել, որ դրամատուրգը իր տեղը «կամավոր» զիջում է հայեցող փիլիսոփային:

Նրանցից ամեն մեկը ստացել է իր վերջնական կերպարանքն ու «ես»-ը, այսինքն այնպես, ինչպես որ նա լինելու է իր կյանքի վերջին ժամերին՝ աշխարհին «մնաս

[4] Сароян У., Путь нашей жизни, М., 1966:

[5] Վիլյամ Սարոյան, Ընտիր երկեր, հ. 4, Երևան, 1991, էջ 429:

բարով ասելու օրը»: Դրամայի դեպքերը անընական են և մտացածին: Պատկերը կամ սյուժետային փոքրիկ ծավալումը դառնում է դատողական կամ մեկնողական շղթայի շարունակություն:

«Տարեկանի արտում» ստեղծագործության դեպքերը ծավալվում են մի մեծ սենյակում, որի այն կողմում անսահման տիեզերքն է՝ լույսի ու շարժման ողջ բազմազանությամբ: Հերոսները չծնված արդեն որպես մարդ ձևավորված և լույս աշխարհ գալու պատրաստ «մարդիկ» են, որոնք նախօրոք գիտեն իրենց ճակատագիրը, գիտեն, թե երկրի վրա ինչ է տեղի ունենում, և իրենք ինչ դիրք պետք է գրավեն այնտեղ, գիտեն ամեն ինչ երկրի և մարդու մասին, սակայն ծնվելուց հետո նրանք պետք է մոռանան ամեն ինչ: «Հիմա դուք գիտեք ձեր ճակատագիրը, բայց հենց աշխարհ ելնեք,- նրանց զգուշացնում է երկնային ձայնը,- շունչ քաշեք, ամեն ինչ կմոռանաք»[6]:

Էկզիստենցիալիստները աշխարհի հիմքում տեսնում են բացարձակ գիտակցությունը, որն անջատվում է Բարձրյալի ցոյից: Այն տեօրինում է, կարգավորում: Աշխարհի նոր կապերի մեջ նրա դերն անհամեմատ խոշոր է: Վիլյամ Սարոյանի մոտ թվում է, թե բացարձակ գիտակցությունը անջատված է Բարձրյալի ցոյից, սակայն այն, ինչպես պարզվում է հերոսների խոսակցություններից, կախման մեջ է Բարձրյալից:

Կյանքը հավերժական մի շրջապտույտ է, որն իր մեջ է առնում կյանքն ու մահը, մահն այստեղ չի դիտվում որպես գիտակցության բացարձակ անկում, այլ որպես գիտակցության տարատեսակ, որն իր հաջորդ փուլում գործի է դնելու կենսական գիտակցությունը:

Հերոսների համար ծնունդն ու մահը ժամանակի նույն հոլովույթն են, որը ծնված օրից ի վեր իր հետ պտտում է մահվան գաղափարը. «Մենք էստեղ սպասում ենք,- ասում է հերոսներից մեկը՝ Քերոլը, հետո ճամփա ընկնում, իսկ երբ աշխարհից հեռանում ենք, հետ ենք դառնում էստեղ, ուր եղել ենք մինչև էնտեղ գնալը»[7]:

Վիլյամ Սարոյանը Ալբեր Քամյուի նման («Օտարականը» (1942) համոզված է, որ հույս չկա, ճշմարտություն չկա, բանականությունն անզոր է, աշխարհը՝ քաոս, մարդը մի հնարավորություն ունի միայն՝ մահվան վիճակում վերապրել անէությունը, վերստեղծել անհեթեթությունը և այն աշխուժացնել: Ուստի պատահական չէ, որ հերոսներից ոչ մեկը, բացի Քերոլից, որը հրաշալի, գեղեցիկ է պատկերացնում աշխարհը՝ իր անընդհատ շարժումով («Ապրել ու մեռնել: Երկուսն էլ գեղեցիկ են: Աշխարհը մեր միակ տեղն է, ու մեզանից ամեն մեկը շատ բախտավոր է, որ գնում է էնտեղ»)[8], չեն ցանկանում աշխարհ գնալ, ուր անհասկանալի պատերազմներ են, չորս կողմը օտարներ, ուր, ինչպես Սթիվն է ասում՝ «ինչքան կրակ ու ցավ կա, գլխիդ է գալիս, վերջն էլ ոտքերդ մի կերպ քարշ տալով՝ հետ ես դառնում»[9], սակայն նրանք ստիպված են ընկնել անհեթեթ աշխարհ, որը ճակատագրի կողմից նախա-

---

[6] Նույն տեղում, հ. 2, էջ 163:

[7] Նույն տեղում, էջ 165:

[8] Նույն տեղում:

[9] Նույն տեղում, էջ 167

պես որոշված է: Կնառողանա՞ն լույս աշխարհ եկած հերոսներն իրենց բացարձակ գիտակցությամբ վերափոխել անհեթեթ իրականությունը, ի վիճակի կլինե՞ն հետ բերել իրենց հավատի ճանապարհին կորցրածը: Դատողությունը, բանականությունը վերստին կվառե՞ն մարդու հոգու լույսերը: Կարծում ենք, որ՝ ոչ:

«Տարեկանի արտում» դրաման այն բացառիկ ստեղծագործություններից է, որ համակված է տխրությամբ, մռայլությամբ: Այստեղ Սարոյանի էկզիստենցիալ փորձարարության հիմքում ընկած է օբյեկտիվ աշխարհի անհեթեթության և անճանաչելիության ըմբռնումը: Գրողը փորձում է մեզ համոզել, թե խաթարվել է աշխարհի ընկալման ամբողջականությունը այն աստիճան, որ արդեն ամբողջովին անվերականգնելի է: Սարոյանը, Ֆրանց Կաֆկայի հետևողությամբ, իր դրամայի հիմքում դնում է աշխարհի անմիտ նպատակահարմարության գաղափարը:

Գոյապաշտական նստվածքներ առկա են նաև «Գնա՛, ծերո՛ւկ» (1953) դրամայում: Գրողը շարունակում է վիճարկել աշխարհի «անհեթեթության» (աբսուրդ) և անհատի անընկճելիության բախումի արդյունքները: Դրաման գրվել է մակկարտիզմի տարիներին և պատահական չէ, որ ներկայացնում է ամերիկյան ապրելակերպի բարոյականությունը, այն արտահայտում է մի ամբողջ արվեստագետ սերնդի տրամադրությունները: Դրաման հյուսված է գլխավոր հերոսի՝ Պատրիկ Խեմերի հիշողության առանցքի վրա, ուր պարզորոշ գծագրվում են հերոսի ապրումները, հետահայաց զգացումները, հիշատակների ոգեկոչումը, շատ դեպքերում նաև ներկա ժամանակային գոտում առնչված միջավայրի զանազան դեպքեր՝ տըպավորիչ կամ դրվագային:

«Գնա՛, ծերո՛ւկ» ստեղծագործության սյուժետային զարգացումը անցյալի ու ներկայի համադրված քննությունն է՝ բացված հերոսի ներքին տեսողությամբ: Հերոսն է և իր աշխարհը՝ առանց արտաքին միջամտության, «դուրսն» անմիջականորեն չի մասնակցում, բայց երևում է անցյալ կատարյալով, հերոսի ընկալումներով:

Խարի Բերտը շատ անմիջական է: Նրա մե՛րթ խաղաղ, մե՛րթ փոթորկոտ, բուռն նկարագրի մեջ ընթերցողի առջև բացվում է զգացումների մի ամբողջ աշխարհ: Դրաման գրված է գոյապաշտական սկզբունքների հոգեբանությամբ, որտեղ, սակայն, պահպանվում է իրատեսական հատիկը: Փիլիսոփայական հայեցողությունը սոսկ անհատի ներքին բխվածք չէ: Միակողմանի կլինի երևույթը բացատրել նաև հերոսի սին տաղանդի կամ ինքնամփոփումի հատկությամբ: Էկզիստենցիալիզմը ընկերային-հոգեբանական խոր վերլուծական աշխարհայացք է, ուր ներանձնական ընկալումները փիլիսոփայական բարձր նշանակություն են ստանում: Հերոսն ապրում է իր ստեղծած տրամադրությամբ, իր պատրանքների գերիշխանության ներքո:

Սարոյանը բացարձակացնում է անհատին՝ տվյալ անձնավորությանը հակադրելով մնացած բոլորին: Սարոյան գրողի անհատը սոսկ անհատականություն չէ, այլ գաղափար, մեկընդմիշտ տրված գաղափարների կրող, այնպես, ինչպես Ժան-Պոլ Սարտրի Ռոկանտենն է («Սրտխառնուք» (1938), միայն այն տարբերությամբ, որ Ռոկանտենը ազատ է սոցիալական կոնկրետ անձնավորության բոլոր նշաններից և մասնագիտությունից: Եթե Ժ.-Պ. Սարտրը իր վեպում ստեղծում է միայն հերոսի

ազատության պատրանք (իրականում նա բացարձակորեն զուրկ է ազատությունից, անքակտելիորեն կապված է իրեն անհատականությունից զրկող էկզիստենցիալիստական դոգմային), ապա Սարոյանը հերոսի ազատության պատրանք չի ստեղծում, նա հանգում է այն մտքին, որ մարդն ազատ է իր գործողություններում:

Այստեղ գրողը ազատության շեշտը դնում է սիրո վրա (Սա մեզ հիշեցնում է 30-ական թվականներին Ալբեր Քամյուի «թագավորում է անհեթեթությունը, սերն է փրկում» էկզիստենցիալիզմ-ռոմանտիզմ երկմիասնական հասկացությունը): Սերը Գարիի սրտում զրնգում է ոչ իբրև վայրկենական կամ անցողիկ հաճույքի ձայն, այլ ընկալվում է որպես հոգու ազատության թերևս եզակի արտահայտություն: Սիրո շնորհիվ իմաստավորվում է Գարիի գոյությունը՝ կյանքը՝ նրա միջից վանելով մենության զգացողությունը:

Ամփոփելով ասենք, որ Վիլյամ Սարոյանի ստեղծագործությունները պտտվում են «ապրելու պարտադրություն» բանաձևի շուրջ, որին գրողը մոտենում է փիլիսոփայական հայեցողությամբ:

Սարոյանի փիլիսոփայությունը հիմնված է մարդկային որոշակի ըմբռնողության և կենսափորձի վրա և հետապնդում է մարդկային որոշակի նպատակակետ:

Սարոյանի գոյափիլիսոփայությունը հնի և նորի համադրության արդյունքն է: Նրա մտածողության արմատները մի կողմից հասնում են հնադարի խորքը, մյուս կողմից կանգնած են 20-րդ դարի ամենաազդեցիկ փիլիսոփայական համակարգի՝ էկզիստենցիալիզմի կողքին: Սարոյանի վրա հատկապես մեծ է 19-20-րդ դարերի գոյապաշտ գրողների և փիլիսոփաների ազդեցությունը: Ուսումնասիրողները (Բ. Սմիրնով, Ա. Զվերև, Ն. Գոնչար) վկայում են Սարոյանի մեծ հետաքրքրությունը առանձին փիլիսոփաների, գրողների նկատմամբ (Զ. Ֆրոյդ, Կ. Յասպերս, Շ. Անդերսոն, Ջ. Ջոյս, Ու. Ֆոլկներ, Ֆ. Դոստոևսկի, Մ. Պրուստ, Ժ.-Պ. Սարտր, Ա. Քամյու, Ջ. Սանտայանա): Գրողը հատուկ չի ձգտել փիլիսոփայական դպրոցների և գաղափարների մանրակրկիտ ուսումնասիրությանը, սակայն շատ արագ ընկալել է այն մտածողներին, որոնք մոտ են կանգնած եղել իր գաղափարներին: Ամենամեծ ազդեցությունը Սարոյանի վրա թողել են Ջեյմս Ջոյսը և Շերվուդ Անդերսոնը:

Սարոյանը գրող փիլիսոփա է, նա հետևորդը չէ իմաստասիրական բարդ և խրթին գաղափարների և տեսությունների: Նրա համար կարևորը միշտ եղել են գոյի և կեցության հիմնախնդիրները, որոնք մտքի բնական ճյուղավորմամբ առնչվել են ճշմարտություն, իրականություն, իրականության և գիտակցության փոխհարաբերություն, կյանք, մահ, սկիզբ և վերջ, կյանքի նպատակ, կյանքի իմաստ և այլ նմանատիպ հարցերի հետ:

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

*ԲԵՌՆԱՐ ՈՒՏԻՆ*

# ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Ամեն տարի Փարիզում հայկական ձեռագրեր են վաճառվում աճուրդով: Դրանք շատ հաճախ մասնավոր հավաքածուներում պահպանված ձեռագրեր են, որոնք, այդ պատճառով էլ, ընդհանրապես անծանոթ են մնում հետազոտողներին: Ուստի այդ ձեռագրերի ի հայտ գալը, երբ մանավանդ պահպանված է լինում դրանց ընդօրինակության հիշատակարանը, լավագույն առիթ է նոր տվյալներ հավաքելու հայկական մշակույթի շատ բնագավառների մասին՝ բնագրերի և դրանց մեկնությունների պատմության, ձեռագրերն ընդօրինակողների և նրանց պատվիրատուների կենսագրության, հայ մշակույթի տարածման կենտրոնների, հայոց լեզվի, հայ ժողովրդի ընկերային կյանքի պատմության և երբեմն էլ ընդհանրապես պատմության մասին:

1995 թվականի նոյեմբերի 8-ին Փարիզում վաճառվեց մի գեղեցիկ Ավետարան, որի սկզբնական կազմը պահպանվել էր: Այն ընդօրինակվել է 1635 թ. Ծոշում (Նոր Ջուղա, Իրան) մահտեսի Մարգարի համար և ունի այն հետաքրքիր առանձնահատկությունը, որ նրա գրության շրջանակը ոչ թե սովորական ուղղանկյունն էր, այլ մի ուղղանկյուն, որի վերևում կար միհրաբի ձևով մի կրկնակամար. դժվար է ասել արտագրող գրիչն արդյոք իր միջավայրի ճարտարապետական ձև՞րն էր ցանկացել ընդօրինակել, թե՞ պատրաստի մի կաղապար էր օգտագործել:

Վերոհիշյալ Ավետարանում Կանոններից հետո կա երկու էջից բաղկացած երկաթագիր մի գեղեցիկ ընծայական՝ ոսկեգույն խորքի վրա կարմիրով շրջապատված կապույտ գրերով, ապա՝ կապույտ խորքի վրա՝ կարմիր գրերով: Այս տիպի ընծայականները անցյալում վերապահված էին լինում թագավորներին, իշխաններին և բարձրաստիճան հոգևորականներին: Դա մեզ հուշում է պատվիրատուի նյութական մեծ կարողության և դիրքի մասին: Մենք արդեն ծանոթ ենք Մարգարի կողմից պատվիրված երկու այլ ձեռագրերի. դրանցից մեկը, որը գտնվում է Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց պատրիարքարանի մատենադարանում (ձեռագիր համ. 525), արտագրված 1627 թվականին, պատկանում է նույն գրչին, իսկ մյուս ձեռագիրը մնում է Նոր Ջուղայում որպես մասնավոր սեփականություն և նկարագրված է Լ. Մինասյանի ձեռագրացուցակում (ձեռագիր համ. 8):

Մեր նշած ձեռագրի հիշյալ ընծայականում ասվում է.

«Որ ողորմի Տէրն ամենայնի,
հոգոյ սորա ստացողի մահտեսի Մարգարին

եւ իւր որդոցն ամենեքին.
Նախ անդրանկան Եղիմին,
որ ի հասակ ԳԺ-ին (30)
փոխեցաւ առ Տէր իւր ցանկալին,
ապա երկրորդ սորին
պարոն Աւէտ խիստ սիրելին
փոխեցելոյն յերկրէ յերկին,
այլեւ թոռնիքն սորին
Ովանէսն, Խ[ա]նտատիկին.
որ վաղճանեալ տղայ հասակն,
Որ եւ յիշատակն զմնացորդացն Ստեփանոսն»

Իսկ բուն հիշատակարանում, որը գտնվում է ձեռագրի վերջում, ասվում է.

«Փառք Անըսկզբանն եւ սկըզբանն ամենայնի: Անեղին, եւ Գոյացուցչին Բնաւից: Անվախճան և անսահման Էացուցչին: Սահմանիչ և կատարումն բոլոր էիցս: Երիցս միակին, եզակի եւ միում աստուածութեանն: Որ անշարժ ցոլով շարժէ զարարածս ի կեանս եւ ի փրկութիւն, էիցս Էակն, եւ կենդանեաց Կեանքն: Որ անփոփոխ ցոլով միշտ յէութեան անեղր եւ անվայրափակն: Լրումն եւ Բովանդակիչ ամենայնի եւ յամենայնս է, եւ յամենայնէ անհաս է: Որպէս ի մասունս եւ ի բոլորս, եւ ինքն ոչ մասն եւ ոչ բոլոր: Որպէս թէ զմասն եւ զբոլոր՝ զամենայն ինքն ունելով, եւ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ. ցերալիր ցոլով լնու զամենայն: Որում բան եւ իմաստութիւն եւ լեզու տուեալ բոլոր էից: Ի բոլոր էիցս հանցուք զաւրհնութիւնն եւ զփառս Հօր եւ Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Այժմ եւ մի[շտ]:

Իսկ չորից աւետարանչացն խորհուրդ, բազմօրինակ իմն ցուցմամբ տեսանի: Զի ոմանք ասեն, թէ չորից աւետարանչացն են օրինակ, չորք անկիւնք արարածոց՝ Արեւելք, Արեւմուտք, Հիւսիս, Հարաւ, պարտ էր քարոզել զԱւետարանն:

Իսկ ոմանց հաճոյ թուեցաւ, ըստ չորից մշտահոս գետոցն: Յադենական յաղբերէն յառաջ խաղացեալ՝ առ ի տիեզերաց առոգումն: Փիսոն՝ որ նշանակէ զՄատթէոս: Եւ Սեհոն՝ զՄարկոս, [Տ]իգրիս՝ զՂուկաս եւ Իփրատէս՝ զՅոհաննէս: Եւ սոցին ցոլով նմանապէս թուով ուռճացեալք ի կենդանական աղբերէն առոգանել զպասքեալ միտս մարդկային բնութեանս:

Նոյն օրինակ ըստ տեսութեանն Եզեկիէլի քառակերպեանն աթոռոյ: [Մ]արդ՝ որ նշանակէ զՄատթէոս, եւ առեւծ՝ զՄարկոս, եզն՝ զՂուկաս, եւ արծիւ՝ զՅոհաննէս: Զանմարմնոցն տէր տեսանելով բազմեալ ի փառացն աթոռ իմանալի ցուցմամբ զխնամս. բոլոր բնութեանս՝ զակնարկումն: Որ աստուածապէս՝ եւ տիրաբար բերմամբ նշանակէ զլինելն առ հողածինս՝ հրեղինացն անմահից զմահկանացուս առնել հաղորդս: Եւ յեւս ցերակատար հանել ի փառս. վասնզի փառաց թագաւոր Քրիստոս. փառակից Հօր և Հոգւոյն Սրբոյ՝ ըզմերս առնելով բնութիւն. յինքեան միացոյց աստուածութեան, ուսուցանելով մի որդի դաւանել. որ յԱստուծոյ Հօր է: Եւ որ ի Մարիամայ սրբոյ կուսէն անճառ միութեամբ, զոր աւետարանական ու(սու)ցա-

նեն բանք: Մինչ ի կատարած հաւանութեամբ հաւատալ հաստատ կարգօք. ի նոյն յարելով յառաքելաւանդն քարոզութիւն, զաստուածախօսն վարդապետութիւն դրոշմեալ զսակաւս ի բազմացն՝ առ ի հաւատալ՝ եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ ըստ վեհին Յոհաննու. հաւատալ եւ զկեանսն ընդունել յանուն նորա:

Ուստի եւ տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ, հեզահոգի եւ աստուածասէր մահտասի խօջա Մարգարն, որ եռափափաք սիրով. յօժար կամօք եւ սերտ հաւատով ցանկացող եղեւ այսմ ծաղկաւէտ եւ վարդափթիթ կենսաբուխ Սուրբ Աւետարանիս: Եւ ստացաւ զսա՝ ի յարդար վաստակոց իւրոց. յիշելով զբան մարգարէին որ ասէ. «Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն՝ որ է եկեղեցի սուրբ. վասն այն յուսոյն ետ գրել զտէրունեան աւետարանս՝ առատ տրիւք եւ զարդարեաց մեծածախ ընչիւք՝ ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ եւ ի վայելումն մանկանց Սիոնի: Այլ եւ յիշատակ բարի հոգւոյ իւրոյ եւ ծնօղացն իւրոց՝ Գրիգորին՝ Խանփարին՝ եւ եղբօրն մահդասի Զաքարէ, Ստեփանոսին, քեռն Խանփարին եւ կողակցին իւրոյ՝ Փաշփաշին, միւսոյն՝ Բերսաբէին: Որդւոցն՝ Պարոն Եղումին, Աւետիսին, Յովանիսին, դստերն Ջանվարդին. խարսներացն՝ Փառանձեմին. Ուղուրլուէ եւ որդոց սոցին՝ Յովանիսին՝ Ըստեփանոսին՝ Կոստանդիանոսին. դստերացն՝ Խանտատիկին, Խանփարէին:

Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց եւ անպիտանս եւ անարժանս ի մանկունս եկեղեցւոյ, բազմամեղս եւ անիմաստս ի գիրս գրչութեան սուտանուն Ըստեփանոս քահանայ՝ որ անուամբ միայն եմ եւ ոչ գործով, շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զՍուրբ Աւետարանս ի մեծ թըւականիս հայոց ՌՁԳ (1634) ամին՝ ի Շօշ քաղաքս Ասպահան ի հայրապետութեան տեառն Փիլիպոս կաթողիկոսի՝ եւ յառաջնորդութիւն մերոյ ուխտիս Խաչատուր վարդապետի՝ յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք. զի ձեզ եւ մեզ ողորմեսցի Քրիստոս Աստուած. իւր միւսանգամ գալստ[ե]անն, ամէն»:

Ձեռագրում պահպանվել է նաև հետագայի ստացողի հիշատակարանը.

«Այլ յիշատակ քուռճի Մելիքօնի որդի Գաբրիէլին՝ փոքր որդուն Նիկողոսի, որ Սուրբ Աւետարանս քերտամեքլա ես տացի բազում ետտակօվ ի Պոլտան, որ ոք հանդիպիք ողորմի տուք, տէր Ասված ձեզ ողորմի մո՛չլ.»: Կնիք՝ Գաբրիէլ:

Ավետարանիչների խորհրդանիշներին վերաբերող հիշյալ հատվածը ընդհանուր կանոնական է, որը բնորոշ է շատ ձեռագրերի և կարելի է վկայակոչել բազում օրինակներ: Խորհրդային շրջանում տպագրված հիշատակարանների հատորներում, մինչ հիշատակարանների բուն պատմական մասը հասնող այս հատվածները ցավոք հաճախ դուրս են թողնվել:

Երբեմն մի ձեռագրի բախտ է վիճակվում անուրդով դառնալու հանրային մի հաստատության սեփականություն: Այդպիսին էր 1991 թվականի նոյեմբերի 14-ին որպես Սաղմոսարան անուրդի հանված այն ձեռագիրը, որը երկրորդ անգամ վաճառքի դրվեց 1993 թվականի մարտի 31-ին: Այն մի Ծարակնոց էր, որը մենք կարողացանք գնել տալ Ֆրանսիայի ազգային գրադարանին: Այդ ձեռագիրը այժմ 341 համարի ներքո մաս է կազմում նույն գրադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուին:

Ձեռագիրը համարակալված է մինչև 580 թերթը, սկզբնամասում պակասում են էջեր: Դրա նկարագրության մեջ, որը վերջերս կատարել է Ռ. Հ. Գևորգյանը (Ռ. Գևորգյան, Բ. Ուտիե, Ա. Տեր-Ստեփանյան և Գ. Տեր-Վարդանյան, Ֆրանսիայի ազգային գրադարանի ձեռագրեր, Փարիզ, 1998 թ.) զանց է առնված 194-րդ էջի կարճ հիշատակարանը, որը նախորդում է այդ ձեռագրում ամբողջ մի էջ գրավող միակ մանրանկարին (էջ 196): Մանրանկարը ներկայացնում է Քրիստոսին որպես հարության դատավոր: Ահա այդ հիշատակարանը, որը մեզ ծանոթացնում է ընդօրինակող գրչի անվանը.

«Զտարակուսեալս ի մէջ բազմաց հոծալեացս. զաղտեղացեալս բազմութեամբ յանցանաց Ղազար անուն աղաչեմ յիշել ի Տէր զգծ[ո]ղակ սորին և Աստուած զձեզ յիշէ ամէն»:

Այսպիսով, տեսնում ենք, թե ինչպիսի լայն հեռանկարներ են բացվում մեր առջև այս բնույթի հետազոտություններով: Կարող ենք հենց այժմվանից նշել, որ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի մի գիտաշխատողի գործակցությամբ կատարվելիք համատեղ աշխատանքի հնարավորությունը ներկայումս ուսումնասիրվում է՝ կազմելու համար Ֆրանսիայում գտնվող հայերեն ձեռագրերի ձեռագրացուցակը, բացի Ֆրանսիայի ազգային գրադարանում եղածներից, ներառնելով և այն ձեռագրերը, որոնք մի քանի դարուց ի վեր վաճառվել են աճուրդով:

Ֆրանսերենից թարգմանեց
*ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆԸ*

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

*Ս. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ*
*Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

# ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Կան հայագետներ, ովքեր հանգամանքների բերումով իրենց գիտական գործունեության սկզբից կապվելով հայ մշակույթի և պատմության ուսումնասիրության որոշակի թեմատիկայի և դարաշրջանի հետ, այլևս «անկարող» են դառնում կտրվել դրանցից և, նույնիսկ զբաղվելով գիտական այլևայլ խնդիրներով, երբեք չեն մոռանում պատեհ առիթով նորից անդրադառնալու իրենց հոգեհարազատ՝ սպրված և բազմիցս վերապրված թեմատիկային և դարաշրջանին: Ասվածի վկայությունն է փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Ղ. Միրզոյանի վերջերս լույս ընծայած նոր մենագրությունը՝ «Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի» վերտառությամբ[1], որում առաջին անգամ հանգամանորեն լուսաբանվում են 17-18-րդ դդ. նշանավոր մտածող՝ աստվածաբան, փիլիսոփա, տրամաբան, քերական ու գեղանկարիչ Հովհաննես Մրքուզ Ջուղայեցու կյանքը, գործունեությունը, գրական ժառանգությունը, փիլիսոփայական, տրամաբանական, արվեստաբանական և հասարակական-քաղաքական հայացքները: Գիրքը լույս է տեսել Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հովանավորությամբ և նվիրված է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին:

Հարկ է նշել, որ Հովհաննես Ջուղայեցու կյանքը, գործունեությունը, գրական ու տեսական ժառանգությունը մասնագիտական գրականության մեջ մինչև օրս կա՛մ չեն ուսումնասիրվել, կա՛մ եթե ուսումնասիրվել են, ապա՝ խիստ հպանցիկ ու անուղղակիորեն: Այդ է պատճառը, որ նախ՝ հաճախ թույլ են տրվել լուրջ սխալներ ու վրիպումներ, և երկրորդ՝ 17-րդ դարի նշանավոր այդ մտածողն ու գործիչը, ըստ էության, առայժմ մնում էր չուսումնասիրված ու չգնահատված: Պրոֆ. Հ. Միրզոյանի մենագրության նպատակն է՝ ըստ կարելվույն վերացնել հայագիտության մեջ ցարդ նկատվող վերոհիշյալ բացը, շտկել Հովհաննես Մրքուզ Ջուղայեցու մասին գոյություն ունեցող սխալներն ու թյուրըմբռնումները, ըստ արժանվույն գնահատել մշակու-

---

[1] Հ. Ղ. Միրզոյան, Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, Եր.: Երևանի համալս. հրատ., 2001 թ., 272 էջ:

թալին այս մեծ գործչի տեղն ու դերը հայ բազմադարյան մշակույթի պատմության մեջ: Ինչպես մենագրության «Մուտքի» մեջ նշում է հեղինակը, այս գիրքը ավելի քան քսանհինգամյա գիտական պրպտումների ու որոնումների արգասիք է: Հովհաննես Մրքուզ Ջուղայեցու մասին պրոֆ. Հ. Միրզոյանը առաջին հրապարակումը կատարել է դեռևս 1976 թ., որին հաջորդել են նրա կյանքի, գործունեության ու գրական ժառանգության, ինչպես նաև տրամաբանական, արվեստաբանական, հասարակական-քաղաքական հայացքների լուսաբանմանը նվիրված շուրջ մեկուկես տասնյակ հոդվածներ: Այնքանից հետո թվում էր, թե Ջուղայեցու մասին մենագրության հրատարակումը այլևս խնդիր չէ, և, իսկապես, պրոֆ. Հ. Միրզոյանը, իրեն բնորոշ բարեխղճությամբ, վաղուց պատրաստվում էր հրատարակության ներկայացնել այդ գիրքը: Սակայն՝ «Լավ է ուշ, քան երբեք» ասացվածքի համաձայն, գրքի տպագրության ձգձգումը դրական ազդեցություն ունեցավ դրա բովանդակության վրա: Երուսաղեմում դասավանդելու ընթացքում (1994-1997 թթ.) նա ուսումնասիրում է Ջուղայեցու երեք կարևոր, մինչ այդ իրեն անծանոթ, աշխատություն, ինչը հնարավորություն է տալիս շատ հարցերում ճշգրտելու և վերագնահատելու Ջուղայեցու մասին մինչ այդ ունեցած պատկերացումները, խուսափելու փաստական որոշ սխալներից ու դրանց հիման վրա արված ոչ ճիշտ եզրահանգումներից: Նոր աղբյուրների ուսումնասիրությունը հնարավորություն տվեց հեղինակին ավելի ամբողջական ու համապարփակ ձևով ներկայացնելու Ջուղայեցու, իբրև հայ մշակույթի ականավոր դեմքի, գիտական և հասարակական-կրոնական գործունեության պատկերը: Առհասարակ հարկ է նշել, որ գրախոսվող մենագրությունում շրջանառության մեջ է դրված հարուստ փաստական նյութ և բազմաբնույթ աղբյուրներ, ինչը հեղինակին հնարավորություն է տվել համոզիչ կերպով ներկայացնելու իր տեսակետները:

Երկար տարիներ զբաղվելով 17-րդ դարի հայ մշակույթի և փիլիսոփայության պատմությամբ, հեղինակին հաջողվել է Հովհաննես Ջուղայեցու գործունեությունը և գրական-տեսական ժառանգությունը լուսաբանել դարաշրջանի պատմամշակութային իրողությունների համատեքստում: Հովհաննես Ջուղայեցին ներկայացվում է որպես իր ժամանակի հայրենասեր մտածող և գործիչ, որն իր բազմաբնույթ գիտելիքներն ու հմտություններն օգտագործում է պաշտպանելու համար ինչպես հայոց արժեքները՝ լեզուն, մշակույթը, կրոնը, եկեղեցին և այլն, այնպես էլ՝ հայ մարդու արժանապատվությունը և իրավունքները: Մեր առջև հառնում է հայ ազգային գործիչը, որը մի կողմից բանավիճում է պարսից շահերի հետ՝ փորձելով պաշտպանել քրիստոնեական կրոնը, նրա համամարդկային բնույթը, հետևաբար նաև՝ հայոց, որպես քրիստոնեական ազգ, գոյության իրավունքը, դրանով իսկ կանխելով և մեղմացնելով պարսիկների հայահալած քաղաքականությունը, մյուս կողմից՝ ներազգային կյանքի հոռի կողմերի քննադատը, անձնապաշտ եկեղեցականների և կաթոլիկ կամ կաթոլիկամետ գործիչների դեմ վիճաբանողը, որին թեև վիճակված է ծանր գնով հատուցելու իր համարձակ մտքերի ու քայլերի համար, բայց միաժամանակ՝ հայրենասերի մտահոգությամբ պաշտպանելու հայ մարդու և հոգևորականի տարրական իրավունքները: Հեղինակը հարուստ կենսագրական նյութերի հիման վրա հմտորեն ներկայացնում է Հովհաննես Ջուղայեցու դիմանկարը, որում, ի դեպ, երևում են նրա

ապրած ժամանակի մռայլ ու դաժան գույները, պարսկական և պարսկահայ իրականության լուսավոր և ստվերոտ կողմերը:

Ներկայացնելով ժամանակաշրջանը և պատմաքաղաքական այն պայմանները, որոնցում գործել ու ստեղծագործել է Հովհաննես Ջուղայեցին, հեղինակը առաջ է քաշում այն միտքը, թե քանի որ 17-18-րդ դարերում հայ ժողովրդի պատմության և մշակույթի մեջ առաջատար դեր է խաղացել ջուղահայությունը, ուստի այդ շրջանը կարող ենք անվանել ջուղայական: Բանն այն է, որ այս դարերում ապրած և ստեղծագործած շատ մտածողներ, մշակութային և քաղաքական գործիչներ այս կամ այն չափով կապված են եղել Ջուղայի (Նոր Ջուղայի) հետ: Հեղինակի կարծիքով, Նոր Ջուղայի հայկական գաղթօջախն ուներ պատմական մի շարք առանձնահատկություններ, որոնք մինչև վերջերս, ըստ էության, մնացել էին անտեսված: Մինչդեռ դրանք խիստ կարևոր են նոր շրջանի հայոց պատմության մի շարք հարցեր ճիշտ հասկանալու և լուսաբանելու համար: Դրանցից առավել կարևորներն են. նախ՝ Նոր Ջուղայի գաղթօջախը ստեղծվել էր բռնագաղթի պատճառով, ոչ թե աստիճանաբար, ինչպես մյուս հայկական գաղթօջախները, այլ միանգամից: Երկրորդ՝ այստեղ հաստատվել էր ոչ միայն Հին Ջուղայից, այլև Հայաստանի տարբեր վայրերից բռնագաղթած բնակչությունը: Այսինքն՝ կարող ենք ասել, որ «Նոր Ջուղայի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ու գիտամշակութային ներուժը մեծ մասամբ ստեղծվել էր ոչ թե օտար երկնքի տակ, այլ մայր հայրենիքում, ուստի հայրենիքի հոգսերն ու խնդիրները բոլոր գաղթօջախներից համեմատաբար ամենից հոգեհարազատ էին հենց Նոր Ջուղային: Կասկածից վեր է, որ եթե չլիներ «մեծ գաղթը», այդ ամենը կարող էր դրսևորվել հայրենիքում և այն էլ՝ ավելի վաղ ու ավելի արդյունավետ ձևով» (էջ 21): Նոր Ջուղան ամենից մոտն էր մայր հայրենիքին, ուստի վերջինիս հետ նրա ունեցած կապերն ամենից սերտն ու անմիջականն էին: Նորջուղահայությունը ներգործուն մասնակցություն և ազդեցություն ուներ հայոց, հատկապես կրոնական, կյանքի վրա: Պատահական չէ, որ Նոր Ջուղան դարձավ հակամիարարական շարժման կենտրոն, իսկ Հովհաննես Ջուղայեցին՝ այդ շարժման ճանաչված ու երկարամյա ղեկավարը: Գիտակցելով իրենց տնտեսական ուժը և հզորությունը, գրում է հեղինակը, ջուղայահայերն «իրենց կամքն էին թելադրում Էջմիածնի կաթողիկոսներին, իսկ վերջիններս, սկսած 17-րդ դարի սկզբից, տարբեր առիթներով, լինի կաթողիկոսական պարտքերի մարում, շինարարություն թե նյութական զգալի ծախսեր պահանջող որևէ այլ ձեռնարկում, ստիպված էին լինում դիմելու ջուղայեցիների օգնությանը» (էջ 80): Դրա լավագույն վկայություններից է 17-18-րդ դարերի սահմանագծում կաթողիկոսած Նահապետ Եդեսացու ինչ-ինչ արարքների կապակցությամբ Էջմիածնի հոգևորականությանն ուղղված ջուղահայերի նամակը, որի բովանդակությունը չի սահմանափակվում զուտ կրոնական և եկեղեցական հարցերի քննարկմամբ: Նամակում առաջադրված պահանջները, դրա ոճը և տոնը մի կողմից ցույց են տալիս, որ Հայոց կաթողիկոսի ընտրության դեպքում հաշվի էր առնվում ջուղահայության կարծիքը, մյուս կողմից՝ որ հայ իրականության մեջ Նոր Ջուղան դարձել էր ժամանակի նորարարական գաղափարների դարբնոցը: Նկատի ունենալով այդ նամակում բարձրացված հարցերի կարևորութ-

յունը հայ հասարակական-քաղաքական և իրավափիլիսոփայական մտքի զարգացման համար. հետազոտողն իրավացիորեն եզրակացնում է, որ խնդրո առարկա այս «նամակը կարելի է դիտել որպես հայ լուսավորականության առաջին ծրագրային փաստաթուղթ, որը, գրված լինելով ոչ թե մեկ, այլ բազմաթիվ անձանց կողմից, փաստորեն արտահայտում էր Նոր Ջուղայի աշխարհիկ ու հոգևոր դասի կամքը կամ, որ միևնույնն է, նոր զարգացող հայ բուրժուազիայի մտածելակերպը, հասարակական տրամադրություններն ու մտադրությունները» (էջ 78):

Եթե Շահ Աբասի օրոք ջուղահայության, հատկապես առևտրականության վիճակը տանելի էր, ապա ավելի ուշ, երբ Իրանում աստիճանաբար ուժեղացավ եվրոպական (անգլիական) առևտրական կապիտալի ազդեցությունը, ջուղայահայ առևտրականները չկարողացան դիմանալ հզոր մրցակցի ճնշմանը և ստիպված եղան տեղափոխվելու ազատ գործունեության նոր վայրեր՝ Հնդկաստան, Ռուսաստան, մասամբ Իտալիա, Հնդկաչին և այլն: Այդ նոր երկրներում հայերը զբաղվում էին ոչ միայն առևտրական, տնտեսական գործունեությամբ, այլև ստեղծում էին մշակութային և կրթական օջախներ:

Հեղինակի կողմից հայոց պատմության այս շրջանը ջուղայական անվանելը մեթոդաբանական կարևոր նշանակություն ունի թե՛ հայոց պատմության և թե՛ մշակույթի զարգացման ընթացքի տրամաբանությունը հասկանալու համար: Փաստական նյութերի ուսումնասիրության հիման վրա ցույց է տրվում, որ այս շրջանի հայոց մշակույթի զարգացման տարբեր փուլեր ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են իրար հետ, այսինքն՝ դրանք ոչ թե առանձին, իրարից կտրված փուլեր են, այլ ծագումնաբանորեն ու տրամաբանորեն իրար հաջորդող ու լրացնող մի օրգանական ամբողջություն: Դա նշանակում է, որ հայոց մշակույթի, ի մասնավորի փիլիսոփայության, զարգացումը, իր ժամանակավոր անկումներով հանդերձ, եղել է անընդհատ ու միասնական գործընթաց: Օրինակ, այսպիսի մեթոդաբանական դիրքորոշումը հնարավորություն է տալիս ավելի ճիշտ բացատրելու ինչպես հայ ազատագրական շարժումների, այնպես էլ 18-րդ դարի երկրորդ կեսին հեռավոր Հնդկաստանում հայ լուսավորական փիլիսոփայության առաջացման հասարակական-քաղաքական պայմաններն ու տեսական-գաղափարական ակունքները:

Աշխատության մեջ մանրամասնորեն վերլուծվում են Հովհաննես Ջուղայեցու հասարակական-քաղաքական, գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական և արվեստագիտական հայացքները: Հեղինակը, ելնելով որոշակի մեթոդաբանական դիրքորոշումից, Ջուղայեցու տեսական ժառանգության մեջ կարևորում է հատկապես հասարակական-քաղաքական բնույթի գաղափարները՝ գտնելով, որ նախ դիանցում առավել անմիջականորեն է դրսևորվել հայ մտածողի վերաբերմունքը իր ժամանակի դեպքերի և իրադարձությունների նկատմամբ, երկրորդ՝ այդպիսի հարցերի քննարկման ժամանակ նա ավելի մեծ հնարավորություն է ունեցել շարադրելու իր սեփական ըմբռնումները:

17-րդ դարի կեսերին արթնանում է հայոց ինքնագիտակցությունը, ուղիներ են փնտրվում օտարի լուծը թոթափելու, պետականությունը վերականգնելու: «Դրա-

նով պետք է բացատրել և այն փաստը, որ 17-րդ դարի կեսերին և հատկապես դարավերջին ու հաջորդ դարի սկզբներին հայ տեսական միտքն աշխույժ հետաքրքրություն է ցուցաբերում հասարակական կյանքի երևույթների նկատմամբ, դնում և քննարկում է հասարակական առաջընթացի, այդ առաջընթացում մարդու տեղի ու դերի, մարդ անհատի իրավունքների, հասարակական օրենքների բնույթի, հասարակության կառավարման և նման այլ հարցեր» (էջ 94): Ջուղայեցու հասարակական-քաղաքական հայացքներում հեղինակը կարևորություն է տալիս մի շարք գաղափարների, որոնք նա իրավամբ համարում է նորարարական, թարմ ու համարձակ տվյալ ժամանակաշրջանի համատեքստում: Այդ գաղափարները համահունչ էին Նոր ժամանակի և Լուսավորական փիլիսոփայության գաղափարախոսության հետ: Ռազմա-ֆեոդալական հասարակարգի պայմաններում, ուր ամեն քայլափոխի ֆեոդալական տիրող կամայականության ու անձնիշխանության հետևանքով կոպտորեն տրորվում ու ոտնահարվում էին մարդ անհատի իրավունքները, Հովհաննես Ջուղայեցին քննադատում է գոյություն ունեցող իրավական, քաղաքական ու սոցիալական հարաբերությունները և պահանջում հարգել մարդ անհատի բնական և սոցիալական իրավունքները: Ջուղայեցին առաջադրում է այն միտքը, որ ոչ ոք իրավունք չունի բռնանալու մարդու կյանքի, իրավունքների, նրա ազատակամության ու անձնիշխանության վրա: Նույնիսկ Աստված, որ ստեղծել է բոլոր արարածներին, «ոչ կարէ առանց իրաւանց և պատճառանաց առնուլ զկարգս և զաստիճանս, զորս տուեալ է, թէպէտ անհուն է զօրութեամբ»: Եթե ամենակարող Աստված դա չի կարող անել, ապա առավել ևս այդ իրավունքից զուրկ պետք է լինեն երկրային «աստվածները»՝ իշխանավորները և Եկեղեցու առաջնորդները: Ինչպես իր նախորդ՝ «17-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն» գրքում, այնպես էլ այս աշխատության մեջ պրոֆ. Հ. Միրզոյանն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում դարաշրջանում ծավալված կրոնադավանաբանական պայքարի լուսաբանմանն ու գնահատությանը: Այս առումով բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում Հովհաննես Ջուղայեցու և պարսից շահերի միջև տեղի ունեցած կրոնական վեճերը: 17-րդ դարի երկրորդ կեսից սկսած Պարսկաստանում հայերի հանդեպ սկսել էին կիրառել կրոնական խտրականության ու հալածանքի քաղաքականություն, որի հետևանքով հայերի գլխին կախվել էր բռնի մահմեդականացման իրական վտանգը: Այդ վտանգը չեզոքացնելու, պարսիկների կարծր դիրքորոշումը մեղմացնելու համար Հովհաննես Ջուղայեցին, վտանգի ենթարկելով իր կյանքը, անձամբ բանավիճում է թե՛ պարսիկ իմաստասերների ու հոգևորականների և թե՛ երկու քմահաճ շահերի՝ Սուլեյմանի և նրա որդի Սուլեյման Հուսեյնի հետ և, վերջինիս համաձայնարարությամբ պարսկերեն և հայերեն գրի առնում բանավեճերի բովանդակությունը: Նա մեծահմտորեն կարողացել է համոզել պարսից շահերին, որ թե՛ քրիստոնյաները և թե՛ մահմեդականները պաշտում են աստվածային միևնույն էությունը, միայն թե՛ տարբեր պատկերներով ու եղանակներով, ուստի կարիք չկա արտաքին ու ձևական տարբերությունների համար հալածել ու բռնադատել հայերին: Պատմիչ Խաչատուր Ջուղայեցու վկայությամբ այդ բանավեճերի արդյունքն եղավ այն, որ «կակղացոյց զկարծրացեալ

սիրտս նոցա, որ ընդ մեզ, և եբարձ գթշնամութիւն զայն՝ զոր յառաջն ունէին»: Պրոֆ. Հ. Միրզոյանը բարձր է գնահատում այդ բանավեճերի ոչ միայն կրոնական, քաղաքական, այլև պատմամշակութային և փիլիսոփայական արժեքը: Ի մասնավորի, նա եզրակացնում է, որ Հովհաննես Ջուղայեցին «հայ մշակույթի պատմության մեջ այն հազվագյուտ մտածողներից է, որն ազդել է ոչ միայն հայ, այլև իրանական փիլիսոփայական մտքի զարգացման հետագա ընթացքի վրա»:

Պրոֆ. Հ. Միրզոյանի մենագրության շնորհիվ ավելի ամբողջական պատկերացում ենք կազմում 17-18-րդ դարերի հայ փիլիսոփայական մտքի մասին: Իբրև փիլիսոփա, Ջուղայեցին գրեթե չուսումնասիրված հեղինակ էր և, հասկանալի է, ըստ պատշաճի չէր ներկայացված հայ փիլիսոփայության պատմությանը նվիրված հետազոտություններում և դասագրքերում: Սակայն, ինչպես ցույց է տալիս պրոֆ. Հ. Միրզոյանը, Ջուղայեցին 17-18-րդ դարերի հայ փիլիսոփայության այն ներկայացուցիչներից է, որի տեսական ժառանգության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս նոր երանգներ բացահայտելու այդ ժամանակահատվածի հայ փիլիսոփայական մտքի մեջ: Մասնագիտական գրականության մեջ առաջին անգամ լուսաբանելով Հովհաննես Ջուղայեցու փիլիսոփայական՝ գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական և գեղագիտական-բարոյագիտական հայացքները, հեղինակը պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ փորձում է պարզել, թե այս բնագավառներում ինչպիսի լուծումներ են առաջադրվում հայ մտածողի կողմից: Հեղինակի վերլուծությունից պարզ է դառնում, որ Ջուղայեցին մի կողմից դուրս չի գալիս ավանդական փիլիսոփայության հարցադրումների շրջանակից, մյուս կողմից, այնուհանդերձ, առաջադրում է այնպիսի մտքեր, որոնք պարունակում են հետաքրքիր հարցադրումներ, նոր ժամանակի ոգուն համահունչ գաղափարներ կամ լրացնում ավանդական պատկերացումները:

Պրոֆ. Հ. Միրզոյանի «Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի» մենագրությունը աչքի է ընկնում քննարկվող հարցերի վերլուծության խորությամբ, նյութի շարադրման հստակ տրամաբանությամբ և փաստարկվածությամբ: Գիտական բարձր մակարդակով կատարված այս հետազոտությունը, որում շրջանառության մեջ են դրված նոր սկզբնաղբյուրներ ու նոր փաստեր, առաջադրված ու հիմնավորված են տեսական և մեթոդաբանական բնույթի մի շարք գաղափարներ, ծանրակշիռ և արժեքավոր ներդրում է ոչ միայն հայ փիլիսոփայության, այլև հայ մշակույթի պատմության ուսումնասիրության բնագավառում: Ուստի, այդ մենագրությունը կարող ենք անվերապահորեն գնահատել որպես վերջին տարիների հայագիտության անուրանալի նվաճում:

# «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՊԱՏՎՈ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՈՒՄ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԻ ԱՐՍԼԱՆՅԱՆՆԵՐԻՆ

2002 թ. հունիսի 22-ի երեկոյան Վեհարանի հանդիսությունների դահլիճը լեփ-լեցուն էր. Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ն շքանշանով էր գարդարելու տեր և տիկին Արսլանյանների կուրծքը՝ ի գնահատումն նրանց եկեղեցաշեն գործունեության: Երջանկահիշատակ Գարեգին Ա Հայրապետի գահակալության շրջանում լիբանանահայ այս բարերարների տրամադրած միջոցներով սկսել էր նորոգությունը Շիրակի մարզի Ազատան գյուղի Ս. Հարություն եկեղեցու, որը օծվել էր 1999 թ., Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի տեղապահության շրջանում:

Հանդիսությունը, որին ներկա էին Մայր Աթոռի միաբան հայրեր և աշխատակիցներ, Արսլանյան գերդաստանի անդամներ, հյուրեր, բացվեց ներկաների միասնական «Հայր մեր» և «Ջգործս ձեռաց մերոց» աղոթքներով՝ Տիրոջից հայցելով օրհնություն և հաջողություն ձեռնարկին:

Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը բացման խոսքում շեշտեց այն նվիրվածությունը, որ ցուցաբերել է Արսլանյան ընտանիքը Շիրակի թեմի տարածքում գտնվող Ազատան գյուղի Աստծո տունը նորոգելիս:

Հայր Սուրբի խոսքն ընդմիջվեց Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի «Լուսավորիչ» երգչախմբի կատարումներով: Հնչեցին «Եկեղեցին հայկական», «Սիրտ իմ սասանի» և «Ղողանջ Կոմիտասին» երգերը, որից հետո ասմունքեց Դպրանոցի Բ լսարանի սան Հայկ Հարությունյանը՝ «Մշուշի միջից տեսիլ դյութական»՝ Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» շարքից: Դպրանոցի երգչախմբի ելույթն ավարտվեց «Ընտրեալդ» խոցեպարար մեղեդու կատարմամբ:

Մայր Տաճարի երգչախմբի (խմբավար՝ Ռ. Շարբաթյան) կատարմամբ «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի հնչյունների ներքո դահլիճ բերվեց հայրապետական սրբատառ կոնդակը (տե՛ս էջ 20), որն ընթերցեց դիվանապետ Հայր Սուրբը: Սույն կոնդակով բեյրութաբնակ տեր և տիկին Հարություն և Մարի Արսլանյաններն արժանացան Հայ Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշանին: Այս ընտանիքը մեծ ավանդ ունի ազգային-եկեղեցական արժեքների պահպանման նվիրական գործում: Կոնդակում մասնավորաբար ասվում էր. «Ուրախ ենք մեծա-

պես. որ Ձեր կյանքն արդյունավորում եք հայրազատ ժողովրդին ու Մայր Եկեղեցուն մատուցած ասպվածահաճո բազում ծառայություններով: Տասնամյակներ շարունակ, որպես պատվարժան անդամ Հայկական բարեգործական ընդհանուր միության, Դուք հոգևոր և նյութական Ձեր կարողությունները սիրառատ ոգով ի սպաս եք դնում ազգային և եկեղեցական մեր կյանքի շինությանն ու զորացմանը, սրբազան մեր արժեքների անխաթար պահպանմանն ու զարգացմանը»:

Այնուհետև Վեհափառը, ներկաների ծափերի ներքո, բարերարի կրծքին ամրացրեց շքանշանը:

Օրվա մեծարյալներին առաջինը շնորհավորեց Տ. Եփրեմ արքեպս. Թաբաքյանը: Սրբազանը նախ ազգիս Հայրապետին արևշատություն և երկար փարիների հովվություն մաղթեց, ապա խոսքն ուղղեց ներկաներին՝ համառոտ ներկայացնելով Արսլանյան ընտանիքին բնորոշ գծերը՝ իբրև այդ գերդաստանի վաղեմի բարեկամ, ասելով. «Մարդը երկու կյանք ունի: Առաջինը կենսագրական թվականների շարքն է, որ անցնում է ժամանակի հետ, երկրորդն իր կատարած բարեգործություններն են, որ դրոշմվում և մնում են մեր սրտերում: Թեև պրն Արսլանյանը համալսարան չի ավարտել, բայց դա չի խանգարել Տիրոջը՝ օժտելու նրան բազում շնորհներով: Նա իր ապրած 78 տարիների ընթացքում բազմապատկել է իր ունեցած շնորհները, ինչպես ավետարանական պատմության բարի մշակը:

Ծնված լինելով եկեղեցասեր ու կրոնասեր ընտանիքում՝ մանկության տարիներին ստացած ավանդները փոխանցել է իր զավակներին՝ իբրև հոգածու հայր ընտանիքում ստեղծելով նախանձելի սիրո յուրահատուկ մթնոլորտ: Իր մեջ սնրմանված եկեղեցասիրությունը մանուկ Հարությունը դրսևորել է եկեղեցի կառուցելու ցանկություն հայտնելով, երբ մեծանա ու հարստանա: Կառուցել չի կարողացել, բայց նորոգել է: Այսօր երկրի վրա պարգևատրվելու օրն է հասել, մի օր էլ գալու է Երկնավոր Տիրոջից վարձատրվելու օրը: Երանի եկեղեցի շինողաց, երանի եկեղեցի նորոգողաց և բոլոր նրանց, որ գեթ մեկ շիշ ձեթ են նվիրել՝ Լուսավորչի կանթեղի մշտավառության համար»,- կրկին շնորհավորելով՝ իր խոսքը եզրափակեց Սրբազան Հայրը:

Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանը նույնպես շնորհավորեց պեր և փիկին Արսլանյաններին՝ այդպիսի բարձր պատվի արժանանալու առիթով: Սրբազանն առաջին անգամ էր տեսնում իր պաշտպանավարած թեմի տարածքում գտնվող ամենամեծ գյուղի՝ Ազատանի եկեղեցին նորոգած բարերարներին, բայց նրանց գիտեր հենց իրենց բարերարություններով: Թեմակալ առաջնորդը գյուղի բնակիչների անունից շնորհակալություն հայտնեց բարերարներին, Աստծո ողորմությունը հայցեց այդ փոխմի հանգուցյալների համար և փառք վերառաքեց Տիրոջը, որ այսօր էլ մեր ժողովրդի ծոցից ելնում են պալն առնելուց գերադասող, Տիրոջ պված արդյունավորող եկեղեցասեր հայորդիներ:

Տիար Հարություն Արսլանյանը, շնորհակալություն հայտնելով շնորհավորանքների ու մաղթանքների համար, պատրաստակամություն հայտնեց այսուհետ ևս զորավից լինելու և ծառայելու Մայր Եկեղեցուն:

Շքանշանակիրների որդին՝ պրն Գրիգոր Արսլանյանը, նույնպես շնորհավորեց իր

ծնողներին, որ մեքենայի ու նյութի պաշտամունքի մեր դարում Եկեղեցուն հավատարիմ են մնում: Նա նշեց, որ խունկյան այդ օրն անմոռանալի է մնալու Արսլանյան գերդաստանի հիշողության մեջ. «Մեր իղձն է, որ նորոգվող եկեղեցիների շարքում Ազատանի եկեղեցին դառնա հայոց հոգևոր վերազարթոնքի սյուներից մեկը: Աղոթող ենք, Վեհափառ Տեր, որ հայրենաշեն Ձեր գործունեությանը Տերը շարունակականություն պարգևի և զորացնի Ս. Էջմիածինը»:

Վերջում իր օրհնության խոսքն ասաց Վեհափառ Հայրապետը. «Պարտք էր Մեր կատարածը, որ պիտի իրականացներ Մեր երջանկահիշատակ նախորդը ի երախտագիտություն Արսլանյանների ազնիվ բարերարության: Աստված նրանց հնարավորություն է պարգևել իրականացնելու իրենց նվիրական ցանկությունը, և նրանք իրենց ազնիվ վաստակը շաղախել են Ազատանի բնակչության քրտինքին: Հայրենիքում ներկայության այս ձևը լավագույնն է, որ օրհնություն է բերում թե՛ բարերարներին, թե՛ այդ եկեղեցին մտնող յուրաքանչյուր հավատացյալի: Եկեղեցին ճանապարհ է, որ առաջնորդում է դեպ Երկինք, և այս ճանապարհին է, որ այդ գյուղի բնակիչների առաջ բացել են Արսլանյանները: Ուրախ ենք այս մարդկանց կուրծքը զարդարելու մեր Եկեղեցու բարձրագույն շքանշանով, որով ուզում ենք խրախուսել հայորդյաց նվիրաբերման ոգին: Տալու դիմաց բարերարն այսօր արդեն ստանում է արնշապության աղոթքներն այդ բացված ճանապարհին կանգնածների: Թող Աստված օրհնի Արսլանյան գերդաստանի ներկա և բացակա անդամներին ու մեր ժողովրդից միշտ անպակաս լինեն նման զավակները»:

Շքանշանի հանձման հանդիսավոր արարողությունն ավարտվեց Մայր Տաճարի երգչախմբի կատարած «Հայր մեր»-ով և «Պահպանիչ»-ով:

*ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՊԻՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ*
*Մնաևի Վազգենյան Դպրանոցի*
*Դ լսարանի սան*



ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲԱՐԵՐԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՍԼԱՆՅԱՆԻ
ԿՈՒՐԾՔԸ ԶԱՐԴԱՐՈՒՄ Է ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ՝
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ



ԱՌԻՆՋԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

# ՕԾՎԵՑ ԱՌԻՆՋԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Հունիսի 1-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգևոր դասի ուղեկցությամբ մեկնեց Կոտայքի թեմ՝ օծելու Առինջ գյուղի նորակառույց Ս. Աստվածածին եկեղեցին:

Ձեռամբ Վեհափառ Հայրապետի օծվեց եկեղեցու Ս. Խորանն ու Խորանի Տիրամոր պատկերը: Վեհափառ Հայրապետի կողքին էին Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Տ. Տարոն եպս. Ծերեճյանը, թեմակալ առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանը և Տ. Սիոն եպս. Ադամյանը:

Սրբազան արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը շնորհավորեց Առինջի հավատավոր ժողովրդին և իր գնահատանքը հայտնեց թեմակալ առաջնորդին ու եկեղեցու բարերար Գագիկ Ծառուկյանին:

Ընթերցվեց Հայոց Հայրապետի կոնդակը, որով, ի գնահատություն եկեղեցաշեն գործունեության, պրն Ծառուկյանը պարգևատրվեց Հայ Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով (տե՛ս էջ 18):

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՆՁՆՎԵՑ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ կառավարության որոշմամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանը ճանաչվել է որպես բարձրագույն ուսումնական հաստատություն:

Հուլիսի 2-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կառավարական այս որոշումը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին պաշտոնապես հանձնեց ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Մանուկ Թոփուզյանը:

Ստանալով կառավարական որոշումը՝ Նորին Սրբությունը, ի դեմս պրն Թոփուզյանի, իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնեց ՀՀ իշխանություններին՝ Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ ցուցաբերած հոգատար վերաբերմունքի համար: Վեհափառ Հայրապետը համոզմունք հայտնեց, որ այս որոշումը կնպաստի Ճեմարանի կրթական մակարդակի բարձրացմանը և մեծ հնարավորություններ կբացի Ճեմարանի ուսանողության առջև՝ թույլատրելով էլ ավելի դյուրությամբ շարունակելու ուսումնառությունը Հայաստանի Հանրապետության և արտերկրի բարձրագույն կրթական այլ հաստատություններում:

Նույն օրը, երեկոյան, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 2001-2002 թթ. ուսումնական ամավերջի հանդիսությունը:

Հանդիսության ընթացքում ներկաներին Ճեմարանի ընթացիկ տարվա գործունեությունը ներկայացրեց Ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավ. քհն. Սարգսյանը: Ինչպես տեղեկացրեց Տ. Եղիշե քահանան, այս տարի Ճեմարանում հոգևոր կրթություն էր ստանում 103 ուսանող, որոնցից վերջին լսարանն ավարտեցին 22-ը:

Հանդիսության ավարտին Նորին Սրբությունը, ներկաներին բերելով իր բարեմաղթանքներն ու օրհնությունը, բարձր գնահատեց ուսումնական այս տարում տեսչության և դասախոսական կազմի կատարած աշխատանքը և արձանագրած հաջողությունները՝ նշելով, որ նոր շրջանավարտները հույսով և լավատեսությամբ են համակում դեպի Եկեղեցու վաղվա օրը:

Հանդիսության ընթացքում գեղարվեստական հայտագրով հանդես եկան Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաները:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ. «ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՂՈՐԴՈՒՄ ՊԱՏՄԱԿԱՆ ԿՐԹՕՋԱԽԻՆ»

ՀՀ կառավարության վերջերս ընդունած որոշմամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանը ճանաչվեց որպես բարձրագույն ուսումնական հաստատություն: Սա արժանի գնահատական էր պատմական ճեմարանին ու հայ հոգևոր-մշակութային կյանքում նրա ունեցած բացառիկ դերակատարությանը:

1874 թ. Գևորգ Դ Կաթողիկոսի կողմից հիմնված լինելով իբրև հոգևոր բարձրագույն կրթական հաստատություն, Գևորգյան ճեմարանը հայտնի է եղել նաև իբրև հայագիտական ու մշակութային կարևոր կենտրոն, ուր ուսանել են նշանավոր հոգևորականներ, բազմաթիվ հայտնի մտավորականներ: Նրանց թվում են Գևորգ Զ և Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետները, Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա Հովսեփյան Կաթողիկոսը, Կոմիտաս Վարդապետը, Լևոն Շանթը, Մանուկ Աբեղյանը, Ակսել Բակունցը, Դերենիկ Դեմիրճյանը և ուրիշներ:

Ավելի քան մեկդարյա գոյության ընթացքում ճեմարանն ունեցել է վերելքի ու վայրէջքի տարիներ: Հայաստանի անկախացումից հետո թոթափելով խորհրդային անաստվածության տարիների դժվարությունները, պատմական ճեմարանն այսօր վերագտնում է իր նախկին հեղինակությունն ու փառքը և շարունակում հոգևոր իր առաքելությունը՝ Հայ Եկեղեցու համար կրթելով ուսյալ սպասավորներ: Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անմիջական հոգածության շնորհիվ տարեցտարի աճում է ուսանողության թիվը, բարձրանում կրթական մակարդակը: Ներկայումս ճեմարանի 6 լսարաններում սովորում է ավելի քան 100 ուսանող: Դասավանդվող 47 առարկաներից 25-ը կրոնական են: Հոգևոր այս հաստատության սաներին գիտելիքներ են հաղորդում աշխարհական և հոգևորական 40-ից ավելի դասախոսներ:

Ի՞նչ կտա ճեմարանին կառավարության վերոհիշյալ որոշումը և ի՞նչ նոր հնարավորություններ կարող է այն ստեղծել կրթօջախի համար. այս հարցերին է պատասխանում ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը:

**Հարց.**- Տեր Հայր, Գևորգյան Հոգևոր ճեմարանն, ըստ էության, արդեն իսկ հոգևոր բարձրագույն ուսումնական հաստատություն է՝ հոգևորականներ պատրաստելու առումով: Աշխարհիկ կառույցի, այս դեպքում՝ կրթության նախարարության, արտոնագիրն ի՞նչ կարող է տալ ճեմարանին և արդյո՞ք դա չի նշանակում, որ ճեմարանն ինչ-ինչ առումներով պետք է հաշվետու լինի նաև աշխարհիկ նախարարությանը:

**Պատասխան.-** Իրապես, Գևորգյան Հոգևոր Ճեմարանը Հայաստանի հնագույն դպրոցներից մեկն է և առանց այս նոր կարգավիճակի էլ այն բարձրագույն կրթական հաստատության համարում ունի:

Արտոնագրի առկայությունն այս դեպքում նշանակում է միայն, որ պետությունը ևս ընդունում է, որ Հոգևոր Ճեմարանի կրթական մակարդակը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն ուսումնական հաստատությունների համար սահմանված չափանիշներին: Ասեմ, որ այս նպատակով ստեղծված էին համապատասխան հանձնաժողովներ: Սա, իհարկե, չի նշանակում որևէ կախվածություն աշխարհիկ-պետական կառույցից: Ճեմարանը, լինելով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կրթօջախ, պատասխանատու է միայն Ամենայն Հայոց Հայրապետի առջև, որը և Ճեմարանի ուսուցչապետն է: Ճեմարանի կանոնադրությունն էլ, ի տարբերություն աշխարհիկ բուհերի, հաստատվում է ոչ թե արդարադատության նախարարության, այլ Ամենայն Հայոց Հայրապետի կողմից:

Եվ սակայն, ինչ է տալիս մեզ Ճեմարանի նոր կարգավիճակը: Գևորգյան Հոգևոր Ճեմարանի պետական ճանաչումը իբրև բարձրագույն ուսումնական հաստատություն՝ երկրորդ շնչառություն է հաղորդում պատմական կրթօջախին: Նախ, մեր ավարտական վկայականն այսուհետ կճանաչվի մյուս բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից և ցանկության դեպքում, մեր շրջանավարտներն առավել հեշտությամբ կկարողանան խորացնել իրենց գիտելիքները հայաստանյան և արտասահմանյան այլ բուհերում: Եվ ամենակարևորը՝ կունենանք ուսման որակի բարձրացման խնդիր: Ճիշտ է, մեզ մոտ բավականին բարձր է ուսման որակը, սակայն պետք է այս ուղղությամբ շարունակել աշխատանքը: Եվ պատահական չէ, որ այսօր Նորին Սրբության հրավերով միայն բարձրակարգ մասնագետներ են գալիս Ճեմարան դասավանդելու, և մենք կարող ենք պարծենալ մեր դասախոսական կազմի որակով և մանկավարժական ստաժով:

**Հարց.-** Այսօր պետության կողմից արտոնագրված մասնավոր շատ բուհերի դիպլոմներ չունեն պետական բուհի դիպլոմի կարգավիճակ: Այս առումով ինչ արժեք կունենա Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դիպլոմը:

**Պատասխան.-** Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դիպլոմն այսուհետ օժտված կլինի նույն իրավասություններով, ինչ պետական բուհինը, և ամբողջովին հավասարազոր կլինի պետական դիպլոմին: Ավելին, կառավարական որոշմամբ հանձնարարվում է Հայաստանի կրթության և գիտության նախարարին թույլատրել Հոգևոր Ճեմարանի սաների տեղափոխությունը այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ և շրջանավարտների հետբուհական մասնագիտական կրթությունը Հայաստանի գիտակրթական համակարգում:

**Հարց.-** Կառավարական այս որոշումը տարածվու՞մ է նախորդ տարիների շրջանավարտների դիպլոմների վրա:

**Պատասխան.-** Այս հարցը քննարկման նյութ է: Բանն այն է, որ միայն երեք տարի առաջ բարեփոխումներ եղան Ճեմարանի ուսումնական ծրագրերում՝ բարձրա-

ցույն հաստատության չափանիշներին համապատասխան:

**Հարց.**- Նախատեսվու՞մ են, արդյոք, նոր փոփոխություններ ուսումնական ծրագրերում կամ ճեմարանի կառուցվածքում: Նկատի ունեմ բուհին հատուկ այնպիսի կառույցների ձևավորում, ինչպես, օրինակ, մասնագիտական ամբիոններ: Կպահպանի՞ ճեմարանն իր անունը:

**Պատասխան.**- Ըստ ճեմարանի կանոնադրության, ուսումնական ծրագրերի մեջ միշտ էլ փոփոխություններ կարող են մտցվել, սակայն միայն Վեհափառ Հայրապետի հրամանով: Իսկ անունը կմնա նույնը՝ Գևորգյան Հոգևոր ճեմարան: Աշխատանքներ են տարվում նաև առանձին ամբիոնների ստեղծման ուղղությամբ: Բացի այդ, մենք ապագա ծրագրեր ունենք՝ ստեղծել գիտխորհուրդ՝ գիտական աստիճան շնորհելու իրավասությամբ: Այս դեպքում շատ եկեղեցականներ կկարողանան իրենց թեզերը պաշտպանել հենց մեր ճեմարանում:

**Հարց.**- Հայ Եկեղեցում վարդապետությունը կամ ծայրագույն վարդապետությունը գիտական աստիճան է, որի տվչությունը վերապահված է միայն կուսակրոն քահանաներին: Սակայն Եկեղեցու սպասավորների թվում են նաև շատ ամուսնացյալ քահանաներ, որոնք ևս գիտության, աստվածաբանության ասպարեզում կարող են իրենց խոսքն ասել: Այս դեպքում կարո՞ղ են արդյոք գիտական կոչումներ ստանալ նաև ամուսնացյալ քահանաները:

**Պատասխան.**- Ճիշտ է, որ հոգևոր իմաստով և՛ վարդապետությունը, և՛ ծայրագույն վարդապետությունը գիտական աստիճան է, որ շնորհվում է տվչությամբ՝ համապատասխան թեզի պաշտպանությունից հետո: Միջնադարում **վարդապետ** ասելով հասկանում էին **գիտնական**: Բառն ինքը նշանակում է **ուսուցիչ, քարոզիչ**, որ Հայ Եկեղեցում իրավունք և իշխանություն ունի Աստծո խոսքը մեկնելու: Վարդապետությունն ունի նաև իր նշանը՝ վարդապետական գավազանը, որ բռնում է հոգևորականը եկեղեցում քարոզելիս: Նախկինում, մինչև 18-րդ դար, վարդապետական աստիճան տրվել է նաև ամուսնացյալ հոգևորականին: Սակայն մեր ժամանակներում այն ընկալվում է որպես կուսակրոն քահանային տրվող հոգևոր աստիճան: Ապագա գիտխորհուրդը կարող է գիտական կոչումներ շնորհել, բայց ոչ՝ եկեղեցական, և՛ ամուսնացյալ, և՛ կուսակրոն քահանաների, որը ոչ մի կապ չի կարող ունենալ հոգևոր աստիճանի հետ: Այսպիսով, ամուսնացյալ քահանաները ևս հնարավորություն կունենան արժանանալու գիտական աստիճանի, որ չի կարող նույնացվել վարդապետության կամ ծայրագույն վարդապետության հետ: Հակառակ դեպքում, ենթադրվում է՝ ընդհանուր եկեղեցական կանոնների փոփոխություն: Այսօր մենք Սփյուռքում ունենք գիտական աստիճան ունեցող քահանաներ, օրինակ՝ փիլիսոփայության, աստվածաբանության դոկտորներ, որոնք սակայն երբեք հանդես չեն գալիս որպես վարդապետներ և եկեղեցում քարոզի ժամանակ չեն կարող կրել վարդապետական գավազան:

**Հարց.**- Արդեն տասը տարուց ավելի է, ինչ Հայաստանում գործում է Անանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը: Վերջինիս սաները հնգամյա կրթությունից հետո շարունակում են հոգևոր կրթությունը Գևորգյան Հոգևոր ճեմարանում և ևս մեկ տա-

ռի սովորելով ճեմարանի վերջին՝ 6-րդ լսարանի սաների հետ միասին, ավարտում են ճեմարանը՝ ստանալով դիպլոմ: Ուսման հիմնական մասն անցնելով մնկ այլ կրթօջախում, արդյո՞ք այս սաները կկարողանան ստանալ պետության կողմից ճանաչված բուհի ավարտական վկայական: Եվ արդյո՞ք չի նախատեսվում համապատասխան արտոնագիր նաև Վազգենյան Հոգևոր Դպրանոցի համար:

**Պատասխան.**- Վազգենյան Հոգևոր Դպրանոցը Գևորգյան Հոգևոր Ճեմարանի մասնաճյուղն է, որի 5-ամյա դասընթացն ամբողջությամբ համապատասխանեցված է Գևորգյան Հոգևոր ճեմարանի առաջին 5 լսարանների կրթական ծրագրին: Այս առումով որևէ խնդիր լինել չի կարող:

**Հարց.**- Հայտնի է, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում նախատեսվում էր կազմակերպել քահանայից լսարաններ՝ բարձրագույն կրթությամբ անձանցից քահանաներ պատրաստելու նպատակով: Ի՞նչ է արվում այդ ուղղությամբ:

**Պատասխան.**- Կա այդպիսի ծրագիր և ընթացքի մեջ է: Այն Հայ Եկեղեցու քահանաների պակասը լրացնելու փորձ է: Մի քանի ամիս առաջ այդ մասին հայտարարություն արվեց, որին 100-ից ավելի արձագանք ունեցանք: Հարցազրույցից և քննությունից հետո մնացել են շուրջ 25 հոգի: Այս հարցը օրակարգում է և դեռ վերջնական լուծում չի ստացել:

*ՀԵՂԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ*

# ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑՈՒՄ

Ամփոփվեց ևս մեկ ուսումնական տարի Սևանի Վազգենյան Դպրանոցում վերստին փաստելով այս հոգևոր կրթօջախի՝ մեր ժողովրդի կյանքում ունեցած առաքելությունը:

Առավել քան տասը տարիներ առաջ Սևանա գողտրիկ անկյունում Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի (այժմ Ազգիս Ընդհանրական Հայրապետ) ձեռամբ հիմնված Վազգենյան Դպրանոցը գրի ու գրականության անխոնջ մշակների խարտն ու նպատակասլաց աշխատանքի շնորհիվ դարձյալ հաստատագրեց այն իրողությունը, որ հոգևոր սպասավորության ուղին ընտրած յուրաքանչյուր անհատ արժանանում է ոչ միայն այլակերպվելու, այլև այլակերպելու մեծագույն շնորհին:

Հուլիսի 9-ին Ս. Առաքելոց և Ս. Կարապետ տաճարների հովանու ներքո հաստատված Սևանի Վազգենյան Դպրանոցում ամավերջյան հանդիսավոր արարողություն էր, որին իրենց ներկայությունն էին բերել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան հոգևորականներ, դասախոսներ, յուազրողներ և բազմաթիվ հյուրեր:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքով, Դպրանոցի օրհներգով, ապա և՝ օրվա խորհրդին պատշաճող ավետարանական ընթերցումներով: Տարեվերջյան հաշվետվությամբ հաստատության տարեշրջանի հոգևոր-ուսումնական համապարփակ գործունեությունը ներկայացրեց Վազգենյան Դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Թադրապ վրդ. Գալստանյանը. «Այս պահը, համարատվական լինելով հանդերձ, առավել դադարի և առանձնացման մի վիճակ է, երբ ընդհանրական հաշվետվությունից ավելի կարևորվում է ինքնահաշվետվությունը, որպեսզի Ավետարանի բնութագրմամբ գայթակղությունը չունենանք լինելու «պանծացեալս յանձինս, թէ արդարք իցեն՝ եւ խոտիցեն զբազումս» (Ղուկ. ԺԸ 9):

Տարեվերջյան հաշվետվության այս պահը զուգադիպում է մեր Տիրոջ Պայծառակերպության տոնին, և այս մեծահրաշ տոնի խորհուրդն ուզում ենք իրականացած տեսնել մեր Վազգենյան Տան կյանքի բոլոր շերտերում:

Իմ պատկերացմամբ, Վազգենյան Դպրանոցը և ամեն հոգևոր հաստատություն մի Թաբորական լեռ է կամ, Ավետարանիչների նկարագրմամբ՝ «լեառն մի բարձր առանձինն» (Մատթ. ԺԷ 1) է, որի գագաթին հասնելը կարող է իրականանալ միմիայն անդադար և անհատնում աշխատանքի, տևական ձգտումի և անշարժելի հավատքի շնորհիվ»:

Այնուհետև հաշվետու զեկույցում տեսուչ Հայր Սուրբը հանգամանալից ներկայացրեց Դպրանոցի ուսումնակրթական և հոգևոր-կրոնական կյանքը՝ տալով հատկապես սաների ուսումնական առաջադիմության, հոգևոր նկարագրի ու կեցվածքի, ստեղծագործական վերելքի ու ձեռքբերումների, ապագայի ծրագրերի, ուսանողութ-

յան. տեսչական-դասախոսական կազմի ընդհանուր համայնապատկերը:

Ա կիսամյակի քննական շրջանում Դպրանոցն ունեցել է 53 ուսանող՝ բաշխված 5 լսարանների միջև. որոնցից Բ լսարանի 2 և Գ լսարանի 1 ուսանող տարբեր պատճառներով հեռացել են: Այսու. ուսանողության պատկերը հետևյալն է.

Ա լսարան՝ 13 ուսանող

Բ լսարան՝ 11 ուսանող

Գ լսարան՝ 12 ուսանող և 1 ազատ ունկնդիր

Դ լսարան՝ 6 ուսանող

Ե լսարան՝ 8 ուսանող

Տեսչական-դասախոսական կազմը, որ բաղկացած է հոգևորականներից և աշխարհականներից, հիմնականում մնացել է նույնը:

Այս փարեշրջանում Դպրանոցի սաները կատարել են մի շարք ուխտագնացություններ Հայաստանի զանազան սրբավայրեր. այցելել ծերանոցներ. մանկատներ. զորամասեր, ընդունել բազմաթիվ հյուրերի, ունկնդրել տարաբնույթ դասախոսություններ. ինչպես նաև մասնակցություն ունեցել Դպրանոցին կից գործող մսամթերքների ու անասնապահական օժանդակ տնտեսության աշխատանքներին:

Ապագայի ծրագրերից տեսուչ Հայր Սուրբը մասնավորապես առանձնացրեց.

ա) Ամռանը անգլերենի խորացված ուսուցում՝ Մանչեստրի համայնքից ժամանած օր. Պենելոպե Իվանսոնի դասավանդությամբ:

բ) Կազմակերպել գիտաժողովներ՝ ուսանողների և դասախոսների մասնակցությամբ:

գ) Ստեղծել համակարգչային կենտրոն՝ ուսանողներին հնարավորություն ընձեռելու էլեկտրոնային ցանցի միջոցով կապվելու զանազան գրադարանների հետ և պատրաստելու սեփական հրատարակությունները:

դ) Վերականգնել Սևանա վանքի մատենադարանը:

ե) Ծրագրված կերպով այցելել տարածաշրջանի զորամասեր. գաղութներ. մանկատներ, ծերանոցներ և հիվանդանոցներ:

զ) Ամեն ամռան վերջին ձայնագրել մեկ լազերային սկավառակ:

Որպես շոշափելի ձեռքբերում ի մասնավորի ընդգծելի են Դպրանոցի «Լուսավորիչ» քառաձայն երգչախմբի կողմից կատարված Կոմիտասյան Պատարագի ձայնագրությունը և նոր՝ 2001-2002 թթ. Տարեգրքի հրատարակման պատրաստությունը:

«Եզրափակելով տեսչական գործունեության այս շրջանը՝ ցանկանում ենք շեշտել, որ մեզ առավել քան տեսանելի են մեր գործունեության դրական և բացասական կողմերը և ձգտել ենք բոլոր բացթողումներով հանդերձ մեր կյանքը հիմնել թեկուզ ամենաչնչին ձեռքբերումների վրա: Մենք չենք խուսափում կյանքի բոլոր վայրիվերումների պատասխանատվությունից և հստակ տեսնում ենք այն լուսավոր կյանը, որին հասնելու ենք Աստծո շնորհի և օրհնության առաջնորդությամբ, մեր հովանավոր Սուրբ Աստվածամոր անդադար բարեխոսությամբ, քանզի «սէր շնորհեաց մեզ Հայր, զի որդիք Աստուծոյ կոչեսցուք մեք... մի՛ բանիւք եւ լեզուաւ սիրեսցուք, այլ

արդեամբ եւ ճշմարտութեամբ»,- եզրափակեց իր ելույթը Հայր Սուրբը:

Տեսչի խոսքից հետո երգչախմբի բազմաձայն կատարմամբ դահլիճում մեղմորեն տարածվեցին «Ցօգնութիւն մեզ ժամանեա» շարականի հնչյունները՝ հոգևոր թովչանք պարգևելով ներկաներին:

Հանդիսության գեղարվեստական հատվածը համեմվեց նաև «Մայր Արաքսի ափերով», «Ղողանջ Կոմիտասի», «Օն թինդ ի խինդ» սքանչելի երգերով, Վահան Տերյանի «Ինչպե՞ս չսիրեմ երկիր իմ կիզված» բանաստեղծությամբ և լավագույն սաների խրախուսական պարգևատրություններով:

Հուզիչ խոսքերով իրենց մտածումներն արտահայտեցին Դպրանոցի նախկին և ներկա շրջանավարտներ Հոգեշնորհ Տ. Հովակիմ աբղ. Մանուկյանը և Բարեշնորհ Արամ սրկ. Դարսամյանը: Վերջինս, պատկերացնելով Վազգենյան Դպրանոցի ուսումնառության ընթացքը՝ որպես նաև երաժշտանոց, նշեց. «Հույն իմաստասերն ասում է, թե՝ «Կյանքը նման է երգի և կարևոր չէ՝ երկար է այն, թե կարճ, կարևորը լավ երգելն է»: Հիրավի, այս համատեքստում Վազգենյան Դպրանոցը մեզ համար դարձավ մի իսկական երաժշտանոց, կյանքի երաժշտանոց, որտեղ մեր ուսուցիչները ջամբեցին կյանքն ապրվածառաջ մեղեդու հոգեզմայլ շարականի վերածելու և այն լավագույնս հնչեցնելու դժվարին արվեստը: Անշուշտ, ունեցանք ձեռքբերումներ ու բացթողումներ, վերելքի ու վայրէջքի պահեր, ապրեցինք կյանքի ամենազանազան ակորդները, բայց միշտ ձգտեցինք մնալ այն փոնայնության սահմաններում, հավատարիմ այն գաղափարականին, որի սերմանողները նղաք դո՛ւք, Վազգենյան Տան հարազա՛տ մշակներ: Այս սրբազան օջախում կյանքն իրապես համանվագ է, սիմֆոնիա, որը, հավատացնում ենք ձեզ, մեր ականջներում պիտի հնչի առհավետ»:

Անկասկած է, որ, սերնդապատրաստության այս դարբնոցն օրըստօրե բարգավաճում և առաջընթաց է արձանագրում մարդակերտման վեհ առաքելության, ստեղծագործական նորանոր ծրագրերի և մեր հայրերի դարավոր իղձերի իրականացմամբ: Վազգենյան Դպրանոցը սրտի կենսարար բաբախյունն է երբեմնի Սևանա անապատի և կոչված է նախնիների սրբալույս հիշատակը վառ պահելու և հոգևոր կյանքի շարունակականությունն ապահովելու՝ աներևույթ կերպով նրանցից ճառագայթող շնորհը փոխանցելու մեր մեծ ընտանիքին՝ Հայ Եկեղեցուն, անմնացորդ ծառայելու պատրաստակամությամբ, հավատարմությամբ և սիրով:

*ՎԱՉԻԿ ՍՐԿ. ՔԱՐԳԱՐՑԱՆ*

# ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի մայիսի 11-ին և հուլիսի 10-ին ու 12-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ ավարտաճառերի բանավոր պաշտպանություն: Մայրավանքի դասընթացն ավարտող միաբան սարկավագներ քննող հանձնաժողովի կողմից հաստատված թեմաներով ավարտաճառեր էին պատրաստել և իրենց հեղինակած առաջին աշխատանքները եկել էին ներկայացնելու հրապարակային պաշտպանության: Հանձնախմբի նախագահն էր Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ ավարտաճառերի հեղինակները բավականին բարեխղճորեն էին մոտեցել իրենց վստահված գործերին՝ ձգտելով ըստ կարելվույն խորը և համակողմանի ուսումնասիրության ենթարկել առկա թեմաները: Ավելին, նրանք ջանացել էին ամեն կերպ պահպանել հայոց լեզվի անաղարտությունը՝ հավատարիմ մնալով Սահակ-Մեսրոպյան դպրոցի ոգուն: Ավարտաճառերի հեղինակներից ոմանք հայերեն գրականությունից զատ օգտագործել են նաև օտարալեզու աղբյուրներ:

